







*Մարտնաշար  
թիւ 10*

# **ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ**

*Պէյրութ  
2025*

**ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆԻ  
ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ**

**Հրատարակության պատրաստություն, խմբագրություն  
և ծանոթագրություններ՝ Երուանդ Փամպուխեանի:  
Պեյրուք, 2025, 216 էջ:**

**ISBN: 978-9953-0-6692-9**



**ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ**  
**(1874 – 1915)**



## ՌՈՒԻԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ ՌԻՍՈՒՑԻԶ-ՄԱՆԿԱՎԱՐԺԸ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐԸ

Ռուբեն Զարդարեան (1874–1915) կը պատկանի արեւմտահայ գրականութեան գեղապաշտ կամ արուեստագէտ սերունդին:

Բացառիկ մշակողներէն է ան հեփաթին, որ գրականութեան դժուարագոյն սեռերէն մէկն է. կարելի է ըսել նոյնիսկ, որ հեփաթին անմրցելի վարպետն է: Հեփաթներու կողքին, ստորագրած է պատմութեան, պատկերներ եւ վիպակներ: Անոր լաւագոյն գրութիւնները լոյս տեսան 1910-ին, Պոլիս, «Յայգալոյս» խորագրեալ հատորին մէջ, որ հետագային արժանացած է հինգէ աւելի հրատարակութիւններու՝ Հայաստանի եւ արտասահմանի մէջ՝ անտիպներու որոշ յաւելումներով: Զարդարեանի գործերէն ումանք թարգմանուած են ֆրանսերէնի եւ անգլերէնի:

Զարդարեան գրագէտին միջավայրը առաւելաբար եղած է Խարբերդը: Ան իրեն հետ Պոլիս բերաւ գաւառի հայադրոշմ գրականութիւնը: Կը հակադրուէր Պոլսոյ մէջ մշակուած գրականութեան, զոր կը նկատէր ինքնատիպ հանգամանքներէ զուրկ եւ որ հետեւած է «լոկ արուեստին եւ անձնական գրականութեան»<sup>1</sup>: Ան համոզումով կը յայտնէր որ պոլսահայ գրագէտը կարելի բոլոր միջոցներով պէտք է նպաստէ գաւառի գրականութեան ծլարձակումին ու զարգացման: «Զարդարեան բնութեան նկարագրութիւնը ըրաւ աւելի նուրբ թափանցումով, աւելի վշտոտ մարդկայնութիւն մը պտտցնելով նկարներուն վրայ»<sup>2</sup>:

Զարդարեան կատարած է թարգմանութիւններ՝ երոպացի, ռուս եւ թուրք գրողներէ: Գրական ծածկանուններն են՝ Աշֆ Եհովայի, Բաբգէն, Զարդար, Զարման, Էթտահար, Հայ աֆսորականը, Հրաշ եւ Հրաշեայ:

Զարդարեան մեր իրականութեան մէջ ճանչցուած է իբրեւ գրագէտ, որուն մասին կան բազմաթիւ գրութիւններ: Սակայն աւելի քիչ ճանչցուած են անոր ուսուցչական-մանկավարժական, ինչպէս նաեւ հրապարակագրական գործերը, որ կը ներկայացնենք այստեղ:

---

1.- Ռուբեն Զարդարեան, «Վաղուան գրականութիւնը», «Մասիս», 49-րդ տարի, 30 Դեկտ. 1900, թիւ 40, էջ 631ա:

2.- Յ. Օշական, «Հայ գրականութիւնը», երրորդ տպագրութիւն, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 1966, էջ 543:

## ՈՒՍՈՒՑԻՉ-ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Զարդարեան ուսուցչութիւն ըրած է կեանքի զանազան փուլերուն եւ տարբեր միջավայրերու մէջ: 1892-ին կը դասաւանդէ Թլկատինցիի դպրոցը, ապա շուրջ երեք տարի ֆրանսացի կրօնաւորներու «Քլարեան» վարժարանին մէջ (Խարբերդ), ուր ապաստան փնտռած էր 1895-ի աղէտի օրերուն:

1897-ին Յակոբ Սիմոնեանի հետ կը հիմնէ Մեզրէի (Խարբերդ) Ազգային Կեդրոնական վարժարանը: Յակոբ Սիմոնեան եւ Ռուբէն Զարդարեան իրարմէ երկու տարբեր խառնուածքներ ունէին, բայց կը լրացնէին զիրար: Զարդարեան կը ստանձնէ փոխտեսուչի պաշտօնը, սակայն արտաքին աշխարհը իր անունով կը ճանչնայ դպրոցը: Յակոբ Սիմոնեանի սպանութենէն ետք, Զարդարեան կը նշանակուի տնօրէն:

Զարդարեան չունէր մանկավարժական կամ համալսարանական պատրաստութիւն, սակայն շնորհիւ իր բնածին ձիրքերուն, ինքնաշխատութեան եւ յամառ ընթերցող մը ըլլալուն, ինչպէս նաեւ գրելու տաղանդին, մեծ վարկ ապահոված էր իբրեւ ուսուցիչ ոչ միայն Խարբերդի մէջ, այլեւ անկէ դուրս: Ան կը դասաւանդէր բարձր կարգերու հայերէն լեզու, գրականութիւն, պատմութիւն եւ ֆրանսերէն:

Կեդրոնականի (Մեզրէի) իր պաշտօնակիցներէն մէկը կը հաստատէ. Զարդարեան «իր հմայֆով՝ իբրեւ բանաստեղծ-գրագէտ եւ իբրեւ մարդ՝ իր գրաւիչ անհատականութեամբ, վարժարանի ոգին էր: Արտաքին աշխարհը, կարելի է ըսել, Զարդարեանով կը ճանչնար Կեդրոնականը»<sup>3</sup>: Արդարեւ, Զարդարեան ամենասիրելի ուսուցիչն էր Մեզրէի Կեդրոնական վարժարանին մէջ: Ան գրաւած էր աշակերտներուն սիրտն ու հոգին՝ շնորհիւ իր մաքուր մարդկային եւ գաղափարական դաստիարակութեան մեթոտներուն:

Զարդարեան Կեդրոնականը օժտած էր կարող եւ նուիրուած ուսուցիչներով, որոնց հետ կը գտնուէր մնայուն գործակցութեան մէջ:

1901-ին Կեդրոնականը կու տար իր առաջին հունձքը: Այդ առթիւ Զարդարեան ընթացաւարտներուն համար եւ իբրեւ պսակ իր դաստիարակչական գործին, գրած է բանաստեղծութիւններ, որոնք երգի վերածուելով երգուած են մանչերու եւ աղջիկներու կողմէ<sup>4</sup>:

Մեզրէի մէջ Զարդարեան կատարեց դաստիարակչական շատ ընդարձակ եւ կարեւոր աշխատանք: Ամէն բանէ առաջ ան պայքարեցաւ գիղական-գաւառային մտայնութեան փոփոխութեան ի խնդիր, այսինքն՝ նա-

---

3.- Տոքթ. Ն. Ս. Ս. Թաշնեան, «Կրթական շարժում մը», Յուլեր Մեզրէի (Խարբերդ) Կեդրոնական երկսեռ վարժարանէն, «Հայրենիք» ամսագիր, Ը. տարի, թիւ 9 (93), Յուլիս 1930, էջ 109:

4.- Նոյնտեղ, էջ 115:

խապաշարումներու դէմ: Զարդարեան թէւ մեծցած էր այդ մթնոլորտին մէջ, սակայն ինքնաշխատ զարգացումին շնորհիւ տիրացած էր մտային լայն հորիզոնի:

Զարդարեան խորապէս ջատագով էր իգական սեռի դաստիարակութեան: Առաջին հերթին նախանձախնդիր եղաւ Մեզրէի մէջ աղջկանց վարժարանի մը հիմնումին՝ մանչերու վարժարանին կից: Մինչեւ այն ատեն աղջիկները կ'աւարտէին մանկապարտէզը միայն, որմէ ետք կը մնային տունը առտնին գործեր կատարելու: Զարդարեան պայքարեցաւ նաեւ աղայական մտայնութեան դէմ, ըստ որուն իգական սեռը պէտք չէր որ ուսում առնէր: Զարդարեան անցած կը նկատէր այլեւս այս մտայնութիւնը: Պէտք է ըսել, թէ ի պատիւ իգական սեռին, եւ պայքարելու համար այս մտայնութեան դէմ, Մեզրէի մէջ հրապարակ իջան նաեւ լուսամիտ կիներ, որոնք «դունէ դուռ պտտելով հանրագրութիւն կը կազմեն ի նպաստ աղջկանց վարժարանի հիմնարկութեան եւ կը յաջողին»<sup>5</sup>:

Եւ հիմնուեցաւ Մեզրէի Կեդրոնական աղջկանց վարժարանը:

1902-ին աղջկանց վարժարանի շրջանաւարտուհիներու հանդէսին համար Զարդարեան պատրաստեց ներկայացում մը, «որուն մէջ հայ իգական սեռը երեւան կու գար կրթութեան եւ ուսման նախանձախնդիր իր զգացումով եւ զոհողութեան ոգիով»<sup>6</sup>:

Շրջանաւարտուհիներուն մեծ մասը նետուեցաւ ուսուցչական ասպարէզ՝ անձնուրացութեան եւ նուիրումի սխանչելի ոգիով ներշնչուած:

Զարդարեան Կեդրոնականի մէջ ժամանակ տրամադրեց նաեւ մանկապարտէզին եւ յարմար առիթներու գրեց գողտրիկ բանաստեղծութիւններ մատաղ հոգիներուն կամ, իր բառերով, «դաշտի ծաղիկներուն»: Իսկ այդ բանաստեղծութիւնները կ'երգուէին զուարթ եղանակներու վրայ:

Զարդարեան շաբաթը անգամ մը՝ իբրեւ պարտականութիւն՝ շարադրութեան նիւթ մը կու տար աշակերտներուն, որ գրեն: Ինք պատին վրայ կը գրէր շարադրութիւնը, որ կ'ընդօրինակէին աշակերտ-աշակերտուհիները: Ան կը թելադրէր, որ նախ պէտք է ուսումնասիրել նիւթը, մտածել անոր մասին, «կարգաւ գծել պատկերը ձեր մտքին մէջ, յետոյ ալ շղթայի նման փակելով՝ յանձնեցէք թուղթին, բայց միշտ ձեր պապենական պարզ լեզուով»<sup>7</sup>: Արդարեւ, Զարդարեան կը խորշէր այն շարադրութիւններէն, որ մեծ բառերով գրուած կ'ըլլային: Կը զգուշացնէր աշակերտները ուսուցիչի բառեր գործածելէ:

---

5.- Նոյնտեղ, էջ 114:

6.- Նոյնտեղ, էջ 118:

7.- Ուրուական, «Յուշեր Մեզրէի Կեդրոնական վարժարանէն», «Հայրենիք» ամսագիր, Լէ. տարի, թիւ 4, Ապրիլ 1959, էջ 92:

«Նահատակ գրագետներու բարեկամներ» ընկերակցութիւնը, որ 1930-ին Փարիզի մէջ հրատարակած է Զարդարեանի ամբողջական երկերը, անոր կենսագրական ծանօթութիւններուն մէջ կը յայտնէ, որ Զարդարեանի աշակերտներէն մէկուն Բով (Ամերիկա) կայ ձեռագրերու տետրակ մը, «ուր Բով Բովի բերուած են ուսուցիչ Զարդարեանի բոլոր այն էջերը, զորս ան սովորութիւն ունէր գրել գրատախտակին վրայ, շարադրութեան իբրեւ փորձեր: Ապահովաբար անոնք գրի առնուած են ներշնչումի անսպասելի պահերուն, որոնցմով ա՛յնքան կը հրճուէր իր հոգին»<sup>8</sup>: Այդ տետրակին մէջ կան նաեւ հեփիաթներու եւ գաւառական ուսումնասիրութիւններու հաւաքածոյ մը, որմէ ոչ մէկ էջ լոյս տեսած է մինչեւ այսօր:

Զարդարեան Մեգրէի Կեդրոնական վարժարանին մէջ կը դասաւանդէր նաեւ հայոց պատմութիւն, որ արգիլուած էր կառավարութեան կողմէ: Ահա՛ թէ ինչու այս նիւթը կը դասաւանդուէր գաղտնի: Կրթական տարեշրջանի սկիզբը Զարդարեան պատմութեան դասապահները կը յատկացնէր գաղտնապահութեան: Ան աշակերտներուն կը բացատրէր եւ կը սորվեցնէր գաղտնապահութեան կարեւորութիւնը: Հարկ կ'ըլլար նաեւ կրթական տարեշրջանի ընթացքին ատեն-ատեն կրկնելու անոր անհրաժեշտութիւնը:

Պատմութեան դասաւանդման համար դասագիրք չկար: Զարդարեան գրատախտակին վրայ կը գրէր հայոց պատմութեան դէպքերն ու դէմքերը, իսկ աշակերտները կ'ընդօրինակէին մասնաւոր տետրակներու մէջ եւ կը պահէին գաղտնի: Զարդարեան «պատմելու այնքա՛ն շնորհալի վարպետ էր, որ պատմած ժամանակ բոլորս ալ ականջ դրած՝ անոր շրթունքներէն կախուած կը մնայինք եւ մենք մեզ մոռցած, կարծես երագային աշխարհ մը կը փոխադրուէինք»<sup>9</sup>:

Զարդարեան կը խորշէր այն աշակերտներէն, որոնց մէջ կը պակսէր թրոփքը. կը համակրէր բոլոր երիտասարդներուն, որոնք խենթութիւններ ունէին:

Մեգրէի իր ուսուցչութեան տարիներուն, յատկապէս Կեդրոնականի մէջ, Զարդարեան ամէն բանէ առաջ պատրաստեց ուսուցչական մարդուծ: Եղան բազմաթիւ շրջանաւարտներ եւ շրջանաւարտուիներ, որոնք նուիրուեցան ուսուցչական ասպարէզին եւ տարածուեցան հարբերդի զանազան գիւղերուն եւ շրջակայքին մէջ՝ դաստիարակչական առաքելութեամբ: Եղան նաեւ ոմանք, մտաւոր լայն պաշարով օժտեալ երիտասարդներ, որոնք իբրեւ գրագետ եւ հանրային գործիչ արդիւնատու դեր կատարեցին մեր ազգային կեանքին մէջ ամէնուր:

---

8.- Ռուբէն Զարդարեան, «Ամբողջական երկեր», Ա. արձակ էջեր եւ հեփիաթներ, «Նահատակ գրագետներու բարեկամներ», Մատենաշար թիւ 1, Փարիզ, 1930, էջ 13:

9.- Ուրուական, անդ., էջ 90:

Զարդարեան «ո՛րքան գրագէտ, ա՛յնքան ուսուցիչ է, որքան գրականութեան, այնքան ալ ուսուցչութեան լայնալիւ համակրանք մը ունի: Գրականութեան մասին ունեցած բազմակողմանի ձեռնհասութիւնը կը պատկերանայ զուգահեռաբար ուսուցչական արեւիշուտ\* պաշտօնին մէջ ալ, ու միեւնոյն ելեւորացումը որ կը կայանայ ընթերցումին մէջ հանդէպ իր գրութեան, կը ծածանի նաեւ ուսանողութեան համակրանքին մէջ, հանդէպ իր դասախօսութիւններուն»<sup>10</sup>:

Կրթական-դաստիարակչական աշխատանքներու կողքին, մեծ եղաւ Զարդարեանի դերը հասարակական գործերուն եւ մանաւանդ յեղափոխական աշխատանքին մէջ: Իր շունչով յեղափոխական դաստիարակութիւն կը ստանային երիտասարդներ, որոնց վրայ ունեցաւ անջնջելի հետք: Այդ գործունէութիւնը շփոթեցաւ կառավարութեան ուշադրութենէն, որ 1903-ին ձեռքակալեց զինք եւ բանտարկեց՝ Թիկատինցիի եւ Բանի մը այլ ուսուցիչներու հետ: Տարի մը բանտին մէջ մնալէ ետք, տեղի կ'ունենայ դատավարութիւն, եւ Զարդարեան ազատ կ'արձակուի, բայց ա՛լ չի կրնար մնալ Խարբերդի մէջ:

1904-ին Զարդարեան հանդերձ ընտանեօք կը տեղափոխուի Իզմիր, ուր ազգային հոգաբարձութեան կողմէ հրաւիրուած էր ստանձնելու տեղւոյն Ազգային վարժարանին տնօրէնութիւնը: Սակայն հոս ալ արգելքի կը հանդիպի թուրք իշխանատուներու կողմէ: Հարկադրաբար կ'անցնի մերձակայ Մանիսա քաղաք, ուր կը ստանձնէ հայ վարժարանի տեսչութիւնը՝ մէկ կըրթական տարեշրջան:

1905-ին տեղի կ'ունենայ սուլթան Համիտի մահափորձը: Նոյն ատեն Իզմիրի մէջ ալ կը կատարուէին յեղափոխական աշխատանքներ: Զարդարեան կը դառնայ կասկածելի: Կը խուզարկեն տունը. կը բանտարկուի երկու շաբաթ: Ընկերներու աջակցութեամբ, իբրեւ փախստական կ'ապաստանի Ֆիլիպէ, Պուկարիա եւ կը ձեռնարկէ «*Ռազմիկ*» եռօրեայի խմբագրական աշխատանքներուն:

Զարդարեանի ուսուցչական ասպարէզին յաջորդ եւ վերջին հանգրուանը կ'ըլլայ 1909-1915: «*Ազատամարտ*» օրաթերթի խմբագրութեան կողքին, ուսուցչութիւն կ'ընէ Հայրիկեանի Արդի վարժարանին եւ Պոլսոյ Կեդրոնականին մէջ:

---

10.- Յակոբ Փափագեան, «Ռուբէն Զարդարեան», «*Արեւիկ*» օրաթերթ (Պոլիս), ԺԹ. տարի, 2/15 Մայիս 1902, թիւ 4935:

\* ) Արեւիշուտ – ապաշնորհ, ապերախտ:

\*

\* \*

Իր կրթական-մանկավարժական գործունեության Պոլսոյ շրջանին, Զարդարեան պատրաստեց «Մեղրագետ» խորագրեալ հայերէն ընթերցանութեան, գրականութեան եւ հայ լեզուի դասագիրքերու շարք մը, թիով վեց հատ: «Մեղրագետ»-ի հիմնական նպատակը եղած է Միտֆի եւ Արուեստի գեղեցկութիւններուն առջեւ զմայլանք առաջացնել նորահաս սերունդին մէջ, եւ ատոնց ստեղծագործ ազդեցութեան տակ՝ բեղմնատուրել սերունդին միտքն ու հոգին»<sup>11</sup>:

Զարդարեան «ունայն եւ ամուլ» կը նկատէր գրագիտութեան կանոնները, հիմնաւորելով որ անոնք գոյութիւն ունեցած են գրականութեան ստեղծումէն ետք եւ ոչ անկէ առաջ: Արդարեւ, գրողները ոչ մէկ կանոն եւ օրէնք ունեցած են իբրեւ ուղեցոյց՝ բացի ստեղծագործ արուեստէն: «Ահա թէ ինչո՛ւ կը հրաւիրենք ուսուցիչները մէկ կողմ դնել գրագիտական կանոններու աննպատակ ծանրաբեռնումը տղուն մտքին վրայ եւ տրամադրելի ժամերը նուիրել գեղեցիկ էջերու ընթերցման ու գեղեցկագիտական վերլուծման, անոնցմով թաթաւելու համար լոյսին բացուող իմացականութիւնները: Բաւական է որ գեղեցկութեան ճառագայթ մը իյնայ ընդունակ հոգիներու խորքը. անիկա պիտի արթնցնէ անոնց մէջ ինչ որ կայ կենսալից եւ պիտի մղէ փոթելու»<sup>12</sup>:

Գրագիտութեան փոխարէն Զարդարեան կ'առաջարկէ սորվեցնել գրական սեռերու ծագման եւ զարգացման պատմութիւնը, ինչ որ ինք ըրած է, ցոյց տալով Արուեստի զանազան ձեւերը եւ անոնց առաջացումը: Ասիկա գիրքին ամէնէն կարեւոր մասերէն մէկը կը կազմէ, ինչ-որ տեղ գտած է բարձր կարգերու «Մեղրագետ»-ի վերջաւորութեան: Զարդարեան այս ուսումնասիրութիւնը պատրաստած է մեծ խնամքով եւ շատ օգտակար է գրականութեան հետեւող ուսանողներու համար: Մինչեւ այսօր կը պահէ իր այժմէականութիւնը:

Իր բոլոր դասագիրքերուն մէջ Զարդարեան ունեցած է համահայկական եւ համամարդկային մտածողութիւն: Ան կը նպատակադրէր ընդհանուր զարգացում եւ հետաքրքրութիւն ստեղծել նորահաս սերունդներուն մէջ: Այսպէս, «Մեղրագետ»-ին մէջ կողք կողքի տեղ գտած են թէ՛ արեւմտահայ եւ թէ՛ արեւելահայ գրողներէ հատուածներ՝ պահելով հանդերձ «Թիֆլիսի եւ Կ. Պոլսոյ հայերէնը»: Զարդարեան կը հիմնաւորէ որ «հայ երկու բար-

---

11.- Ռուբէն Զարդարեան, «Մեղրագետ», ժողովածու արդի հայ եւ օտար գրականութեան, բարձրագոյն կարգերու համար, հրատարակութիւն Արծիւ ժողովրդական գրականառանցի, Կ. Պոլիս, 1911, էջ 4:

12.- Նոյնտեղ:

բառներով մշակուած գրականութիւններուն ամբողջութիւնն ու միութիւնն է որ կը ներկայացնէ Հայ Միտքը»<sup>13</sup>: Աւելի'ն. հոն լուսատւ հատուածներ կան նաեւ եւրոպացի, ռուս եւ յատկապէս թուրք ժամանակակից գրողներու մտածումներէն՝ ընթացք տալու համար ազգերու համերաշխութեան, ինչպէս նաեւ ընդարձակելու ոչ-հայ գրականութիւններու հետ շփումը: Հոն տեղ գտած թարգմանութիւններուն մեծ մասը կը պատկանի Զարդարեանին: Տեղին է հաստատել նաեւ, որ մինչ այդ գործածութեան դրուած Պոլսոյ հայերէն դասագիրքերու մէջ առաջին անգամ ըլլալով տեղ կը գտնուի «մեր բնականից մէկ կարեւոր ցեղին՝ թուրքին միտքը: [...] Գրականութիւնն է մէկը այն միջոցներէն, որ կարող պիտի ըլլայ կամաց-կամաց ներդաշնակութիւն ստեղծել երկու բնականից ցեղերու հոգեբանութեան մէջ, հին կուտակուած դառնութիւնները չֆացնելով ու անոնց տեղ ստեղծելով աւելի մարդկային, աւելի ազնիւ եւ երկու ժողովուրդներուն յառաջդիմութեանը ծառայող աւելի գիտակից զգացումներ»<sup>14</sup>:

«Մեղրագետ»ներու շարքի լոյս ընծայումէն առաջ Պոլսոյ իրականութեան մէջ կը կիրարկուէին կարգ մը դասագիրքեր: «Մեղրագետ»ի երեսումէն ետք, մէկ կողմ դրուեցան ատոնցմէ շատեր: «Մեղրագետ»ը դարձաւ հայ լեզուի եւ գրականութեան ամէնէն փնտռուած դասագիրքը<sup>15</sup>:

Զարդարեան «Մեղրագետ»ին մանկավարժական դասատուութիւնը կատարած է մեծ հմտութեամբ: Գրական կտորները ընտրուած են լաւ ճաշակով: Զարդարեան իւրաքանչիւր հեղինակի համար պատրաստած է շատ համառօտ եւ ինքնատիպ կենսագրական. բայց մը, որ մինչ այդ չէր եղած ամբողջ արեւմտահայ մանկավարժութեան մէջ: Սիրունի կը հաստատէ. «Բայց առաւելապէս անոր բերած հայրենի շունչն էր, որ գիրքը սիրցուց: Առանց հոտորութեան եւ առանց թմբուկի, հայ հոգին էր որ կը ցոլանար հոն»<sup>16</sup>:

Ակնարկելով «Մեղրագետ»ի բարձրագոյն դասարաններու հատորին, Արամ Հայկազ կը հաստատէ որ այնքան լաւ պատրաստուած էր, որ «Բեմականները, Պոլիս մտնելուն պէս, առաջին գործերնուն մէկը եղաւ հայ դպրոցներուն մէջ անոնց գործածութեան արգելումը»<sup>17</sup>:

Որովհետեւ՝

Հայ հոգին էր, որ կը ցոլանար հոն:

13.- Նոյնտեղ:

14.- Նոյնտեղ, էջ 5:

15.- Յ. Ճ. Սիրունի, «Ռուբէն Զարդարեան», «Հայրենիք» ամսագիր, Գ. տարի, թիւ 3(27), Յունուար 1925, էջ 39:

16.- Նոյնտեղ:

17.- Արամ Հայկազ, «Ռուբէն Զարդարեան», Սիմոն Վրացեանի խմբագրած «Հայրենիք» տարեգիրք-տօնացոյցին մէջ, 1948, վեցերորդ տարի, տպարան «Հայրենիք», Պոսթըն, էջ 55:

## ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐԸ

Ռուբէն Զարդարեան գրական-ստեղծագործական, հրապարակագրական, գրականագիտական եւ ուսումնասիրական գրութիւններով աշխատակցած է հետեւեալ թերթերուն. «Մասիս», «Ծաղիկ», «Անահիտ», «Լոյս», «Արեւելք», «Դրօշակ», «Տարեցոյց Նշան Պապիկեանի», «Գաւառին տարեցոյցը», «Ամէնուն տարեցոյցը», «Նաւասարդ տարեգիրք», «Բիրակն», «Երկունք», «Հայրենիք», «Արեւելեան մամուլ», «Շիրակ», «Բամբեր» եւ «Ժամանակ»: Խմբագրած է «Ռազմիկ» եօթեան եւ «Ազատամարտ» օրաթերթը:

Ա) «Ռազմիկ» եօթեայ (Ֆիլիպէ, Պուլկարիա)

Զարդարեան «Ռազմիկ» եօթեան խմբագրած է 15/28 Հոկտեմբեր 1905-էն մինչեւ 18 Հոկտեմբեր 1908:

«Ռազմիկ» պարբերականին նպատակը բանաձեւուած է «Մեր առաջադրութիւնը» խորագրեալ առաջին խմբագրականին մէջ<sup>18</sup>: Այսպէս, ան պիտի հետապնդէ այն գաղափարները, որոնք կ'երաշխատեն ազգային բարեշրջութիւնն ու փրկութիւնը. կապ մը ըլլալ հայ գաղթականութեան, ինչպէս նաեւ գաղութներուն եւ մայր հայրենիքին միջեւ. զբաղիլ պալմանահայ գաղութին կենսական խնդիրներով. արձագանգ ըլլալ օտար քաղաքներէն վերանորոգման շարժումներուն, յատկապէս պուլկար ժողովուրդին, որուն անմիջական դրացնութեան մէջ կը գտնուի պուլկարահայ գաղթականութիւնը: Տակաւին. ան պիտի ֆննարկէ ընկերային հարցեր եւ երեւոյթներ, հանրային կենսական խնդիրներ: «Ռազմիկ»ը պիտի շխուսափի պայքարէն, այնքան ատեն որ առիկա կը վերաբերի գաղափարի մը յաղթանակին համար<sup>19</sup>:

«Ռազմիկ» եօթեան թէւ կ'առաջնորդուէր «խմբագրական մարմին»ով մը, ինչպէս կ'ըսէ անոր առաջին համարը, սակայն Ռուբէն Զարդարեան միակն էր, որ կը խմբագրէր գայն: Ֆիլիպէէն Զապէլ Եսայեանին գրած մէկ նամակին մէջ ան կը գրէ (1/14 Մայիս 1907).

«Այնքան վազնէ վազ, հեւ ի հեւ ու տենդոտ կեանք մը կ'անցընեմ ու երեւակայեցեմ, որ շաբաթը երկու անգամ ալ թերթ մը պէտք է լեցնել, իւրաքանչիւր ելած թիւին ետեւէն անմիջապէս յաջորդին վրայ մտածել՝ գրեթէ միս մինակդ, առանց կարեւոր ուժ մը ունենալու ֆեզի իբրեւ թելընկեր: Յոգ-

---

18.- Խմբագրական մարմին, «Մեր առաջադրութիւնը», «Ռազմիկ» եօթեայ, Ֆիլիպէ, Պուլկարիա, Ա. տարի, թիւ 1, 15 Հոկտ. 1905:

19.- Նոյնտեղ:

նութիւն, խոնջէնք ու մտացիւր վիճակ, առանց կարենալ ամփոփուելու զուտ գեղարուեստական աշխատութեան մը վրայ»<sup>20</sup>:

Զարդարեան ձեռնհասօրէն հետապնդեց *«Ռազմիկ»*-ի առաջադրած նըպատակները՝ շնորհիւ իր հմուտ եւ հարտար գրիչին: Պուկարիոյ մէջ հաստատուած հայ գաղթականներու հարցերը քննարկելէ աւելի՝ իր մտասէւեռումը հայրենիքն էր, որ կը հեծէր օսմանեան լուծին տակ: Արձագանգ եղաւ Թուրքիոյ մէջ խմորուող յեղափոխութեան, սահմանադրական կարգերու հաստատման, հայ աշխատատեղական դասակարգի շահագործման, ինչպէս նաեւ քաղաքատնտեսական, մշակութային եւ այլ հարցերու:

Զարդարեան այցելեց Պուկարիոյ զանազան շրջանները, ուր հայ գաղթականները հաստատուած էին: Մտահոգութիւն կը յայտնէր հայ վարժարաններու վիճակին մասին, որ կը գտնուին արգահատելի լնացումի մէջ՝ հակառակ այն իրողութեան, որ ամէն յարմարութիւն ունին զարգանալու: «Ազատութեան մէջ հայը առաջ կ'երթայ թէ ետ», կը գրէր ան<sup>21</sup>:

Իր այցելութիւններուն ընթացքին Պուկարիոյ քաղաքներուն մէջ, Զարդարեան էովին տպաւորուած էր հայ կիներու աշխատանքով: Գաղութին մէջ, գրեթէ ամէն տեղ, հայ կիներուն քով կը տեսնէր բարոյական աշխուժութիւն մը, ազգային կեանքի վերածնութիւն մը: Օրինակ. հետզհետէ սկըսած են կազմուիլ Կարմիր խաչի ընկերութիւններ, որոնց կողմէն կային նուագախումբ, երգեցիկ եւ թատերասէր խումբեր: Զարդարեան կը դրուատէ հայ կիները, որ մինչ այդ միայն տանտիկին, չէզոք եւ կրատական մնացած էին մեր մէջ: Ասիկա կը նկատէր յուսալի երեւոյթ մը, որ նախանշանը կու տայ ապագայի զարգացման»<sup>22</sup>:

Սակայն պուկարահայ գաղութը եւ առ հասարակ արտասահմանի հայազաղութները ընդհանրապէս խօսքով միայն զօրավիզ են հայ ազատագրական շարժումին եւ հայ դատին, կը գրէ Զարդարեան: 1905-ի հայթաթարական կոիւներուն, «արտասահմանի հայերուն բաժինը միմիայն հանդիսատեսի, պղատոնական վշտակրութեան եւ ախ վախ քաշելու դերը չէ: Պէտք է խորհիլ թէ կոիւին մէջ գտնուող մեր եղբայրները՝ իրենց ուժէն անհամեմատ վեր դիմադրութիւն մըն է որ կ'ընեն եւ մեր ամէնուս նիւթական ու շատ աւելի բարոյական աջակցութեանը կը կարօտին՝ մահուան կամուրջէն քիչ զոհաբերութեամբ անցնելու:

---

20.- Ռ. Զարդարեանի նամակը Զապէլ Եսայեանին, Ֆիլիպէ, 1/14 Մայիս 1907, Գ. Հ. Ազնաւուրեան (կազմեց եւ ծանօթագրեց), *«Արեւմտահայ գրողների նամականի»*, գրական ժառանգութիւն, գիրք VII, պրակ I, Երեւան, Երեւանի համալսարանի հրատարակչութիւն, 1972, էջ 251:

21.- Ռ. Զարդարեան, «Յուսալից շարժումներ», *«Ռազմիկ»*, Ա. տարի, 25 Փետր. 1906, թիւ 37:

22.- Նոյնտեղ:

Ամէնուս պարտականութիւնն է բաժնել այն երկու հօգօր ուժերը՝ որ այսօր իրենց մէջ առած բուն ի՛սկ Հայկական խնդիրը՝ կը սեղմեն, կը ճնշեն ու անոր գոյութեան հետ կը խաղան»<sup>23</sup>:

Զարդարեան մոլուցիկ կը խօսի մեծ պետութիւններու Հայաստանի ու հայութեան նկատմամբ մակերեսային կեցուածքին: Անոնք շատ անելի կը հետաքրքրուին ազգային ազատագրական պայքար մղող ժողովուրդներով, քան հայութեան: «Միմակ հայկական խնդիրն էր որ կորթեան հանգոյցը եղաւ տէրութիւններուն. մօտեցան, հոտուրտացին ու միշտ փրթերնին մէկ կողմ դարձնելով՝ ետ քաշուեցան»<sup>24</sup>:

Զարդարեան կը հաւատար, որ բիրտ ուժին դէմ միայն բիրտ ուժով կարելի է ընդդիմանալ եւ ինքզինք պաշտպանել, ինչ որ կը կատարուի արդէն Կովկասի մէջ: Պէտք է ապաւինիլ սեփական ուժին եւ ամէն հայ պէտք է որ վարժ ըլլայ զէնքի գործածութեան: Ան կը մեղադրէ Եւրոպայի հայ ուսանողները, որ ոչ միայն չեն գիտեր զէնք գործածել, այլեւ մինչեւ հիմա չեն կրցած ըմբռնել զինավարժութեան անհրաժեշտութիւնը եւ անառարկելի օգտակարութիւնը՝ մանաւանդ որ մօտիկ ապագային անոնք դերակատարութիւն պիտի ունենան ազգային կեանքին մէջ: Ինքնապաշտպանութեան կարիք կայ, բայց անոնք զէնք բռնել չեն գիտեր:

Իսկ անդին, պուկար երիտասարդները այդպէս չեն, անոնք կեանքի գիտակցութիւն ունին եւ կը ճանչնան քաղաքացիական պարտաւորութիւն: Զարդարեան կոչ կ'ուղղէ, որ հայ ուսանողութիւնն ու երիտասարդութիւնը պէտք է ըմբռնեն ֆիզիքական ուժին եւ զինավարժութեան կարեւորութիւնը եւ ապա անցնին գործնական աշխատանքի: Ամօք այն հայ երիտասարդներուն, որ չեն ուզեր լսել այս հրաւերը, որ ազգին հրաւերն է եւ պահանջը միեւնոյն ատեն: «Պատմութիւնը չէ որ իրողութիւններ կը ստեղծէ, այլ իրողութիւններն են որ պատմութիւնը կը կազմեն»<sup>25</sup>:

Հայերէն առաջ ազատագրական պայքար մղող ընդհանրապէս բոլոր ժողովուրդներն ալ դիմած են զէնքի եւ ստացած են իրենց անկախութիւնը, կը շարունակէ Զարդարեան: Հայութիւնն ալ բռնած է այդ ճամբան, որ կրնայ մութ ու վտանգաւոր ըլլալ, ելեւէջաւոր, բայց ճշմարտութիւնն է, որմէ զատ անցնելիք տեղ չունի հայութիւնը:

Հետեւաբար, «անհրաժեշտ է որ ամէն հայ՝ ինչ գաղափարի ու սկզբունքի ալ պատկանի, որքան ալ անհաշտ կամ թշնամի զոհողութեան պայման-

---

23.- Ռ. Զարդարեան, «Բաժնէ որ տիրես (երկրորդ յօդուած)», *«Ռազմիկ»*, Ա. տարի, 2 Նոյեմբեր 1905, թիւ 6:

24.- Ռ. Զարդարեան, «Նաւային ցոյցը», *«Ռազմիկ»*, Ա. տարի, 5 Նոյեմբեր 1905, թիւ 7:

25.- Ռ. Զարդարեան, «Զինավարժութեան կոչ», Եւրոպայի Հայ ուսանող. միութեան կողմէ, *«Ռազմիկ»*, Ա. տարի, 22 Փետրուար 1906, թիւ 36:

ներում՝ հաստատապես համոզուի թէ միակ ու տրամաբանական միջոցին էր որ դիմեց իր Ազգը, առանց որում անկարելի էր մարդկօրէն ապրիլ անո՞ր»<sup>26</sup>:

Զարդարեան յօդուածաշարքի մը մէջ առարկայական քննութեան կ'ենթարկէ Թուրքիոյ մէջ ապրող ազգերը, թրքական բանակը, գրականութիւնը (թիւ 15, 17, 19 եւ 20): Ան կը յայտնէ, որ Թուրքիոյ ժողովուրդներուն միջեւ եղող անհասարկութիւնը, կրօնական ըմբռնումները, ընկերային վիճակի խիստ մեծ տարբերութիւնները պատճառ եղած են որ ընդհանուր գաղափարի մը շուրջ չհաւաքուին ժողովուրդները եւ «հանրային միեւնոյն նշանաբանը չունենան ամէնքն ալ իրենց դրօշակին վրայ»<sup>27</sup>: Ան չէր պատկերացներ նաեւ որ Սուլթանը, լայն բարեկարգումներ կատարէ թուրք պետութեան մէջ: Կամ՝ Զարդարեանի պատկերաւոր բացատրութեամբ. «Անասունը իր ցոռկը նորէն գառագեղէն դուրս երկնցնէ ու երկաթէ խաղիսամենտում\* ետեւ նոր պար մը սկսի»<sup>28</sup>: Ան կը հիմնատուէր, որ բոլոր անոնք, որ իրազեկ են սուլթան Համիտի արիւնաշաղախ եւ ահաւոր վարչութեան՝ անկարելի կը նկատեն բարենորոգումները, որովհետեւ ան թշնամի է Արդարութեան եւ Ազատութեան: Ուրեմն, ոչ մէկ յոյս, ոչ մէկ վստահութիւն, ոչ մէկ կարելիութիւն: «Պատմութիւնը ո՛չ հրաշքով կը կառուցուի եւ ոչ ալ իր մեծ անցքերը տէրվիշներու տըլըսմովը կ'իրագործուին»<sup>29</sup>:

Զարդարեան «Ռազմիկ»ի մէջ իր խմբագրականները ստորագրած է մինչեւ 150-րդ համարը<sup>30</sup>: Այս չի նշանակեր թէ ատկէ ետք դադրեցաւ խմբագրելէ «Ռազմիկ»ը կամ ա՛լ խմբագրական չգրեց: Զարդարեան նաեւ սովորութիւն ունէր շտառագրելու իր խմբագրականները: «Ազատամարտ» օրաթերթին մէջ բազմաթիւ խմբագրականներ կան, որոնց մեծ մասին տակ իր անունը չենք գտներ:

Բոլոր պարագաներուն, երբ Թուրքիոյ մէջ տեղի ունեցաւ Երիտ-թուրք յեղափոխութիւնը (Յուլիս 1908), Զարդարեան շտապեց Պոլիս՝ իր գործուն մասնակցութիւնը բերելու հայութեան վերագարթնումի աշխատանքներուն: «Ռազմիկ»ի 16 Յունուար 1908-ի համար մէջ, անստորագիր, ան կը յայտնէր, որ կը գտնուինք պատմական դարագլուխի մը առջեւ, որովհետեւ Թուրքիոյ

---

26.- Նոյնտեղ:

27.- Ռ. Զարդարեան, «Թուրքիայէն կարելի՞ է յուսալ ընդհ. յեղափոխութիւն», «Ռազմիկ», Ա. տարի, 17 Դեկտ. 1905, թիւ 19:

28.- Ռ. Զարդարեան, «Սուլթանը Թուրքիան կը բարեկարգէ», «Ռազմիկ», Բ. տարի, 20 Յունուար 1907, թիւ 126:

29.- Նոյնտեղ:

30.- Ռ. Զարդարեան, «Սատանան է», «Ռազմիկ», Բ. տարի, 12 Մայիս 1907, թիւ 150:

\*) Խաղիսամ – վանդակաձող, ճաղ:

ընդդիմադիր տարրերուն մեծագոյն մասը, առանց ցեղի ու կրօնի խտրութեան, անցած է գործնական յեղափոխութեան, «առաջադրելով բռնի ուժ՝ բռնի ուժի դէմ, մարտական դիմադրութիւն՝ բռնակալ ու աներիշ ռեժիմին դէմ, հարուած՝ խօսքի տեղ»<sup>31</sup>: Եւ անգամ մը որ վերնայ արդի ռեժիմը մէջտեղէն եւ ժողովուրդի կամքը անցնի իշխանութեան գլուխ, այն ատեն իւրաքանչիւր կուսակցութիւն իր պահանջները կը ներկայացնէ՝ ջանալով յարգել տալ զանոնք նուիրագործել<sup>32</sup>: Իսկ աշխատատու ժողովուրդի պաշտպանութեան համար ամէնէն նպատակայարմար պետական կազմը, ըստ Զարդարեանի, ռամկավարադաշնակցական հանրապետութիւնն է<sup>33</sup>:

Այսպէս թէ այնպէս, Ռուբէն Զարդարեանի նախատեսածին պէս, «*Ռազմիկ*»-ը միշտ մնաց ծանօթէն լուրջ թերթ մը եւ, մա՛նաւանդ՝ վեր մնաց անձնականութիւններէ: Եռօրեան երբեք չեղաւ անձնական ատելութիւններու, փինախնդրութիւններու, վնասաբեր եւ անօգուտ աղմուկներու բեմ: Ոչ ալ շեփորը եղաւ այդ բոլորին: Եւ արդէն գործունէութեան առաջին օրերուն, Զարդարեան Արշակ Զօպանեանի գրած նամակի մը մէջ կ'առաջադրէր, որ «*Ռազմիկ*»-ը «մեր բոլոր շարքերուն մէջ խաղաղութեան եւ եղբայրութեան պատգամաւորներէն մէկն ըլլայ. եղբայրատեաց կիւրքերը, հանրային փրկութեան սպառնացող վէճերն ու արարքները արիւնով կը լեցնեն սիրտս. չէ՛ք գիտեր, թէ անդին հայ ժողովուրդը երկրին խորերը ի՛նչ հաւատք, ի՛նչ վստահութիւն դրած է արտասահմանեան մեր գործիչներուն վրայ. անդամանալի յուսահատութեան եւ կորուստի պիտի ենթարկուի այն օրէն, երբ իր մէջ այս վերջին հիասթափումն ալ տեղի ունենայ»<sup>34</sup>:

Իրաւամբ, Ռուբէն Զարդարեանի առաջադրանքները արդարացան: Կարդալ «*Ռազմիկ*»-ը կը նշանակէ թափանցել Զարդարեանի հոգիին մէջ, որ այնքա՛ն խորունկ է. կը նշանակէ զգալ անոր այլասիրութիւնը եւ նկարագիրը: Ան վեր մնաց բոլոր անձնական հարցերէ եւ կիւրքերէ: Զարդարեանի գրութիւնները կը սնանին հոգիի տարրերով: Ընդառաջեց պայքարի հրաւերին եւ անոր առաքելալը եղաւ: Մինչեւ վերջին օրը հայ հոգիին արիւնքինը ունեցաւ՝ առանց տեղի տալու կամ փախուստ տալու իրականութենէն, որ պիտի գար:

Անդուլ ու հաւատարիմ աշխատող մը եղաւ հայ դատին՝ իբրեւ հրապարակագիր, հանրային գործիչ եւ փառաքան մարդ: Տուեալները ցոյց կու տան, որ օժտուած էր բազմակողմանի շնորհներով, սակայն մէկ էր անոր գերագոյն մտահոգութիւնը – հայ ազգը եւ հայրենիքը: Ինք գիւղացի էր եւ

31.- Անստորագիր, «Ռէպի գործ», «*Ռազմիկ*», Գ. տարի, 16 Յունուար 1908, թիւ 217:

32.- Անստորագիր, «Կարմիր պլօք», «*Ռազմիկ*», Գ. տարի, 19 Յունուար 1908, թիւ 218:

33.- Նոյնտեղ:

34.- Ռուբէն Զարդարեանի գրած նամակը Արշակ Զօպանեանին, Ֆիլիպէ, 8/21 Նոյ. 1905, Ազնաւորեան, անդ., էջ 235:

հայ ազգին հիմնական խաւը կը նկատէր գաւառի հայութիւնը: Խարբերող սիրտն էր հայրենիքին:

Հրահանգիչ եւ օրինակելի յուշ մըն է իր կեանքը՝ ոգեղինացած հաւատքը ապագայի: Հայրենաբաղձութիւնը՝ ազատ հայութեան իր ազատ հայրենիքին մէջ:

#### Բ) «Ժամանակ» օրաթերթ (Պոլիս)

«Ազատամարտ» օրաթերթի լոյս ընծայումէն անմիջապէս առաջ Զարդարեան կանոնաւորապէս աշխատակցած է «Ժամանակ» օրաթերթին (1/14 Նոյ. 1908-էն մինչեւ 24 Մարտ/6 Ապրիլ 1909), ուր ստորագրած է 34 հրապարակագրական յօդուած: Տեղին է յայտնել, որ 2015-ին Իսթանպուլի մէջ առանձին հատորով մէկտեղուեցան այս յօդուածները՝ Սեւան Տէյիր-մէննեանի աշխատասիրութեամբ եւ Վահէ Թաշնեանի յառաջաբանով: Գիր-ին խորագիրն է «Յօդուածներ», 201 էջ:

«Ժամանակ»ի մէջ Զարդարեան կը քննարկէ Սահմանադրութեան ստեղծման անմիջական շրջանը: Ան կը յայտնէ որ մակերեսային եւ ձեւական փոփոխութիւններ կատարուած են Թուրքիոյ մէջ, որովհետեւ բռնատիրական արարքները կը շարունակուին սահմանադրական կարգերու տակ գրեթէ նոյն թափով: Զարդարեան ցանկացողն է ժողովրդավարական կարգերու հաստատման, ազգերու հաւասարութեան, ինչպէս նաեւ արդարութեան ստեղծման, հարստահարութիւններու վերացման, ազգային մշակոյթներու զարգացման, տնտեսական ազատութեան եւ վարչական ապակեդրոնացման սկզբունքի գործադրման. սակայն, պետութիւնը, կը հաստատէ ան, գործնականին մէջ ոչինչ կ'ընէ այդ ուղղութեամբ: Արդարեւ, չկան ընկերատնտեսական բարեկարգումներ, ընդհակառակն, պետութիւնը փտածութեան առաջնորդող բոլոր տուեալները ունի ըստ նախնոյն, ինչպէս կաշառակերութիւն, միջնորդութիւն, փողատական դէմքերու միջամտութիւն, դիւանակալութիւն եւ այլն:

Զարդարեան չի բաւականանար երեւոյթներ մատնանշելով, այլ կ'առաջարկէ նաեւ դարմաններ, որոնք կը բարելաւեն պետութեան կառոյցը եւ պետութիւնը պետութիւն կը դարձնեն: Այսպէս. սահմանադրական իրաւունքներու կիրարկում, վարչական ազատութիւն գաւառներուն, դատական կառոյցի արմատական փոփոխութիւն, ժողովրդավարական իրաւ կարգերու հաստատում, ուսման զարգացում՝ դպրոցներու եւ համալսարաններու ճամբով, բանակին մէջ զինուորագրութիւն բոլոր ազգային խմբաւորումներուն:

«Ժամանակ»ի մէջ լոյս ընծայուած Զարդարեանի հրապարակագրական

յօդուածները կարծեմ նախերգանքն էին «Ազատամարտ»ի, որուն մէջ ան պիտի ըլլար աւելի թելադրական, աւելի ուժգին եւ աւելի յարձակողական:

Գ) «Ազատամարտ» օրաթերթ (Պոլիս)

10 Յունիս 1909-ին Հ.Յ.Դ. Բիւրոն կը ձեռնարկէ «Ազատամարտ»ի հրատարակութեան, որուն խմբագրապետութեան կը հրաւիրէ Ռուբէն Զարդարեանը:

«Ազատամարտ»ի տարիները եղան Զարդարեանի համար հրապարակագրութեան ամենէն արդիւնաւէտ շրջանը: Արդարեւ, Զարդարեան արժանատրապէս եւ առանց ընկրկումի վարեց Հ.Յ.Դ. Պոլսոյ Կեդր. կոմիտէի պաշտօնաթերթ «Ազատամարտ»ի խմբագրութիւնը՝ 1909-1915, այսինքն՝ անոր հիմնումէն մինչեւ դադրեցումը: Նոյն ատեն ան գործուն դեր կատարեց ազգային եւ կուսակցական կեանքին մէջ: Բեղուն հրապարակագիր էր եւ աննկուն հրապարակախօս թէ՛ մամուլին եւ թէ՛ երեսփոխանական ժողովներուն, արժանանալով բոլորին ակնածանքին:

Զարդարեան ամբողջ էութեամբ աշխատեցաւ հարազատ թարգմանը ըլլալ հայ ժողովուրդի ցաւերուն, տագնապներուն, դժուարութիւններուն եւ բողոքներուն: Գեղարուեստական գրականութիւն մշակելէ շատ աւելի՝ զգացօրուան պահանջը ժողովուրդին հասնելու, աւելի բոտն թափով շարունակեց Ֆիլիպի մէջ սկսած գործը եւ ուղղութիւն տուաւ մեր ազգային կեանքին:

Զարդարեան կը ձաղկէր թուրք նոր կառավարութեան (երիտ-թուրք) թերութիւններն ու պակասները: Կրակ կը ժայթքէր մանաւանդ երբ տեսնէր կառավարութեան կողմնակալ դիրքորոշումը կամ անարդար կարգադրութիւնը հայութեան դէմ: Հայց կը ներկայացնէր անոր դէմ՝ հարցերուն դարման մը տալու համար. բաներ, որ գրեթէ պիտի չկատարուէին գեղարուեստական գրականութեան միջոցով:

Զարդարեան ոչ միայն «Ազատամարտ»ի մէջ, այլեւ բազմաթիւ պարագաներու, մնայուն փնտռտումի մէջ կը գտնուէր նշմարտութեան: Դաշնակցութեան եւ Իթթիհատի միջեւ կապերու խզումէն ետք, «Ազատամարտ»ի պայքարը կառավարութեան դէմ՝ Զարդարեանի խմբագրականներու նամբով, այնքան սաստկացաւ, որ պատճառ եղաւ կուսակցութեան պաշտօնաթերթի փակման թուրք զինուորական իշխանութեան կողմէ: Բայց Զարդարեանի խօսքը եւ պայքարը (իմա՝ Դաշնակցութեան) շարունակեց: «Ազատամարտ»ի փոխարէն հրատարակուեցան, թէւ կարճ ժամանակի համար, «Առաջամարտ», «Ազգակ», «Շանթ», «Բազին», «Մեղու» եւ «Բիւթանիա» թերթերը, որոնցմէ ոմանք արտօնագիր ունէին, իսկ չունեցողները

դարձեալ փակուեցան՝ մինչեւ որ հարթուեցաւ «Ազատամարտ»ի հարցը:

Զարդարեանի հրապարակագրութեան մեծագոյն յատկանիշներէն մէկը թելադրականութիւնն է, որ կը մղէ ընթերցողը մտածելու եւ քննարկելու: Այսօր, որքան ալ փոխուած ըլլան հրապարակագրութեան ձեւեր կամ ոճը, Զարդարեանի յօդուածները կամ գրութիւնները կը պահեն իրենց դաստիարակչական-թելադրական բնոյթը, ինչպէս նաեւ այժմէականութիւնը: Կ'արժէ մտածել, «Ժամանակ»ի յօդուածներուն նման, հատոր մը կամ երկուք, հրատարակել Զարդարեանի հրապարակագրական եւ ուսումնասիրական յօդուածներէն շատեր, որ լոյս տեսած են «Ռազմիկ»ի եւ «Ազատամարտ»ի մէջ:

Զարդարեան շատ քիչ բան ստորագրած է «Ազատամարտ»ի իր խմբագրականներուն տակ: Սակայն իրեն կը պատկանի առաջնորդողներուն մեծ մասը: «Ազատամարտ»ի խմբագիրներէն Ռուբէն Դարբինեան, որ Զարդարեանի ճիշդ դիմացը կը նստէր խմբագրատան մէջ, կը յայտնէ, թէ իր գործակիցը մեծ դժուարութեամբ եւ չափազանց դանդաղ կը գրէր խմբագրականները, երեքէն հինգ ժամ: Ասոր պատճառներէն մէկը այն է, որ Զարդարեան կ'աշխատէր գրել գեղարուեստագէտի յղկուած ոճով<sup>35</sup>:

Զարդարեան գրեթէ ամէն օր խօսք մը ունէր ըսելիք «Ազատամարտ»ի մէջ, ամէն օր խմբագրական մը: Այս երեւոյթը նորութիւն էր մեր հրապարակագրութեան մէջ:

Զարդարեանի խմբագրականները եւ այլ յօդուածներ շատ մեծ ընդունելութիւն գտան մեր ժողովուրդին մէջ: «Ազատամարտ»ի ժողովրդականութիւնը աւելի եւ աւելի տարածուեցաւ: 27 Հոկտեմբեր 1912-ին Սիմոն Վրացեանի (Մ. Նահանգներ) ուղղուած նամակի մը մէջ Զարդարեան կը գրէր, այլ բաներու կարգին. «...Տամ ձեզի ուրախ լուր մը՝ այս բոլոր շարժապարհներու մէջ «Ազատամարտ»ը անօրինակ եւ աննախընթաց յաջողութիւն մը գտաւ Պոլսոյ մէջ: Պատերազմէն [Պալքանեան] առաջ Պոլսոյ իր վանքն\* էր մօտ 1600 կամ 1700. պատերազմէն յետոյ աստիճանաբար բարձրացաւ եւ այսօր Պոլսոյ մէջ կը ծախուի 6000: Ո՛չ «Բիւզանդիոն», ո՛չ «Ժամանակ», ո՛չ «Արեւելք» եւ ոչ մէկ հայ թերթ այս ծաւալումն ունի: Հասարակութիւնը, նոյնիսկ մեր հակառակորդ խաւերը՝ այն հաստատ համոզումը կազմած են, որ միմիայն «Ազատամարտ»ը կու տայ «ճիշդ, շիտակ եւ ազատ» տեղեկութիւններ»<sup>36</sup>:

---

35.- Ռուբէն Դարբինեան, «Կեանքիս գրէն, փշրանքներ իմ յուշերէս», «Հայրենիք» ամսագիր, Լէ. տարի, թիւ 3, Մարտ 1959, էջ 21:

36.- Գաբրիէլ Լազեան, «Յեղափոխական դէմքեր (մտաւորականներ եւ հայդուկներ)» հրատարակութիւն Հ.Յ.Դ. երիտ. միութեան, Գահիրէ, տպարան «Նուպար», 1945, էջ 213-214:

\*) Վանք - ֆրանսերէն՝ վաճառք, տպագրանակ իմաստով:

Զարդարեան կը յայտնէ նոյն նամակին մէջ, անխոնջ աշխատելով, «ոչ լուր օր գիտեմ, ոչ կիրակի. գիշեր ցորեկ խմբագրատունն եմ»: Ամբողջականօրէն փարած էր «Ազատամարտ»ին, որուն դերակատարութեան կը հաւատար ողջ էութեամբ: Պոլսոյ մէջ գրեթէ ամէն հայ կը կարդար «Ազատամարտ»ը եւ Կիրակի օրերու գրական բովանդակութեամբ սփանշելի թիւերը:

Զարդարեանի եւ «Ազատամարտ»ի ժողովրդականութիւնը տարածուեցաւ նաեւ հայութենէն դուրս՝ օսմանեան իրականութեան մէջ: Զարդարեան թէ՛ «Ռազմիկ»ի եւ թէ՛ «Ազատամարտ»ի մէջ կը կատարէր թարգմանութիւններ բազմաթիւ գրողներէ, ընդ որոնց թուրք ժամանակակից գրողներէ. յատկապէս անոնցմէ, որ ընդդիմադիր էին համիտեան վարչակարգին եւ կը շատագովէին ազատութեան եւ արդարութեան գաղափարները, ինչպէս նաեւ զօրավիգ կը կանգնէին անոնց: Այդ թարգմանութիւններէն շատեր ներառեց իր դասագիրքերուն՝ «Մեղրագետ»ներուն մէջ: Յետոյ, Զարդարեան «Ազատամարտ»ի առաջին էջի վրայ տեղ տուաւ թուրք յառաջդիմական հրապարակագիրներու օսմաներէնով յօդուածներու, որ դրական անդրադարձ կ'ունենային թուրք ուսեալ հասարակութեան վրայ: Երիտասարդ թուրք կառավարութիւնը, սակայն, Զարդարեանին արգիլեց նմանօրինակ գրութիւններու լոյս ընծայումը «Ազատամարտ»ի մէջ:

Այս հեզահամբոյր, հանդարտաբարոյ, վերին աստիճանի համեստ ու խոնարհ, յաւակնութիւններէ զուրկ, ամբարտաւանութիւններէ հեռու, անխոռով ու պաղարիւն (բայց ներսի կրակով հրաբորբ), մարդկային արժէքներով լեցուն գիւղացին, յաջողեցաւ «Ազատամարտ»ի մէջ համախմբել շէղ սերունդ մը, ունեցաւ օգնականներու եւ աշխատակիցներու փայլուն բանակ մը, որ ամբողջականօրէն տիրեց օրուան մթնոլորտին վրայ, մտայնութիւն ձեւաւորեց եւ յաջողեցաւ հասարակութիւնը իրեն կապել: ««Ազատամարտ»ը վեց տարի արեւմտահայ լաւագոյն թերթը եղաւ», կը հաստատէ Յակոբ Օշական<sup>37</sup>:

Այսօր, մեր գրական եւ հրապարակագրական պատմութիւնը կը խօսի «Ազատամարտի սերունդ»-ի մասին, որ իր մէջ կը հաւաքագրէ հետեւեալ մտաւորականները, գրողները եւ ազգային հասարակական գործիչները. Յարութիւն Շահրիկեան, Ռուբէն Դարբինեան, Լիպարիտ Նազարեանց, Գեղամ Բարսեղեան, Հ. Մ. Համբարձումեան, Յ. Ճ. Սիրունի, Արտաշէս Յարութիւնեան, Զապէլ Եսայեան, Սիամանթօ, Դանիէլ Վարուժան, Յակոբ Քիւֆէնեան-Օշական, Ա. Վոսմեան, Է. Ակնունի, Ս. Զաւարեան, Գ. Խաժակ,

---

37.- Յ. Օշական (կազմեց), «Հայ գրականութիւն», երրորդ տպագրութիւն, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1966, էջ 480:

Շաւարշ Միսաֆեան, Հայկ Թիրեաֆեան, Կ. Փաշայեան, Բարսեղ Շահպազ, Գասպար Իփէֆեան, Ներսէս Փափագեան, Գրիգոր Զօհրապ, Մշոյ Գեղամ, Մելֆոն Կիրենեան (Հրանդ), Մ. Վարանդեան, Ռուբէն Սեւակ, Լեւոն Շանթ, Վրթ. Փափագեան, Ռ. Լեւոնեան, Սարգիս Մինասեան, Հմայեակ Մանուկեան, Լ. Մօզեան, Ս. Սրենց եւ ուրիշներ:

«*Ազատամարտ*»ի խմբագրատունը ամբողջական Հայաստան մըն էր», կը հաստատէ Կարօ Սասունի եւ կը շարունակէ. «Մտաւորական ընտրանին հոն էր Արեւելեան եւ Արեւմտեան Հայաստանէն, գրագէտն ու ընկերաբանը, հոեւորն ու ֆնմադատը հոն կը մտնէին ազատ հայրենիքի սեմէն անցնելու պէս»<sup>38</sup>:

Զարդարեան յաջողեցաւ «*Ազատամարտ*»ին կապել նաեւ չէզոք գրիչի մարդիկ, ինչպէս կը տեսնուի նշեալ անուններուն մէջ. բան մը, որ «*Ազատամարտ*»ը կը վերածէր հայ ժողովուրդի ձգտումներուն ամբողջական արտայայտիչը: Սահմանադրութեան տարիներուն (1908–1915) Պոլսոյ հայութեան մէջ ծուարած կուսակցական գծում պայքարը պատճառ կ'ըլլար, որ գրագէտներ եւ մտաւորականներ ցեխարձակումներ ընէին իրարու, նոյնիսկ չիօսէին իրարու հետ: Զարդարեան ասոնց շարքին չէր: Դաշնակցական էր եւ Դաշնակցութեան գաղափարներուն տէր կանգնեցաւ «*Ազատամարտ*»ի մէջ, այսուհանդերձ կուսակցամոլ չէր: Շնորհիւ իր մարդկային ազնիւ խառնուածքին, ան միշտ պահեց իր սերտ կապերը հակառակորդ մտաւորականներու հետ: «Առաւելապէս զինք կը խանդավառէին միտքի ճիգերը: Ու ամէն անգամ, որ առիթը ներկայացաւ, չզլացաւ իր խրախուսանքը»<sup>39</sup>: Բոլորին հետ սիրալիր մնաց՝ արժանանալով դաշնակցականներու կշտամբանքներուն: Բայց իր այդ խառնուածքին բերումով է որ շատ գրագէտներ, բանաստեղծներ ու մտաւորականներ կապուեցան «*Ազատամարտ*»ին:

Զարդարեան միշտ կը խրախուսէր նորերը, որոնցմով կը սիրէր շրջապատուիլ: Կ'ուզէր որ «*Ազատամարտ*»ը նաեւ ըլլայ երիտասարդներու բեմը: Անոնցմէ մէկն էր Յ. Օշականը, որ տակաւին սկսնակ մըն էր, երբ սկսաւ աշխատակցիլ «*Ազատամարտ*»ին: Պէտք է ստեղծուէր նորը մեր իրականութեան մէջ, որովհետեւ հայութիւնը ամբողջովին կը գտնուէր պատմական եւ ընկերային նոր պայմաններու եւ փաղափական նոր մթնոլորտի մէջ: Զարդարեան շատ մտահոգ էր նորերու պատրաստութեամբ: Եւ այդ ուղղութեամբ տարաւ հսկայական աշխատանք: Հեռաւոր գաւառներու եւ գիւ-

38.- Կ. Սասունի, «Ազատամարտի սերունդը», «Բազին» ամսագիր, Դ. տարի, թիւ 4-5, Ապրիլ-Մայիս 1965, էջ 9-10:

39.- Յ. Ճ. Սիրունի, «Ռուբէն Զարդարեան», «Հայրենիք» ամսագիր, Գ. տարի, թիւ 3 (27), Յունուար 1925, էջ 41:

դերու մէջ «Ազատամարտ»ը յանախ իբրեւ դասագիրք ծառայեց ուսուցիչներու ձեռքը<sup>40</sup>:

«Ռազմիկ»ի օրերէն իսկ Զարդարեան կը յայտնէր, որ արտասահմանի մէջ շատոնց պէտք է գոյութիւն ունենար հրատարակչական մը<sup>41</sup>: Բարոյական դրամագլուխը կայ, կը գրէր ան, իսկ նիւթական դրամագլուխը երեւակայածին չափ անյաղթահարելի դժուարութիւն մը չէ: Հոս-հոն անհատներ հրատարակած են գիրքեր, սակայն ատիկա հրատարակչական չի համարուիր:

Նոյն գաղափարը ունեցած է «Ազատամարտ»ի օրերուն: Պոլսոյ մէջ կար կուսակցական պայքար, եւ Զարդարեանի այս ձեռնարկը քննադատուեցաւ իբրեւ դաշնակցականի գործ: Արշակ Զօպանեան իր «Բրոնիկ»ներէն մէկուն մէջ կը գրէ. «Ես երբեք համաձայն չեմ անոնց որ այդ Հրատարակչականի այժմեան վարիչներուն մէջ քանի մը դաշնակցական գտնուելուն համար այդ ձեռնարկը կուսակցամոլական անձուկ գործ մը նկատելով անոր ամէն օժանդակութիւն մերժեցին: [...] Ըստ իս այդ կուսակցական համարուած Հրատարակչականը կուսակցական գոյն չունի: Ռուբէն Զարդարեան որ այս հրատարակչականին վարիչներու մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ, կուսակցական մը ըլլալէ առաջ գրագէտ մըն է իմ աչքիս, եւ մին մեր ամէնէն ինքնատիպ ու տաղանդաւոր գրագէտներէն»<sup>42</sup>:

Բոլոր պարագաներուն, Հրատարակչականը, որուն ցանկացողն էր Զարդարեան, կրցաւ միայն մէկ գիրք հրատարակել, որմէ ետք ընկերութիւնը լուծուեցաւ<sup>43</sup> յամեցող կուսակցական պայքարին պատճառով:

\*

\* \*

Զարդարեան Ֆիլիպէնէն գրած նամակի մը մէջ (30 Մայիս 1906) Հրանդ Ալեանաֆի (գրող եւ նկարիչ) կը յայտնէ, որ ճշմարիտ քննադատութիւնը ծանրակշիռ եւ նպատակայարմար կ'ըլլայ այն ատեն միայն, երբ անիկա ուղղակի կը հարուածէ առաջադրուած գաղափարը, ոչ թէ զայն հրապարակ նետող անձնատրութիւնը: Անձերուն ուղղուած քննադատութիւնը նըպատակին չի հասնիր. այսինքն՝ ոչինչ կ'ըսէ հարցին մասին<sup>44</sup>:

---

40.- Յ. Ճ. Սիրունի, ««Ազատամարտ»ի սերունդը», «Հայրենիք» ամսագիր, Բ. տարի, Յուլիս 1924, թիւ 9, էջ 118:

41.- Ռ. Զարդարեան, «Հրատարակչականի մը պէտքը», «Ռազմիկ», Ա. տարի, 29 Ապրիլ 1906, թիւ 52:

42.- Ա. Զօպանեան, «Բրոնիկ», «Անահիտ» հանդէս, Փարիզ, ԺԲ. տարի, Մարտ-Ապրիլ 1911, թիւ 3-4, էջ 91:

43.- Սիրունի, «Ռուբէն Զարդարեան», անդ.:

44.- Ռ. Զարդարեանի գրած նամակը Հրանդ Ալեանաֆեանին, «Յուսաբեր» գրական, գեղարուեստական եւ գիտական բաժին, Ա. տարի, 7 Սեպտեմբեր 1944, թիւ 2-134, էջ 17:

Զարդարեան, այլ բաներու կարգին, կը հաստատէ.

«Հասարակութիւնը անձերէ առաջ՝ պէտք է որ շահագրգռեմք եղելութիւններով, դէպքերու վերլուծումներով, սկզբունքներով: Սխալ ուղղութիւն մը եղած է ասկէ առաջ արտասահմանեան թերթերու բռնած ընթացքը՝ երբ քննադատելու ելած են, եւ այս իսկ պատճառով անոնք հայհոյած են, պռնացած են, նախատած են, միշտ ատերած են, բայց բան մըն ալ չեն կըրցած շինել:

«Ռազմիկ»ը տրամագծապէս հակառակ ուղղութիւն մըն է որ բռնած է իր նախորդներէն ու չպիտի շեղի անկէ. համոզուած ըլլալով թէ քննադատութեան նպատակն է ստեղծել»<sup>45</sup>:

Քննադատութիւնը, ըստ Ռուբէն Զարդարեանի, կ'ըլլայ առանց կիրքի, առանց «անուանարկիչ տողերու»: Զուտ անձնական վէճերով բանակոծող ծայր չունի եւ տեղ չի հասնիր:

Զարդարեան ունէր կոտ ոճ եւ մշակուած լեզու. կը գրէր ժողովուրդին հոգիէն բխող, նոյնինքն ժողովուրդը բնորոշող պարզ ու պատկերաւոր լեզուով: Կը կարդացուէր հաճոյքով: Երուանդ Սրմաբէշխանլեան հետեւեալ ձեւով կ'արժեւորէ Զարդարեանի խմբագրականները եւ լեզուն. «[Խմբագրականները] գոռուած, կանոնաւորուած, գոր կը կարդամ ամէն օր, եւ որ հակառակ լրագրական հեւասպառ աշխատանքի մը արդիւնքն ըլլալուն, բարձրօրէն գրական է, գեղեցիկ է, պատկերաւոր է եւ խրոխտ: Իր դէմքը, իբրեւ գրական մարդ եւ իբրեւ գործիչ, ամէնէն համակրելիներէն մէկն է որոնց կը հանդիպինք մեր ազգային վերջին երեսնամեայ կեանքին մէջ: Նախանձի եւ մախանքի ալիքին տակ, որ ընդհանրապէս կը գոյանայ բարձր անհատականութեանց շուրջը, ան կը կենայ աննկուն եւ անելի խրոխտ, ճիշդ այն իրողութեամբ որով մեզ կը ներկայացնէ իր հոյակապ գամփոքը»<sup>46</sup>:

««Ազատամարտ»ի քննադատը» կ'որակէ զինք Կարօ Սասունի<sup>47</sup>: Իսկ Եղուարդ Պոյանեանի հաստատումով՝

«Յեղափոխական մտաւորականի ցայտուն տիպարներէն է, կրակ եւ ըմբոստութիւն ժայթքող կարմիր հրապարակագիր մը՝ «Ռազմիկ»ի եւ Յեղափոխութեան ծաւալուն օրաթերթ «Ազատամարտ»ի խմբագրապետը: Արեւմտահայերուն Ահարոնեանն է, իբրեւ յեղափոխական խօսքի անտարանիչ»<sup>48</sup>:

---

45.- Նոյնտեղ:

46.- Երուանդ Սրմաբէշխանլեան, «Ռուբէն Զարդարեան», գրական ասուլիսներ Դ., «Ռ. Զարդարեանի «Յայգալոյս»ը», հրատարակութիւն Էսսեան Սանուց միութեան, թիւ 4, Կ. Պոլիս, տպագրութիւն Օ. Արզուման, 1913, էջ 28-29:

47.- Կարօ Սասունի, անդ.:

48.- Եղուարդ Պոյանեան, «Դէմքեր», Ա. հատոր, իր դէմքը՝ Պօղոս Սնապեան, Պէյրութ, տպարան Ատլաս, 1966, էջ 209:

\*

\* \*

Կարգ մը գրաֆննադատներ, որոնց գլխատոր՝ Յակոբ Օշական, անշուշտ ուրիշներ ալ, կը յայտնեն որ Ռուբէն Զարդարեանի գեղարուեստական գրականութիւնը շատ բան տուածեց՝ խմբագրական-հրապարակագրական ծանրաբեռնուածութեան պատճառով: Ճիշդ է որ Զարդարեան գրական արժէքով շատ քիչ բան արտադրեց, բայց շատ բան շահեցաւ հայ հրապարակագրութիւնը, որուն ներարկուեցաւ նոր ու մարտունակ արին:

Զարդարեան օժտուած էր թէ՛ գրագէտի եւ թէ՛ հրապարակագիրի տաղանդով: Ան գրագէտի տաղանդը էախառնած է նաեւ հրապարակագրութեան մէջ, որ որոշ չափով հոետորական շունչ մը ունի անկասկած: Մնաց որ Զարդարեանի կարգ մը վիպակներուն եւ արձակ գրութիւններուն մէջ ալ քիչով-շատ թափանցած է հոետորութիւնը: Ու գրագէտը գրագէտ է միշտ բոլոր պայմաններուն տակ եւ գործերուն մէջ – խմբագրական, նամակ, ճառ կամ արձակ որեւէ գրութիւն: Մեր մէջ, յատկապէս արեւմտահայ կարգ մը գրողներուն, գեղարուեստական գրականութիւնը եւ հրապարակագրութիւնը այնքան շաղախուած են իրարու հետ, որ գրական նոր սեռ մը յառաջացած է կարծեմ:

\*

\* \*

«Ազատամարտ»ի կողմէն, Զարդարեան հրատարակած է նաեւ «Բագին» շաբաթաթերթը եւ «Յաւելուած Ազատամարտ»ը, որ ունէին խնամուած բովանդակութիւն: Յակոբ Օշականի «Խոնարհները» խորագրեալ հատորին պատմութեամբներուն մեծ մասը առաջին անգամ այստեղ հրատարակուած է: Հոն լոյս տեսած են նաեւ օտար հեղինակներէ թարգմանութիւններ: Կան նաեւ լուրջ ուսումնասիրութիւններ ընկերային հարցերու մասին:

Սահմանադրութեան տարիներուն Զարդարեան նաեւ կ'աշխատակցէր Պոսթընի «Հայրենիք»ին, որուն կ'ուղարկէր շաբաթական բազմաթիւ տեսութիւններ՝ «Այ՛ Եհովայի» ծածկանունով: Այս գրութիւններուն մէջ ան կը նկարագրէր Թուրքիոյ գործերը եւ հայ ժողովուրդին մտահոգութիւններն ու աշխատանքները Ամերիկայի մէջ ծուարած հայ պանդուխտներուն:

Այս բոլորով հանդերձ, մեր իրականութեան մէջ Զարդարեանի համբաւը աւելի կ'երթայ գրագէտին – որ մեծ է իրաւամբ – քան հրապարակագիրին: Սակայն մեր հրապարակագրութեան պատմութիւնն ալ, անկասկած, յա-

տուկ տեղ կը վերապահէ Ռուբէն Զարդարեանին: Արդարեւ, իբրեւ խմբագիր եւ հրապարակագիր, Զարդարեան ցոյց տուաւ արտասովոր հմտութիւն: Հ.Յ.Դ. Պոլսոյ Դաշնակցութեան պաշտօնաթերթը, անոր ղեկավարութեան տակ, եղաւ եզակի երեւոյթ մը հայ մամուլի տարեգրութեան մէջ:

\*  
\* \*

1914 Օգոստոսի վերջատրութեան Զարդարեան վերադարձաւ Էրզրումէն, ուր գացած էր մասնակցելու Հ.Յ.Դ. Ը. Ընդհանուր ժողովին: Խանդավառութեամբ եւ բարձր տրամադրութեամբ գացած էր, բայց վերադարձաւ մտահոգ ու յոռետես: Կը նախագգար մօտալուտ արհաւիրքը: Խմբագրական շգրեց ա՛լ «Ազատամարտ»ի մէջ: Ուժ կու տար գրական նիւթերու<sup>49</sup>:

Սիրունիին տրուած էր պարտականութիւնը Զարդարեանը համոզելու, որ հեռանայ Պոլիսէն:

«Արժէ՛ք շտուաւ պնդումիս: Դասալիութիւն կը սեպէր հայ ժողովուրդը աղէտին գիրկը թողուլ, ու հեռանալ երթալ:

«– Հրաշն<sup>50</sup> ու ես չենք կրնար Պոլիսը թողուլ. Հրաշը պէտք է մնայ իրեն վստահուած պարտականութեան գլուխը, իսկ ես «Ազատամարտ»ի գլուխը ըլլամ մինչեւ իր վերջին օրը. միւսները կրնան հեռանալ. անոնք մնալու պատճառ մը չունին:

«Այս եղաւ իր կտրուկ պատասխանը ինծի»<sup>51</sup>:

Զարդարեան մինչեւ վերջ մնաց իր որոշումին վրայ:

Թուրքերը տարին զինք:

«Ազատամարտ»ը լոյս չտեսաւ 11/24 Ապրիլ 1915-ին:

ԿԱՐՕ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

---

49.- Սիրունի, «Ռուբէն Զարդարեան», անդ., էջ 43:

50.- Հրաշը Թիւրքաբեկի Հայկն է, «Ազատամարտ»ի վարչական պատասխանատուն:

51.- Սիրունի, «Ռուբէն Զարդարեան», անդ., էջ 43:

816-11

Long Jm. - Wrightsburg Tenn. 2000. 1st yr. 100000

[illegible][illegible]

97 2 Apr. 10/22

June 1892

Jan 22 Jan 24 Feb 25

My dear Mr. May

Mr. Jackson

1871

...Luzerne ...

**Նմուշ՝ Ռ. Զարդարեանի ձեռագրէն**

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ՀԱՏՈՐԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայ հատորով ներկայացուած Ռ. Զարդարեանի 63 նամակներով չի սպառիր անշուշտ անոր ամբողջական նամակագրութիւնը:

Այս հատորին մէջ նկատի առնուած են միայն 1897-էն 1903 թուականներուն հարբերդի շրջանէն գրուածները:

Վերոյիշեալ թուականներու գրութիւններէն ի յայտ կու գայ այդ տարիներուն Ռ. Զարդարեանի կեանքին վերաբերող բոլորովին անծանօթ մէկ իրողութիւն, այն որ ի յայտ բերած ենք Հ.Յ.Դ. դիւանատան արխիւներէն: Հարցը կը վերաբերի անուանի գրողին մախ հնչակեան կուսակցութեան պատկանելիութեան, մինչեւ իսկ հարբերդի շրջանի հնչակեան Կեդր. կոմիտէի անդամակցութեան, ապա անոր յարիւր Հ. Յ. Դաշնակցութեան իբրեւ ղեկավար հարբերդի կոմիտէին կամ Կեդր. կոմիտէին: Աւելի մանրամասն ծանօթացման համար կը բաւականանանք ընթերցողին ուշադրութեան յանձնել 2 Դեկտ. 1897-ին հեղինակին գրած ընդարձակ նամակը՝ ուղղուած Ժընեւ, Հ.Յ.Դ. «Դրօշակ»ի խմբագրութեան (Տես էջ 40-41):

Զարդարեանի կենսագրութեան մասին խօսք կ'ըլլայ անշուշտ առանձնապէս: Յիշատակենք հոս յատկապէս իր բանտարկութիւնը հարբերդի մէջ. այդ մասին կատարուած նշումները ընդհանուր բնոյթի են եւ ոչ միատեսակ:

Այդպէս է նաեւ իր զակին՝ արձակագիր Հրաչ Զարդարեանի տեղեկատուութիւնը այդ մասին (Տես Հրաչ Զարդարեանի Պօղոս Սնապեանին ուղղած 19/9/1981 թուակիր նամակը՝ «Նամակներ Պօղոս Սնապեանին», էջ 58, Պէյրութ, 2023):

Զարդարեանի բանտարկութեան մասին յատուկ յիշատակութիւն կայ «Դրօշակ»ի մէջ լոյս տեսած հարբերդի ընդարձակ տեղեկագրին մէջ («Դրօշակ», Նոյեմբեր 1904 թ. էջ 167-168 եւ Ապրիլ 1905 թ. էջ 70-71): Տեղեկագիրը կը յիշատակէ յատկապէս հարբերդի շրջանին մէջ տեղի ունեցած ձերբակալութիւններն ու բանտարկութիւնները՝ թիով 35,

ինչպես նաև բանտարկեալներուն անունները:

Արդարեւ, այս եղելութիւնները պատահած են 1903 թ. Մայիսին եւ շարունակուած մինչեւ Յուլիս 7, երբ այս վերջին ամսուն 20-ին կ'աւարտէր «նախնական ֆննութիւն» ըստածը:

Տեղեկագրին մէջ կը կարդանք. «Հետեւեալներն ալ առաւել կամ նրւազ նեղութեան օրեր ունեցան, շաբաթներով խիստ հսկողութեան ենթարկուած եւ գիշերներով քնատ թողուած ըլլալով»:

Այս երկրորդ խումբին մէջ կը յիշուի Ռուբէն Զարդարեան: «Ռուբէն Զարդարեան, Մեզրէէն, ուսուցիչ եւ գրագէտ, գաւառական ժողովոյ ա. ատենադպիր եւ բազմանդամ ընտանիքի հայր»:

«Խարբերդի առեւտրական շէնքը՝ ուր լեցուած մնացին ասոնք՝ մէկ երկու ամիս, սպասելով նախնական քննութեանց աւարտման՝ դարձել էր ժանտատեսիլ սպանդանոց մը, ուրկէ գիշերները տանջանքի ենթարկուած զոհերուն աղաղակները կը լսուէին՝ խառն հարւածներուն բիրտ ձայնին ու դահիճներու յիշոցին»:

Խարբերդէն բանտարկեալները կը փոխադրուին մօտակայ Մեզրէի բանտ «թեւ թեւի կապուած, շրջապատուած սուինաւոր հրացանակիր զինուորներով»:

Տեղեկագրին մէջ կը կարդանք որ դատաւարութիւնը տեսած է մօտաւորապէս վեց ամիս: Նախնական ֆննութեանց թուղթերուն տակ իբր վկայ նշանակուած փոլիսները, ժանտարմները եւ կառավարական պաշտօնեաները միշտ իրար հակասած են: Դատական գործընթացի ժամանակ փաստուած է հետապնդումի ընթացքին բանտարկեալներուն վերագրուած յանցագործութիւններուն մասին յիշատակուած տուեալները բոլորովին յերիւրածոյ են:

Այսպէս, օրինակի համար, Ռ. Զարդարեանի ամբաստանագրին մէջ ըստած է «Զարդարեանի տունէն ձերբակալուած թուղթերը թէեւ չեն թարգմանուած, բայց հասկցուած են թէ վնասակար են եւ շատ վարպետի գրիչով մը գրի առնուած, անոր ամէն մէկ նախադասութիւնը վնասակար է»: Պաշտպան փաստաբան Նադրի պէյ «կը հարցնէր թէ հայերէն չի գիտցող հարցաքննիչ մը, առանց հայերէն գրուած մը թիւրքերէնի թարգմանած ըլլալու, ինչպէս կը գիտնայ անոնց վնասակար հանգամանքը, մանաւանդ վարպետի գրիչով գրի առնուած ըլլալը եւ ամէն մէկ նախադասութեան վնասակար հանգամանքը: Իրողութիւնն այն է սակայն, որ Զարդարեանի նոյն այդ թղթերը Մէարիֆին կողմէն պատշտօնապէս թարգմանուելով, դատարանին

*պահանջին համաձայն, հասկցուեցաւ թէ զուտ գրական եւ իմաստասիրական կտորներ էին, շատերը Կ. Պօլսոյ եւ Իզմիրի հանդէսներուն մէջ հրատարակուած արդէն գրաքննութենէ անցնելէն ետքը»:*  
*«Եւ դեռ ինչ անարդարութիւններ, ինչ անարդարութիւններ»:*

Տեղեկագիրը կը յիշէ ամբաստանեալներու հասցէին վերագրուած նմանօրինակ բազմաթիւ շինծու մեղադրանքներ:

Այսպէս, հետաքննութիւնը ցոյց կու տայ դատական ամբաստանութիւններու անհիմն ըլլալը:

Կ'իմանանք, որ դատական հետաքննութիւնը կատարուած է լիբանանցի պաշտպան իրաւաբան՝ Նադրի պէյի կողմէ եւ Ռ. Զարդարեան, ինչպէս նաեւ միւս հայ ձերբակալեալները 6-9 ամիս բանտարկուած մնացին, ապա անոցմէ մեծ մասը ազատ արձակուեցաւ:

\* \* \*

Հագիւ բանտէն կ'ելլէ Զարդարեան կ'անցնի Իզմիրի շրջան՝ Մանիսա ֆաղաբ, որ պատմական Մակնեզիան է եւ ատեն մը կը զբաղի ուսուցչութեամբ եւ տնօրէնութեամբ, ապա ընտանեօք կ'անցնի Պալֆաններ՝ Ֆիլիպպէ, այժմ Փլովտիւ: Պուկարիոյ հայութեան մեծ մասը կազմուած էր պանդուխտ հայերէ, որոնք կ'աշխատէին սրճարաններու եւ շոգեկառփի կայարաններու մէջ: Համեստ կեանք կը վարէին, բայց բոլորն ալ վառուած էին Հայաստանի ազատագրութեան տենչով: Այդ պանդուխտ հայութիւնը Պուկարիոյ գլխաւոր ֆաղաբներուն մէջ կը ղեկավարուէր բաւական մեծաթիւ հայ մտաւորականութեամբ եւ ազգային կառոյցներով:

Զարդարեան կը դասաւանդէր նոյնպէս Ֆիլիպպէ ֆաղաբին մէջ բաւական կանուխ Ռոստոմի կնոջ՝ Էլիզայի հիմնած հայկական վարժարանին մէջ: Վարժարանը ունէր նաեւ իր երգչախումբը: Ասոնց բոլորին գործունէութեամբ կը ստեղծուէր գրական-մշակութային կեանք գաղութէն ներս, ղեկավարութեամբ՝ Հ.Յ.Դ. Պալֆանի Կեդր. կոմիտէին: Մօտաւորապէս նմանօրինակ կառոյցներով օժտուած էր նաեւ միւս ֆաղաբներուն հայկական կեանքը, ինչպէս Վառնա, Սոֆիա, Ռուսչուկ (այժմ Ռուսէ):

Ռ. Զարդարեան Ֆիլիպպէի մէջ հիմնեց «Ռազմիկ» եռօրեայ թերթը, որ նոյնպէս կը նպաստէր համայնքի մշակութային կեանքի ծաղկումին: «Ռազմիկ» թերթը շարունակուեցաւ Ֆիլիպպէի մէջ մինչեւ 1908 թուական՝ Օսմանեան սահմանադրութեան հռչակումը:

\* \* \*

Ռ. Զարդարեանի ծանօթութիւնը ազգային հերոս Անդրանիկի հետ տեղի կ'ունենայ հոս՝ Ֆիլիպպէի մէջ: Այդ տարիներուն Անդրանիկ կը գտնուէր Պուլկարիա եւ մասնակից էր կուսակցական աշխատանքներուն: Զարդարեանի եւ Անդրանիկի գործակցութեան մասին կարելի է երկար խօսիլ: Բացի կուսակցութեան ընդհանուր գործէն Պուլկարիոյ մէջ, յատուկ առանձին երես մը ունի այն, որ Զարդարեան Անդրանիկի շարք մը գործունէութեանց մասնակից դարձած է, յատկապէս գրի առնելով անոր նկարագրած դրուագները եւ ասոնց մէջ ամէնէն նշանակալիցը Անդրանիկի «Մարտական հրահանգներ»-ու վերջնական խմբագրութիւնը: Սկիզբը Նիկոլ Աղբալեան աշխատած է անոր վրայ, բայց վերջնական ձեւատրումը կատարած է Զարդարեան:

Ռուբէն Զարդարեանի խմբագրած Անդրանիկի «Մարտական հրահանգներ»-ու առաջին հատուածները սկսած են լոյս տեսնել «Դրօշակ»ի 1906 տարուան Յունիսի, Օգոստոսի եւ Սեպտեմբերի համարներով, ապա ամբողջութիւնը առանձին հատորով հրատարակուած է Ժընեւ, նոյն տարին:

\* \* \*


Յայտնենք որ Օսմ. սահմանադրութենէն ետք «Ռազմիկ» թերթի տպագրական սարքերը փոխադրուեցան Կոստանդնուպոլիս, ուր նոյնպէս Զարդարեանի խմբագրապետութեամբ հիմը պիտի դրուէր Հ.Յ.Դ. պաշտօնաթերթ «Ազատամարտ»-ին: Այս վերջինը, ինչպէս ծանօթ է, պիտի յարատեւէր մինչեւ 1915-ի Մեծ եղեռնը:

Յայտնի է որ Ռ. Զարդարեան եղերական վախճան մը պիտի ունենար՝ բաժնեկից դառնալով Յեղասպանութեան միւս նահատակներուն նակատագրին:

\* \* \*

Ռ. Զարդարեանի գրական, մանկավարժական, հրապարակագրական վաստակին մասին տեսնել Կարօ Յովհաննէսեանի «Ռուբէն Զարդարեան ուսուցիչ-մանկավարժը եւ հրապարակագիրը» գրութիւնը:

Ե. ՓԱՄՊՈՒՔԵԱՆ



Անդրանիկ և Ռուբեն Զարդարեան, Պուկարիա, 1906



**ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ՁԱՅՆ ՄԸ  
(ՆԱՄԱԿ ԽԱՐԲԵՐԴԷՆ)**

**Հ. Յ. Դաշնակցութեան պաշտօնաթերթ «Դրօշակ»ի 1898-1903 տարիներուն տպուած եւ անստորագիր շարք մը յօդուածներ՝ «Նամակ Խարբերդէն» խորագրով: Դատելով անոնց լեզուական եւ ոճային առանձնատկութիւններէն, այդ գրութիւնները կը պատկանին Ռուբէն Զարդարեան/Ասլանի գրչին: Կարգ մը պարագաներու ունինք անոնցմէ ոմանց ձեռագիր-բնագիր՝ Ասլան ստորագրութեամբ: Այդպէս է, օրինակ, 1899 թ. Յունիս 27/Յուլիս 9 թուակիր նամակը: Հետեւաբար Ռ. Զարդարեան/Ասլանի այս նամակներու շարքին, թուականի կարգով, կու տանք նաեւ այդ յօդուածները:**

*Ինչ, Թուրքիան կարող է բարեկարգուիլ Սուլթանի ձեռքով, ահա ինչ որ կը հաւատան իրենց քապինէթներէն դուրս կոյր նայող դիւանագէտներ եւ ահա ինչ որ կը հարցնէ հայը կէս հեզնական եւ կէս տխուր ծիծաղով մը:*

*Պէտք է մօտէն եւ իրական աչքով դիտել հասկնալու համար թէ այս հրդեհած շէնքին մնացորդ ածխացած գերանները ա՛լ չեն կարող ծանրութիւն մը շալկել, ա՛լ չեն ծառայեր նոր շէնքի մը, թէ այդ աւերակին տէրը խարդախ խանութպանի շահագործութիւններ, խաբեբայ վաճառականի պատասխանատուութիւններ կ'ընէ ապրանքը աւելի ծախելու, զայն հաստատուն ցոյց տալու:*

*Ո՛վ ըսաւ թէ Սուլթանը կարող է բարեկարգութիւն հաստատել մահուան ցաւով պառկած ժողովուրդի մը սնարին քով, ո՞վ ըսաւ թէ ցոփ տէվրիշի մը որդնոտած մականը հրաշքի ընդունակ է: Չէ, արիւնով կշտացած անապատի մը մէջէն յստակ աղբիւր չի կրնար վազել:*

*Հետաքրքիր երեւոյթով մօտեցիր այսօրուան նոյնիսկ կառավա-*

րական պաշտօնեային ու քիչ մը բարեկամական ցաւակցութեամբ խօսքը ընդհանուրէն մասնաւորին իջեցուր, տես ի՞նչ կ'ըսէ. հայհոյութեան որ մէկ անլուր բանաձեւով մաղաս(1) կը թքնէ Սուլթան Մէճիտի վայրագ զաւկին(2) հասցէին. վերջապէս մարդը պիտի հասկցնէ քեզի թէ Թուրքիան չի կարող բարեկարգուիլ, քանի չի վտարուին տիրող անարդար օրէնքները, քանի Եւտրզի սրիկան չի փոխուի, քանի նոր հոգիով մը չի վերակենդանանայ երկրին կեանքը, տնտեսական ուժը: Եւ ան անսեթեւեթ լեզուով կը խօսի այսօր թուրք պաշտօնեան, աւանդական խոնարհ հեզութիւնը իր տիրոջ նկատմամբ տեղի տուած է լեցուն բայց զսպուած ատելութեան: Ապրիլ պէտք է, սակայն միայն օդով լեցուն գանձարանի մը վրայ տասնեակ ամսականներու հաշիւներ կան գանձելի. ի՞նչ ընել ուրեմն. կաշառուիլ: Դրամը վերջապէս հարկաւոր է՝ ոեւէ միջոցով ալ ըլլար անիկա. յանցանքը անոր գլխին որ այդ՝ անպատիւ կերպով կ'ըլլայ. որ այդ՝ անարդարութիւն եւ փտութիւն յառաջ կը բերէ. միթէ՞ այնքան աղքատացած են պաշտօնեայի մը խիղճը, զգացումները եւ հոգեկան բարեմասնութիւնները որ անօթութիւնը նախամեծար համարէ կաշառքէն: Միթէ՞ անբարոյականացած, ճահահոտ մթնոլորտ մը սպարտացիներ կը մեծցնէ:

Օրուան դէպքերուն ետեւէն նայող բոլոր աչքերը, թուրք ժողովուրդի այն դասուն համար կ'ըսենք որ իր բիբին վրայ աղտ չունի՝ կը կրկնէ մեզի հետ եւ իր բոլոր անկեղծութեամբը թէ՛ «Երկրին տէր մը պէտք է, թէ այս փլատակներուն համար տիտանի ձեռքեր պէտք են խոստմնալից հաստատութեան մը նոր հիմնարկէքն ընելու»:

Այո՛, այս արգասաւոր սակայն .....(3) դաշտերուն Գարուն մը պէտք է ուր թափուող արիւնները բոսորագեղ վարդեր ծնին գետնին տակէն, ուր նահատակ ինկած կտրիճներու գերեզմանները խորհրդաւոր տաճարն ըլլան՝ տօնելու երջանկութեան, ազատութեան եւ իրաւունքի մեծ դարագլուխը: Գարուն մը, այո՛, հէք տառապող թուրք եղբայրակից, Ազատութեան Գարուն մը մեր երկրին՝ որ ստիպէ Արշը իր վայրագ բնաւորութեամբ որչ մը քաշուիլ, որ ստիպէ Առիւծն ու Վագրը հանել իրենց մագիլները վշտակիր հասարակութեան սրտէն ու Անտառը, զիրենք հիւրընկալող լեռները քաշուիլ: Եւ այն օրը երջանիկ պիտի ըլլանք քեզի հետ...

Ու այդ ձեռքը մերն է, այդ բազուկը ժողովուրդինն է. անհրաժեշտ է կործանել ոսկի բարձերու վրայ ընկողմանած միապետներն ու

միապետի լակոտները, պէտք է այդ բռնակալ գահերու լայն պատ-  
ուանդանը հերկել, ակօսներ բանալ անոնց մէջէն եւ անկէ արիւն  
կաթող դաշոյնին տեղ՝ աշխատաւորին արօրը անցնել, երկրագոր-  
ծին մանգաղը շարժել հոն. թող մահուան գուժկան ադ զինուորա-  
կան փողերուն տեղ՝ լսուի գիւղացւոյն խաղաղ ու երջանիկ հոգի[ի]ն  
արձագանքը. թող թնդանօթներու անիւներուն տեղ՝ դաշտեցիին  
սայլակն ակօսէ ճոնչելով ու աշխատողին երգիքին տակ հանգստու-  
թեան պարէնը շտեմարանէ: Յառա՛ջ, ցոյց տանք անամօթ եւրոպա-  
ցիին թէ կրնանք բռնակալութեան կիսաստուածները իրենց  
երկաթէ ծանրութենէն ահագին դղրդիւնով տապալել ու նոյնիսկ  
այդ փլուզումէն բարձրացած փոշիին մէջ իրենց ճպոռտ աչքերը  
կուրցնել. յառա՛ջ, հայաստանցի կտրիճը թէեւ վիրաւոր բայց յու-  
սահատ չէ երբեք:

Մեր օրօրոցներն ալ «վրէժ» կ'աղաղակեն:

ԱՍԼԱՆ

1897 Հոկտ. 2/14

- 1.- Մաղաս – խուխ, թանձր թուք:
- 2.- Խօսքը Սուլթան Համիտ Բ.ի մասին է:
- 3.- Անընթեռնելի մէկ բառ:

Փաստ, 816-10

[18]97 Հոկտ. 9/21, հարբերդ(1)

Հայ Յեղափ. Ամերիկայի Կեդր. կոմիտէին

Այս անգամ կը ներկայացնենք ձեզ ահա երկու ապահով հասցէներ՝ որոնց միջոցաւ կարող էք վստահաբար ուղարկել ձեր բոլոր թղթակցութիւնները: Այսինքն՝ Պ. Աբրահամ Սիմոնեան ի Մօրնիկ գիւղ. Պ. Սիմոն Մարգարեան ի Մօրնիկ գիւղ: Միայն պէտք է այդ հասցէներուն տակ շնորհիւ գրել մեզի մասնաւոր նշան մ'եղած ըլլալու համար(2): Կեդր. կոմիտէս տեսնուեցաւ նաեւ այն կոմիտէին հետ որ կանխաւ ձեզի դիմած է եղեր Վրոյր Ատուրեան ստորագրութեամբ. անիկա այժմ պարզ կոմիտէ մ'է մեր տրամադրութեան տակ, հետեւաբար հարկ է որ դադրեցնէք ձեր ոեւէ յարաբերութիւնը անոր հետ՝ եթէ ունիք, եւ ծանուցանէք իրեն գործիչի ճշմարիտ ժամանումն հոս, ինչպէս կը լսենք որ խոստացած էք եղեր իրեն արդէն:

Նմանապէս Կեդր. կոմիտէս կը խնդրէր որ հաճէիք մեր Պ. Ասլանի ճշմարիտ անուան – որը արդէն ծանօթ է Պ. Մելիքի(3) – մի քաղաքացիական վկայաթուղթ եւ passe-port մ'առնել ու ղրկել տեղւոյս Անգլիական հիւպատոսի՝ Mr. Raphael Fontana-ի հասցէին. հոտ կըրնաք Պ. Յակոբ Նալպանտեան հարբերդցին (վարժապետ) ներկայացնել իբր այն եւ անոր դիմագծութիւնով լեցնել passe-portն ու վկայաթուղթը:

Վերոյիշեալ մեր տուած երկու հասցէները կրնաք գործածել փոխն ի փոխ գրելով:

Ի դիմաց Հայ Յեղ. հար[բերդի] Կեդր. կոմիտէի  
Ատենադպիր Ատենապետ  
ԱՍԼԱՆ

1.- Հոկտ. 9-ը հին տոմարով, 21-ը՝ նոր տոմարով. զոյգ տոմարներով յիշատակուած են նաեւ միւս նամակները: Յայտնենք որ ԺԹ. դարուն (մինչեւ 1900 թ. ներառեալ)

հին եւ նոր տոմարներու տարբերութիւնը 12 օր էր, իսկ 20-րդ դարուն՝ 13 օր:

2.- Այսինքն պէտք է յիշել Խարբերդի Կեդր. կոմիտէի կամ ուղղակի Զարդարեանի անունը:

3.- Պ. Մելիքը կուսակց. գործիչ էր Ամերիկայի մէջ. բուն անունով՝ Իւսուֆեան Յովհաննէս (1850-1920), իսկ Ասլանը ծածկանունն էր հանրածանօթ գրող Ռուբէն Զարդարեանի:

---

### 3

Փաստ, 816-11

[18]97 Հոկտ. 10/22, Խարբերդ

Հայ Յեղափ. Ամերիկայի Դաշնակ.  
Կեդր. կոմիտէի

Սոյն հասցէով այս թղթաբերով պիտի ստանաք նոյնպէս մի նամակ՝ գրուած Կեդր. կոմիտէիս կողմէ, ուր դժբախտաբար Ատենապետի բացակայութեան պատճառաւ իր ստորագրութեան տեղը բաց մնացած էր: Կը խնդրենք հազար ներողութիւն, ծանուցանելով միեւնոյն ատեն որ ընդունիք զայն իբր վաւերական:

Մի՛ խորհիք թէ Հայաստանի մէջ այնքան դիւրութիւններ ունինք ամէն ատեն կոմիտէի անդամներս իրարու հետ տեսակցելու՝ որքան դուք ունիք հոգ ազատ Ամերիկայի մէջ. այսպէս շատ անգամ ակամայ զանցառութիւններ եւ պակասներ կը յառաջանան՝ որոնց մասին կանխաւ ներողութիւն կը խնդրենք:

Խորին յարգանքներով  
Ի դիմաց Խարբերդի Հայ Յեղ. Դաշնակ.  
Կեդր. կոմիտէի

Ատենադպիր  
ԱՍԼԱՆ

Ատենապետ  
Տէլի ՓԱՓԱ(1)

1.- Տէլի Փափա – ծածկանուն Յովհաննէս Գասապեանի:

Փաստ, 816-15

[18]97 Նոյ. 27/ Դեկտ. 2, Խարբերդ

Պատուարժան խմբագրութիւն  
Հայ Յեղ. Դաշնակցութեան ի ժրնեւ

Գուցէ մինչեւ հիմա Ամերիկայի Կեդր. կոմիտէն ձեզ հաղորդած է թէ ինչ պատճառներ ստիպեցին մեզ թողուլ «Հնչակեան» կուսակցութիւնը եւ ընդունիլ «դաշնակցական» ծրագիրն ու գաղափարը եւ հաղորդած նոյնպէս թէ՛ ինչ կարեւոր հարցեր ներկայացուցեր էինք իրեն խնդրելով անոնց շուտափոյթ լուծումը եւ բաւարարութիւնն մեր առաջարկներուն: Աւելորդ չէր ըլլար հոս համառօտ կրկնում մը ընել մեր նախապէս նոյն կեդր. կոմիտէին ներկայացուցած հարցերուն՝ եթէ համոզուած ըլլայինք թէ դուք անգիտակ կը մնաք անոնց նկատմամբ, բայց ոեւէ պարագայի տակ՝ դուք կրնաք անկէ խնդրել հարկ եղած տեղեկութիւնները եւ մեզ ներողամիտ ըլլալ որ չծանրացնենք մեր նամակը կառավարութեան ուշադրութիւնն հրաւիրելով իր վրայ: Առաջին պատեհութեամբ մեր ցաւակից սրտով գանգատը հոն էր որ նոյն կոմիտէն մինչեւ հիմա մեր գրած հնգեակ նամակներուն լուռ կը մնայ առանց պատասխան մը տալու, պատճառը չենք գիտեր. գուցէ կորսուած ալ ըլլան, գուցէ երբեք չլրկուած ալ, ահա նոյն թելադրութիւններով վերջապէս ճար մը կը գտնէինք՝ ուղղակի մեր ձայնը լսելի ընել տալու: Սակայն մեր մինչեւ այժմ անպատասխանի մնալը սա շատ ցաւալի արդիւնքը ունեցաւ որ՝ չկրցինք ունենալ թէ՛ ձեր եւ թէ՛ մեզ հարկաւոր այլ քաղաքներու՝ Պոլսոյ, Տրապիզոնի, Կարնոյ, մանաւանդ Երիզայի Կեդր. կոմիտէներուն ուղիղ հասցէները, եւ այդ յապաղումը՝ ահագին վնաս էր մեր ստիպողական գործառնութեանց՝ եթէ նկատի ունենայիք թէ որքան կարեւոր յարաբերութիւններ հարկաւոր էին մեզ այժմ անոնց հետ եւ թէ որքան աշխատութիւն ու հարկաւորութիւն էր պէտք՝ շուտով յառաջ տանելու կազմակերպութեան գործը:

Խարբերդ գտնուելով բնական կամ աշխարհագրական յեղափոխութեան տեսակէտով աննպաստ դիրքի մը վրայ՝ պէտք ունի շատ աւելի ամուր ինքնապաշտպանութեան մը՝ որը իր փրկութեան գործը երաշխաւորելէ զատ՝ դառնայ կարեւոր եւ լրացուցիչ ուժ մը ապստամբական համընդհանուր շարժման. այս շատ լուրջ եւ միանգամայն ծանր խնդիրը կը պահանջէ միայն եւ միմիայն կորովամիտ աշխատութիւն. Կեդր. կոմիտէս լայն հաշիւով մը չափելով իր տեղական դիրքը, կառավարական եւ զինուորական ուժը ու բոլոր այն մեծ եւ փոքր անհուն արգելքները՝ որ իր դէմ խոչընդոտ կը մնան՝ այն խորին եւ համոզուած հաւատքին եկած է թէ պիտի կրնայ իր ծրագիրը արդիւնաբեր ու խոստմնալից հողու մը վրայ դնել, միայն Դաշնակցութիւնը իրեն պէտք եղած աջակցութիւնը նուիրէ, դիւրութիւններ տայ: Զէ, անմիջապէս չհասկնայիք թէ գրամն էր որ կ'ակնարկէինք, կամ ան էր որ ամէնէն աւելի կը պակսէր մեզի. երբեք, մենք կարող ենք ոսկին ու արծաթը առ այժմ դուրս բերել հարուստներու նեղ որկորէն՝ որքան ալ դժուար ըլլայ այն եւ որքան ալ թունալից ակռաներ ունենան անոնք. միայն բարոյական աջակցութիւն եւ մեր նպատակին համար եղած ձեռնարկութեանց ու պակասութիւններու դիւրութիւն: Սա շատ պարզ եւ ստոյգ կերպով ընդունեցէք թէ՝ Խարբերդ իր կազմակերպութիւնը մինչեւ աստիճան մը ետք՝ կրնայ եւ դիւրութիւններ շատ ունի իր շրջականներուն՝ Տիգրանակերտի, Արաբկիրի, Մալաթիայի եւ աւելի հեռաւորներու՝ յեղափոխական վառարանն ու կեդրոնը դառնալ. եթէ ուզէք ուրիշ անգամ այս մասին ձեզ ընդարձակ ծրագիր մը կրնանք ներկայացնել: Դաշնակցական գաղափարը առանց երբեք պրոպագանդա եղած ըլլալու այս կողմերը՝ արդէն խորհող եւ ընդունակ մտքերը ջարդի թուականը(1) այն համոզման բերեց թէ կեդրոնացումը(2) միշտ գէշ արդիւնք յառաջացուց հայ գաւառներու խորերը եւ տգէտ գործիչներ մեծ աղմուկներու մէջէն միայն քալեցին առանց գործ տեսած ըլլալու եւ շատ տեղեր՝ չըսենք ամէն տեղ՝ գէշ միտքեր թողուցին. ժողովուրդը հիմա իր գիտակից մտքերով շիտակ ուղին կը փնտռէ. ուստի հարկ կ'ըլլար այդ տարտամ տրամադրութիւններն ու մտքի ընդունակութիւնները խելացի կառավարութեամբ գործնական ճամբու մէջ ձգել, կուսակցութեանս արդէն իրենց բաղձացած նպատակն ու ուղղութիւնը պարզել: Եւ ատոր համար մարդ մը պէտք է որ ունենայ զարգացման ու սկզբունքի կարեւոր պաշարը, որ իր

արհեստին կատարեալ գիտակցութեամբը ներկայանայ եւ անով զբաղի միայն, մանաւանդ կամք ունենայ. այդ կարգի մարդու մը պակասը կայ ու կը մնայ: Այսօր Հայաստանի մէջ ընդհանուր կազմակերպութեան խնդիրը շատ հրատապ կերպով անմիջական բաւարարութիւն կը պահանջէ: Հայաստանցին ամէն ատեն այն կարծիքէն եղած է թէ առանց ուղղակի իր մէջ զօրաւոր organisationի(3) մը հայ յեղափոխութիւնը թերի պիտի մնայ եւ իր մասնական հարուածները թշնամիին համար անազգու յաճախ իրեն ալ ծանր հակազդեցութիւններ պիտի ընեն. գիտէ՞ք թէ որքան սուղի պիտի նստի երկրորդ ջարդ մը եւ գաւառներն այս անպատրաստականութեամբ այդ աղէտէն ետք քանի հայեր պիտի համրուին: Կը կրկենեք նորէն, մարդ մը պէտք է եւ այդ մարդը շատ անհրաժեշտ. եթէ նոյնիսկ կ'ուզէիք մեր քուէն ալ իմանալ՝ Մելիքն(4) էր մեր ընտրելին. անիկա շատ սիրով կ'ընդունէինք վստահ ըլլալով թէ բոլոր յուսացուած ակնկալութիւնները իրմով պիտի իրականանան: Զինքը հոս անցնելու համար դիւրութիւններ չէին պակսեր եւ ձեր հաստատական պատասխանն ստանալէ ետք՝ կը խոստանայինք ցոյց տալ իր ճամբան ու հոգալ Թուրքաստանէն ասդին եղած ծախքերը:

Կեդր. կոմիտէս այժմ գոհ է անոր համար որ օրէ օր իր գործը վրստահ ուղիով լայն քայլեր կ'առնէ դէպի նպատակը, իր տրամադրութեան տակ ունի տեղույս շատ կարեւոր եւ վստահելի անձնաւորութիւններէ բաղկացած կոմիտէներ եւ շրջակայքը նոյնպէս դժբախտաբար դեռ չկրցինք ունենալ, ինչպէս վերը յիշեցինք, դիւրութիւններ՝ հաղորդակցելու կուսակցութեանս այլ կեդրոններու հետ եւ խորհրդակցելու կարեւոր խնդիրներու վրայ: Խմբագրատան հասցէն մանաւանդ անհրաժեշտ էր, կուսակցութեանս օրգանը եւ ոչ իսկ կանոնաւոր կերպով կ'ընդունինք, մեր միջավայրը բաղդատաբար լինելով աւելի մի ուսումնական շրջան՝ թերթեր ու գրուածքներ իրենց դերը ընդարձակ կերպով կը կատարէին:

Ու ինչքան ուրախառիթ էր ձեզ ալ տեղեկագրել թէ՛ երբ շատ հայեր դիպլոմատական մտածումներով ու կեղտոտ հրէայի հաշիւներով հեռու կը մնան գործէ՝ օտար մը, եւ եւրոպացի միսիոնար մը մարդասիրական ազնիւ ոգեւորութեամբ վառուած ձեռք կու տայ մեզ ու իր աջակցութիւնը մինչեւ անձնուիրութեան կը հասցնէ. ուրիշ պատեհութեամբ երկար կը գրենք նոյն միսիոնարի մասին եւ կը բացատրենք թէ ինչ դեր կը կատարէ նա եւ ինչ մեծ օգտակարու-

թիւներ կը յուսանք իրմէ. միայն կը խնդրենք որ յանուն կուսակցութեանս առաջժամ պաշտօնական մի ֆրանսերէն նամակ գրէք անոր շնորհակալութեան եւ գովէք զինքը իր զոհած աշխատութեան համար: Կրնաք գիտնալ թէ այդ նամակը ինչ արդիւնք կրնայ յառաջացնել:

Եզրակացնելով՝ տեսէք ինչ կը խնդրէինք այս անգամ Զեզմէ. անյապաղ հասցնէիք մեզ մի պաշտօնական կնիք, «Դաշնակցութեանս» խմբագրատունէն երեւցած բոլոր պրոշիւրները հայ թէ թարգմանութիւն, կուսակցութեանս ընդհ. ծրագրէն երկու օրինակ համայնքի թերթերն ու պրոշիւրները, Ըաֆֆիի Խենթը, Կայծերը եւ անոր բոլոր կարելի եղած հեղինակութիւնները, նոյնպէս մեր միսիոնար գործակիցին համար սոսիալիսթ ֆրանսերէն պրոշիւրներ: Ասոնք բոլորը մէկ կամ երկու ծրար կ'ընէք, հոգ չէ թէ երեք ալ ըլլայ, խիստ ամուր կերպով կը փաթթէք, որպէսզի ճամբան պատռուելէ ու յայտնի ըլլալու վտանգէն ազատ մնայ եւ հետեւեալ հասցէն գրելով՝ կը յանձնէք Փարիզէն կամ Մարսէյլէն ուղղակի փօսթատուն, ահա այս հասցէով.

Mr. Raphael Fontana  
Vice-consul d'Angleterre  
Karpout (en Asie)  
P.C.

Ասորեւ գտնուած երկու տառերը – P. C. – որոշուած նշանագրեր են, պէտք չէ մոռնալ, միայն Փարիզէն կամ Մարսէյլէն յանձնէք փօսթատան. նոյնպէս այդ ծրարները յանձնելէ առաջ՝ պէտք է որ ութ օր կանխէք եւ Խարբերդ քաղաքը Պետրոս Սահակեան հասցէով մի պարզ, ընկերական նամակ գրէք ուր յիշուած ըլլայ հետեւեալ պարօլը՝ «Դալ շաբթու քեզ նուէր մը կը խրկեմ»: Յետոյ մենք վստահ կ'ըլլանք որ միւս շաբթուն պիտի ստանանք ծրարները ու անմիջապէս որոշուած օրին ձեռք կը ձգենք ամենայն դիւրութեամբ: Այդ ծրարներուն մէջ կը զետեղէք նոյնպէս Զեր առ մեզ ուղղեալ նամակներն ու կնիքն ալ, խիստ ապահով միջոց մ'է սա, միայն թէ ուրիշ անգամներ թերեւս չկրնանք օգտուիլ անկէ. կարելի եղած ատեններ մենք ձեզ իմաց կու տանք:

Այո՛, մոռացանք նոյնպէս թէ թարմ «Դրօշակ»ը մի քանի օրինա-

կով չէք զանց ըներ ի հարկէ, բայց արդէն մենք Ամերիկա գիւղի մ'անունով երկու հասցէներ տուած ենք, որոնք իմանալով կը խնդրենք որ ասկէ ետք «թերթերը» ուղարկէք Աղեքսանդրիայի վրայէն:


Ընդունեցէք, սիրելի եղբայրակիցներ, մեր ջերմագիւր բարեւներն ու խորին յարգանքները:

Ի դիմաց Հ. Յ. Դաշնակցութեան  
Խարբերդի Կեդր. կոմիտէին

Ատենադպիր  
ԱՍԼԱՆ



Ատենապետ  
Տէլի ՓԱՓԱ



Յաւելում Լեւոն Սալման ստորագրութեամբ: Զեռագիրը Ասլանի (Ռուբէն Զարդարեան) գրչով է:

Յարգելի խմբագրութիւն,

Կը կրկնեմ ես ալ Կեդր. կոմիտէիս իրաւացի գանգատները մինչեւ հիմա անպատասխան մնալու վերաբերմամբ. Ամերիկայի Կեդր. կոմիտէն շատ գէշ կատակ է անում մեզ հետ. միթէ՞ նրանց խոստումը այս էր ինձ՝ երբ ուղի ինկայ, միթէ՞ այլ կուսակցութիւններու վերագրուած մեղադրանքները՝ մեզ համար էլ պէտք է ըսուել: Այնքան գաղափարակից եւ ազնիւ տարրերէ կազմուած Կեդր. կոմիտէ մը

*Ձեզ ներկայացողը՝ որը իրաւամբ ձեր վստահութեան արժանանալու է: Կը խնդրեմ որ շուտափոյթ պատասխանէք մեզ եւ գրէք Ամերիկա ալ որ նոյնպէս վարուի: Կ'աղաչէի նոյնպէս որ իմ քաղաքացիական թուղթս ու անցագիրս ձգէք նոյն հիւպատոսի հասցէին:*

*Ներկայացուցիչ Հ.Յ.Դ. Ամերիկայի Կեդր. կոմիտէի  
ԼԵԻՈՆ ՍԱԼՄԱՆ (5)*

- 1.- Ակնարկութիւն 1895-ի համիտեան ջարդերուն:
- 2.- Ակնարկութիւն հնչակեաններու կեդրոնացման գործելաոճին:
- 3.- Ֆրանսերէն՝ կազմակերպութեան մը:
- 4.- Մելիք – ծածկանունն Ամերիկայի մէջ դաշնակցական գործիչ Իսուֆեան Յովհաննէսի (1850-1920):
- 5.- Լեւոն Սալման ծածկանունն է Ամերիկայէն իբրեւ գործիչ ուղարկուած Յարութիւն Մանկունիի:



Մանկունի Յարութիւն – Լեւոն Սալման

Փաստ, 816-18

1897 Սեպտ. 28, Խարբերդ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան  
Ամերիկայի Կեդր. կոմիտէին

Կը հաստատեմ ասկէ առաջ Օգոս. 20 թուակիր Լեռնորդիի գրութիւնը, ուր ամփոփուած էր տեղւոյս նախկին «Հնչակեան» վարչութեան պահանջները ձեր Գօմիդէին ուղղուած:

Արդ տեսնելով թէ ժողովուրդի ներկայ կացութիւնը մեզ խիստ շտապել կու տար իրագործելու իր անմիջական եւ անհրաժեշտ կարիքները, քանի որ օրէ օր վտանգը խիստ սպառնական կերպով կը շեշտուէր, եւ մանաւանդ վստահելով ձեր ներկայացուցիչ Պ. Լեւոն Սալմանի(1) անկեղծութեանն ու ապահովիչ խոստումներուն, սեպտ. 7 կը հաւաքուինք մեր բոլոր վարչական անդամներու հետ ընդունելու պաշտօնապէս պ. Լեւոն Սալմանը եւ անկէ հարկաւոր լուսաբանութիւնները ընդունելէ ետք՝ ապագայ գործառնութեանց ծրագրին վրայ խորհրդակցելու, միեւնոյն ատեն սպասելով ձեր պատասխանին:

Այդ նիստին մէջ վարչութիւնս պարզեց իր կանխաւ «Հնչակեան» ըլլալը եւ ապա մեծ ջարդի թուականէն ետք փորձառութեան ու ներկայի դրութեան վրայ հիմնուած իր այժմեան համոզումներն ու դատումները: Յոյց տուաւ թէ այն օրերէն առաջ երբ դեռ տեսակ մը մառախուղի մէջ տեղական գործիչներ չէին գիտեր իրենց որոշ ուղղութիւնը եւ բռնելիք ընթացքը, երբ թշնամի զինուորական կրթուած բանակ մը մարթինով, թնդանօթով, ու վայրագ խուժան մ'ալ տապարով եւ հրացանով զինուած եկան հաստատելու միանգամընդ միշտ սա ցաւալի ճշմարտութիւնը թէ՛ բնական պաշտպանող դիրքէ զուրկ գտնուած հայաշատ գաւառներ որքան սխալած են եղեր իրենց անտեղեակ եւ աննպատակալարմար կազմակերպութեանց մէջ՝ ահա նոյն օրէն վարչութիւնս դիմած է իր կեդրոնին, պարզելով այս իրողութիւնները իրենց մանրամասնութեան մէջ ու խնդրած

հարկաւորը: Բայց որովհետեւ «Հնչակեան» կեդրոնը չէ կրցած կամ ուզած մինչեւ մինչեւ այժմ բաւարարութիւն տալ իր պահանջներուն, ուստի նոյն վարչութիւնը ժողովուրդի օգտին, շահուն, տառապանքին եւ անոր փրկութեան համար մեռնող զինուորներ ու ներկայացուցիչներ՝ ստիպուած է շեղուիլ իր նախօրօք հետեւած շաւիղէն եւ մի այլ ապահով ու աւելի վստահ ուղի բռնել: Արդէն այն օրէն կ'ըսենք երբ վարչութիւնս փորձառութիւնը իր մարմնոյն վրայ զգայահագին խարանով՝ անունով «Հնչակեան», բայց իրապէս սկզբունքով՝ կը կրկնենք, առանց «դաշնակցական» ծրագիրը տեսած ըլլալու, ընդունած էր ապակեգործնացման(2) դրութիւնը՝ ջանալով լարել իր գործունէութիւնը հայ հասարակութեան եւ հանգամանքների առօրեայ ընթացքին վրայ:

Ու երբ Ամերիկայի «դաշնակցականներու» ներկայացուցիչ Պ. Լեւոն Սալման գալով մեզ կը գտնէ ու կը խոստանայ լրացնել իր պատկանած կուսակցութեան միջոցով այն բոլորը որոնք հարկաւոր էին մեզ՝ մեր սկսելիք նոր կազմակերպութեան նկատմամբ, երբ կը պարզէ «դաշնակցական» ծրագիրը՝ որը մեր արդէն նախընդունածն էր ու շատ հաւաստի խոստումով կը յուսադրէ մեզ դաշնակցականներու օգնութիւնը ու ձեռնտութիւնը՝ հետեւապէս կը մնար մեզ կանխաւ ներկայացնել այդ պահանջները ուր որ հարկն էր, եւ սպասելով մէկտեղ անոնց լուծման՝ աշխատիլ ներքին կարգադրութեան նախնական ու հարկաւոր տարբերքներու յարգարման:

Կեզրակացնենք, քանի որ ժողովուրդի ներկայ տնտեսական եւ անկարող վիճակը մեծ պարտք կը դնէր գիտակից դասակարգին վրայ սպասել փրկութեան կարելոր միջոցները այն կուսակցութեանէն որը իր կոչման պարտաճանաչ կը մնայ՝ վարչութիւնս կազմակերպուեցաւ «դաշնակցական» ներքին կանոնագրի տրամադրութեամբ, ընտրելով իր կեդրոնական կոմիտէն եւ ահա կը դիմէ ձեզ այս երկրորդ անգամ՝ խնդրելով իրմէ զատ այլեւս ոեւէ ուրիշներու հետ այդ անունով յարաբերութիւն չունենաք եւ հաճիք վաւերացնել զինքը այնպէս:

Եւ ապա ձեր հաւանութիւնն հաստատող պաշտօնական գրութեան հետ հասցնէք նոյնպէս հետեւեալ պահանջները. ուժանակի եւ ումբի դժուարութիւնը[?] կամ զանոնք պատրաստող անձը. մեզ յարաբերութեան մէջ դնել այն «դաշնակցական» կոմիտէներու հետ, որոնք այլեւայլ կերպով մեզ օգտակար կրնան ըլլալ, օրինակ Պոլ-

սոյ, Երիզայի, Կարնոյ եւ Տրապիզոնի, Կեդրոնի հետ հաղորդակցելու կարճ եւ ապահով ճամբայ մը, որովհետեւ Ամերիկան երկար ժամանակ կը սպառէ. օրինակ Աղեքսանդրիոյ ներկայացուցչին հասցէն, մի կնիք, մի «դաշնակցական» ծրագիր, պրոշիւրներ եւ շարունակաբար կուսակցութեանս «օրգանը»:

Երբ կոմիտէս իր այս ակնկալութեանց մէջ գտնէ պէտք եղած աշակցութիւնը ձեր կողմէն եւ ստանայ իր ակնկալած ձեռնտուութիւնը, կը խոստանայ պարզել յաջորդով իր ընդունած ինքնապաշտպանութեան ծրագիրը եւ ցոյց տալ թէ որքան կրնայ ի պահանջել հարկին լայննալ անիկա եւ խիստ ամուր զօրութիւն մը տալ խարբերդի ու շրջականերուն:

Խնդրելով որ ընդունիք մեր եղբայրական սէրն ու համակրանքը:

Ի դիմաց Խարբերդի Հայ Յեղ. Դաշնակցութեան  
Կեդրոն. կոմիտէին՝

Ատենադպիր  
ԱՍԼԱՆ

Ատենապետ  
Տէլի ՓԱՓԱ

### Յաւելում Լեւոն Սալմանէն (Յարութիւն Մանկունի):

#### Ընկերներ

Ուրախութեամբ կը նրեկայացունեմ ձեզ Հ. Յեղ. Դաշնակցութեան Խարբերդի նորեկ Կեդր. կոմիտէն, որն իմ կողմիցս վաւերացուած է: Հաւատացէ՛ք նրանց անկեղծութեանը, որոնք ժողովրդի ազնիւ, գիտակից եւ վստահելի դասը կը կազմեն եւ հանեցէ՛ք անյապաղ վաւերացնել զայն եւ տալ նրանց պահանջներուն գոհացում: Նմանապէս չի ճանչնալ նաեւ վերոյիշեալ ստորագրութիւններէ զատ ոեւէ մի գրութիւն եւ նոյնպէս ծանուցանել թէ խմբագրութեան եւ թէ մեր մօտիկ գաւառներու Կեդրոնական կոմիտէներին:

Համբուրելով բոլոր ընկերներին  
ԼԵՒՈՆ ՍԱԼՄԱՆ

Երկրորդ յաւելում Շխեան Սիմէոնի (Բարսեղ – 1865-1947) կողմէ:

Մեղիք չան,

Այս նամակն բանալով կարդացի եւ բաւական ուրախալի է մեզ նրանց այսչափ աշխոյժ գործունէութեան մասին. ուստի կը խնդրեմ ձեզ ընկեր, որ որչափ կարելի է նրանց պահանջներուն գոհացում տաք: Արդէն ասկէ առաջ մի բաց նամակ ուղարկած եմ քեզ իմ կողմանէ, որ դու այս շաբթու հոն լինես իմ միւս պահանջներուն երէ կարելի է կարգադրես երէկ, շաբաթ, քո հասցէին մի նամակ ե-Ն<sup>o</sup> 13 թիւ թերթերն(4) ուղարկեցի որ հարկ եղած տեղերն ուղարկես՝ ի բաց Մանչեսթըրէն – Կարօ-էն(5) այսօր մի քանի առի. լաւ է. նոյնպէս Ֆիլատելֆիա- յէն: Առի մի նամակ, որ յոյս կայ կոմիտէ կազմելու մասին:

Բարեւ  
ԲԱՐՍԵՂ

1.- Լեւոն Սալման – ծածկանուն Ամերիկայէն ուղարկուած Հ.Յ.Դ. գործիչ Յարութիւն Մանկունիի:

2.- «Ապակեղորոնացում» կ'որակուէր Հ. Յ. Դաշնակցութեան կազմակերպականօրէն գործելու եղանակը:

3.- Ասլան – հանրաժանօք գրող Ռուբէն Զարդարեանի ծածկանունն էր, Իսկ Տէլի Փափայի իսկական անունն էր Յովհաննէս Գասապեան:

4.- Իմա՝ «Դրօշակ»ի:

5.- Խօսքը հաւանաբար Արմէն Գարոյի մասին է (Փաստումանեան Գարեգին):



Շխեան Սիմէոն – Բարսեղ

Փաստ. 817-2

Այս շահեկան նամակի առաջին էջին կը կարդանք՝ «Նամակի վերջին երեսում ընտրուած Կ.Կ.-ի անդամների ցանկը»:

Խարբերդ, Փետ. 16/28 [18]98

Հ. Յ. Դաշնակցութեան խմբագրութիւն, ի ժրնեւ

Յաւ ի սիրտ կու գանք ձեզ տեղեկագրել թէ՛ Ձեր կողմէն ղրկուած ծրարները մեր ձեռք չհասան, տեսէք ինչ պատճառներով: Մենք գրած էինք Ձեզ որ անոնք ճամբայ հանելէ առաջ պէտք էր մեզ այսինչ հասցէով ուր օր առաջ նամակ մը ղրկէիք ..... կամ(1) գեկուցանելու այդ մասին կանխաւ: Այդ նամակը չի ստացանք: Երկրորդ՝ ծրարներու վրայ գրուած երկու նշանագրերը P.C. սխալմամբ գրուած էին ձեր կողմէ P.S.: Երրորդ՝ ծրարներու անվլոփները(2) անհաստատ ըլլալով՝ ճամբան պատռտած ու զայն ընդունող տիփլոմաթը(3) կասկածած էր պարունակութեանը նկատմամբ: Երբ երէկ իմացանք թէ անոնք հասած էին, ա՛լ ժամանակը ուշ էր եւ ծրարները վառարանին մէջ փոշի դարձած էին: Ո՛րքէ վտանգ կամ վնաս չառաջացաւ, սակայն մեր կորուստը այն եղաւ որ չկրցինք ընդունիլ զանոնք, այսչափ միայն: Կ. Կ.ին ամէնէն մեծ ցաւը հոն էր որ՝ մի գուցէ պրոշիւրներու հետ մեր պահանջած կնիքը եւ Ձեր նամակն ալ ոչնչացած եղաւ. կ'ուզէինք իմանալ թէ անոնք ղրկա՞ծ էիք անոնց հետ՝ ինչպէս որ մենք մեր նամակով խնդրած էինք Ձեզմէ:

Այս անգամ սա չափ պիտի աղաչէինք Ձեզմէ որ Ձեր նամակը հեղ մ'ալ կրկնէիք եւ ա՛լ այդ հասցէով թերթ կամ պրոշիւր չղրկէիք՝ մինչեւ որ ձեզ յարմար պատեհութեամբ մենք իմացնէինք:

Մեր Օգոստոսի գրած նամակին եւ անկէ ետք դեռ տասնեակ նամակներու ալ պատասխանը կը ստանանք Ամերիկայէն 98 Յունուար

4 թիւով, կարճուկ, խնայողական նամակ մը: Մեր ներկայացուցած այդքան շտապողական հարցերու մասին բառ մ'իսկ չկայ, խորհուրդ մ'իսկ չի գտնուիր հոն, այնպէս որ կը սկսինք կասկածիլ թէ Դաշնակցութիւնն ալ լոկ անուանական, կուսակցական խնդիրներով կը զբաղի, թողած Հայաստանը ինք իր բախտին, բռնակալութեան քմահաճոյքին. այն զեղծումները, որ Հնչակեան կուսակցութիւնը կը գործէր եւ որոնք իր անքաւելի դատապարտութիւնը պիտի ըլլան միշտ՝ կը տեսնենք որ այսօր նոյնը կը կրկնէ դաշնակցական այնքան կարեւոր Կ. կոմիտէ մը(4): Խնդրենք, իրենց գործը, զբաղումը ի՞նչ է որ մէկ նամակի պատասխանը վեց ամիսէն կու տան. քաւ լիցի թէ մենք մէկ ջուրով լուանք ամբողջ Դաշնակցութիւնը, սակայն ահագին Կ. կոմիտէի մը այս ընթացքը վերջապէս ամէն առիթով կրնայ կուսակցութեանս պատուոյն վնասել: Ահա ճիշտ նոյն տպաւորուած գաղափարով էր որ խորհեցանք թէ խմբագրատունն(5) ալ պիտի կրնայ ուշացնել մեր պատասխանը, եթէ ոչ՝ թէեւ ստացած չըլլայինք Ձեր կանխաւ զեկուցանող նամակը՝ մենք ժամանակին պատեհութիւն պիտի ունենայինք ղրկուած ծրարները ձեռք բերել:

Կը կրկնենք թէ Մելիքի(6) համար խմբագրատունը ի՞նչ որոշում տուաւ եւ կը սպասենք ձեր պատասխանին: Իր ճամբու ծախքը մինչեւ Թուրքիոյ մէկ նաւահանգիստը թող հիմակուան իր գտնուած տեղւոյն կոմիտէն հոգայ, անկէ ետք մենք մնացածը կրնանք վճարել: Բայց Ձեզ կը թողունք ընտրել ապահով ուղին որ պիտի բռնէ: Հոս հասնելու համար մենք մինչեւ հիմա մեր դրացի քաղաքներուն հասցէները չկրցինք ունենալ, որպէսզի այն տեղերու կուսակցութեանս Կ. կոմիտէներու հետ խորհրդակցելով ապահով ուղեգիծ մը պատրաստէինք, հետեւաբար այդ հոգը խմբագրութեան կը թողունք: Սակայն սա անհրաժեշտ էր որ Մելիք իր հետ ունենար թէ՛ ամերիկեան եւ թէ պարսկական իր passe-ports-ները. ամէն պարագայի տակ երկուքն ալ օգտակար կրնան ըլլալ իրեն հակառակ պարագային, իսկ եթէ անկարելի է երկուքը ունենալ, ամերիկեանն ալ բաւական է. թող զանոնք Աղեքսանդրիա ձգէ, յետոյ մենք հոն հասցէներ տալով կրնանք հոս հասցնել:

Քաղաքս ամէն կերպով յարմարութիւններ ունի կազմակերպութեան լաւ հիմերու վրայ օգտակար շէնքեր կառուցանելու իր համար. պահանջուած անհրաժեշտ ինքնապաշտպանութեան գործը շուտով աւարտելէ ետք, ձեռք պիտի զարնէ Կ. կոմիտէս աւելի լայն

ու ընդարձակ գործունէութեանց: Այս տեղով կը փափաքէինք համառօտ ծրագիր մը ներկայացնել, բայց որովհետեւ ծածկագրի Ձեզ ծանօթ տեղերը չունէինք, ստիպուեցանք ուրիշ աւելի յարմար առիթի թողուլ:

Կը խնդրէինք նոյնպէս որ մեզ իմացնէիք կեղծ մելանի մը անունը՝ որով թէ դուք եւ թէ մենք ասկէ ետք անով շարունակէինք մեր թըղթակցութիւնները: Ժիշդ այս նամակին պատասխանը կեղծ մելանով կը գրէք եւ մէկ երեսը գրուած սոսկ բարեկամական նամակին մէջ հիւանդի մը վրայ խօսելով, այս հիւանդին իբր դեղ ցոյց կու տաք ձեր գրած մելաններուն անունները ֆրանսերէն: Ներփակ կ'ընդունիք նմանապէս հասցէ մ'ալ որով կ'ուղարկէք ձեր նամակները Աղէքսանդրիայէն յանձնելով փոստին: Ահաւասիկ հասցէն՝

Rev. H. N. Barnum D. D.  
For H. Kassab of Agin  
Harpout Turkey  
Asia

Ներփակ կ'ընդունիք նաեւ Ձէքի մ'օրինակը, որմէ կը պահանջենք անյապաղ չորս հինգ հատ տպուած առհասարակ Ձէքերու համար ընդունուած թուղթերու վրայ: Այդ Ձէքերը մեզ շատ օգտակար են եւ անյապաղ կը սպասենք անոնց: Այդ Ձէքերն ալ նոյնպէս կ'ուղարկէք նոյն վերի հասցէով:

Թերթեր պիտի ստանանք մենք Աղէքսանդրիայէն, ուր տուած ենք հարկաւոր հասցէներ(7):

Ահա Կ. կոմիտէի ճշմարիտ անունները: Ռուբէն Զարդարեան (Ասլան), Յակոբ Ֆէրմանեան (Վազր), Յովհաննէս Գասապեան (Տէլի Փափա)(8): Փիլիպոս Քէշեան (Տէրվիշ), Վահան Թֆէնֆէեան (Ասպար), Կարապետ Կէմինեան, Յարութիւն Մանկունի (Սալման): Եւ Պատուա-

կալ անդամ մ'է Փէր Շարլ պէլժիգացի կրօնաւոր մը, ուրիշ հասցէով  
այսինքն Աղեքսանդրիայէն պիտի ստանաք ասոր բանալին(9):

Խորին յարգանքով՝

Ի դիմաց Հ.Յ.Դ. Խարբերդի Աւար-Աւեր(10) Կ.Կ.ի  
Ատենադպիր Ատենապետ  
ԱՍԼԱՆ Տէլի ՓԱՓԱ

Յ. Գ.- Ամերիկա կնիքի մասին հասցէ ցոյց տուած ենք: Հոն ղըր-  
կեցէք:

- 1.- Երկու բառ անընթեռնելի:
- 2.- Պահարաններ:
- 3.- Բառացի թարգմանութեամբ՝ դիւանագէտը, որ ըստ նախորդ նամակին պէտք է  
ըլլայ Խարբերդի փոխ-հիւպատոս Ռաֆայէլ Ֆոնթանան:
- 4.- Խօսքը կը վերաբերի Ամերիկայի Կեդր. կոմիտէին:
- 5.- Խօսքը «Դրօշակ»ի խմբագրատան մասին է:
- 6.- Մելիք – ծածկանուն Իսուֆեան Յովհաննէսի, որուն անունը իբրեւ շրջանի գործիչ  
նշարկելու առաջարկ առաջացուցած էր Խարբերդի Կ. կոմիտէին:
- 7.- Թուանշանային ծածկագրով գրուած անձերու անունները շարուած են շեղագրով,  
իսկ թուանշանային ծածկագրի բանալին հետեւեալ ոտանատրի տողերն են՝  
Տուր ձեռքդ, եղբայր, ժամ է շարժելու  
Ժամ է, ժամ առաջ ոտքի կանգնելու:
- 8.- Ծածկագիրը կը վերծանուի Գասապեան:
- 9.- «Բանալի» մը բանալու, այսինքն վերծանելու միջոցին: Ներկայ գրութեան «բա-  
նալի»ն տես թիւ 7 ծանօթագրութիւնը:
- 10.- Հոս առաջին անգամ գործածուած է Խարբերդ եւ շրջանի առաջին ծածկանունը՝  
Աւար-Աւեր: Յետագային շրջանը պիտի կոչուէր Լեռնասար:

Փաստ, 817-3

[18]98 Փետրուար 16/28 Խարբերդ

Յարգելի բարեկամ(1)

Գոհութեամբ ստացած ենք Ձեր նամակն ու անոր հետ ղրկած ան-  
ցագրերը: Ընդունեցէք մեր շնորհակալութիւնը:

Կը հարցնէք մեզ թէ ի՞նչ առաւելութիւններ ունէր Աղեքսանդրիան  
մեր թղթակցութեանց մասին: Ատոնք շատ շատ էին, նախ որ դուք  
ամէնէն մօտիկ ճամբուն վրայ կը գտնուիք՝ հասցնելու մեր թղթերը՝  
խմբագրատուն, երկրորդ՝ անկասկածելի է ձեր հասցէն, երրորդ՝  
թերթերը խիստ շուտ կը հասնին մեզ Ձեր միջոցաւ, եւ դեռ ուրիշ  
օգտակարութիւններ: Հետեւաբար ասկէ ետք մեր թղթակցութիւն-  
ները կ'ուղղենք Ձեզ եւ դուք կը հասցնէք հարկ եղած տեղերը: Ներ-  
փակ կը գտնէք ծածկագրի բանալի մը որը կ'ուղարկէք անյապաղ  
խմբագրատուն, որովհետեւ հոն նամակ մը կայ որ կը սպասէ այդ  
բանալիին(2):

Թերթերու կը սպասենք անհամբեր. ահա թերթի համար մասնա-  
ւոր հասցէ մը Ձեզի

Mr. H. N. Barnum

For Miss Elize: Peter of Equine

Harpout Turkey

Asia

Ամէն անգամ երկու օրինակ թերթ կը ղրկէք մեզի զատ զատ պա-  
հարաններով. նայեցէք որ մէն մի ծրար օրինական ծանրութենէն  
աւելի չի կշռէ. ուստի պէտք է որ թերթերու պարապ լուսանցքները  
մկրատէք կանխաւ՝ որպէսզի աւելի կշիռքի տեղի չի մնայ:

Հոս կառավարութիւնը ամէնէն աւելի կը կասկածի ծանր կշռող  
եւ թանձր նամակներու վրայ, ուստի կը խնդրենք որ միշտ ի նկատի  
ունենաք ատոն եւ պէտք եղած զգուշութիւնները չի մոռնաք:

Մենք խմբագրատուն հաղորդած ենք իր ծածկագրով գրած նա-

մականերուն համար մասնաւոր հասցէ, բայց այդ հասցէն միայն եւ միմիայն կեղծ մեղանով գրուածներու համար է. հետեւաբար ուրիշ աւելի վնասակար նամականեր կամ գրութիւններ այդ հասցէով չըլլայ թէ ղրկէք: Մենք հոն գրած ենք որ արդէն իր գրութիւնները Ձեզ պիտի ղրկեն մեզ հասցնելու համար, հետեւաբար հարկ դատեցինք ասոնք Ձեզ իմացնել:

Լաւ է որ դուք ալ եւ մենք ալ ունենանք ծածկագրութեան համար մասնաւոր միջոցներ: Ձեզ կը թողունք հաղորդել այդ միջոցը:

Կարելոր եւ օգտակար լուրեր, կուսակցութեանս այլեւայլ յաջողութիւնները, յաջող ձեռնարկներ՝ կը խնդրենք որ մեզ իմացնել չի մոռնաք ասկէ ետք: Առայժմ ձեր նամականերն ալ կ'ուղարկէք թերթի համար մեր վերը ցոյց տուած նոյն հասցէով, նոյնպէս ուրիշ բաց նամականեր ալ:

Բարեւելով զՁեզ

|                                          |           |
|------------------------------------------|-----------|
| Ի դիմաց Հ.Յ.Դ. Խարբերդի Աւար-Աւեր Կ. Կ.ի |           |
| Ատենադպիր                                | Ատենապետ  |
| ԱՍԼԱՆ                                    | Տէլի ֆԱՓԱ |

Յ. Գ.- Վայրկեանէ վայրկեան կը սպասենք Ձեր պատասխանին: Մեր նամակը ստանալէ ետք՝ անմիջապէս լրագրեցէք մեզ: Թերթերը շատ աւելի սպասուածն էին:

ՆՈՅՆՔ

1.- Յայտնաբար նամակը ուղղուած է Ադեֆսանդրիոյ մէջ պատասխանատու մէկ ընկերոջ:

2.- Ակնարկութիւն ժընե՛ «Դրօշակ»ի խմբագրութեան ուղարկուած նախորդ՝ թիւ 817-2 նամակի:

Փաստ, 817-4

[18]98 Մարտ 19/31, Խարբերդ

Ազնիւ եղբայր(1)

Ներփակ կը գտնէք նամակ մը որ կը խնդրենք ուղարկել հաճիք խմբագրատուն:

Մենք անհամբեր սպասում ենք Ձեզմէ թերթ եւ նամակներ խմբագրատունից, աչքերնիս ճամբան անհանգիստ դրութեան մէջ կը մնանք՝ մանաւանդ իմանալու թէ ասկէ առաջ մեր ուղարկած գրութիւնները Ձեզ հասած են:

Թերթերու համար միշտ աշխատեցէք որ ծանր չի կշռեն՝ կասկածանք չյարուցանելու համար:

Ձեր կողմէն մի մոռնաք նաեւ քաղաքականութեան նկատմամբ որոշ եւ յստակ լուրեր հաղորդելէ մեզ:

Ի դիմաց Խ[արբերդ]ի Կ. Կ.ի  
ԱՍԼԱՆ

1.- Յստակ է որ նամակը ուղղուած է Աղեֆսանդրիոյ կոմիտէին, որուն միջոցաւ Խարբերդի Հ.Յ.Դ. կազմակերպութիւնը կը հաղորդակցէր ժընեւ «Դրօշակ»ի խմբագրութեան հետ:

Փաստ. 817-5

Ռուբեն Զարդարեանի հետեւեալ գրութիւնը՝ «Նամակ հարբերդէն» խորագրով, խմբագրական աննշան փոփոխութիւններով լոյս տեսած է նաեւ «Դրօշակ»ի 31 Մայիս 1898, թիւ 5(85) համարին մէջ, էջ 43-44:

[18]98 Մարտ 19/31, հարբերդ

Գարնան դուռը կը բացուի ու տաքուկ արեւու ծիծաղկուն շողերով դուրս կու գանք սեւ առիքի տակէն ծիծեռնակի, թռչունի ճըռլողիւն լսելու. հայ երկրագործը՝ բզէզին ու միջատին առաջին ճպլտութէն առաջ, բանբոյսը(1) դեռ իր գլուխը հողի տակէն դուրս չի հանած՝ դաշտին վրայ կ'երեւի արօրովը ու գարնանացանը կը սերմանէ տենդոտ աշխուժով՝ իբր թէ վաղուան հունձքը իրը պիտի ըլլար եւ պատրաստած հացը ինք պիտի ուտէր, ակամայ ամսոսանք մը կը թռի շրթունքներէդ. լաւ գիտէ, այո՛, լաւ ըմբռնած է հայ մշակը թէ ոչխարին մեծցուցած գառնուկը՝ գայլը կ'աւարէ, հաւուն հասցուցած ձագուկը՝ ուրուրը կը վերցնէ եւ բազէն կ'որսայ տկար թռչնակը, սակայն ինչ ճար. աշխատութիւնը օրհնեալ է հայ աշխատաւորին, հոգ չէ թէ անոր վաստակը օտարին պիղծ շրթները խլեն ու ինքը, տէրը ձեռք երկնցնէ յետոյ օտարին:

Գարնան դռնակը բացուեցաւ, կ'ըսէինք, ու գիւղացու երգիքին վրայ արեւի ճառագայթին հետ՝ յոյսի աղօտ նշոյլ մ'ալ խաղաց. առուններու երկայնքն ի վար սառը կը հալէր եւ արեւկող տեղեր, հոս հոն՝ ջրի մամուռներ, առուի-կարոս ու թրթնջուկ(2) դաշտեցիին կարօտ հացին պակասը կը լեցնէին: Հազարաւոր թափուած նպաստի ոսկիները բանի մը տեղ չեն բռներ՝ երբ հալալ վաստակը տուն չի գար ու տուն չի շիներ. ողջ մնան գիւղացուն եզն ու գոմէշը, սակայն անկուշտ Դեւ-կառավարութեան նախ բերանը չորնար: Մէկ շարքով

դաշտաբնակ գիւղերէն անցիր ու հատիկ-հատիկ հանդիպած տուներէդ ներս երկնցուր գլուխդ. աղքատութիւն, աղքատութիւն, աղքատութիւն: Ամբողջ կեանքեր դաշտի խոտին ու ցամաք հացին հետ կապուեր:

Միթէ կարելի՞ էր որ տեւէր այս դրութիւնը, միթէ հաւն իսկ վերջապէս օր մը երես չէ՞ր ցատկեր իր կտուցին ուժովը: Միայն նիւթական զրկանքն ու կարօտն ըլլա՞ր. հապա բարոյական ցաւէրը, վագրի ճիրաններ էին հարկաւոր կանխաւ մեր բողոքը կատարեալ ընելու համար: Գիւղական հասարակութեան մէջ պէկերն ու պէկերու կորիւնները մոլեգնած անասունի վոհմակներ են քարշ ինկած. Դատէմ գիւղին մէջ Հաճի Պէկոն ու իր լակոտները, անգամ մը ասոնցմէ հայ կոյսերու պատուոյ հաշիւներն ուզէիք: Զինուոր, ոստիկան ամէն օր պակաս չեն գիւղացիի տունէն. ո՞ր մնաց սուլթանական բարեկարգութիւնը. հին դրութիւնը հիմա աւելի ծայրայեղ կերպով սաստկացած է. կ'ուտեն, կը խմեն, իրենց ձիերը կը կշտացնեն հայուն տարուայ պաշարէն ու կը ծեծեն, կը խոշտանգեն անօթի, աղքատ ժողովուրդը՝ դրամ, անվերջ, անհաշիւ հարկ պահանջելով. այս պահուս տասներեք տարուայ յետնորդ տուրք (պագայ) կը հաւաքուի դաշտէն: Սուլթանը միայն իր նման խաբեբայ դիւանագէտներու առջեւ կրնայ ծիծաղելի խաղեր սարքել, հայուն եքեք տարուայ տուրք շնորհեց եւ 13 տարուայ բազմապատկուած, բարդուած դրամներ կը գանձէ:

Դրութիւնն այսօր այնքան անտանելի կը դառնայ կամաց-կամաց որ թուրք հեզ ու հաւատարիմ ժողովուրդն իսկ՝ իր աւանդական կրաւորական թմրութենէն սթափելով՝ կացութեան վրայ անդրադառնալ կը սկսի. բողոքներ խարբերդէն, բողոքներ խողաթէն, բողոքներ Մալաթիայէն եւ այս ամէնը ուղղուած անբարոյիկ կառավարութեան դէմ, անոր ռեժիմին ուղղուած: Մենք չենք քններ այդ բողոքներու կերպն ու եղանակը՝ բայց իրողութիւնները կը հաստատեն թէ փտութիւնը մինչեւ արմատին իջած է:

Խարբերդ, ժամ մը միջոցի հեռաւորութեամբն երկու մասի բաժնուած ըլլալով, հին քաղաքը լերան վրայ ու նորը՝ Մէզիրէ անունով՝ դաշտին մէջ կը գտնուի ուր կը մնան կուսակալն ու Զօրանոցը: Խանութի, ստացուածքի մեծագոյն մասը հին քաղաքին մէջ թուրքերու սեպհականութիւնն եղած է ջարդի թուականէն (3) ետք երբ հայ վաճառականն ու դրամատէրը՝ Մէզիրէ քաշուեցան եւ առեւտուրի


մղումը իրենց հետ գնացած տեղերնին փոխադրեցին՝ թուրքը դառն հիասթափում մ'ու իր գործած աւերին գիտակցութիւնն ունեցաւ, յստակ աչքով տեսաւ թէ վնասին ամէնէն մեծ բաժինը իր ձեռքով ինք իր տունը բերած էր. դատարկած խանութները ահագին անկումով իրենց նախորդ վարձքերէն ու արժէքէն շատ պակասի իջան, այնպէս որ կալուածատէրը, հասութառուն – թուրք հասարակութեան մեծամասնութիւնը – իր գոյութեան աղբիւրները ցամքած տեսաւ: Փաթթոցաւոր գլուխներու եւ աղտոտ խրխաններու տակէն էրաւունքի խնդիր մը դուրս ժայթքեց, յուզում մը՝ որ գնաց ու մեծցաւ. քաղաքացի թուրքին պնդումն է որ կուսակալանիստ Մէզիրէէն հեռու ինկած քաղաքին մէջ ալ գայմագամութիւն մը հաստատուի, որով թուրք ստացուածքները առուտուրի բերումով գին գտնեն նորէն. կառավարութիւնը իր ծակ գանձարանին վրայ նայելով՝ սկիզբէն ի վեր միշտ մերժող, միշտ ժխտող գտնուեցաւ. հինգ վեց անգամ Պոլիս քաշուած հեռագիրներու – որոնց համար 50 ոսկի հնչուն դրամ գնաց – եւ ոչ մի պատասխան տրուեցաւ վերէն: Պահանջող մասին ոյժ կու տար տեղիս Խատին՝(4) որ հէնց ճիշդ այսօր հասած հեռագիրով մը պաշտօնանկ եղաւ: Կ'իմանանք թէ թուրք հասարակութիւնը այսպէս իր ուզած նպատակին հասած չի տեսնելով ինք՝ գինք՝ կը ծրագրէ եղեր գիշերանց յարձակում տալ Մէզիրէի վրայ՝ ջարդել, հրդեհելէ ետք քաղաքի հայ հարուստներէն ալ բռնի որոշւած գումարներ առնել ու գայմագամութիւնը բազուկի ուժով վեր հանել. չենք գիտեր ու կը զարմանանք թէ ինչպէս կ'ըլլայ որ չի գործադրուիր այդ խորհուրդը: Վտանգն անցած չէ ու վայրկեանէ վայրկեան կրնայ պայթիլ: Իսկ թէ գայմագամութիւնը որքան օգտակար պիտի ըլլայ քաղաքացիին, թուրքին համար այդ ամէն տարակոյսէ վեր է. գալով հայուն՝ ահա խնդիրը. հայը բնական է որ վնասով դուրս պիտի գայ անկէ. կառավարութիւնը այլեւս պիտի կազմեն սոֆթաներն ու խոճաները(5) եւ կառավարական պաշտօնատուներ պիտի փոխադրուի նեխած հիւճրէները(6) ուր խեղճուկ հայը շատ աւելի թանկ ողջակէզներով պիտի երթայ Պէկօղլի կամ Հաճի Մուհամմէտ էֆէնտի քուրմերէն կողկողանքով միշտ իր պատգամն առնելու:

Առուտուր, վաճառականութիւն հոգեվարքի մէջ, եթէ ոչ մեռած. վստահութիւնն անկարելի է որ վերահաստատուի իսլամին ու քրիստոնեային մէջ. գողութիւնն ամէն ատենէ աւելի շատցած. խենթութիւնը

*Թիւն, մարդասպանութիւն յաճախողէպ:  
Փոթորիկ մը որ կ'անցնի ու հաշիւը յետոյ յայտնի կ'ըլլայ:*

*ԱՍԼԱՆ*

- 1.- Ճպլտով եւ բանբոյս – բարբառային բառեր են. նպլտովի փոխարէն Մալխասեանց բառարանը ունի ճլվլտոց՝ թփոտալ իմաստով: Բանբոյսի փոխարէն Մալխասեանց ունի բամբուշ՝ «մի անորոշ ծաղկի անուն»:
- 2.- Թրթնջուկ – բանջարեղէն մը՝ գառնականջ:
- 3.- Ջարդի թուական – ակնարկութիւն հայկական նահանգներու մէջ 1895-ի Համիտեան կոտորածներուն:
- 4.- Խատի, դատի – թրերէն՝ իսլամ կրօնական դատաւոր:
- 5.- Սօֆթա եւ հօնա – թրերէն՝ սօֆթա՝ աստուածաբանութեան մահմետական կրօնաւոր: Հօնա՝ մոլլա, ուսուցիչ:
- 6.- Հիւնրէ – թրերէն՝ խուց:



Խարբերդ

Փաստ, 817-7

[18]98 Ապրիլ 12/24 Խարբերդ

Պատուարժան խմբագրութիւն  
Հ. Յ. Դաշնակցութեան, ի ժրնեւ

Պարտականութենէ աւելի զգացում մը կը մղէ մեզ այս պահուս  
աճապարել գլուխ հանելու համար տեղական կազմակերպութեան  
ընդհանուր ծրագիրը՝ որու շուտընդփոյթ գործադրութեան կը ջա-  
նանք ամէն համոզումով: Պարագաներն ու ներկայ անստոյգ կացու-  
թիւնը, հայ ժողովրդի բոլորովին անպաշտպան վիճակն ու մեր  
նպատակին յաջողութիւնն երաշխաւորող այլեւայլ տրամադրելի  
միջոցներ՝ զմեզ կը դնէին նուիրական պատասխանատուութեան մը  
տակ ու կ'ամփոփէին լուրջ, միեւնոյն ատեն ինքնալուծում ինքնամ-  
փոփման մէջ:

Գրամատոյց եւրոպացին՝ ինչպէս կանխաւ մեր նամակներով Ձեզ  
յայտնած ենք, Կեդր. կոմիտէիս պատուակալ անդամներէն է. չենք  
գիտեր թէ իր մտադրութեան համեմատ բախտ պիտի ունենայ ան-  
ձամբ այցելել ձեզ՝ բերանացի հաղորդելու համար տեղույս ընդհա-  
նուր դրութեան, հայ ժողովրդի իսկական կացութեան ու պահանջ-  
ների մասին տեղեկութիւններ, հակառակ պարագային, մեր գրու-  
թիւնը պիտի լրացնէ այդ բաղձանքը եւ ցոյց պիտի տայ ձեզ մեր ըն-  
դունած տեղույս «կազմակերպական ծրագիրը»:

Քաղաքիս աշխարհագրական դիրքը «յարձակողական կազմա-  
կերպութեան» մը բնական յարմարութիւններէն զուրկ է՝ ինչպէս հա-  
ղորդած ենք կանխագոյն նամակներով. սահմանագլուխներէ հեռի  
ինկած՝ թէեւ Տաւրոսը անմիջապէս իր թեւին տակ շատ մ'առաւելու-  
թիւններ խոստանար մեզի, սակայն քիւրտին մինչեւ հիմա ներշնչած  
բոլոր անվստահութիւնները ու անհաւատարիմ վերաբերութիւնը  
դէպի հայը մեզ սա համոզման բերին թէ՛ մօտ ժամանակի մէջ եւ  
հասկցուած միջոցներով անկարելի է այդ մասին դրական յաջողու-  
թիւն ձեռք բերել, հետեւաբար Խարբերդ նախ ամուր ինքնապաշտ-  
պանութեան վիճակ մը շինելու էր իրեն: Թշնամին մեզ կը ներկա-

յանայ սոսկ Ձինուորական ուժով, որովհետեւ անցած եղելութիւնները հաստատեցին թէ թուրք խուժանը հակառակ իր բոլորովին սպառազինուած դրութեան, հակառակ իրեն թիկունք տուող թուրք զինուորական բանակին՝ միշտ անմերձենալի կը գտնէր հայ թաղերը եւ քաղաքին ամէն նպաստաւոր դիրքերուն վրայ լարուած թնդանօթները գործի սկսելէ առաջ՝ ձեռնթափ ու բոլորովին անկարող կը զգար դէպի հայ շէնքերը քայլ առնելու: Ասիկա թուրք տարրին հոգեբանական ճշմարիտ պատկերը, ցեղային phaseն է՝ որուն մօտէն գիտակ ու համոզուած ենք. թուրք հասարակութիւնը՝ առանց զինուորին՝ միշտ պիտի պարտուի, եթէ հինգ անգամ աւելի մեծամասնութեամբ ստուար ոյժ ունենայ իր հետ ճակատի եկող հայէն: Արդ, մեր աշխատութիւններուն հաւաքական զօրութիւնը պէտք էր որ մթերուէր բնականաբար կէտի մը վրայ՝ ուրկէ կարելի ըլլար թըշնամիին կարողութեան վառարանը հրդեհել բոլոր հաւանական կարելիութեամբ: Ձինուորական ուժը, ահա՛ անխորտակելի կաղնին՝ որուն համար հարկաւոր տապարը պէտք կ'ըլլար: Ընդհանուր ապրստամբութեան մը, կամ մասնակի յեղափոխութեան մը, ժողովրդական ոեւէ խլրտման մը պահուն գիտենք թէ զինուորն է որ իր մարդուած, կազմ ու լեցուն սպառազինութեամբ գլուխ վերցնող, մանաւանդ բնական ինքնապաշտպանութեան ծառայող դիրքերէ աղքատ՝ հասարակութեան մէջքին կ'իյնայ ապառաժէն փրթած կտորի մը պէս. ուստի մեր նպատակը ինքնին կը ճշդուէր արդէն. որոշուած պահուն այդ ուժը խորտակել այսինքն Զօրանոցին տիրել կամ զայն քայքայել անհրաժեշտաբար. եւ այդ իրաւ է թէ խիստ դժուար, բայց ոչ երբեք մեզ յուսահատական կը թուի:

Խարբերդի հին քաղաքը կը մնայ բլուրներու վրայ՝ մէկ ժամ հեռաւորութեամբ դաշտին մէջ շինուած կուսակալանիստ Մեզիրէէն ուր կան Զօրանոցը, կառավարութեան շէնքերը, բանտը, պաշտօնեաներու ու սպաներու բնակութիւնները. հոս հայը՝ ձրիակեր, բարքով ու հոգիով այլասերած պաշտօնեաներ, փաստաբաններ, մէկ խօսք[ով] զգուելի bourgeoisieն կը ներկայացնէ, մինչեւ բուն քաղաքը հինգ վեց անգամը աւելի մեծ Մէզիրէէն՝ ունի հայ արհեստաւորը, վաճառականութիւնը, հայկական աւելի կուռ բնակչութիւնը՝ իր հետ մէկտեղ նոյնպէս իսլամութիւնն ամբողջովին իր խոճաներով, մոլլաններով, ճշմարիտ խուժանով: Քաղաքին մէջ թուրք եւ հայ թաղեր եթէ ոչ անշատ սահմաններով, բայց վերջապէս նշանակելի մասե-

րով բաժան կը մնան իրարմէ: Երբ կարելի ըլլայ Մէզիրէի Զօրանոցը օդը հանել – ինչ որ հիմա աւելի դժուարացաւ ուրիշ Հիւանդանոց-Զօրանոցի մը հրդեհելովը – տեղական կազմակերպութիւնը ոչ թէ միայն իր դիրքն ապահոված, այլ նոյնիսկ յարձակողական վիճակի անցած կ'ըլլայ:

Տիգրանակերտ, Մալաթիա՝ մէկն իր պարիսպներով, միւսն իր մէջ մնայուն զինուորականութիւն չունենալուն՝ սա առաւելութիւններն ունին որ ջարդի կամ յեղափոխութեան վայրեկանի մը՝ զինուորին թնդանօթը չեն ունենար իրենց դէմ, յաջողութեան կէսուկէս բաժանում մ'է այս թշնամիին հետ, երբ մեր քաղաքէն կէս ժամ կամ քառորդ մը հեռու շտկուած թնդանօթներ հայ թաղերը կրնան հինգ րոպէէն ամէն կողմէ հրդեհել ու քակել՝ անկարելի կ'ըլլայ ալ բոցերու մէջէն վեցհարուածով, հրացանով կամ մարթինով ճակատի գալ ու դիմադրութիւն փորձել՝ քանի որ կանխաւ այդ մեծ ուժը ջլատուած չէ ուժանակով – մեր առաջին պէտքը եւ մեր վերջնական յաջողութեան երաշխիքը:

Առ այժմ երբ ուժանակի խնդիրը մեր ստիպողական ու անհրաժեշտ պահանջը կը մնայ ձեզմէ՝ ընտրուածներու, զտուած գաղափարակիցներու կազմակերպութեամբը կը զբաղինք. Բալուի, Մէզիրէի, քաղաքին եւ գիւղերուն մէջ կոմիտէներ յառաջ բերած՝ կը շարունակենք կակուղ հողերի վրայ դեռ յամրաբար գետին պատրաստել: Հիմակուհիմա կազմակերպութեան չափի տանք բնաւ այն ծաւալուն հանգամանքը որ ասկէ կանխագոյն ուրիշ կուսակցութիւններու կնիքն ու անյաջողութեան գլխաւոր պատճառն եղաւ. այսպիսի սահմանափակ միջավայրերու մէջ՝ ուր միեւնոյն հասարակութեան բոլոր անհատները մէկզմէկ կը ճանչնան նոյնիսկ ընտանեկան թագուն գաղտնիքներով, ուր փողոցին հաւերն ու շուններն ալ նոյնքան ծանօթ ու համրուած են՝ շատ դժուար է լայն կալի վրայ մեքենայ աշխատցնել, առանց վտանգի սպառնալիքն ունենալով յարաժամ սրտի մէջ: Մենք սկզբունքով հակառակ ենք լոկ մարդու կազմակերպութեան. եթէ կազմակերպութեան գլխաւոր մէկ նպատակն է մտքի յեղաշրջութիւնը, մինչեւ հիմա յաջորդաբար երեւցող յեղափոխական դէպքերն ու մանաւանդ ջարդը՝ պէտք էր ըրած ըլլային իրենց պրոպականդան, ժողովրդին հասկցուցած ըլլային իրաւունքի գաղափարը եւ զինքը նոյնիսկ բռնի մղած իր Ազատագրութեան դատին. դեռ ուրիշ պատճառով մ'ալ եթէ ընդարձակ

կազմակերպութիւն մը՝ իրեն նիւթապէս սատարող մարդերու առաւելութիւնը կ'ունենար՝ դժբախտաբար տխուր բառերով կ'արձանագրէինք թէ հայ հարուստը ջարդի թուականէն առաջ ալ նոյն ազնիւ զգացումներէն թելադրուած չտեսանք. շատ շատ պղատոնական համակրութենէ մ'անդին չանցաւ իր պարտականութիւնը, եթէ պատուաւոր բացառութիւններ ալ գտնուեցան հոս ու հոն:

Հակահարուածը շահամոլ մարդերէն այսօր ստրուկ նկարագիրներ, ամէն ստորնութեանց տրամադիր անհատներ դուրս բերաւ, բայց միեւնոյն հակահարուածը, չենք կրնար անկողմնակալ չըլլալ, գիտակիցներու եւ իրենց գործին ամբողջովին նուիրուող անձնուէրներու սերունդ մ'ալ պատրաստել, զտելով, .....(1) հաւաքական հասարակութիւնը:

Կ'ամփոփենք մեր ծրագիրը հետեւեալ կերպով.

1. Հաւատարիմ եւ ամենավստահելի գաղափարակիցներու կազմակերպութեան մը հիմերը աւարտած են, որուն նպատակն է.

ա. Ամէն կերպով ունենալ, ձեռք բերել կամ պատրաստել կատարեալ տեսակէն ուժանակ եւ ռումբ.

բ. Անմիջապէս, ինչքան ալ սուղ աշխատութիւններով ըլլայ, աշխատող միջոցաւ Զօրանոցը մեր տրամադրութեան տակ պահել:

2. Կոմիտէներն սպառազինել՝ կարեւորութեանն համեմատ՝ զէնքով կամ ռումբով:

3. Ասոնք ապահովելէ վերջ՝ աշխատիլ ընդարձակել կազմակերպութիւնը, միշտ ապահով խարխիսներու վրայ հաստատելով զայն:

4. Զանալ մօտաւոր գաւառներու մէջ եղած կազմակերպութեանց հետ միեւնոյն ծրագիրն ու նպատակը յարմարցնել վտանգի պահուն համագործակից գտնուելու համար:

5. Պատրաստ ունենալ միշտ ռազմական տակտիկ մը:

Երբ ահա եզրակացութեան կը հասնինք, դուք ինքնին կը հասկընաք թէ մեր ընդհանուր գործունէութիւնը ուժանակին շուրջ կը բոլորի, առանց որուն տեղական գործը հիմ չի կրնար ունենալ եւ ոչ ալ գոյութիւն պահել:

Հետեւաբար խնդիրն է անոր ստացումը՝ ըլլայ փոխադրութեամբ կամ հոս պատրաստութեամբ: Մենք այս մասին կը ներկայացնենք Զեզ սա առաջարկութիւնները. մարդ մը կրնայ գալ հոս մի քանի ամիս կենալով պատրաստութեան փորձերը մեր մէկ թերի գիտցող

ընկերոջ առջեւ ընել, անոր պակասները լրացնել ու անցնիլ ուրիշ տեղ, այս պարագային ալ բաղադրութեան հարկաւոր քիմիական տարրերը նորէն Սամսոնէն կամ ուրիշ նպաստաւոր տեղէ մը փոխադրել հարկ կ'ըլլայ, ապա թէ ոչ պատրաստը հարկ անհրաժեշտ է մտցնել, Սեւ ծովու վրայ գտնուած նաւահանգիստներու ո՛ր մէկուն Կենտր. կօմիտէն որ կրնայ դուրսէն ընդունել կամ ունենալ՝ մեզի համար, անկէ մեզի փոխադրութեան միջոցներ ունինք:

Կարծենք Ամերկա գտնուող Փիթըր Մանոյեանը եւ Անթառամը, որոնք նոյն արհեստին գիտականեր ըլլալ լսած ենք, հեշտով կրնան մտնալ Թուրքիա եւ գալ տեղս, ուր իրենց ծննդավայրն է արդէն. Պ. Մելիք (2) այդ անձերը լաւ կը ճանչնայ:

Մոռցանք Մելիքի խնդիրը, որուն ներկայացուցչութիւնը խնդրած էինք Ձեզմէ առաջ եւ մինչեւ հիմա ..... Իր ներկայութիւնը հոս խիստ անհրաժեշտ է եւ զգալի. Հայաստանն է կռիւի ասպարէզը եւ ո՛չ Ամերկա, ուր զօրեղ յաջորդներ ալ չեն պակսիր իրեն: Կը սպասենք միշտ այս մասին ալ նպաստաւոր պատասխանի:

Կանխագոյն նամակով՝ այստեղ Ձեզ ցոյց տուած ենք մեր հասցէն, այս անգամ ալ չենք մոռնար կրկնել:

Միշտ անձնուէր, ջերմագին կարօտով

Ի դիմաց Հ. Յ. Դաշնակցութեան  
Աւար-Աւեր Կեդր. կոմիտէի  
Ատենադպիր Ատենապետ  
ԱՍԼԱՆ Տէլի ՓԱՓԱ

Յ. Գ.- Դրկեցէք Աղեքսանդրիա Դաշնակցութեան ներկայացուցչին Ձեր պատասխանը, ուր տուած ենք հետեւեալ հասցէն:

Rev. Mr. N. Barnum D. D.

for Jean Cassab

.....

1.- Անընթեռնելի մէկ բառ:

2.- Մելիք՝ ծածկանունն է Ամերիկայի մէջ Հ.Յ.Դ. ներկայացուցիչ Իսուֆեան Յովհաննէսի, զոր հարբերդի Կ. կոմիտէն կ'ուզէ իբրեւ իրենց գործիչ:

Փաստ, 817-8

[18]98 Ապրիլ 24/11  
Խ[արբերդ]

Ազնուամեծար բարեկամ Պ. Վահե,  
Աղեքսանդրիա

Ստացած ենք Ձեր նամակն ու երկու թերթերը, ընդամենը երկու ծրար անցած թղթաբերով եւ կը յայտնենք այս անգամով մեր շնորհակալիքը: Ձեր տուած տեղեկութիւնները հաճոյքով կարդացինք եւ կը սպասենք որ յարմար պատեհութիւնով չի մոռնաք նոյնը միշտ:

Երկու թերթերէն ալ մէկ մէկ թերթ պակաս ըլլալը մեզի խորհիլ տուաւ ակամայ թէ, մի գուցէ երրորդ ծրար մըն ալ եղած ըլլար այն երկուքին հետ ու կորսուած. հաճեցէք լուսաբանել մեզ Ձեր յաջորդ գրութիւնով:

Ներփակ նամակը գրուած էր ասկէ մի քանի շաբաթ առաջ, եւ պիտի ղրկուէր մէկ ծանօթ անձնաւորութեան մը հետ. դժբախտաբար անոր շուտափոյթ մեկնումը ժամանակ չի տուաւ մեզ հասցնելու իրեն. հետեւաբար ստիպուեցանք ներկայով Ձեզ ղրկել, խնդրելով որ հասցնէք զայն իր ճակատագրուած տեղը:

Գործը յաջող քայլերով յառաջ կը գնայ տեղս, միակ եւ անհրաժեշտ պէտքը որ ունինք մեր կազմակերպութիւնը հաստատ խարիսխի վրայ դնելու կը գտնէք նոյն նամակին մէջ եւ դա խիստ կարեւոր է. առանց նրան՝ անկարելի է փրկութիւն յուսալ եւ մերիններէն քաջութիւն սպասել. խնդրենք որ դուք ալ կրկնէք մեր պահանջները հարկ եղած տեղերը եւ շուտափոյթ գոհացում տաք նրանց: Մեզ կը գրէք որ պատուաւոր անձերու ձեռքով գաղտնի հանգանակութեան դիմենք, քանի որ այս տեղերը նոր կազմակերպութիւն կ'ըլլայ: Երբ մի անգամ Հայաստանի հողուն վրայ ոտք կոխէիք սա պահուն եւ խուզարկու նայուածքով մը երկրին մարդոց բարքերէն ու հոգիէն, կացութենէն ու գաղափարներէն քիչ մը բան տեսնէիք. ապահով եղէք թէ նման մտածում մը Ձեր մտքէն իսկ անցնել չպիտի ուզէիք:

Հոս ասկէ առաջ վիժած կազմակերպութիւններ եւ գէշ գործեր

ծնունդ առած ու անմիջապէս մեռեր են, միեւնոյն ատեն հասարակութեան մէջ գէշ հետք? ու տպաւորութիւն ձգելով, յեղափոխութիւնը իր գաղափարական սրբութենէն շատ-շատ վար իջեցուցեր են: Ա՛լ անկարելի է: Մենք դրամը դիւրաւ կրնանք ձեռք բերել, եթէ արտասահմանի կոմիտէները տան մեզ հարկ եղած աջակցութիւնը, փոխանակ դպրոցականի զգուելի վիճաբանութիւններով զբաղելու, որոնց ժամանակը շատոնց անցած ըլլալու էր կարծենք:

Գալ անգամով Ձեր մեզի ցոյց տուած մելանով կը գրենք Ձեզ, ինչ որ հարկն է: Դուք ամէն պարագայի տակ մի՛ ուշացնէք ձեր գրութիւններն ու թերթերը մասնաւորաբար: Հասցէն՝ որ Ձեզ տուած ենք՝ լաւ է եւ առայժմ անոր նկատմամբ ռեւէ անպատեհութիւն մը չենք նշմարեր:

Երկու երեք օրէն տեղէս կը մեկնի Նշան .....(1) չենք գիտեր թէ Երիզա՛, Վա՛ն թէ Պայագիտ. գինուորներն ալ ուղիղը չեն գիտեր. Էլանէի Ճէպտիլէ (բռնի հանգանակութիւն) կը հաւաքէ կառավարութիւնը թուրքերէն աճապարանքով: Հայ գիւղերէն 12 տարուայ յետնորդ տուրք կը պահանջուի խիստ կերպով:

Խորին յարգանքով

|                                        |           |
|----------------------------------------|-----------|
| Ի դիմաց Հ.Յ.Դ. Աւար-Աւեր Կեդր. կոմիտէի |           |
| Ատենադպիր                              | Ատենապետ  |
| ԱՍԼԱՆ                                  | Տէլի ՓԱՓԱ |

1.- Անընթեռնելի մէկ բառ:

Փաստ, 817-9

[18]98 Մայիս 6/18  
Խարբերդ

Յարգարժան եղբայր,

Անցած թղթաբերով ստացանք երկու ծրար Ձեզմէ, որոնցմէ մին կը պարունակէր միւս անգամուայ ղրկուած երկու թերթերուն պակաս թիւերը:

Դժբախտաբար վերջին անգամ ղրկուածներէն մէկուն պահարանը ճամբան մաշած եւ ծայրէն մաս մը պատռուած էր, որով նոյն հասցէն գիտցուած եւ վտանգուած է. ուստի կ'աղաչենք որ նոյն հասցէին այլեւս մի որեւէ ծրար կամ գրութիւն չուղարկէք: Կը խընդրենք որ որքան կարելի է պահարաններու դիմացկուններէն ընտրէք եւ մեծ մի ծրարի մէջ նշանակէք թէ նոյն սուրհանդակով քանի ծրար ուղարկած էք մեզ: Ծրարներուն թուանշանը բաւական է միայն. այսինքն թէ՛ եթէ երկու ծրար ղրկէք միեւնոյն փոստով, երկուքին ալ ներսը, տեղ մը, կը նշանակէք 2 թուանշանը:

Կը հաստատենք անցած շաբթուայ մեր գրութիւնը, ուր ամփոփուած կայ նաեւ նամակ մ'ալ խմբագրատան հասցէին(1):

Գործերը յաջող ճամբուն մէջ միշտ հաստատուն ապահովութեան տակ են: Կը սպասենք մեր հարցերուն գործնական լուծման:

Խնդրում ենք որ խմբագրատունը շուշացնէ մեր նամակներուն պատասխանը որուն կը սպասենք ածնականօք: Նախ ամէն բանէ առաջ՝ տեղեկանալու համար թէ ապահով կերպով հասած են մեր գրութիւնները իրենց ճակատագրուած տեղը:

Այս փոստով, Ձեզմէ գրութիւն չի ստացանք, բացի թերթերէ. չենք գիտեր արդեօք կորսուած թէ չէ գրուած արդէն:

Այսուհետեւ կը շարունակէք ղրկել մեզ Ձեր գրութիւնները՝ կեղծ մեղանով թէ համարձակ, թերթ եւն. հետեւեալ հասցէներուն, փոխնիփոխ, մէկ շաբթու միով, միւս շաբթու միւսով: Ձեր ծրարները ու-

դարկեցէք Պոլսոյ վրայով, ո՛չ թէ Հալէպի, որ վտանգաւոր է:

Mr. Gaspar Der Antreassian

Պր. Գասպար Տէր Անդրէասեան

Harpout (Turquie)

Մօրէնիկ գիւղ

Mr. Simon Sahaguiian

Պր. Սիմոն Սահակեան

Harpout (Turquie)

Մօրէնիկ գիւղ

Պահարանները՝ ինչպէս գիտենք, ըլլալու են խիստ հաստատուն,  
որոնց վրայ չէք մոռնար միշտ նշանակել Via Constantinople:

Սրտագին բարեւներով

Զերդ

ԱՍԼԱՆ

1.- Խօսքը կը վերաբերի «Դրօշակ»ի հասցեին:

Փաստ, 817-10

[18]98 Յունիս 24/6  
Խարբերդ

Կաթոգին եղբայր(1),

Ստացած ենք ժամանակին ձեր Յունիս 9 թուակիրը՝ ուր ներփակ ալ մէկ թիւ թերթ, անկէ մէկ շաբաթ ետք ուրիշ ծրար մըն ալ նոյնպէս՝ որ կը պարունակէր առջի շաբթուայ թերթին ուրիշ մէկ օրինակը: Շնորհակալութիւն:

Ուրախ ենք որ մեր նամակները իրենց ատենին ուղարկած էք ուղղուած հասցէին, կը սպասենք անհամբեր անոնց պատասխանին որը գիտէք թէ խիստ հարկաւոր է մեզ համար: Շատ գոհ եղանք մանաւանդ կարգաւորվ ձեր կողմէն եղած դիտողութիւններն ու բարեկամական թելադրութիւնները մեր ապագայ ձեռնարկին ու ներկայի ծրագրին համար. այո՛ իր բոլոր ծանրութեամբը հիմակուրնէ կշռած ենք այն դժուարութիւնը որ պիտի տնկուի մեր դէմ, մեր մէն մի քայլափոխին. գործին մեծութիւնն իսկ արդէն ատով կը հասկըցւէր, բայց ատոր համար ալ ամէն զոհողութիւն ու կարելի եղած ամէն ջանք պիտի չխնայենք, դրամը չպիտի պակսի՝ եթէ դուրսի մասնաճիւղերը պզտիկ, շատ պզտիկ միջոցներ ընծեռեն մեզի. չհասկնաք ամենեւին թէ դրամ կամ հանգանակութիւն կը պահանջենք իրենցմէ, ամենեւին, այլ անուղղակի օգնութիւններ՝ որոնք հոս գըտնել անկարելի է, օրինակի համար, մենք Ամերիկայէն պահանջեցինք որ 5-6 օրինակ պարապ չէքեր ղրկեն մեր հասցէին, այսինքն չէքեր որոնց մէջ ո՛չ որոշ գումար նշանակուած կայ, ոչ ալ պանքին տնօրէնին ստորագրութիւնը: Ատոնք մեզի անհամեմատ օգտակարութիւններ ու շատ կրնային բերել՝ եթէ Ամերիկա նստող մեր ընկերները սին վիճաբանութիւններէ ժամանակ հանէին ու մեր ահռելի կերպով վտանգաւոր կացութեան մասին խորհիլ ուզէին – ցաւ է ըսել թէ այդքան զոհողութիւն չուզեցին ստանձնել: Կը տեսնէք թէ քափիթալը դիւրամատչելի է ըստինքեան՝ բայց տրամադիր բազուկ

է հարկաւոր անոր ստացման. այդ բազուկը ունինք մենք՝ որքան ալ յոգնած ըլլայ անիկա, միայն դուրսի մեր ընկերներէն ալ մի քիչ բարի տրամադրութիւն վերջին խնդրանքնիս կ'ըլլար:

Այս անգամ պիտի խնդրէինք Ձեզմէ որ եթէ դուք դիւրութիւն ունէիք՝ ղրկէիք մեզի ո՛հեւէ պանքի պարապ չէքերէն 5-6 հատ, կամ դուք գրէիք Ամերիկա ձեր մէկ ծանօթին որ ուղարկէր Ձեզ՝ մեզի համար, անհունապէս երախտապարտ թողուցած պիտի ըլլայիք Ձեր անձնուէր եղբայրները:

Այսքան չնչին պարտականութիւններու առջեւ դուրսի մեր ընկերներուն թուլութիւնը նկատի առնելով՝ Կ. կոմիտէս որոշեց իր մէկ անդամը ուղղակի Սեծ ծովի քոմիսէրներուն եւ Պոլսոյ մեր տան ղրկել՝ ձեզ արդէն ծանօթ էական հարցին լուծումն ունենալու համար. իր ասկէ մեկնած օրը կը տեղեկագրենք ձեզ որ հաճիք անմիջապէս Պոլիս հարկ եղած տեղը լրագրել, որովհետեւ մենք հոս այն տեղի հասցէն չունինք եւ ինքը հոն մարդ չի ճանչնար: Այս մասին աւելի երկար ու լայն կը գրենք՝ երբ իր մեկնումը որոշուած ըլլայ վերջնապէս:

Ձեր նամակին տակ Վահանեանին(2) նկատմամբ մէկ երկու տող գտանք, որոնք խիստ մութ ըլլալով, որոշ բան մը չկրցանք ըմբռնել. արդեօք Մելիք ճամբայ ելած է դէպի մեր կոճմ. հաճեցէք շուտով աւելի իրական ու պարզ տեղեկութիւն մը տալ, որովհետեւ մեզ ո՛հեւէ տեղէ տեղեկութիւն մը տրուած չէ մինչեւ հիմա:

Պատգամաւորական ժողովի մասին դեռ մօտէն բան մը չիմացանք, թէ եւ լսեցինք թէ անիկա տեղի ունեցեր է թէ կ'ունենայ տակաւին(3): Մենք ցաւ կը յայտնենք որ ժամանակին եւ դեռ մինչեւ հիմա ալ պաշտօնական տեղեկութիւն մը չտրուեցաւ անոր նկատմամբ. եթէ ատենին իմաց ունենայինք անոր գումարման՝ մենք ալ մեր ներկայացուցիչը կ'ուղարկէինք հոն մեր հարցերը ներկայացնելու, ինչ որ իր լայն օգտակարութիւնը պիտի ունենար, ու եթէ ներկայացուցիչ չկրնայինք ղրկել ալ՝ գէթ գրաւոր կերպով մեր մասնակցութիւնը կ'ունենայինք: Դուք ալ իրաւացի չէիք գտներ մեր գանգատները: Մենք շատ պարագաներով ու փաստերով համոզւած ենք թէ՝ արտասահմանի մեր գործիչներէն շատ շատերը բոլորովին անտեղեակ կը մնան Հայաստանի իսկական վիճակէն ու հանգամանքներէն, ասիկա մեր յեղափոխական տարեգրութեան ամենամեծ մէկ պակասն ու նշանակելի թերութիւնը պիտի մնայ.

երկրէն դուրս եկող ու անկէ մեկնող բերանն է որ ձեզի պիտի խօսի բոլոր այն գործադրելի ծրագիրներէն՝ որոնք արդիւնաւոր հետեւութիւն պիտի կրնան ունենալ, եթէ սակայն այդ բերանը բերող անհատը լրջօրէն կրցած է քննել ու ուսումնասիրել ժողովուրդին հոգին, վիճակն ու երկրին բոլոր հանգամանքները իրենց իսկական կացութեամբ: Ասլան՝ որ իբր ներկայացուցիչ՝ ասկէ մեկնելու դիտաւորութիւն ունի, ինչպէս գրեցինք, մտադիր է Ալեքսանդրիա հանդիպելով՝ գալ ձեզ ալ տեսնել, անկէ կրնաք պէտք եղածը հասկնալ:

Գիւղի մ'անունով մեր տուած հասցէն առ այժմ ապահովաբար կրնայ մեզի ծառայել, հակառակ պարագային ձեզ կ'իմացնենք հարկաւորը, ուստի առանց կասկածի հիմակուհիմա կրնաք ձեր յարաբերութիւնները անով շարունակել, միայն հեղ մ'ալ կը կրկնենք որ թերթերու պահարանները շատ դիմացկուններէն ընտրէք, որովհետեւ բոլոր եկած ծրարներուն շրջանակները պատուած կ'ըլլան եւ գուցէ ատով ուշ կամ կանուխ ուշադրութիւն հրաւիրեն իրենց վրայ, ուստի մէն մի թերթ որ պահարանի մէջ կ'առնէք՝ նախ հասարակ թուղթի մէջ փաթեցէք զայն որ պահարանին անկիւնները պատուած ատեն թերթը չերեւի այլ թուղթը:

Եղբայրական ջերմ ողջագուրանքներով՝

|                                        |           |
|----------------------------------------|-----------|
| Ի դիմաց Հ.Յ.Դ. Աւար-Աւեր Կեդր. կոմիտէի |           |
| Ատենադպիր                              | Ատենապետ  |
| ԱՍԼԱՆ                                  | ՏԵՂԻ ՓԱՓԱ |

1.- «Կաթոգին եղբայր»ը շատ հաւանաբար Աղեփանդրիոյ կոմիտէն է. այս վերջինին միջոցաւ յանախ Երկրի մարմինները կը հաղորդակցէին ժընեւի խմբագրատան եւ արտասահմանեան մարմիններու հետ:

2.- Վահանեան ծածկանուններէն մէկն է Ամերիկայի մէջ գործիչ ընկերներէն Իսուֆեան Յովհաննէսի: Մելիքը նոյն անձն է:

3.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. երկրորդ Ընդհ. ժողովին, որ գումարուեցաւ Թիֆլիսի մէջ 1898-ի Ապրիլ-Յունիս ամիսներուն:

4.- Ասլանը Ռուբէն Զարդարեանն է, իսկ Տեղի Փափան՝ Գասապեան Յովհաննէս:

Փաստ, 817-11

Թիւ 1

[18]98 օգոս. 13/25

Խարբերդ

Ազնիւ եղբայր,

Ստացանք ձեր օգոս. 4 թուակիրը ուր ներփակուած կար վեց կտոր փոխանակագրի օրինակ՝ միեւնոյն տեսակէն: Թէեւ դուք կը ծանօթացնէիք թէ երեքը մէկ, եւ երեքը ուրիշ տեսակ էին, սակայն խորհեցանք թէ սխալմամբ վեցն ալ միեւնոյն տեսակէն ղրկած ըլլաք: Ձեր այնքան փութկոտ ձեռնարկութեան, փոխգրերի նկատմամբ անհուն շնորհակալութիւն կը պահենք, սակայն խնդիրն հոն էր որ ատոնք քիչ կը նպաստէին մեր մտադրած ձեռնարկին, որովհետեւ աւելի փոխգրի երեւոյթ ունէին քան չէքի: Այս մասին մանրամասն բացատրութիւն եւ օրինակ մ'ալ ուզած չէքէն՝ պիտի գտնէք ներփակ. հարկ կ'ըլլայ որ ճիշդ նոյն տեսակէն կամ պատրաստել տաք եւ կամ պատրաստիներէն՝ եթէ ձեռք կրնաք բերել՝ ղրկէք մեզի:

Տաւրոսի մասին ձեր դրած հարցումներուն մենք կը պատասխանենք այն տեսակէտով, որը մեր մինչեւ այժմ ունեցած դիտողութեանց արդիւնքը կրնայ համարուիլ Տաւրոսի բնակչութիւնը: Ինչպէս ձեզ ալ անծանօթ չէր, այլեւայլ քիւրտ ցեղերու գումարը կը կազմէ. ցեղեր՝ որոնք աւանդական վրիժառութեամբ ու քինախնդիր կռիւներով միշտ ատելութիւն ունին իրարու դէմ, հօրմէ ու եօթը պորտ սերունդէ կտակուած վրէժի օրինակներ կան որոնց կատարումները կտակընկալին(1) հաւատքին մէկ մասը կը կազմեն ու անխախտելի են. գործունէութեան անսայթաք ուղի մը բանալու համար՝ նախ հարկ է որ այդ լեռներուն ապառաժներուն չափ ծանր ու դժուար վրէժներու եւ ատելութեանց այդ հաշիւները վերցուին մէջտեղէ, ինչ որ ժամանակի ու շատ տարիներու համբերութեան կորո-

վը կը պահանջէ. երկրորդ՝ դրամը, մեծաքանակ դրամը հարկ պիտի ըլլայ: Միեւնոյն ատեն ըմբռնէիք թէ տաւրոսցի քիւրտը՝ թէեւ գրքէ ու մտաւորական զարգացումէ զուրկ՝ սակայն վայրի սրամտութիւն մ'ու իմացական ճկուն յատկութիւններ ունի, կրնայ շատ անգամ ոսկեզօծուած խոստումներու տակ խորունկ խորամանկութեան մը հորը բանալ:

Այո՛: Գիտենք թէ Տաւրոսը կարգ մը ցեղապետներու ափին մէջ բռնուած է, թէ այդ ցեղապետներու սրտին տիրացումը միայն հերիք է ցեղն ունենալու համար ամբողջովին, բայց ցեղապետ մը համոզման ինչ պայմաններով իր զէնքերուն ամբողջ ուժը պիտի ուզէ առերեւութապէս երեւցող տկարին ձեռքը դնել՝ զօրաւորէն առնելով. քիւրտ ցեղապետը ինչպէս պէտք է համոզուած հայուն՝ կառավարութեան դէմ թշնամի ըլլալու, կամ հայը ինչպէս վստահ պէտք է ըլլայ թէ իր անմիջապէս աւարտած բերդը՝ իրեն սեպհականութիւն պիտի մնայ, թէ անոր բանալիները ոեւէ նպաստաւոր պահու մը քիւրտը պիտի չյանձնէ թշնամին ու յետոյ, որքան ալ գաղտնի, բայց վերջապէս թշնամուոյն աչքէն պիտի չվրիպին սա կարգի պատրաստութիւններ. հիւրկընկարող տարրը վստահաբար, նոյնիսկ իր գործը կէս ճամբան պիտի չթողնուի ու հեռանայ: Ամփոփելով մեր խորհրդածութիւնը՝ կը վերջացնենք ըսելու համար թէ քիւրտը մեզի անվստահելի է, թէ անիկա կառավարութեան մէկ մեքենան է, քչիկ մ'ըմբոստ բայց վերջապէս անոր զաւակն է: Այս ծրագիրը աւելի եւրիզա կրնայ լաւ մշակել եւ մենք ո՛րեւէ պատեհութեան տակ մեր ինկած բաժնով կրնանք սատարել անոր, եթէ պարագաները ներկայանան:

Գալով Տիգրանակերտ-Պաղտատի գծին՝ կրնայինք համարձակութեամբ ըսել թէ այդ ճամբան աւելի նպատակայարմար կը թուի մեզ, ի լրոյ կ'իմանանք թէ Տիգրանակերտ գեղեցիկ կազմակերպութիւն մ'ունի, թէ այդ կազմակերպութիւնը ո՛ր կուսակցութեան անունով եղած է՝ այդ կ'անգիտենք. արդէն մօտերս մտադիր էինք պատգամաւորի մը միջոցով հարկ եղածները իմանալ եւ Ձեր գրութիւնն ալ իր յարմար ատենին հասաւ. արդիւնքը փութով կը տեղեկագրենք ձեզ, սակայն առայժմ կը խնդրէինք ձեզմէ որ աւելի լայն տեղեկու-

թիւներ չմոռնայիք տալ մեզ. դուք մութ կ'անցնէիք մեզ իմացնելու թէ այդ գծին երկայնքն ի վար ո՞ւր տեղեր Դաշնակցութիւնս բոյն կամ գործ դրած էր, ինչ էր անոնց նպատակը եւ ինչ միջոցով կրնայինք մենք օգտուիլ հոս եւ փոխադարձաբար:

Տրապիզոնի հասցէն դեռ մինչեւ այսօր, հակառակ մեր այնքան թախանձանքներուն, ո՛չ ձեզմէ կրցինք ստանալ եւ ոչ խմբագրութենէն. արդէն խմբագրութենէն եւ ոչ մի նամակ ստացեր ենք. կը խընդրենք նոյնպէս որ այդ հասցէի մասին ալ անմիջական տնօրինութիւն մ'ընէք, կարելի եղածին չափ շուտ մեզի հասցնելու, նոյնքան կարելոր էր նաեւ Երիզայինը. այդ հասցէները կը գրէիք խմբագրութեան համար օր մը մեր ձեզի ղրկած ծածկագրերովը. կը յուսանք պահած ունիք թուանշանները, հակառակ պարագային կարող ենք ձեզ ղըրկել:

Հակառակ մեր բաղձանքին ու գործերու այնքան բազմապահանջ ստիպողականութեան՝ Ասլան – մեր ներկայացուցիչը – չկրցաւ անցագիր մը ձեռք բերել իր այցելութիւնը տալու համար Սեւ ծովի փերուն, մանաւանդ Ձեզի: Մէկ անգամէն ըմբռնէիք թէ՛ ազգովին խիստ մամուլի մը ճնշման տակ ենք. վաճառականն իսկ հազար զոհողութիւնով՝ հազիւ կրնայ ճամբու անցագիր մը ձեռք ձգել Պոլսոյ անուան: Հիմակուհիմա Ասլանի ուղեւորութիւնը ապագայի թողուցաւ, բայց եւ այնպէս նոր Տրապ[իզոն]ի ու Երիզ[այ]ի հետ ուղղակի հաղորդակցելու համար ուրիշ շատ նպատակայարմար միջոցներ ստեղծած ենք, միայն հասցէներու հասնելուն կը սպասենք, եւ ասկէ առաջուան մեր տեղեկագիրներէն անշուշտ գիտէք որքան անհրաժեշտ են այդ հասցէները մեզ – կարելոր փոխադրութիւնները միայն անոնցմէ պիտի կրնանք ընել: Ամէն բանէ առաջ ներքին ինքնապաշտպանութեան հարցը մեր առաջին նպատակակէտն է, առանց անոր՝ վստահ եղէք թէ ոեւէ՛ գործ անարդիւնք վիժում մը պիտի ըլլայ:

Դուք ձեր նամակով կը տեղեկացնէք թէ, մօտիկ օրերու մէջ 4 նամակ ղրկած էք մեր հասցէին. ստացել ենք երկու նամակ՝ մէկ թիւ թերթով եւ երկու նամակ՝ փոխգրերով(2), կը խնդրենք որ ասկէ ետք ձեր գրութեանց գլուխը նամակաթիւ սկսիք գործածել, ինչպէս կը

սկսինք մենք այս գրութեամբ, որպէսզի դիւրին ըլլայ իմանալ գրութեանց շարունակական համրանքը: Մտադիր ենք այս փոստով ղրկել յօդուած մ'ալ, որը կը յուսանք թէ իր հասցէին պիտի հաճիք հասցնել: Ձեզի ասկէ առաջ ցոյց տուած հասցէները վստահ եղէք թէ կեղծ են արդէն:

Ի դիմաց Հ.Յ.Դ. Կեդր. կոմիտէի

Ատենադպիր  
ԱՍԼԱՆ

Ատենապետ  
Տէլի ՓԱՓԱ

Յ. Գ.- Յօդուածը գալ շաբթուան յետաձգուեցաւ:

Խմբագրութիւնը ինչո՞ւ չպատասխանեց մեր ընդարձակ գրութեան որը դուք ուղարկել էիք իր տեղը ատենին:

1.- Իմա՝ «Դրօշակ» թերթի թիւ 1-ով եւ երկու մամակ՝ չէֆերով (փոխգիր):

2.- Կտակընկալ – արդեօ՞ք կտակառու, կտակ ստացողի իմաստով:

Մատեան N° 81-2, էջ 21-25 (Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի):

Նամակը անստորագիր է, բայց դատելով ձեռագրէն՝ զայն պէտք է վերագրել Միքայէլ Վարանդեանի գրչին: Հ.Յ.Դ. Խարբերդի կոմիտէին ուղղուած այս եւ 15/27 Դեկտ. 1898-ին գրուած նամակներուն մէջ գործածուած թուանշանային ծածկագրերու բանալին հետեւեալ ոտանատուն է.-

«Տուր ձեռքդ, եղբայր, ժամ է շարժելու,  
ժամ է, ժամ առաջ ոտքի կանգնելու»:

Ծածկագրերուն վերծանումը տրուած է կողքին՝ ֆառակոսի փակագծերու մէջ:

(Ալեքսանդրիայէն փօստը ձգուած  
*Siméon Sahaguiian Harpout (Turquie)* հասցէով

28 Սեպտ. [18]98

Խարբերդի կոմիտէին

Իր ժամանակին ստացած ենք ձեր 16/28 փետուար եւ 12/24 ապրիլ նամակները: Արդէն գիտեմ որ ստացած էինք նաեւ ձեր առաջին գրութիւնը 2 դեկտ. 97 թակիր, որուն մեր տւած պատասխանը (2 յուն. 98) գրութիւններուն հետ ձեր ձեռքը չհասան, թէեւ ձեր ցոյց տուած կերպով համբաւ եւ կանխաւ երկտող մըն ալ ուղղած էինք առաքումը ծանուցանող:

Ձեր երկրորդ նամակը (16/28 փետր.) այն միջոցին ստացանք, երբ Դաշնակցութեան Ընդ. Ժ.ի(1) պատրաստութիւնները կը տեսնուէին, հետեւաբար խմբագրութիւնը հարկ դատեց յետաձգել նամակին պատասխանը մինչեւ Ը. Ժողովին նիստերուն փակումը, որպէսզի ձեր գործունէութեան պահանջներու հնար եղածին չափ գոհացուցիչ պատասխան մը ստացի: Իր աշխատութիւնները 29.2.9. 6.21.2.10 [հոդ եկող] (2) Ը. Ժ.ը վերջացուցած է արդէն եւ իր ծրագրած գործունէութեան յատակագիծը,

որում մանրամասնությունները հոդ եղող ընկերները պիտի պատմեն ձեզ,- կը համապատասխանէ ձեր իղձերուն եւ ձեր շրջանի համար ձեր կազմած ծրագրին: Արդէն որոշուած է հարկ եղած միջոցները շինայել եւ առատութեամբ 2.3.14.22.12.21. [ուժանակ] հայթայթել գրեթէ մեր բոլոր մարմիններուն: Ձեր վերջին նամակով ըրած առաջարկի համաձայն գրեցաւ 1.4.12.32. [Տրապ[իզոն]]-ի Կ. Կօմիտէին. պատասխան ստացանք թէ պատրաստ են գոհացում տալու ձեզ. 36.2.27.12.9.4.2.3.26.6.12.22. [փոխադրութեան] բուն ձեւը կ'որոշի իրենց եւ ձեր միջեւ հաստատելիք յարաբերութենէ ետք. եթէ մինչեւ հիմա գրած չեն ձեզ, անշուշտ շուտով կը գրեն. առաջարկուած է իրենց որ չուշացնեն իրենց առաջին նամակը եւ հասցնեն տան ձեզ: 9.2.3.4.33.16.14.14.6.4.33. [դուրսէն ներս] ամէնէն գործնականը առայժմ կը մնայ փոխադրութիւնը. պատրաստելը դիւրին չէ, ինչպէս ձեզ յայտնի է, եւ շատ աւելի բարդութիւններ կրնայ ծագեցնել:

Ուրախութեամբ կը տեսնենք որ նորակազմ Կօմիտէի լրջութեամբ սկսած է ուսումնասիրել իր շրջանի պէտքերը, եւ խոհական զգուշութեամբ հետզհետէ փոել իր ցանցը շրջակային վրան: Սակայն մինչեւ հիմա որոշ կերպով չգրեցիք թէ ո՞ր կէտերու վրայ արդէն յաջողած է համակիր անհատներ ունենալ կամ խումբեր կազմել: Պ. 33.12.18.15.12.22 [Սալման]-ի(3) 11.12.18.2.3.16.22. [Բալու]-էն գրած մէկ նամակէն իմացանք որ հոն արդէն սկսած է. ձեր վերջին նամակին մէջ ալ հարեւանցի կերպով յիշատակած էիք 15.12.18.12. 26.20.12. [Մալաթիա] եւ 1.20.23.4.12.22.20. [Տիգրան]-ի անունները: Վերջընթեր կէտը կարեւոր կայան մը կրնար լինել դէպի 2.3.18.22.20.12. [Ունիա](4) անցնելու համար: Լրջօրէն ուսումնասիրեցէք եւ գրեցէք մեզ անյապաղ ձեր կարծիքը այդ խնդրի մասին:

Ձեզ ընկեր մը դրկելու խնդիրը մեր խորհրդակցութիւններու նիսթն եղած է առաջին օրէն ի վեր, մանաւանդ աւելի ստիպողական եղած է Ը. Ժ.էն ետք: Մէլիքի(5) գալը առկախ կը մնայ, որովհետեւ ինքը հիւանդ է հիմա, եւ բժշկելու պէտք ունի: Արդէն հեռացած ալ է Ամերիկայէն: Իրեն հաղորդուած է ձեր հրաւերը. վերջնական պատասխան մը դեռ կը վարանի տալու: Դաշտը ընդարձակ է այդ կողմերը, ուստի կը խորհի ուրիշ գործիչներ ալ դրկել այդ կողմերը. այդ մասին ժամանակին կը ծանուցի ձեզ:

- Արտագրուած է 2 յուն[ուար] 98 նամակին երրորդ էջեր եւ չորրորդը մինչեւ երկրորդ պարբերութիւնը:

– 33.12.15.33..38.22.20. [Սամսոն]-ի մէջ պ. 33.12.18.15. [Սալմ[ան]] ընկերներ գտած էր. կը յարատեւէ՞ն իրենց գործը. կարելի չէ՞ անոնց միջոցով ստանալ թէ՛ թերթերը եւ թէ՛ նամակները. աւելի շուտ եւ ապահով կրնար կատարել, եթէ միայն վստահելի են այնտեղի ընկերները:

– Նամակագրութեանը համար լաւագոյն էր ձեր եւրոպացի բարեկամին միջոցով կատարել:

– Ը. Ժ.ի ատենագրութիւններուն կրնատ ամփոփումը տպւած է. կը դրկենմ ձեզ առաջին առթիւ, երբ ապահով հասցէ մը ցոյց տաք 1.4.12. 32.[Տրապ][իզոն]-ի մէջ:

– Կը սպասենք թղթակցութիւններու: Պ. 24.12.4.9.12.4.6.12.22. [Զարդարեանէն] որուն գեղեցիկ գրիչը արդէն հասեր է մեզ. իրատուն ունինք սպասել ու խնամով կազմած թղթակցութիւններ, գաւառական համով ու հոտով տոգորուած, կարող էք դրկել նաեւ յեղափոխական վիպակներ եւ ոտանատրներ թերթին մէջ կամ մասնատու գրոյկով հրատարակելու համար(6):

– Ո՞ր գծով աւելի ապահովաբար կրնաք ստանալ մեր նամակները:

– Հանեցէք բացատրութիւն մը տալ ձեր 16/28 փետր. նամակին մէջ ներփակ չէֆի գործածութեան մասին:

1.- Խօսքը կը վերաբերի Հ.Յ.Դ. երրորդ Ընդհ. ժողովին՝ գումարուած 1898-ին

2.- Իմա՝ հարբերդ:

3.- Սալման – ծածկանուն հարբերդի կուս. գործիչներէն Յարութիւն Մանկունիի:

4.- Ունիա – Զէյթունի մէկ այլ անուանակոչումը:

5.- Մելիք – ծածկանուն Ամերիկայի դաշնակցական գործիչներէն Յովհաննէս Իսուֆեանի:

6.- Խօսքը կը վերաբերի Ռուբէն Զարդարեան-Ասլանի եւ անոր գրական տաղանդով գրուած նամակներուն:

Փաստ, 817-12

1898 Խարբերդ Հոկտ. 1/13

Ազնիւ եղբայրակից(1)

Բաւական երկար ատենէ ի վեր անձկանօք կը սպասենք ձեր գրութեան, պատասխանը մեր թիւ 1 նամակին ուր կը յուզուէր չէ-քերու խնդիրը: Նոյնքան եւ գուցէ աւելի շտապողական սպասում մ'ունէինք նաեւ թերթի մասին, որը ահա այսքան կ'ուշանայ՝ ծար-ւըցած(2) կարօտով:

Տեղիս այժմու մեր առեւտրական գործը խիստ յաջող հանգաման-քի մէջ կը մտնէ. ունեցանք այն մարդը վերջապէս որ ներկերի բա-ղադրութեան արհեստը լաւ կը հասկնայ եւ մեր նպատակին կը ծառայէ լեցուն լեցուն. Ամերիկայի մեր ծանօթ ընկերութիւնը այս-քան ծառայութիւն կրցաւ ընել մեզի եւ մենք խիստ երախտապարտ ենք: Հիմա ետեւէ ենք բաղադրութեան հարկաւոր նիւթերը ձեռք բե-րելու. ասոր համար ալ չենք կարծեր թէ շատ դժուարութիւն պիտի քաշենք, բայց ամէն պարագայի տակ եթէ խոչընդոտներ ունենանք՝ կ'իմացնենք ձեզ. սակայն ներկայի մէջ անհրաժեշտը որ կը պակսի՝ դրամն է. սե՛ւ դրամը: Եւ մեր բոլոր յոյսը դրած ենք չէքերուն վրայ. վայրկեանէ վայրկեան ականդէտ կը սպասենք անոնց. ցանկալի էր որ մեր այս գրութիւնը դեռ ձեզի չհասած՝ արդէն դեռ ճամբայ հա-նած ըլլայիք զանոնք, եւ եթէ դու տնօրինութիւն մ'ըրած չէք անոնց համար, կ'աղաչենք որ շտապէք փութով գոհացում տալու մեր պա-հանջին:

Չէքերէն ետք՝ անմիջապէս կարեւորութիւն ունեցող երկրորդ խնդիրն է՝ մեր ընկերութեան անունով կնիքի մը պէտքը. առանց ա-նոր՝ գիտէիք թէ՝ ազատօրէն անկարելի կ'ըլլար գործել, մանաւանդ թէ այսքան յապաղում ալ ինքնին արդարանալի չէր. Ամերիկա գրած ժամանակին եւ մինչեւ այսօր ոեւէ՛ պատասխան ստացած չենք. հե-տեւաբար կ'առաջարկենք ձեզ հետեւեալ երկու միջոցները առաք-ման համար: Կը գնէք բողոքականի կամ լատին կրօնականի մը



Իմ սիրելի եղբայրս Վահանեան(1)

Ստացանք այս թղթաբերով ձեր այն նամակը ուր ամփոփուած կար նաեւ յանձնարարագիր մը. ճիշդ ատենին կը հասնէր ձեր գրութիւնը, որովհետեւ արդէն մեր մէկ ընկերը կը պատրաստուէր նոյն քաղաքը ուղեւորուելու. անկէ առաջ ալ ստացած էինք խմբ[ագրութեա]ն(2) նամակը ապահովապէս:

Անհամբեր կը սպասենք թերթերի: Պոլսոյ մուրացկան օրգաններուն արտաքին քաղաքականութեան նկատմամբ գրածները խիստ մոլթ են ու անճիշդ. այնպէս որ միայն հնար պիտի ըլլայ մերիններուն միջոցով իրականին տեղեկանալ, եւ անծանօթ չէ ձեզ թէ թերթը մեր տան գործակատարների համար որքան կենսական մի պէտք է:

Կը յուսանք թէ ներփակ նամակը կը ղրկէք իր հասցէին եւ կը տեղեկագրէք մեզ, նոյնպէս կը խնդրենք որ այս նամակին հետ գրէք խմբագրութեան չէքերու մասին արդէն մեր ձեզի գրածները. մոռացմամբ չկրցինք գրել մեր յատուկ գրութեան մէջ: Մեզմէ յատկապէս տեղեկութիւն ուզուած էր անոնց նկատմամբ: Չէքերու խնդիրն ալ կ'աղաչենք որ շուտով լուծէք, անհրաժեշտ հարց մըն է անիկա մեզ համար, այսքան յապաղումն ալ վնաս մըն է ինքնին գործուն: Թերթերը շարունակաբար ղրկեցէք իրարու ետեւ, առանց ընդհատման, միայն եթէ կարելի է ձեր գրութեանց պահարաններուն վրայ դրուած Խարբութ (արաբատառ, խմբ.) թուրքերէնին առջեւ յիշեցէք գիւղին անունն ալ նոյնպէս թուրքերէն:

Ձերդ՝ ԱՍԼԱՆ

Յ. Գ.- Կարելի՞ էր որ «Արեւելեան ազատ բանաստեղծութիւն» պրոշիւրը նամակի մէջ ամփոփած, հասարակ նամակների ծանրութեամբ ղրկէք մեր հասցէին, մաս առ մաս եթէ ծանր է:

1.- Վահանեանը կրնայ ըլլալ Մատինեան Նիկոլը, որ այդ օրերուն կը գտնուէր Ադեմսանդրիա, եւ կամ Իսուֆեան Յովհաննէսը:

2.- Խմբագրութիւնը՝ ժընեւ հրատարակուող «Դոշակ»ն է, այլ խօսքով Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոն:

Փաստ, 817-14

Խարբերդ, [18]98 Նոյ. 5/17

Մեծայարգ եղբայրակից,

Անհուն շնորհակալիքով ստացանք նոյնպէս ձեր վերջին գրութիւնը ուր ամփոփուած կար՝ օրինակ մը Ձէք: Անշուշտ դուք եւս նոյնքան մը ներողամիտ կ'ըլլաք այս մասին մեր տուած ձանձրութիւններուն՝ որոնք իսկապէս չափէն աւելի եղան: Այդ տեսակ չէք խիստ նպատակայարմար է. միայն արմա-յին մէջ տան մը կամ ընկերութեան մը անունն ալ փորագրուած ըլլար: Եթէ կրնաք դուք ձեզէն այդ տեղ նոյն պակասը լրացնել՝ աւելի լաւ. իսկ եթէ ոչ առանց անոր ալ ընդհուպ 10-15 օրինակ կը ղրկէք ստորեւ ձեզ ցոյց տրուած հասցէին:

Ուրախ ենք որ մեր առեւտրական գործերու ընդհանուր հոսանքը՝ յաջող ընթացքով յառաջ կը խաղայ եւ մեր առջեւ նորանոր հրապարակներ կը բացուին. ինչպէս՝ ձեր վերջին նամակի ծոցով կը տեղեկացնէիք Պաղտատի վաճառականական ուղեգիծը: Մենք փափաքող կը մնայինք արդէն նոյն այդ քաղաքը հաւատարիմ գործակալութիւն մը ճարել՝ ահա այդ աւետիսն է որ դուք կու տաք մեզ: Միայն մինչեւ հիմա դեռ որոշ գրութիւն մը ստացած չենք անկէ, ինչպէս նաեւ Տրապիզոնէն ալ: Ձեր ուղարկած վերջին համարն ալ չի ստացանք, գուցէ այս թղթաբերով կարելի ըլլայ ընդունիլ:

Յանկալի կարօտով ու եղբօր ողջոյններով՝  
ԱՍԼԱՆԵԱՆ



Ձէքերը մէկ-երկու պահարանի մէջ ամփոփած, առանց նամակի, կը ղրկէք Խարբերդ քաղաքը Ֆերմանեան Յակոբ Էֆէնտիի հասցէին:

Փաստ, 817-15

Խարբերդ, [18]98 Նոյ. 17/29

Յարգելի խմբագրութիւն(1),

Կը յուսանք թէ ասկէ առաջ ստացած կ'ըլլաք մեր երկար գրութիւնը ուր ամփոփուած կար շատ հարցերու մասին պատասխաններ:

Այս անգամ շտապով միայն պիտի գրենք ձեզ, յաջորդին թողլով այլեւայլ խնդիրներու վրայ երկար տեղեկութիւններ ու յօդուած թերթին համար:

Ինչպէս կանխաւ ալ իմացուցած էինք ձեզ՝ նպատակայարմար ու ազատ ընթերցումներ խիստ հարկաւոր ու անհրաժեշտ են մեր տեղի մասին ուր համեմատաբար ընթերցող եւ հասկցող երիտասարդութիւնը մեծ թիւ կը ներկայացնէ: Դժբախտաբար առջի անգամուն չէինք կրցած օգտուիլ ձեր կանխագոյն առաքումէն որ զոհ գնաց սխալանքի մը: Այստեղ, երկրորդ անգամն ըլլալով, կը ներկայացնենք ձեզ նորէն հասցէ մը՝ խնդրելով որ հաճիք ձեր մամուլէն լոյս տեսած բոլոր գրքոյկները, ըլլան անոնք վիպական թէ բանաստեղծական, ուրիշ նպատակայարմար գրքերու հետ ղրկել մեզ: Մանաւանդ Ռաֆիի գործերը, գէթ գլխաւորներն ըլլալով: «Համայնքի» հաւաք[ած]ոյն ու պրոշիւրները եւ եթէ կարելի է Հնչակի տպարանէն լոյս տեսածներն ալ՝ վիպական թէ բանաստեղծական: Կը խոստանայ կոմիտէս դուրսէն գնուածներու արժէքը հատուցանել ձեզ՝ յարմար պատեհութեամբ: Միայն, նորէն անտեղութեանց առաջին առած ըլլալու համար, հարկ էր որ անպատճառ Մարսէլէն իմ ուղիղ հասցէին ութ օր առաջ մի գրութիւն ուղարկէիք բարեկամական ձեւի տակ հասկցնելով ծրարներու առաքուած ու ղրկուածներու թիւը:

Երկրորդ՝ նոյնքան կարեւոր էր որ ծրարները մոմապատ պաստառի (մուշամպա) մէջ լաւ մը փաթթէիք՝ վրան գրելով սա ֆրանսերէն տողը à A. Dilo: Յետոյ այդ փաթթոցին վրայ երկրորդ հաստատուն անվրսի մըն ալ՝ վրան սա հասցէն գրուած.

Mr. J. Francis Jones  
H. B. M. Vice-consul  
Kharput

Turkey in Asia  
Via Constantinople

Այն նամակը որ իմ ուղիղ հասցէին պիտի գար՝ նոյնպէս ունենալու էր Via Constantinople արձանագիրը՝ հարբութ շահրընտա [արաբատաո՝ հարբերդ քաղաքը – հմբ.] հասցէով:

Անհուն կարօտով՝  
Ձերդ՝ ԱՍԼԱՆ

---

## 19

Փաստ, 817-16

[18]98 Նոյ. 17/29, հարբերդ

Ազնիւ Վահանեան(1),

Անձականօք կը սպասենք մեր առջի նամակներով ձեզ ներկայացուցած առաջարկներուն լուծման, ինչպէս որ շնորհակալութեամբ ստացած ենք ձեր բոլոր նամակներն ու զրկած համարները:

Տիգ[րանակերտ]էն եւ Պաղ[տատ]էն դեռ լուր չունինք ձեզ հաղորդելիք. առաջին տեղէն չի դարձաւ մեր պատգամաւորը եւ երկրորդէն ալ չի ստացանք ձեր զրկած գրութիւնը: Պատճառն անյայտ կը մնայ մեզ:

Մօտիկ օրերու մէջ՝ շատ ստոյգ աղբիւրներէ կը տեղեկանանք թէ Պիթլիս յեղափոխութիւն մը ծագած ըլլայ. մերիններէն արդեօք, արդիւնքը կամ ելքը անծանօթ է մեզ, դուք որոշ բան մը գիտէիք:

Վստահ ենք թէ փութով կ'ուղարկէք ներփակ նամակը իր հասցէին եւ կը գրէք դուք նոյնպէս որ աճապարեն մեր յանձնարարութիւնը փութով կատարելու:

Ձեքերուն(2) ակընդէտ կը սպասենք, այս ձմրան փոթորկալից օրերուն լաւ որս մ'ընելու՝ ինչպէս գայլը ամպոտ օրուան կ'անէ՝ կ'ըսէ մեր հին առածը:

Եղբայրական ողջոյններով՝  
Ձերդ՝ ԱՍԼԱՆ

1.- Վահանեանը, ինչպէս նաեւ Վահանը, Մելիքը, ծածկանուններ են գործածուած Իսուֆեան Յովհաննէսի համար: Խարբերդի կոմիտէն կ'ուզէր որ Ամերիկա գտնուող Իսուֆեանը իբրեւ գործիչ գար իրենց մօտ:

2.- Ձեքերը՝ ամերիկեան կեղծ անցագիրներն են:

Մատեան N° 81-2, էջ 42-46 (Պատճէն գաղտնի թանաքով գրուած նամակի)

Խիստ փոքր տառերով գրուած նամակ՝ ուղղուած Հ.Յ.Դ. Խարբերդի կոմիտէին: Քրիստափոր Միքայէլեանի այս գրութիւնը, սեւագրութեան բնոյթ ունի, յատկանշուած՝ բազմաթիւ ջնջում-սրբագրութիւններով եւ լուսանցֆային յաւելումներով: Այս բոլորը ծայր աստիճան դժուար ընթեռնելի եւ վերծանելի կը դարձնեն զանոնք: Իրողութիւնը այն է որ անոնք պէտք է արտագրուէին գաղտնի թանաքով եւ այդպէս ուղարկուէին իրենց հասցէատէրերուն: Բնագրին հաստատարիմ մնալու բժախնդրութեամբ՝ աշխատած ենք արտագրել եւ գրեթէ ամբողջական տեսք հաղորդել այս գրութեան, տեղ-տեղ բազմակէտերով նշելով անհասկնալի բառերը: Իր շահեկանութեան համար Խարբերդ ուղղուած Քրիստափորի այս գրութիւնը կու տանք Ռ. Զարդարեանի նամակներուն կողքին:

15/27 դեկտ. [18]98

ԽԱՐԲԵՐԴԻ (Ալէքսանդրիոյ գծով)

Պատասխանում ենք 29 [նոյ.] – 10 դեկ[տեմբեր] ձեր գրած նամակին: Տրապ[իզոն]ի(1) ընկերներին ֆանիցս անգամ գրած է ձեզ հետ յարաբերութիւնների մէջ մտնելու մասին, բայց, ինչպէս երեւում է ձեր նամակից, տակաւին մինչ վերջին ժամանակները նրանցից ոչ մի լուր չէր առել: Եթէ մինչ ներկայ նամակը ստանալը նոյնպէս դեռ կապուած չը լինիք նրանց հետ՝ այդ դէպքում ուղղակի գրեցէք Տրապ[իզոն]ի կոմիտէին ձեզ զբաղեցնող խնդիրների մասին եւ ուղարկեցէք Ալէքս[անդրիա] Վահան-ն-ին(2), խնդրելով, որ իրեն յայտնի հասցէով անյապաղ ճանապարհի ձեր գրութիւնը ուր հարկն է:

Նոյն այդ ճանապարհով մենք կը խնդրէինք ձեզ ըստ կարելոյն շուտով հաղորդել Բաթումի կոմիտէին (Վահանին նաեւ) այն տեղեկութիւն-

ները, որ կ'ունենամ Սամսոնի(3) մասին: Բայց մի երկու խօսք, որպէսզի ձեզ համար պարզի այս մեր առաջարկութիւնը եւ այն զգուշութիւնները, որ դուք աչի առաջ պիտի ունենամ այս առթիւ: Սամսոն պէտք է մտնի մեր շատ կարեւոր եւ անցեալներում արդէն վտանգած ընկերը. դրա համար մի քանի կէտերից աշխատում են նախօրէն դիրութիւններ ստեղծել: Սալմանը(4) առաջներում այնտեղ գործունէութիւն է ունեցել, յաջողւել է յարաբերութիւնների մէջ մտնել. այս վերջին դէպքում, ձեր իմացածը, ծանօթութիւնները հաղորդեցէք անմիջապէս Բաթումին – դրանով դուք որոշ չափով դիրացրած ու արագացրած կը լինէիք մեր ընկերոջ մեկնելը դէպի իր ուզած տեղը: Կրկնում ենք, այդ գործը պատասխանատու է: Եթէ Սալմանը ունի այնտեղ վստահելի բարեկամ կամ բարեկամներ, որոնք կ'օգնեն մեր ընկերոջ ֆաղափ մտնելու եւ գոնէ առաջին օրերը պատրասարկելու գործում՝ այն ժամանակ անպատճառ հոգացէք Վահանին գրելու ձեր իմացածը եւ հասցէ տալու:

Ի՞նչ եղաւ Սալմանի հետաքրքիր ճանապարհորդութեան հետեւանքը. ընկեր մտցրիք արդեօ՞ք Մալաթիա. եթէ Բալու-ից կարեւոր նամակներ ունիք՝ շնորհակալ կը լինէինք, եթէ մեզ ուղարկէիք. երկրից եկած բոլոր գրութիւններն ու տեղեկութիւնները այստեղ առանձին նշանակութիւն եւ պահվելու մեծ դիրութիւն ունին:

Մի հետաքրքիր հարց: Այստեղ ներկայ տարւանից հրատարակում է մի ֆրդի խմբագրութեամբ ֆրդերէն մի թերթ «Քիւրդիստան» անունով: Մենք կարդալ եւ բովանդակութեան հետամուտ լինել դեռ առայժմ չենք կարող, լեզուն չիմանալու պատճառաւ. յամենայն դէպս՝ դա անպայման յառաջդիմական ուղղութիւն պիտի ունենայ. խմբագրի հետ ծանօթ ենք. գոնէ այդպիսի տպաւորութիւն թողեց մեր վրայ: Այդ թերթից մենք կ'ուղարկենք ձեզ Վահանի միջոցաւ մի քանի օրինակ. ծանօթացէք բովանդակութեան եւ յամենայնդէպս ֆրդերի մէջ մտցրէք. աւելի եթէ հարկաւորի՝ իմաց տւէք մեզ. ինչքան շատ՝ այնքան լաւ: Ձեւն պատճառաբանում մեր այս առաջարկը, համոզւած լինելով, որ շարժառիթները ակներեւ են:

Ուզել էք արձանագրութիւնները. տեղեկութիւն ունինք, որ ձեզ արդէն ուղարկում ենք:

Մելիքի(5) գալուն յուսադիր մի լինիք. նրան այժմ որոշ գործ յանձնուած է եւ դժուար թէ շուտով թողնի այդ գործի շրջանը: Ուրիշ փորձառու ընկերներ զբաղւած են աւելի շատ [անընթեռնելի մէկ բառ] գործունէութեամբ, բայց ի նկատի ունեցէք, որ եթէ ապահովեն ----- գիծը՝ այն ժա-

մանակ ձեր շրջան կը մտնեն մեր ընկերներից մէկը կամ միւսը: Իսկ մինչ այն՝ մեզ թուում է, որ տեղացիք կարող էիք ձեր շրջանի գործերի [անընթեռնելի երեք տող]. մենք կարծում ենք, որ այսպիսի մի ճգնաժամում, որի մէջ գտնուում է մեր տարաբախտ ժողովուրդը, նրա որդիքը, չպիտի այնքան փուչ լինին, որ սակաւաթիւ անհատներով այսօր հաշւէր ժողովրդի շահերին նիւրած կամ նիւրելու ընդունակ երիտասարդութիւնը: Որոնեցեք եւ կը գտնեք անշուշտ:

Այլի առաջ ունեցեք, որ ձեր շրջանը մօտ է պատասխանատու կէտերից Ուլմի-ին(6): Հետեւաբար, ձեր շրջանը պիտի ..... ունի որոշ ուղղութեամբ գործունէութիւն: Ձեզ համար պարտաւորեցուցիչ գործերից յիշենք «մարտական-գինամարզական» խմբեր կազմակերպելու խնդիրը, որու մասին չէիք կարող դուք մինչ այժմ տեղեակ լինել: Այդ խմբերը պետք է հիմնուին տեղական կոմիտէներու ձեռքով, տեղական միջոցներով եւ տեղացի երիտասարդներից: Վարժելով եւ վարժեցնելով ուրիշներին զենքի գործածութեան մէջ՝ այդ խմբերը նպատակ պիտի ունենան՝

1) Տեղական տարրի մէջ յեղափոխական կոտոր ուժեր պատրաստել, ստարագնել եւ ծաւալել այդ ուժեր:

2) Ժողովրդի պաշտպանութեանը դուրս գալ, հարկաւոր դէպքերում անմիջապէս համախմբուելով:

3) Ուլմի-ի պահանջման միջոցին օգնութեան հասնել կամ այնտեղի պատասխանատու մարմնի յանձնարարութեամբ իրենց տեղումը այս կամ այն դերը ստանձնել:

4) Այնպիսի ասպատակութիւններով, որոնք չեն հակասում Դաշնակցութեան սկզբունքներին եւ ընդհ. ժողովի վճիռներին, նիւթական միջոցներ ձեռք բերել խմբի կամ եթէ կարելի է տեղական մարմինների համար: («Անցեալի ասպատակութիւններով» սահմանափակումը տրամադրում է խուսափել ամէն տեսակ ստոր միջոցներից՝ ի նկատի ունենալով, որ յեղափոխականը պիտի գործէ միշտ ասպետական բարձր զգացմունքներով ոգետուած. հետեւաբար՝ ասպատակութիւնները կարող են ուղղուած լինել միայն կառավարութեան կամ յայտնի հարստահարիչների դէմ եւ երբեք զայրոյթ[?] կամ դժգոհութիւն չը զարթեցնեն հայ ժողովրդի, հայ հասարակութեան մէջ: Բացի դրանից, եթէ այդ տեսակ մի ձեռնարկութիւն կարող է վնասել հարեւան տեղերի գործունէութեան կամ պատասխանատու կէտերի հետ յարաբերութիւնները դժարացնել եւ առհասարակ իր որոշ հետեւանքներով խանգարել վերջին կէտերի շրջանում

լոկ-մնջիկ կատարող պատրաստութիւնները,- ապա պարտաւորեցուցիչ պիտի լինի հարեւան կոմիտէների կամ նրանց պատասխանատու մարմնի համաձայնութիւնը ստանալ):

Այս կտորից դուրս ձեր վերաբերեալ խնդիրները բոլորը կարող էք գտնել ը[նդհ.] ժ[ողովի] արձանագրութիւններում, զանազան տեղերում: Լաւ ծանօթանալով այս եւ միւս ձեր անելիքներին, կ'որոշէք ձեզ համար կարեւոր խնդիրները ամբողջովին: Մեզ մնում է աւելացնել կրկին Ուլնի-ի վերաբերմամբ, որ հարկաւոր է մտածել եւ եթէ կարելի է տեղդ ստեղծել այնպիսի պայմաններ, որ կարողանաք՝

1) Յարաբերութիւն ունենալ այնտեղի հետ, այնտեղ գնացող ընկերներ (անհատներ) ընդունել, պատասպարել միաժամանակ եւ՝ որոշ յարմարութիւններ տալով՝ ճանապարհ դնել:

2) Եթէ կարող էք այս կամ այն գծով նոյնիսկ ապրանքներ այնտեղ փոխադրելու համար:

Այս բոլորի համար, ի միջի այլոց, պէտք է ուսումնասիրել բոլոր այն գծերը, որոնցով դուք կարող էք յարաբերութիւններ ունենալ հետո տեղերի հետ: Այդպիսի գծեր են՝ 1) Տրապիզոն, 2) Սամսոն, 3) Մուշ, 4) Ալեքսանդրէտ: Այս կէտերով կարող են Զ[էյթուն] կապել մի տեղից եւ միւս կողմից Եգիպտոսի հետ:

Այս նամակը գրում էր, երբ ստացուեց ձեր 17/29 նոյեմբերի նամակը. կ'աշխատենք գոհացում տալ:

1.- Այս եւ յաջորդ բոլոր ընդգծուած բառերը գրուած են թուանշանային ծածկագրով, որ կը բացուի հայրենասիրական երգի մը հետեւեալ տողերով.-

*«Տուր ձեռքդ, եղբայր, ժամ է շարժելու,*

*ժամ է, ժամ առաջ ոտքի կանգնելու»:*

2.- Վահան - ծածկանուն Դաշնակցութեան առաջին սերունդին պատկանող գործիչ Նիկոլ Մատինեանի, որ այդ օրերուն կը գտնուէր Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքը:

3.- Սեւ ծովեան նաւահանգիստ, Թուրքիա:

4.- Սալման - ծածկանուն հարբերդի կուս. գործիչներէն Յարութիւն Մանկունիի:

5.- Մելիք - ծածկանուն Ամերիկայի Հ.Յ.Դ. գործիչներէն Իսուֆեան Յովհաննէսի:

6.- Ուլնի կամ Ուլնիա - Զէյթունի մէկ այլ անուանակոչումը:

Փաստ, 818-1

[18]99 Մայիս 20  
Ի Խարբերդ

Սիրելի եղբայր Պ. Վահան(1),

Մենք բացառիկ պարագաներու ստիպողականութեան տակ ուշացուցինք մեր գրութիւնները, դուք ոեւէ պատճառ չունիք ձերինները շարունակելու, գիտնայիք թէ խիստ անհամբեր ենք ձեր նամակներու նկատմամբ՝ որոնք հոս, սիրելիներու շրջանակի մէջ, մեծ ախորժակով կը կարդացուին: Հետեւաբար յարատեւութեան մը մէջ պահեցէք դուք ձերինները:

Ասկէ առաջ արդէն ստացած ենք 1<sup>0</sup> համարը(2) եւ այս սուրհանդակով ալ նոյնպէս ստացանք 3<sup>0</sup>-ը, չենք գիտեր թէ 2<sup>0</sup>-ը կորսուած է թէ չէ ղրկուած արդէն, կը խնդրենք որ մասնաւորապէս հոգածու ըլլայիք պահարաններու թանձրութեան եւ հաստատունութեան մասին: Մեր այս հեղով ստացած ծրարը բաւական գէշ գրութեամբ հասաւ ձեռքերնիս:

Գալիքով պիտի գրենք երկարօրէն, այս կարճ գրութիւնն ալ անոր համար որ՝ դուք շարունակէք ձեր գրութիւնները ապահովաբար եւ առանց կասկածի, մանաւանդ զանցառութիւն չընէք համարներու նկատմամբ:

Բարեւներով  
Ձերդ  
ԱՍԼԱՆ

1.- Մատինեան Նիկոլ:

2.- N<sup>o</sup> 1, 2, 3-ը «Դժոճակ»ի համադրեալով կը վերաբերին:

Փաստ, 818-2

Ասլան/Ռուբեն Զարդարեանի այս գրութիւնը կը բաղկանայ երկու մասերէ. առաջինը ձեռական կեղծ նամակ է, ուղղուած իբր թէ օտարութեան մէջ գտնուող մէկ հարազատի: Այս բաժինը կը կրէ ստորագրութիւնը հեղինակի իսկական անունին՝ Ռուբեն Զարդարեան – եւ կը ծառայէ ֆողարկելու երկրորդ բաժինին մէջ տրուած բո՛ւն նամակին, որ ստորագրուած է հեղինակին ծածկանունով – Ասլան: Գրութեան վերեւ մատիտով ճշդուած է «Արեւմտեան բիւօ», որ կը նշանակէ պէտք է փոխանցուի Ժընեւ՝ Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյին:

[18]99 Մայիս 9/21  
Խարբերդ

Ազնիւ փեսաս,

Արեւն որ առտուն կը ծաթէ եւ իրկունը որ՝ կը պատէ, ցորեկուան հետ գիշերն ալ՝ մօրդ արցունքները չեն կտրիր. նայուածքը նամբուն, աչքը լեռան եւ կապանին՝ իր դարիպին որդիին կարօտը կու լայ: Երբ ձեր նամակները իրեն կարդացի՝ լոյս չի տեսնող կոյրի մը յանկարծ արեւ ու աստղներ տեսնելու երջանկութիւնն ունեցաւ. քիչ մը մխիթարութիւնն ալ սրտի անդորրութեան ու խաղաղ հանգստութեան մեծ պէտքն էր վերջապէս ու թող որ ես հոս աղաչանքի բանաձեւ չընէի ձեզի, դուք ինքնին կը հասկնայիք թէ ձեր նամակներուն գինը աղամանդի փշուր թանկութեամբը իր գնէր մայրիկդ:

Կ'աղաչեմ, փեսաս, խղճացիր կէնն(1) ու կանաչ ջահելութեանդ վրայ ու անգամ մըն ալ դէպի հայրենիքի նամբուն հայէիր. մայրդ ու բոյրերդ հոս դրան ետին՝ հացին կարօտին հետ ու անոր չափ քու երեսիդ ախը կը փաշէին. դուն ալ հոտ խանի ու փւլխանի մոխիրներուն մէջ մեծագոյն նգնաժամի մը ուրիշ մէկ շարժարանքը կ'անցնէիր վրայէդ. ինչո՞ւ այս թշուառութիւնը՝ որուն դարմանը միայն քու մէկ վնոական որոշումդ

կրնար ըլլալ, ի սէր Աստծոյ դարձիր, դարձիր դէպի տուն:

Աշխէն մօրօյրդ, Մանուշն ու Զմրուխտը փունջ փունջ բարեւներով իրենց կաօտը կը յայտնեն. քոյրերդ նոյնպէս կը համբուրեն ձեռքերդ եւ մայրդ ալ սեւ աչքերէդ կը խնդրէ իրենը:

Հօրեղբօրորդիդ՝  
ՌՈՒԲԷՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

3. Գ.– Ներփակ պիտի ընդունիս նաեւ մօրաբոջդ մասնաւոր նամակը իր բերնով ու իր գրիչով գրուած(2):

ՆՈՅՆ

Ասկէ ետք նամակներդ գրես հօրեղբօրորդիդ հասցեով որ շուտով հասնի մեզի. այսպէ՛ս [արաբատառ թրքերէն].–

Խարբուք, Ռուբէն Զարդարեան

\* \* \*

26 / 8 / [18]99

Ազնիւ եղբայրակիցներ,

Ուրախութեամբ ստացանք ձեր նամակը եւ կարդացինք ազագօրէն [?]:

Այժմ, ինչպէս դուք ալ կանխաւ կրցած էք իմանալ, բաւականատենէ մի ի վեր կազմակերպութիւն մը ունեցած ենք հոս եւ ջանահնար(3) ենք այժմ անոր տալու հարկաւոր ուժը եւ այդ իսկ պատճառով ուժանակը մեզ խիստ հարկաւոր է: Մենք հոս զայն պատրաստողն ալ ունինք, սակայն խմբագրատունը իմացուց որ դուք պիտի կրնայիք զայն մատակարարել պէտք եղած քանակութեամբ եւ հետեւաբար պատրաստելու դժուարութիւնները աւելորդ էին:

Աւելի բարեյաջող պարագայ մըն էր աս բնականաբար, ուստի որոշեցինք որ մեր մէկ ընկերը ջորեպանի անցագրով ու արհեստով ձեզ ներկայանար յաջողութեամբ ընելու համար փոխադրութիւնը:

Այս անգամ այդ նկատմամբ մանրամասնութեանց մէջ պիտի չի մտնէինք, սպասելով մեր կօմիտէներու ընդհանուր ժողովին – որ վաղը տեղի պիտի ունենայ – տուած որոշման:

Ա՛լ աւելի ստիպողական խնդիր մը. չպիտի մոռնայինք սակայն:

Բնիկ արաբկիրցի Մխիթար Փիլիկան թողը ըստուղ Գէորգ անուն երիտասարդը ասկէ մէկ-երկու ամիս առաջ Կարինէն(?) (4) կարգ մը մատնութիւններ ըրաւ թէ՛ Արաբկիր, թէ Տիգրանակերտ եւ թէ Ակն. յիսունէն աւելի անմեղներ ձերբակալուած են այժմ, ոմանք իրենց քաղաքի բանտերուն մէջ, ոմանք ալ հոս փոխադրուած: Ինքը ժամանակին հնչակեան է եղեր, յետոյ կարծենք ալՖարական: Հեւեաբար բաւական ծանօթ յեղ. խնդիրներու: Հիմա Տիգրանակերտ կը գտնուի եւ անկէ ալ միտք կայ որ կառավարութիւնը Բաղէշի ու Վանի կողմերը ղրկէ զինք. եթէ այդ քաղաքներու մեր կօմիտէներուն հասցէն գիտէք՝ իմացուցէք անոնց հարկաւորը, միջահասակ, 25-27 տարեկան, տժգոյն մորթով երիտասարդ մ'է, ակնոց ալ կը կրէ:

Ջերմագին կարօտով ու բարեւով՝  
Ի դիմաց Հ. Յ. Դաշնակ[ցութեան]  
Աւար-Աւեր կոմիտէի (5)  
ԱՍԼԱՆ

Յ. Գ.- Սպասեցէք մեր յաջորդ նամակին, որ աւելի ճոխ պիտի ըլլայ:

ՆՈՅՆ

- 1.- Երիտասարդ:
- 2.- Ակնարկութիւն յաջորդող էջին տրուած բո՛ւն նամակին, որ գրուած էր գաղտնի թանափով, հետեւաբար ոչ տեսանելի գրաֆնինիչ պաշտօնեային կողմէ:
- 3.- Հնարել ջանացող, հնարք գտնող:
- 4.- Հարցական նշանը նամակագրին կողմէ դրուած է:
- 5.- Աւար-Աւերը ծածկանունն էր Խարբերդի Կեդր. կոմիտէութեան:

Փաստ. 818-3

[Կեղծ նամակ]

[18]99 Յունիս 4/16  
Խարբերդ

Ազնիւ փեսաս,

Ժամանակը շատ անցաւ ու ձեր նամակներուն կարօտութիւնն ալ նոյնքան աւելցաւ. նշմարիտ տառապանք մըն է ընտանիքիդ համար, որ այս գարնան առաջին վերածնունդին հետ՝ ի զուր նոր ուրախութեան մը, նոր յոյսի մը վերածնունդինը կը սպասէ քեզմէ, եւ դուն չես գար եւ չես ալ գրեր:

Այս շաբթուայ տեղացող անձրեւները բարձրացող հունձքեր կը խոստանան ամառուան գերանդիին ու մանգաղներուն. բարձրացած արմրտիքին գինը՝ հետզհետէ խոնարհիլ կը սկսի հրապարակին վրայ. այնպէս որ կալին ատեն ցորենը մեր գրիտով(1) քառասունի կը յուսանք չափել: Բայց մտմտութի կէտը հոն թէ այդ համեմատապէս աժան գնովն ալ, մենք մեր փերակներուն ու բողոներուն մէջ գալիք ձմեռուանը պիտի կրնա՞նք ապահովել. աշերնիս դուրը՝ կտոր մը դրամի[?] կարօտը կը քաշէինք:

Բոլորս ալ ողջ առողջ ենք, տուն ու տեղ, դրացին ու ազգական շատ հանգիստ: Մայրիկդ քեզ կը համբուրէ եւ քոյրերդ ալ կ'ողջագուրեն զքեզ:

Աներձագդ  
Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

\* \* \*

Ահա եւ իսկական նամակը՝ գրուած գաղտնի թանաքով եւ Տրապիզոնի նամքով ուղարկուած ժընեւ՝ Արեւմտեան բիւրոյին: Գաղտնի մեղանով գրուած բաժինը, յատկապէս առաջին երեսը, լաւ չէ բացուած եւ փաստաթուղթին այդ էջը մեծ մասով կը գտնուի սեւցած վիճակի մէջ: Այս վերջին մասերը նշած ենք բազմակէտերով:

Ազնիւ ընկերներ,

Վստահ ենք թէ մինչեւ հիմա արդէն ստացած կ'ըլլաք մեր նամակը եւ անոր .....

..... գուցէ Վանի ու Բաղէշի կողմերը ..... է: Սակայն կառավարական ստոյգ աղբիւրէն մեր ստացած յետնագոյն լուրերը սխալ հանեցին առջի լսածնիս. Տիգրանակերտ փոխադրուած էր ուր խուզարկութիւններու եւ բանտարկեալներու մեծ թիւ մը կայ կասկածն ու վտանգը այնպիսի սուր հանգամանք մ'առած են որ շուկայ ելլող բոլոր հայերը իրենց գրպանները կարած կը պտտին .....տի վտանգներէ ազատ մնալու համար: Մենք պիտի աշխատինք այդ երիտասարդին պատիժը սահմանել հոս, եթէ բարեղէպ պարագաներ նպաստաւորեն:

Մեր ունեցած ընդհ. պատգամաւորական ժողովը արգելք եղաւ մեզ այս գրութեան շուտ չի գրուելուն: Պատգամաժողովը երկար վիճաբանութիւններէ ետք անհրաժեշտ նկատեց ուժանակին ուժը հոս տեղի ինքնապաշտպանութեան համար, առանց որուն անկարելի պիտի ըլլար եւ է վտանգի ատեն փոքր ընդդիմութիւն մ'իսկ. հետեւաբար որոշուեցաւ որ կանխաւ իր վրայ խօսած մեր ջորեպան ընկերը ճամբայ ելլէ հոտ գալու եւ հարկաւորը տնօրինելու: Իսկ եթէ դուք դիրութիւնն ունէիք առանց մեր ընկերոջ ներկայութեան ալ խնդիրը կարգադրել եւ ապահովաբար մեզ հասցնել, ի հարկէ այդ նախընտրելի պարագայ պիտի ըլլար: Մենք կը խորհինք թէ շաքարի կամ խահուէի տէնկերու(2) մէջ խնամով պահուած բաւական[աշափ] ծրարներ մեզ պիտի կրնան ճարել, եթէ անհրաժեշտ զգուշութիւններ գործածուին փոխադրուած պահուն եւ ջորեպանները բաւականաչափ վստահելի մարդիկ ըլլան. ձեր ձեռքին տակ նմանօրինակ ջորեպաններ կամ կառապաններ չունէիք: Գրեցէք մեզ այս մասին պէտք եղածը եթէ ոչ արդէն մեր ընկերը պատրաստ էր եւ ձեր հրահանգին ու ցոյց տուած հասցէին համաձայն՝ առաջին առիթով ասկէ ճամբայ կ'ելլէր ու կու գար ձեզ կը գտնէր:

Յետոյ պիտի խնդրէինք ձեզմէ ձեր միջոցով մօտաւորագոյն եւ ապահով ուղի մը ուղղակի թղթակցելու խմբագրութեան հետ(3): Մեր թղթակցութիւնները մինչեւ հիմա կը կատարուին Ալեքսանդրիայի ուղեգծով, ինչ որ բաւական ժամանակ կ'առնէ եւ յապաղման պատճառ կ'ըլլայ: Թերթ կամ այլ գրութիւն խմբագրութենէն

ստանալով մեզ կրնայի՞ք ուղարկել, եթէ անոնց համար մասնաւոր հասցէ ցոյց տայիք ձեզ:

Ուրիշ ի՞նչ կարգի զէնքեր ղրկելու միջոց ունիք մեզ:

Այս անգամով պիտի խնդրենք ընէիք ձեզ, որ մեր կողմէն խմբագրութեան գրելով յիշեցնէք համեստ[?] խոստումը, որուն համաձայն մինչեւ այսօր մեզի արժէքաւոր գործիչ մը պիտի ղրկէին: Մենք Մելիքը որոշած էինք, ոչ անոր եւ ոչ ուրիշի մը մասին լուր չէին տուեր մեզ. ինչո՞ւ արդեօք: Կարելոր գործիչ մը թէ՛ փորձառու եւ թէ՛ հմուտ, խիստ մեծ գործ կրնար տեսնել հոս ու շրջակաները: Մենք հաւատացած ենք թէ առանց ներքին գաւառներու ուժեղ ինքնապաշտպանութեան մը ոեւէ տեղէ եղած ապստամբութիւն անարդիւնք վիժում մը՝ պիտի ըլլայ եւ լուրջ կերպով մտածուած ու գործադրուած ծրագիր մը ներքին գաւառներու տեղական պահանջումներուն համաձայն շատ դիւրին կերպով յառաջ պիտի բերէր ինքնապաշտպանութեան հետեւութիւն մը, որ պիտի ամբողջացնէր ընդհ. յեղափոխութիւն մը կամ յարձակողական ապստամբութիւն մը:

Անհամբեր սպասելով ձեր պատասխանին, կը մնանք, սիրելի ընկերներ անձնուէր, ձեզի կարօտագին ողջոյններով՝

Ի դիմաց Աւար-Աւեր կօմիտէի՝  
ԱՍԼԱՆ ԱՍԼԱՆԵԱՆ

1.- Գրիւ – Ընդդէմի, արմտիքի (ցորեն, գարի) չափ:

2.- Պարկերու:

3.- «Զեռ միջոցով»ը՝ Տրապիզոնն է, իսկ խմբագրութիւնը՝ Ժընեւի «Դրօշակ»ն է:

Ռուբեն Զարդարեանի այս նամակը, ուղղուած ժընեւ՝ «Դրօշակ»-ի խմբագրութեան, մօտաւորապէս նոյնութեամբ տպուած է Դաշնակցութեան պաշտօնաթերթին մէջ՝ «Նամակ հարբերդէն» խմբագրով, առանց սակայն «Ասլան» ստորագրութեան (Տես «Դրօշակ», 1899, N<sup>o</sup> 7, էջ 97-98):

[18]99 Յունիս 27/9

հարբերդ

Այս գեղածիծաղ օրերուն, ուր կեանքը կը վերածնի եւ աշխատութեան հոգին իր վերկենցաղումը կ'ունենայ արեւ աշխարհի տակ ամէն տեղ ու ամէն անկիւն՝ գուցէ մեր արտասահմանի եղբայրները վայրկեան մը հոգեկան ծաղկունք ունենային երազելու որ Հայաստանի արիւնոտ դաշտերուն վրայ ալ եթէ ոչ վարդենիներ՝ գէթ կարմիր կակաչներ կ'արգասաւորէին, խաբուսիկ կենդանութեան մը պատրանքը ստեղծելու հոգեվարք հայրենիքի աչքերուն, յիշեցնելու համար թէ հայն ալ թող չըլլար բնութեան հարազատ՝ վերջապէս խորթ եղած էր, ցեղի ու վեհանձն արժանապատուութեան զգացումը՝ առաջին տողին իսկ ցաւատանջ պրկումով գրող մատները կ'ասղնտէր, երբ անոնք ստիպուած կ'ըլլային նորէն ու միշտ միեւնոյն տխուր ողբերգութեան կսկծալի անվերջ դժուարութիւնները պատկերելու՝ վախնալով, ակամայ, լալկան հասարակութեան մը ստրկացած բարոյականը ցուցադրելէն:

Թունաւոր յուսահատութիւնը մեզ այսօր ածխացուցած պիտի ըլլար եթէ տակաւին փրկարար, աստուածային կռիւր՝ քաղաքակրթութեան, ազնիւ ժողովուրդներու առաջ մեր մարտիրոսութեան պատմութիւնը նուիրագործելէ ետք՝ մեր միշտ վստահ յաղթանակին անմահ գաղափարը չի վարդագունէր մօտաւոր հորիզոնի մը վրայ, պերճախօս լեզուով վաւերացնելու այն գոյութեան պատմական իրաւունքը որ կը պահանջենք մեր օրօրոցի որբերու աղաղակէն՝ մին-

չեւ անյիշատակ գերեզմաններու անունովը:

Ու զէնքը եթէ գերագոյն մխիթարութիւնը, հոգին չըլլար այս կիսամեռ ժողովուրդին՝ ինչպէ՞ս պարէնինք այս կեանքը, ու եթէ անդամալուծուած թեւէն ու ջախջախուած սրունքէն ետք՝ դեռ ակռաները չի մնային յուսահատ պայքարի վերջին գօտեմարտն ալ գլուխ հանելու, ինչպէ՞ս գիշերէն ետք առտուայ լոյսը տեսնելու պէտքն զգայինք՝ քանի որ պաշարման վիճակի մէջ՝ հասած վերջին պաշտօնական հրահանգները բացարձակ արգիլման տակ կ'առնէին ղեւէ անձի, նոյնիսկ վաճառականի անցագրի արտօնութիւնը, քանի որ Տիգրանակերտ, Արաբկիր ու Ակն անմեղ քաղաքացիներ անբարոյական Սրիկայի մը շահախնդրութեան համար բանտերը կը լեցուին, քանի որ վայրկեանէ վայրկեան անապահով կացութիւն մը կտոր կտոր կ'անդամալուծէ երկրին տնտեսական, բարոյական ու ֆիզիքական բոլոր ուժերը: Դանդաղ բայց տիրապետող մեռելութիւն մը յամբար կը տարածուի, կը հասնի ու կը շղթայէ մեզ՝ մեր սրտին, զգացումներուն եւ մեր բոլոր մտքի ուժերուն մէջ ալ. անստոյգ ուղեւորութիւն մըն է որ կը կատարէ խեղճ ժողովուրդը՝ անհասկնալի ճակատագրին երթալով, մինչ կառավարական աւազակ ըէժիմը դելի մը պէս մաս մաս, փշուր փշուր կը փրցնէ մեր միսէն, մեր հոգիէն եւ մեր գոյութեան բոլոր ուժէն եւ կը կլլէ զայն բորենիի մը հանդարտ եւ անխռով ստամոքսովը: Թանձրացած տառապանքի կենդանի արտայայտութիւնը ժողովուրդ մ'ամբողջ, մեր ժողովուրդը՝ անօթութեան գելարանին տակ, բանտի շղթաներուն ցուրտ եղբայրութեամբը, հալածանքի ու մահուան հզօր սարսափին առջեւ, աստանդականութեան մոլար, մահաբեր քայլերովը:

Այս պահուն, մեր աչքին առջեւ՝ օրուան երկնած չարիքներուն հրէշ հերոսն էր Արաբկիրցի Մխիթար Փիլիկան թողը – ծածկանունով Գեղամ – ըսուած բախտախնդիր մատնիչը: Քսանը վեց, քսանը եօթը տարեկան, դէմքի պաղ եւ անարիւն դեղնութեամբ մը, որ եղեռնագործ հոգի մը կը մատնէ. միջահասակ, նիհար ըսուելու չափ կազմութիւն մը. սեւ աչքեր, սեւ մազ ու նորաբոյս ընչացք վերի շրթութունքին վրայ: Ատեն մ'առաջ իբրեւ մաքտական՝ 96-ի թուականներուն Իզմիրէն հայրենիք կը վերադառնար խիստ ողորմելի վիճակի մէջ, ձեռները կապանքի տակ ու բանտէ բանտ թափառայած – ամէն երկիր վերադարձողի ճակատագրով –, անօթի, գրեթէ կիսամերկ, այնպէս որ չքաւոր հայ բանտարկեալներ իրենց աղքատ քսակին

տակ քանի մը տասնոցի գթասիրութիւնը կը գտնեն՝ եղբայրասիրական պարտաւորութեան մը հասնելու: Յետոյ այլեւայլ քաղաքներ հայրենասէրի անունով գողու ոտք կը քսէ, հոս հոն անբարոյական վարժապետի դէմքը կը ցուցնէ եւ ամէնէն վերջ կանգ կ'առնէ Կարին, ուր կը սկսի զգուելի մատնութիւններու շարք մը: Ակն, Արաբկիր եւ Տիգրանակերտ տենդոտ խուզարկութիւններ իրարու կը յաջորդեն եւ մօտ հարիւրի չափ ձերբակալութիւններ տեղի կ'ունենան իր իսկ թելադրութեամբ. գուցէ այդ բանտարկուածներէն շատերը անձնապէս անծանօթ են իրեն եւ անունով միայն ծանօթ. ուսուցիչներ կամ բարեկեցիկ երիտասարդներ, ու թուրք փօլիսը՝ անօթի անգղի մը վայրագ ընչաքաղցութեամբ իր ճիրաններուն եւ կտուցին բոլոր բիրտ ուժը գործածելու պատեհութիւնը կը գտնէ: Այս շաբթու իսկ նոյն այդ բանտարկեալներէն երկու ականցի եղբայրներ եօթնական տարի բերդարգելութեան դատապարտուեցան, այն միակ յանցանքով որ Մատնիշին կանխաւ բերած մէկ ծրագիրը գրտնուած է քովերնին: Արաբկիրէն եւս կարգ մ'երիտասարդներ տեղւոյս կեդր. բանտը փոխադրուեցան, ասոնց ալ միակ քրէական յանցանքը այն որ իրենց տուններէն դէպքի հրդեհներէն մնացած ատրճանակի վառած կտորուանքներ ելած են:

Տիգրանակերտի կուսակալութեան եւ մասնաւորապէս քաղաքին մէջ խուզարկութիւն եւ բռնն հալածանք այն աստիճանի հասած են որ շուկացիներ՝ գրպաննին կարած կը պտտին հրապարակին վրայ, որովհետեւ նոյնիսկ քաղաքացիին ապահովութեան համար վարձատրուող փօլիսը անմեղներու ծոցէն կամ գրպանէն ներս այլեւայլ յայտնի թղթեր սպրդեցնելով՝ հեղ մ'ալ ետ կը դառնայ ու քայլ մ'անդին կը ձերբակալէ միամիտ մարդը: Այս գծուծ ստրկութիւնը եւ ոչ իսկ զարմանալի կամ մեղադրելի հանգամանք մըն է թուրք պաշտօնեային նկարագրին վրայ: Անցած օր փօլիսի մը հետ էր որ այդ նկատմամբ հարեւանցի դիտողութիւն մը կ'ընէինք. մեր ուղղադատ խօսակիցը իրաւամբ հաստատեց թէ անկարելի էր որ պաշտօնեայ մը ամբողջ տարուայ մ'ընթացքին երկու ամսական միայն ստորագրելէ ետք՝ նիւթական ականյայտնի չքաւորութեան մէջ հոգիի վեհանձնութիւն պահելով՝ նկարագրի մաքրութեան հոգածու ըլլար: Թուրք հասարակութիւնը կրնա՞ր այնքան մը հոգեկանապէս մեծցած ըլլալ իր մէտրէսէներուն ու հիւճրէներուն մէջ որ կարող ըլլար պարտաւորութեան զոհաբերութիւնը ըմբռնելու եւ գործադրելու չափ ան-

կաշառ զաւակներ ծնիլ իր ծոցէն:

Ու արաբկիրցի Աղբը՝ հոս սրճարաններու եւ գինետուններու մէջ շուայտ կեանք մը կը քաշքշէ՝ օրական եքկու մէճիտի կանխիկ վարձատրութեան հետ, փօլիսի եւ փօլիս գոմիսէրի մտերմութեամբ: Բայց ուրախառիթ պարագայ մը, որ իր մատնութիւններու շարքը սկսած օրէն՝ ազգային անուն եւ կրօն փոխելով՝ թուրք կ'ապրի եւ միւսլիման կ'աղօթէ:

Պատիւ այն ազգին, որ զայն որդեգրելու երջանկութիւնը կու տայ մեզի:

Եթէ ցաւառիթ պատեհութեան տակ վերջապէս ազգակցի մը մէկ վատ տկարութիւնը հրապարակելու եւ թքնելու տխուր հարկը կը ստիպէ մեզ, նոյնքան եւ աւելի խոշոր թուք մըն ալ խարբերոցի այն վատ տիպերուն որ Ամերիկայի ազատ հողուն վրայ անձնական եւ կեղտոտ վրիժառութեանց միջոց կը գործածեն՝ փճացած անհատներու եւ հասարակութեանց գէնքն եղող՝ մատնութեան ճիւղային կերպը: Ինչպէս ասկէ առաջ Քէսրիկի(1) մօտ օրերս ալ չեմ յիշեր որ գիւղէն խեղճ մարդ մը ձերբակալուեցաւ իր հասցէին եկած Մարտի մէկ համարին պատճառով(2), որուն ամենեւին տեղեկութիւն չունի, քանի որ գրել կարդալ անգամ չի գիտեր: Մութի մէջ գտնուող ոճրագործ ձեռք մը գրեր է անոր անունը պահարանին վրայ, կանխաւ այնպէս կարգադրելով որ թուրք փօստատան ուշադրութիւնը հրաւիրուի ու այս առաջինը չէ, չեմ գիտեր քանիերորդը իր տեսակին մէջ: Մտադիր ենք հասկնալ այս կարգի սրիկայ եղեռնագործերու անունը եւ ուղղակի հրատարակութեան տալ, այն համոզումով թէ մեր գաղթականութեան ազնիւ ու գաղափարական մասը պիտի կըրնայ զմեռի մը ծայրով քերել իր վրայէն նման արատներ, ազդու բողոք մ'ըլլալով անմեղութեան ձայնին եւ արգելք մըն ալ ուրիշ նմանօրինակ ստորնութեանց: Հայրենիքի տակաւին ծխացող աւերակներուն եւ լճացած արեան հոտը գէթ զգացման մանր թել մը թրթռացնէր այդ արարածներու կուրծքին տակ՝ ազգային վեհանձնութիւնը ազգային թշնամիին չի ծախելու, մանաւանդ յեղափոխութեան դրօշակով՝ ինչ ալ ըլլայ անոր անունը:

Կը լսենք թէ Մշոյ դաշտը կ'եռայ, արիւնը եփ կու գայ. Գուրգէնն ու Ռուբէնը(3) ազատ սարերու գագաթը կարծր պսակով կը ծածկեն, անոնց վրայ հերոսի անմահ անունները քանդակելով: Փա՛ռք Մուշին ու իր սարերուն, փա՛ռք Մշոյ դաշտին, ուր ամէնէն յետին

գեղջուկն ալ կեանքը սուղի կը ծախէ եւ ուր հազար անգամ սուրբ նահատակներու հետ Գուրգէնի ու Ռուբէնի գերեզմանները կը պառկին: Կեանքը կռիւի մէջ է եւ մեր ընկերներու փոթորկալից մահէն աւելի թանկագին, աւելի չքնաղ կեանք մը պիտի ծնի, մայր ու Աստուած ամէն գոյութեան՝ ինքը՝ Ազատութիւնը:

Քիւրտը կը փլցնէ ու չի նորոգեր, քիւրտը կ'այրէ ու չի վերաշիներ, քիւրտը կը սպաննէ ու չի խղճար. ո՞վ պիտի ըլլայ պաշտպան անտէր Հայրենիքին, ո՞վ պիտի տայ ստեղծագործող, հրաշագործ ձեռքը՝ եթէ յեղափոխութիւնը վար դնէ իր գէնքերը ու կրակը մարէ:

Օրհնեալ ըլլայ տառապանքը որ բողոքը, կռիւը, փոթորիկը կը ծնի:

ԱՍԼԱՆ

1.- Քեսրիկ – գիւղ՝ Խարբերդ ֆաղափին մօտ, Խարբերդ գաւառին մէջ:

2.- Ակնարկութիւն «Դրօշակ»ի մէկ համարին:

3.- Գուրգէն՝ բուն անունով Մալեան Բաղդասար (1873-1899) մարտական յայտնի դէմք, անդամ Բարձրաւանդակի (Սասուն) Պատասխանատու մարմնի, Սերոբ Աղբիւրի զինակիցներէն, որ 23 Ապրիլ 1899-ին (Սասնոյ Ցօնօ) գիւղի կռուին կը նահատակուի իր զինակիցներէն Ռուբէնի եւ այլ ֆետայիներու հետ:

Փաստ. 818-5

Ինչպես սովորաբար, այս նամակը եւս հաւանաբար դրկուած է եգիպտոսի Աղեփսանդրիա քաղաքը, հոնկէ ուղարկուելու համար ժընել «Դրոշակ»ի խմբագրութեան:

[18]99 Օգոստոս] 4/16  
Խարբերդ

Ազնիւ եղբայրակից,

Իրաւ որ կ'ուշանանք ձեզի ստէպ գրելէ, ոչ թէ անոր համար որ նիւթը կը պակսէր, այլ յաճախ թոյլատու պարագաներն էին որ կը փախէին մեզմէ:

Կը յուսանք ընդունած կ'ըլլաք մինչեւ հիմա՝ խմբագրութեան ուղղած մեր վերջին գրութիւնը եւ իր տեղը հասցուցած, ինչպէս նաեւ անկէ տեղեկացած այլեւայլ անցքերու մասին:

Տ[րապիզոն] քաղաքի մասին չենք գիտեր թէ ինչ գրենք: Ձեր յանձնարարական նամակը ընդունելէ անմիջապէս ետք մեր մէկ ընկերը ճամբայ հանեցինք պէտք եղած հրահանգներով: Գործը սկիզբէն հեշտ ընթացքի մէջ ինկաւ, քահանան ընդունած էր յանձնարարականը եւ խոստացած ալ հարկաւորն ի գործ դնելու: Առաջին հիմը զետեղած մեր պատուիրակը ետ դարձաւ: Քիչ մը ժամանակ եւս անցնելէ ետք՝ իրենց դանդաղ վարմունքէն թելադրուած՝ երկրորդ անգամ նոյն պատուիրակը ղրկուեցաւ եւ այս անգամ նոյն պատուիրակը ետ դարձաւ: Քիչ մը ժամանակ եւս անցնելէ ետք՝ իրենց դանդաղ վարմունքէն թելադրուած՝ երկրորդ անգամ նոյն պատուիրակը ղրկուեցաւ եւ այս անգամ ալ լոկ խոստումներով նորէն ետ դառնալ ստիպուեցաւ, ու մինչեւ օրս ալ ոչ կարելոր լուր մը ստացած ենք իրենցմէ եւ ոչ ալ վստահ գաղափար մ'ունինք իրենց առեւտրական գործունէութեանց մասին:

Նաւահանգստի(1) հետ յարաբերական լաւ վիճակի մը մէջ կը

գտնուիինք եւ լիայոյս են թէ մեծապէս օգտակարութիւն պիտի քաղէ մեր առեւտրական տունը իրմէ: Խորին շնորհակալութիւն եղած յանձնարարութեանց համար:

Այս անգամ սա հետեւեալ կարեւոր թուականները կը յանձնենք ձեր նկատառութեան. 11.22.20.21, [բնիկ] 11.12.18.2.3.35.20, [բալուցի] 37, [և] 12.13.14.15, [այժմ] 29.2.33, [հոս] 34.12.4.14.12.32.6.1.2.3.26.20.3.22, [վարժապետութիւն] 25.22.2.10, [ընող] 12.24.12.4.20.24, [Ազարիկ] 8.2.18.2.6.12.22, [Քոլոյան] 21.12.15, [կամ] 28.12.28.21.12.22.2.3.22.2.34.25, [ծածկանունովը] 1.20. 23.4. 12.22, [Տիգրան] երիտասարդը կը լսենք թէ 1.36.10.20.33.20, [Տըփղիս]-ի մեր 21.2.15.20.1.16.20.22, [կոմիտէին] հետ յարաբերութեան մտած է էջմիածին գտնուող իր մէկ բարեկամին միջոցով, որը այժմ կարծենք Եւրոպա անցած է: Մեր իմացածին նայելով սա կէտին վրայ կը բանակցին եղեր, 1.36.10.20.38.20, [Տիգրիսի] 21.2.15.20.1.16.22, [կոմիտէն] պէտք եղած դրամը պիտի հայթայթէ եղեր անոր, ան ալ հոս չենք գիտեր ինչ ընելու համար: Հետեւաբար 9.12.17.22.12.21.35.2.3.26.6.12.22, [Դաշնակցութեան] բոլոր 12.4.7.12. 33. 12. 8.15.12.22.6.12.22, [արտասահմանեան] 21.2.15.20.1.16.22.6.4.2.3.22, [կոմիտէներ]-ուն կը ծանուցանէք որ զգուշանան այդ կարգի մարդերէն որ մեր տան չեն պատկանիր եւ ոեւէ գործառնութեան ալ անկարող են արդէն: Կրնան այդ կարգի առաջարկութիւններուն պատասխանել որ Խարբերդի մէջ արդէն գտնուած տան հետ ազատ են բանակցիլ՝ եթէ իրենք ուժ մ'ունին կամ գրամագլուխ մը: Չի մոռնաք այս ազգարարութիւնը անմիջապէս ցրուելու հարկաւոր վայրերը:

Ասկէ առաջ խմբագրութեան գրած էինք ու կարեւոր 23.2.4.28.20.31, [գործիչ] մը պահանջած, մեր կողմէն Մելիքը(4) նշանակելով, տակաւին ոեւէ լուր մ'առած չեղանք՝ եղած կամ ըլլալիք տնօրինութեանը մասին, կրնայի՞ք հասկնալ պէտք եղածը ու իմացնել մեզի: Խիստ կարեւոր է մեր այս պահանջը:

Խմբագրութիւնը մեզի խոստացած էր անցեալ տարի կայացած 32.12.1.23.12.15, [պատգամ.] 14.2.10.2.34.20.22, [Ժողովին] տեղեկագիրը ղրկել ձեր միջոցով, ան ալ ստացած չենք, այս եւս մեզի օգտակարութենէ զուրկ չէր ըլլար: Ինչպէս նաեւ խմբագրութիւնը պատասխանած չէ մեր մէկ երկու գրութիւններուն:

Կը խնդրենք ձեզմէ որ ասկէ ետք «Գասպար Տէր Անդրէասեան»

հասցեն ջնջելով՝ «Սահակ Աբրահամեան» անունը ընդունիք, նորէն նոյն գիւղին գրելով:

Ղրկելով ձեզի մեր սէրն ու անձնուիրութեան հաւաստիքները:

Ձերդ Ա. ԱՍԼԱՆԵԱՆ

1.- Նաւահանգիստ – ծածկանուն Պաթում քաղաքի:

2.- Այս նամակի թուանշանային ծածկագրի «բանալին» հետեւեալ ոտանաւորն է.

Տուր ձեռքդ եղբայր, ժամ է շարժելու

Ժամ է, ժամ առաջ ոտքի կանգնելու:

Ընդհանուր ծածկագիրը կը կարդացուի.– Բնիկ բալուցի, այժմ հոս վարժապետութիւն ընող Ազարիկ Քոլոյեան կամ ծածկանունովը Տիգրան երիտասարդը կը լսենք թէ Տփխիսի կոմիտէին հետ յարաբերութեան մտած է ...

3.- Թուանշանային ծածկագրի այս մասը կը կարդացուի.– Տփխիսի կոմիտէն: Դաշնակցութեան արտասահմանեան կոմիտէներուն ...

4.- Մելիք – ծածկանուն Ամերիկայի մէջ դաշնակցական գործիչ Իսուֆեան Յովհաննէսի:



Իսուֆեան Յովհաննէս – Մելիք

Փաստ, 819-1

Ռուբէն Զարդարեանի ձեռագրով՝ մանրատառ 8 էջոց գրութիւն՝ ընդհանրապէս հարբերդի Հաւաւ եւ այլ գիւղերու հայ բնակչութեան ֆաղափական եւ ընկերա-տնտեսական վատ վիճակի նկարագրութեամբ: Անստորագիր է, բայց, ինչպէս ըսուեցաւ, ձեռագիրը ստուգապէս կը պատկանի Ռ. Զարդարեանին:

«Դրօշակ»ի խմբագրութեան կողմէ գրութեան վերեւ գրուած կը գտնենք.- «Ստ[ացուած] 24-II-1900»:

1900 Յուն[ուար] 6/18  
 Խարբերդ

Մեր ներկայ լռութիւնները միշտ իրենց մէջ ցաւագին պատմութիւններ կը ծածկեն, արցունքը այս դժբախտ ժողովուրդին, անհուն ջալը այս մարտիրոս հասարակութեան: Նոր Տարին դեռ երէկն էր, անոր համար անցնող կէս տարուան բերած չարիքներուն պզտիկ մէկ հաշուեկշիռը կ'ուզենք յարդարել: Նախ հետեւեալ տողերը կը քաղեմ ոչ շատ հին նամակէ մը՝ գրուած Բալուէն:

Սեպտ. 5-ի օրը Հաւաւ գիւղին համար անակնկալ սարսափով մը լրացաւ: Քաղաքիս գայմագամը՝ ծանօթ իր քմահաճ խենթութիւններով, արտակեգրոն չարութեամբ ու այլանդակ տխմարութեամբ՝ յանկարծ քսան հեծեալ ոստիկաններով սրարշաւ գիւղը մտաւ: Գիւղը դողալ սկսաւ, կանխաւ գիտակ ըլլալով այդ վայրագ երիտասարդին ներոնական քմաքներուն ու անակնկալներուն: Անմիջապէս ու առանց ձիէն վար իջնելու կանչեց մուխթարը՝ Պետրոս Մարսուպեանը եւ առանց հարց ու փորձի հրաման ըրաւ որ զգետնեն զայն երեսի վրայ. կանչեց գիւղին ամէնէն ազնիւ ու պատուաւոր տուններէն Այլայեան, Պ. Կարապետը, Պ. Մանուկը, Մըհ Յակոբը եւ Արզումանեան Պ. Նիկողոսը. անոնք ալ Մուխթարին դիրքով գետին

տեղաւորելէ ետք հրաման ըրաւ որ ծեծեն ոստիկանները զանոնք՝ իրենց բոլոր ուժով: Պատճառը, պիտի հարցնէք, կեցէք, տակաւին մենք ալ չենք գիտեր: Գայմագամը ինք իր մտրակով ու ոստիկանները իրենց բիրերով կը զարնեն, անխնայ կը զարնեն. կիներ, մանուկներ կ'աղաղակեն, կու լան. գիւղը մահուան տունի մը փոխուեր է եւ սրտամորմոք խուճապ մը կը տիրէ. բոլոր երիտասարդները, նոյնիսկ աւելորները կը փախին պարտէզներն ու այգիները: Գանակոծութիւնը կը շարունակուի ժամ մը, երկուք ու աւելի ալ: Զէնք, զէնք ունիք, կը պոռայ գայմագամը, պէտք է յաճնէք, եթէ ոչ բոլոր գիւղը մոխիր կը դարձնեմ: Հայհոյութիւնը, ինչպէ՞ս ըսեմ որ հասկընաս: Կը հանգչին ու նորէն կը սկսին ծեծը: Ի զուր դժբախտ երիտասարդները կու լան, կը պաղատին թէ իրենք զէնք չունին, զէնքէ լուր չունին, տուներնին զմելի մ'անգամ չի գտնուիր: Մարդ չի լսեր զիրենք. գիւղը արդէն միայն կիներ ու մանուկներ մնացեր են: Այս անլուր տանջանքներէն ետք, անոնց ամէնուն ալ տուները խուզարկուեցան եւ սոխ ցրցքելու դանակներէ զատ բան մը չի գտան: Գայմագամին հրամանով ոստիկանները պաշարեցին նոյնպէս Քաղցրահայեաց վանքու որբանոցը. որբերը՝ բոյներնին քանդուած ճնճղուկի ձագերու պէս կը ճչային, կը ճուային: Վանքին ու որբանոցին ալիւրները դուրս թափեցին ու թալանեցին. թալանեցին նոյնպէս ծեծուող երիտասարդներուն բոլոր տուները: Ասոնք ամէնքը ըլլալէ ետք, գայմագամը այդ խեղճ հինգ երիտասարդներուն ձեռքերը ետեւնին կապել տուաւ եւ հրամայեց ոստիկաններուն որ մտրակեն զանոնք, որպէսզի իր ձիուն ընթացքին հասնիլ կարենան: Զին քառասմբակ կը վազէ ու երիտասարդները անոր հասնելու համար տակաւին ուժ ու մկանունքի զօրութիւն պէտք է ունենան: Գիտնալու է թէ գիւղը քաղաքէն երկու ժամ հեռաւորութիւն ունի: Եթէ կը խորհիք թէ վարագոյրը, սեւ վարագոյրը նոյն իրկուն քաշուեցաւ ու ալ հեղ մ'ալ պիտի չբացուի՝ կը սխալիք: Գիւղէն փախող էրիկները հագիւ քանի մը հատով տուն կը դառնան գիշերը, մնացածներէն լուր չի կայ թէ ուր փախեր են: Միւս առաւօտ կը լուսնայ. գայմագամին դժոխային դէմքը նորէն կը ցցուի Հաւաւի փողոցներուն մէջ ու կարգն այս անգամ ուրիշներուն է ապահովաբար: Իր փնտռածներէն ոմանք չի կան արդէն մէջտեղ. Մանուկին ծեր հօրեղբայրը – մօտիկ վաթսուն տարեկան – ու անոր տղան Պ. Արմենակը կը զգեստնուին ու մտրակը, բիրը կը սկսին իրենց գործը: Ծեծին տակ

խեղճ ծերուկը կը նուաղի եւ մինչ կիներ, պառաւներ ջուր կը բերեն անոր՝ գայմագամը իր վեցհարուածը քաշելով անոնց վրայ կ'արձակէ, բարեբախտաբար հարուածները կը վրիպին: Կ'ուզէ այս երկուքն ալ հետը քաղաք տանիլ՝ բայց անոնց վրայ երբեք ոտքի կանգնելու չափ ուժ չի կայ. հետեւաբար կը թողու ու կը մեկնի...

Աւելցնենք թէ բանտին մէջ երեք օր անընդհատ նոյն խժդժութեամբ ու նոյն թափով կը գանակոծուին իսկապէս անմեղ այդ բանտարկեալները: Հիմա գանք բուն սկզբնապատճառին: Բալուայ գիւղերէն շատերը իրենց կալուածներով ու արտերով աւատական կը սեպուին՝ իբրեւ պէկերու սեփականութիւն: Սակայն, այդ անտառի պայազատներէն շատերը ասկէ առաջ իրենց ստացուածքներուն մեծ մասը ծախսեր են գիւղացիներուն. պաշտօնական գործողութիւններն ալ գրեթէ աւարտած, դրամը գանձեր ու կերեր են: Երբ ջարդի թուականն (1) անցաւ, նոյն պէկերը իբրեւ սեփականատէր կրկին սկսան իրաւապահանջի երեւոյթ առնել ու ամառուան հունձքին իրենց ենթադրեալ պահանջը դնել: Գիւղացիք բողոքեցին, մասնաւորապէս նոյն այդ ձերբակալուող երիտասարդները եւ չուզեցին վճարում ընել այդ անիրաւ Ամիրաներուն: Պէկերը բռնութեան դիմեցին – ինչ որ իրենց դատաստանական ամէնօրեայ արդարութիւնն է – բայց գիւղացիք դիմադրեցին միշտ: Ամէն կալաչափի այս վէճերը, այս անիրաւութիւնները, այս բռնութիւնները սովորական են Բալահովիտի համար, ու երբ պէկերը ցորեկը լոյս արեւի տակ չեն յաջողիր՝ գիշերը ամենաստոր ոճրագործութեամբ կը կարգադրեն: Տարին տասներկու ամիս աշխատող ձեռքերը վայրկեան մը հանգիստ չառնեն, բանին ու դատին, իրենց սեփականութիւններուն գինը վճարելէ ետք արիւն քրտինքով ալ արդիւնաբերեն ու օգոստոսին գայ պէկը գիշատիչ անգղի ստուերով ու իր բաժինն ուզէ: Չէ, գերութենէ բան մըն ալ աւելի է ասիկա, որովհետեւ ձմեռը անօթութեան սարսափը կ'երեւայ արդէն եւ անսուաղ մեռնելու պարագան սուտ իրողութիւն մը չէ:

Արդ, ինչպէս ամէն տարի, այս տարի ալ հաւատացէք իրենց իրաւունքին համար գլուխ չի խոնարհեցուցին երբեք ու դիմեցին նոյն իրեն գայմագամին, որ խոստացաւ պաշտպանել զիրենք, սակայն յետոյ Իպրահիմ պէկին ստուերը երեւցաւ պօլսեցի սրիկայ գայմագամին քովիկ ու առտուանց արթնցող գինովի մը պէս իր երէկի խոստումները չիշեց: Իրաւասութեան խնդիրը ճանչնալէ ետք՝

հրամայեց որ պէկերուն պահանջած բաժինները տան գիւղացիք. ասոնք ալ յետաձգեցին, ձգձգեցին ու լռելեայն հասկցնել ուզեցին, թէ բնաւ պիտի գլուխ չի ծռեն անիրաւութեան առջեւ: Բայց դէպքերը մօտ օրերէն այլ կերպարանք առին:

Գերման որբախնամ միսիոնարներ առջի տարիէն հաստատուեցան Բալու, սակայն Տիգրանակերտի կառավարիչը՝ վագրի մը համբաւով՝ սկիզբէն արգելք եղաւ ու չի թողուց որ անոնք օգտակար գործունէութիւն մ'ունենային կամ շիտակ խօսքով՝ արգիլեց որ չի կրնան որբանոց բանալ: Անցնող ամրան Բալու նստող գերման միսիոնարը մարդասիրական գեղեցիկ ծրագիր մ'ուզեց գործադրել. այսինքն Բալուայ դաշտին բոլոր գիւղերուն մէջ վարժարաններ բանալ տալ՝ գիւղացիներուն ձեռքով դպրոցական ծրագրի, ուսուցչական ընտրութեան մասին գիւղացիք լիովին ազատ թողլով. ինք միայն նիւթականը երաշխաւորելով իւրաքանչիւր գիւղի աղքատ երկրագործներուն սերմնացան բաշխել՝ պայմանով որ տրուած ցորենը փոխ դրամագլուխ նկատուէր եւ հունձքին ամէն փոխառու պարտաւոր պիտի ըլլար չորս Չարէկի փոխարէն հինգ Չարէկ ետ դարձնել. մէկ Չարէկը պիտի բաժնուէր նոյն գիւղին չքաւորներուն ու չորս Չարէկը նորէն դրամագլուխ պիտի դարձուէր շահագործող երկրագործին: Միսիոնարը այս այնքան գեղեցիկ ծրագրին գործադրութիւնը այնինչ սկսած էր՝ պէկին իմանալով՝ գայմագամին կը հասկցնեն թէ գերմանները դրամ ու զէնք կը բաշխեն հայերուն: Հիմա կը հասկնաք թէ գայմագամը ինչո՞ւ Հաւաւի այդ հինգ երիտասարդները ձերբակալեց ու գանակոծեց: Այս միջոցին Գալբագճեան վարդապետը իր առաջնորդական պտոյտը կը կատարէր ու կը գտնուէր Մատէն. Առաջ[նորդական] տեղապահը բոլոր ազդուութեամբ բողոքեց գայմագամին այդ եղեռնական ընթացքին ու ոչ օրինաւոր վարմունքին դէմ թէ՛ Միւթէսարըֆին եւ թէ կուսակալին: Գայմագամ էֆէնտին շատ ուշ հասկցաւ թէ խաբուեր էր!! Խնդիրը այսպէս ձգձգուելէ ետք, մինչ մէկ կողմէն վարդապետը կը բողոքէր, բանտարկեալները Իպրահիմ պէկին միջնորդութիւնը կը խնդրէին, միւս կողմէն ալ Տիգրանակերտի կառավարչին պաշտպանեալը՝ գայմագամը՝ ինքզինք արդարացնելու համար ջանքեր կ'ընէր: Գերմանացին անմիջապէս Խարբերդ փութաց, որովհետեւ յիմար մարդուկը երբ բանտարկեալները ետելը ձգած՝ միսիոնարին տանը առջեւ կու գայ՝ կը սկսի հայհոյել Վիլհէլմին ալ, Թագուհիին ալ ու

այդ որբախնամ գործին բոլոր սատարողներուն ալ. այսքանն եւս հերիք չի սեպելով՝ բանտարկել կու տայ միսիոնարին սպասաւորը ու նոյն մտրակով կը ծեծէ երեք օր այդ խեղճ ծառայողն ալ:

Կը լսենք թէ մօտերս գայմագամը ստիպուեր է մեկնիլ Բալուէն՝ բարձրագոյն հրահանգի մը համաձայն եւ ուրիշ տեղ մը փոխադրուեր է: Մեկնելէ առաջ կը թողու բանտարկեալները կատակերգական վերջաւորութեամբ, հարցնելով թէ՝

– Պէնիմ կիպի պիր գայմագամ կէօրմիշ մի՞ իտինիզ(2):

Չէ, կը սխալիս, մարդո՛ւկ, Բալու քեզիպէսներ ո՛չ թէ շատ տեսած է, այլ ամէն օր անոնց բազմապատկուիլն ալ կը տեսնէ, հատ մըն ալ քեզմով: Իպրահիմ պէկին անունը տուինք քիչ մը վերը, ասիկա Բալուայ աշխարհին աստուածն է՝ բառին իմանալի իմաստով. երբեք տեսնուած չէ բռնապետ մը այսքան խորամանկ, վայրագ, անգութ ու քաղաքավար ալ: Ինք ու իր եղբայրներու վոհմակով կը տիրեն Բալուի բոլոր սահմաններուն, ոչ թէ միայն հողն ու քարը իրն են այդ երկրին՝ այլ մարդիկն ալ՝ իրենց գլխուն մազերէն մինչեւ ոտքերուն եղունգները:

Բալու աշխարհ մըն է ուրկէ զատ թերեւս հայուն ստրկութիւնը այնչափ գետնաքարշ չէ Հայաստանի ո՛րեւէ մէկ անկիւնն ալ:

Ու եթէ աներեւակայելի բռնութեան մը տակ հեծեծող համայնքի մը մէկ ուրուականը ջանայինք գծել մինչեւ հիմա՝ խնդիրը իր պարագայական գունաւորումը կը փոխէ՝ երբ Խարբերդի մասին խօսիլ կը ստիպուինք:

Խարբերդի դաշտին մէջ Պէկի ու Պայագատի թաթը արինշաղախ չէ՛, բայց եւ այնպէս տառապանքը տառապանք ըլլալէ չի դադրիր: Իջմէի(3) մէջ հայ աղջիկ մ'առեւանգեցին ու բռնի խլամացուցին, գրաւելու համար անոր հարստութիւնը: Բռնաբարումներ, պատուի խայտառակութիւններ ամէնօրեայ դէպքեր ու եղելութիւններ են. երբեք գաւառ մը այսքան ազգային անկերպարան դրութեան մը մէջ չի գտնուիր: Վանայ Պօղոս վարդապետին զոյգ նմանը հատ մըն ալ մենք ունինք Պետրոս անունով, նոյնքան պատմական: Բողոք բողոքի վրայ Պատրիարքարանը գանգատագրեր կը դիզուին, խառն ժողովը(4) երեք անգամ հրաժարական կը ղրկէ՝ կամ վարդապետին հրաժարեցումը եւ կամ իրենց հրաժարականին ընդունուիլը պահանջելով ու Պատրիարքը կարծես կատակի նստած ըլլար՝ վարդապետին կը գրէ որ հրաժարեալ ժողովականները կանչէ ու գործի

ձեռնարկէ: Ինչ հեգնութիւն. վարդապետ մը՝ որ բոլոր իրեն ներկայացնող կիներուն, հարսներուն՝ լուտանքով եւ օձիքը չի կտրուած հայհոյանքներով կը պատասխանէ, որ պատարագ մ'ընել անգամ չի գիտեր, որ վանական հասոյթները տարիներով, երկար տարիներով անձնական շէնքեր շինելու կը գործածէ, որ հռչակուած սրիկայ մը, անբարոյական մըն է, որ երկու խօսք խօսելու բացարձակ անկարողութիւն ունի, որուն մասին ինքը՝ Պատրիարքն ալ մօտէն գիտակ է կարծենք՝ Խարբերդի պէս կարեւոր կեդրոնի մը իբրեւ Առաջնորդող նշանակել ու եղած բողոքներուն ականջ չի տալ՝ կը նշանակէ սուլթանական վարչագիտութիւն. անանկ չէ՛, պատրիարք:

Մեր Առաջնորդին չափ խելացի ու կարեւոր անձնաւորութիւն մըն է նաեւ կուսակալը, որ գողերու մասին իրեն եղած խնդրագրերուն կը պատասխանէ թէ գիշերները դուրս մի՛ ելլէք: Կ'իմանա՞ք, վալի մըն է ասիկա պատասխանողը ու նոյնիսկ թուրքերու. երեւակայեցէք հայուն վիճակը:

Այսպէս, այս անստուգութեան ու ցաւերուն մէջ կ'ապրի ժողովուրդը, աչքը բնագդաբար հեռաւորին, սպասուածին. ու այս հոգեկան կացութիւնը ո՛չ թէ հայունը, այլ թուրքինն ալ հաւասարապէս:

1.- Խօսքը 1895-ի Համիտեան ջարդերուն մասին է:

2.- Թրքերէն՝ Ինձի պէս գայմագամ մը տեսա՞ծ էիք:

3.- Իջմէ՝ Խարբերդ գաւառի գիւղերէն:

4.- Խառն ժողով՝ Ազգային կրօնական եւ քաղաքական վարչութիւններէ կազմուած ժողովը:

Փաստ, 819-2

1900 Յուն[ուար] 6/18

Խարբերդ

Սիրելի ընկերներ,

Վաղուց եղաւ որ դժբախտ պարագաներ ստիպեցին մեզ մեր գրութիւնները ընդհատելու, կը յուսանք այս մասին ներողամիտ պիտի ըլլաք՝ երբ գործերու ու անցքերու նկատմամբ ամբողջովին վերահասու ըլլաք:

Գուցէ մինչեւ հիմա արդէն հոգ հասած կ'ըլլայ մեր ընկերներէն Պ. Սալման(1), որ մանրամասնօրէն պիտի պատմէ ձեզ թէ տեղական գործառնութեանց եւ թէ վերջի օրերու անակնկալ տխուր իրողութիւններու մասին: Այս վիճակով մեր ուժերը ջլատուած կը մնան, մինչեւ որ արտասահմանի մեր եղբայրակիցները օգնութեան ցանկալի ձեռքը չերկնցնեն մեզ: Որքան ալ մօտաւոր հետաքրքրութեամբ տեղեկութիւն ունենաք Հայրենիքի իսկական կացութեան մասին, վերջապէս անկարելի պիտի ըլլայ ձեզի ճշմարիտ պատկերով աչքի առջեւ ունենալու կեանքն ու հոգեկան աշխարհը հեռաւոր գաւառներուն: Պէտք է ծունգ ծունգի ու բերնի շնչառութեան մօտիկ ապրիլ այդ ժողովուրդին ու երկրի մարդոց հետ՝ ամբողջական գաղափար մը կազմելու համար: Օրուան հացին կարօտը, վաղուանին անստուգութիւնը, ջարդերու ազդած պահական երկիւղը ու այն անգոյն դրութիւնը ուր կ'ապրին՝ պատճառներ են տակաւին ուրիշ շատերու հետ՝ որոնք ինքնագիտակցութենէ զուրկ հասարակութիւն մը մղեն մտքի ու սրտի այլանդակ ջղագարութեան կամ այլապէս հոգեկան սնոպիզմի: Բայց մենք երբեք յուսահատած չենք, հիմնապէս համոզուած ըլլալով թէ ամէն հաւաքական խուժան ու ռամկութիւն կը տաքնայ վառարանէ մը՝ միայն այդ տաքութեան ուժը միշտ կենդանի, միշտ զօրաւոր եղած ըլլայ:

Սալմանի էական նպատակն է հանգանակութեան մը ձեռնարկել ձեր կամ ուրիշ կոմիտէներու աջակցութեամբ. բոլոր յոյսերնիս այս ձեռնարկի յաջողութեան վրայ կը սեւեռի առայժմ: Վստահ թէ մեր

հեռաւոր ընկերները ու եղբայրակիցները հոգւոյ բոլոր ազնիւ տրամադրութեամբ մեզ լքուած պիտի չի թողուն: Ու եթէ յաջողիք մեզի նիւթական օժանդակութիւն մը ձեռք բերել՝ պարտք կը դնենք ձեր կոմիտէի(2) վրայ որ Ասլանի իսկական հասցէին ղրկէք զայն՝ փոխգրի մը միջոցով: Պ. Սալման պիտի յայտնէ Ասլանի իսկական անունն ու հասցէն – եթէ արդէն ձեր կոմիտէն անգիտակ կը մնայ անոր:

Հայաստանի բուն իսկ սրտին վրայ ապրող բոլոր համայնքները՝ որոնք սահմանէ ու սահմանագլխէ հեռու կը մնան՝ անխուսափելի վտանգի տակ կը գտնուին, այդ դուք խիստ լաւ գիտէք. եւ մինչեւ որ ներքին գաւառները ինքնապաշտպանութեան իրենց միջոցները չամրապնդեն՝ անկարելի պիտի ըլլայ, մեր գաղափարով, յարձակողական կէտերու վրայ նպատակուած յաջողութիւնը երաշխաւորել: Մենք այս ուղղութեամբ կը ջանանք մեր միջավայրն ու մեր ձայնն հասնող ամէն տեղերուն մէջ արձագանգել տալ այս համոզումը եւ ցաւալի պարագան, հոն ուր մինչեւ այսօր արտասահմանի մեր ընկերները երբեք լուրջ ձեռնարկ մը չըրին այս մասին: Լքուած, այլասերած, ամէն օր ու ամէն ժամ բռնութեան տակ իր հոգեկան բոլոր ազդու ուժերը կորսնցնող հաւաքականութենէ մը ինչ կարելի էր մեծ բան դուրս բերել՝ սոսկ տեղական աջակցութիւններով. պէտք է վերահասու ըլլալ այս հիւանդ տրամադրութեան, դուրսէն, արտասահմանէն եկած ամենափոքր նիւթական նպաստ մը, պարապ քաջալերանք մը, նոյնիսկ սնամէջ նախադասութիւն մը հոս աստուածային պատգամի մը, զօրութեան մը ընդունելութիւնը կը գտնէ, հաւատացէք մինչեւ իսկ ամէնէն աւելի ինտելիգենտ ու բանիմաց կարծուող դասակարգէն ալ:

Ու ճիշդ այս պատճառով էր որ քանի քանի տեղ խնդիրք ըրինք ձեզի թերթերու առաքումը՝ կանոնաւոր վիճակի մէջ պահելու, սակայն, գրեթէ միշտ անկանոն կը հասնին անոնք մեզ: Երկրորդ անգամ կը խնդրենք որ թերթերու մասին աւելի հոգածու ըլլաք:

Գալիք անգամով ուրիշ պաշտօնական գրութիւն մը պիտի ուղղենք Արեւմտեան Բիւրոյի հասցէին. միայն այս անգամով պիտի խնդրէինք որ գտնուած թուրք կազմակերպութիւններուն եւ անոնց օրկաններուն, նպատակին ու կացութեան նկատմամբ անստոյգ տեղեկութիւններ հաղորդելու բարեհաճութիւն ունենայիք: Ու եթէ նոյնիսկ դժուարութիւն ունէիք նոյն թերթերէն մէկ մէկ օրինակ ղրկէիք

արդէն ձեզ ծանօթ հասցէով:

Կը համբուրենք ձեզ, եղբօր ամէնէն տաք շրթունքներով եւ կը մը-  
նանք անհամբերութեամբ սպասող ձեր ցանկալի լուրերուն:

Ի դիմաց Աւար-Աւերի Կ. Կ.Ի  
ԱՍԼԱՆ

Յ. Գ.- Ներփակ նամակը կը յուսանք Պ. Սալմանի յանձնելու բա-  
րեհաճութիւնը կ'ունենաք: Նոյն այս թղթաբերով, առաջին ծրարի  
մէջ կը ղրկենք նաեւ յօդուած մը «Դրօշակ»ի համար, որը կը յուսանք  
անյապաղ իր հասցէին կ'ուղղէք:

ՆՈՅՆ

1.- Սալման – ծածկանուն Յարութիւն Մանկունիի, որ Ամերիկայի Կեդր. կոմիտէին կող-  
մէ իբրեւ ներկայացուցիչ ուղարկուած էր Խարբերդ:

2.- «Զեւ կոմիտէի» – ակնարկութիւն Աղեփսանդրիոյ կոմիտէին, որուն միջոցով Խա-  
րբերդի, ինչպէս նաեւ շարք մը այլ շրջաններու մարմինները կը հաղորդակցէին «Դրօշակ»ի  
խմբագրութեան հետ:

Փաստ, 819-3

1900 Մարտ 8/20

Խարբերդ

Արեւմտեան բիւրոյին,

Սիրելի ընկերներ,

Մեր ազնիւ ընկեր Պ. Սալման (1) վերջերս մեզի ղրկած էր ձեր 27 Յունվ. 192 թուահամար մէկ պաշտօնական գրութիւնը՝ ինչպէս նաեւ Ամերիկայէն ձեզի ուղղուած նամակի մը համառօտութիւնը՝ որոնցմէ կը տեղեկանանք թէ մեր տեղական գործառնութեանց համար այլեւայլ զրպարտութիւններ ու չարամիտ տեղեկութիւններ հանուած են շրջաբերութեան: Կը փութանք ահա ձեզի տեղեկագրել կարելորդն ու իրականութիւնը, խնդրելով ձեզմէ որ դուք եւս նոյնը իմացնէք ուր որ անկ է:

Կ'ամբաստանեն զմեզ թէ Մ. գիւղի եկեղեցին կողոպտած ենք: Բայց ո՞վ ըսաւ թէ եկեղեցի մը մէկ խաչի տեղ երեսուն ումպէտ արծաթ խաչեր պէտք է պահէ ու ի՞նչ բանի համար. ո՞վ ըսաւ թէ ժողովուրդը ներկայացնող, անոր մէջ ամէն անկախութեան, ազատութեան զգացումներն սպաննող, թունաւորող այդ ոճրագործ առարկաները իրենց գոյութեան իրաւունքը պէտք է պահեն. ո՞վ ըսաւ թէ անոնք այնքան խնամով պահելու է օր մը թշնամիին ձեռքն յանձնելու համար: Բայց ժողովուրդին հոգեկան տրամադրութիւնը, սուրբ խղճմտանքը բռնաբարած կ'ըլլանք՝ պիտի ըսէք, անով ալ գործին վրայ անբարոյականացուցիչ թելադրութիւններ առթելով: Այո՛, այս հեռաւոր տրամաբանութիւնը ըստ ինքեան հայրենիքի բուն կացութենէն մօտաւոր տեղեկութիւն մը չունեցողին, ինչպէս նաեւ սեւհոգի զրպարտողներու համար հաւասարապէս ճշմարտութիւններ կ'երեւան: Սակայն իրականութիւնը այն է որ այսօրուան մեր ճանչցած հասարակութիւնը «Յեղափոխական» անունն իսկ ամենամեծ անբարոյականութիւն մը կ'ընդունի, եւ այս այն պարզ պատճառներով որ դուք նոյնպէս պարզեցիք «Ամբոխային տրամա-

բանութիւն»(2) խորագիրով ձեր շարք մը տեսութիւններուն մէջ, որոնց վրայ մենք աւելցնելիք բառ չունինք: Մենք, սակայն, խնդիրը հոն է թէ պէտք է մեկնինք նոյն ամբոխին մտածման մեկնակէտէն. ահռելի դժբախտութիւն մը պիտի ըլլար ատիկա ու մեր բոլոր բարոյական կորովին սնանկութիւնը. ուրեմն ուրիշ բան չէր մնար ընել մեզ այս աշխատեցած հասարակութեան մէջ՝ այլ միայն անոր մեր խիղճը, գիտակցութիւնն ու տեղական պայմանները թոյլ կու տային գործադրել: Բայց եւ այնպէս կը կրկնենք թէ Մ.ի եկեղեցիին կողմէ պուտը գործողի վերագրուած է՝ լոկ շարամտութենէ մ'անդին չ'անցնիր:

Երկրորդ մեղադրանքը որ կը պարունակէր ձեր նամակը՝ հրապարակ հանուած Զ.երու(3) խնդիրն է:

Այո՛, մեր նիւթական անձկութեան մէջ դիմած ենք այս անուղղակի հանգանակութեան, համոզուած ըլլալով թէ մեր հրեայ հարուստներուն ոեւէ ուղղակի դիմում վտանգաւոր ու աննպաստ հետեւութիւններ յառաջ պիտի բերէր: Բայց, այս եղանակը գործադրութեան դնելէ առաջ կանխաւ խորհրդակցած ենք Ա.ի(4) մեր ընկերներուն, յայտնելով մեր նպատակն ու մտադրութիւնը եւ շնորհակալութեամբ ընդունած ենք անոնց ձեռնտուութիւնը: Համոզուած ենք թէ այս կարգի ձեռնարկութիւններ իրենց մէջ անպարկեշտ ու արատաւորիչ հանգամանք մը չունէին, քանի որ այդ Զ.երը միայն պիտի ներկայացունէին կարող դրամատէրներու ու անոնցմէ գանձուածը որբեւայրիի մը հացին գինը չպիտի ըլլար. թէեւ արդիւնաւոր վախճան մը չունեցան մեր դիմումները ու հանգանակութիւնը երկու կարող անհատներու մէջ սահմանափակուեցաւ: Հիմնովին կը հերքենք թէ այս դրութիւնը ընդհանուր սիստէմ մը դարձած է եւ երկուքներէ թէ շատ ուրիշներ ալ մասնակցած են անոր:

Այս ամէնը ձեզ ներկայացնելէ ու մեր անկեղծ տեսութիւնները պարզելէ ետք՝ աւելորդ չենք համարեր, եւ ընդհակառակը, յայտնելու թէ միջավայրին ցամքած ու յուսահատ կացութիւնը ստիպած է մեզ այսպէս վարուելու, որովհետեւ, այլապէս, կարելի չէ գործ մը սկսիլ ու նպատակ մը հետապնդել: Կրնա՞ք չընդունիլ թէ առանց նիւթական երաշխաւորութեան՝ անկարելի է կազմակերպութիւն մը. արդ, խնդրենք, ըսէիք թէ ի՞նչ միջոցներ կրնային նպաստաւորել զմեզ. ո՞ր հարուստ ինքնաբերաբար կամ ազնիւ հոգիի մը թելադրութեամբ պիտի ուզէր մասնակցութիւն ունենալ փրկութեան մի-

չոցներուն ու եթէ ոչ անձը, գէթ քսակին յետին քմուքը(5) նուիրելով. կը ճանչնա՞ք այս հողին վրայ ապրող այսօրուան մարդուն հոգեբանութիւնը:

Սիրով պիտի լսէինք արտասահմանի մեր եղբայրակիցները ու անոնց ներկայացուցած դիտողութիւններուն վաւերականութիւնը չպիտի ժխտենք եթէ օր մը փոխանակ հովերու մէջ սնամէջ բառերով զիրար ապտակելու լուրջ մտածողութեամբ մը հայրենիքի իսկական կացութիւնն հասկնային ու դրապէս օգնութեան փութային, որովհետեւ լոկ հնացած շունչով կրակ չէ կարելի բռնկեցնել այս քարէ անտառին մէջ, ուր մարդիկ անասունի կենցաղով մը կ'ապրին, կը սնանին եւ իրենց հոգեբանական վիճակը արգահատանք կ'ազդէ միայն: Նորէն կը կրկնենք թէ Ամերիկայի մեր ընկերներուն, ինչպէս նաեւ ձեր խորհուրդները սիրով ու գոհունակութեամբ կ'ընդունինք՝ համոզուած թէ նոյն թելադրութիւնները լոկ կուսակցութեանս բարոյական հեղինակութեան շուրջը կ'ամփոփուին. բայց այն ատեն մեզի ցոյց տայիք գործունէութեան նոր արահետ մը, մեր պէտքերը հոգալու կարելիութիւնը եւ այն միջոցները, որ ձեզի համար բանաւոր ու մեզի համար նպաստաւոր կրնային ըլլալ:

Ղրկելով մեր ջերմագին համբոյրները ու սպասելով ձեր պատասխանագրին՝ կը մնանք ընկերական յարգանքներով՝

ԱՍԼԱՆ

- 1.- Տես փաստ. 819-2-ի ծանօթագրութիւն թիւ 1-ը:
- 2.- «Ամբոխային տրամաբանութիւն» – Քրիստափոր Միֆայէեանի ծանօթ գործը:
- 3.- Ակնարկութիւն Ամերիկայէն ուղարկուած չէֆերու:
- 4.- Հարցը կը վերաբերի Ամերիկայի:
- 5.- Քամուած նիւթի մը յետին անցումը խմաստով:

Փաստ, 819-4

**Եգիպտոսի նամբով Ամերիկայի Կեդր. կոմիտէին ուղարկուած նամակ:**

1900 Ապր[իլ] 26  
Խարբերդ

Սիրելի ընկերներ,

Ներփակեալ յայտարարութիւնը ուղղուած է Ամերիկայի մեր ընկերներուն. արդէն, կը կարծենք, դուք ալ տեղեակ էք այդ մասին Պ. Սալմանի միջոցով:

Ինչպէս հաղորդած էր Պ. Սալման մեզ, որուն դուք ալ խոստացած էիք կանխաւ, կը խնդրենք որ դուք եւս նոյն յայտարարութիւնը վաւերացնելով ղրկէք Ամերիկայի Կեդր. կոմիտէին ձեր կողմէն խընդրելով որ նոյն Կ. կոմիտէն շրջաբերութեան հանէ իր հետ կապուած բոլոր կոմիտէներուն:

Ստոյգ իրողութիւն մըն է ասիկա որ ստիպուած ենք հաղորդել մեր արտասահմանի բոլոր ընկերներուն. երկրի ներկայ տագնապալի վիճակին ձայնն է որ կը բարձրացնենք մեր կողմէն, այն բարոյական վեհ պարտականութեան անսալով՝ որուն ուխտած կը մնանք միշտ:

Կրկին, կ'աղաչենք ձեր կողմէն ամէն կարելի աջակցութիւն չի խընայել յաջողցնելու փրկութեան միջոց մը որ փրկարար պիտի ըլլայ երկրին ու գործին:

Մօտ օրերին նոյնին ուրիշ օրինակները պիտի ղրկենք ձեզ՝ խընդրելով նոյնպէս որ ցրուէք զանոնք արտասահմանի մեր ընկերներուն:

Ստացած ենք 99-900-ի(1) համարը. կը խնդրենք որ յաջորդ համարներն եւս կանոնաւորաբար առաւել շուշացնէք:

Ձերմագին բարեւներով  
ԱՍԼԱՆ

1.- Ակնարկութիւն «Դրօշակ»ի 1899-1900 համարին:

Փաստ. 819-5

[1]900 Ապր[իլ] 26  
Խարբերդ

Ազնիւ եղբայրակից Պ. Վահան(1),  
(Մասնաւոր)

Սիրով ընդունած եմ ձեր մասնաւոր գրութիւնը, որով կը յայտնէիք թէ ձեր բարեկամներէն մէկը Փարիզի մէջ գիտական թերթի մը հրատարակութեան ձեռնարկած է եւ հետեւաբար մեր ալ աջակցութիւնը կը խնդրուի(2):

Զեր կողմէն եղած ղեւէ բարեկամական հրաւեր ամենայն հաճութեամբ կ'ընդունիմ, խոստանալով բոլոր կարելի աշխատակցութիւն նոյն թերթի ծաւալման ու բարոյական յաջողութեան համար: Անշուշտ նոյն հրատարակութիւնը իր գիտական ծրագրով՝ թրքական սէնսուրէն(3) ազատ պիտի ըլլայ եւ մուտքը Օսմ. հողին մէջ արգելքի չպիտի հանդիպի: Իմացուցէք ձեր բարեկամին ու ցոյց տուէք իմ իսկական հասցէն - որը ձեզի ծանօթ ըլլալու է կարծենք -, որպէսզի իր թերթէն քանի մը թիւ դրկէ ու ինք ալ անձամբ գրէ մեզի իր բռնելիք ուղղութեան, նպատակին ու մշակած ճիւղերու մասին:

Յետոյ պզտիկ ցանկութիւն մը ձեզի: Կ'ուզէի իմանալ թէ Զուիցերիոյ բժշկական համալսարաններուն ուսանողութեան տարիները քանի՞ են. կարելի՞ է որ կարգ մը համալսարաններու ուսմանց քաթալոկները դրկէիք մեզի՝ դիմելով Զուիցերիոյ մէջ ձեր ծանօթ բարեկամներուն: Խիստ մեծ կարեւորութեամբ մը պէտք ունիմ այս ամէնը գիտնալու առ առաւելն մէկ երկու ամսէն, մինչեւ յուլիս: Ուսանող մը արդեօք Զուիցերիոյ ոեւէ մէկ քաղաքին մէջ քանի՞ ֆրանք տարեկանով կրնայ ապրիլ, ու եթէ նոյն ուսանողը դժուարութիւն ունենայ իր ծախքերը հայթայթելու՝ ի՞նչ միջոցներ կան աշխատութեամբ ձեռք ձգելու համար. կամ ի՞նչ բարեգործական հաստատութիւններ կան այդ նպատակին սատարող: Կը տեսնէք թէ հարցումներս ձեզ ձանձրոյթ պատճառելու չափ շատ են. սակայն այս յետ

*ինկաժ գաւառին մէջ ուր փօստան իսկ կէս ամիս կտրելիք ճամբայ  
ունի մեզի հասնելու՝ ասոնք ամէնքը գիտնալու համար անհուն  
դժուարութիւն, չըսենք անկարելիութիւն ունինք. հետեւաբար՝ եթէ  
երբեք ազնուութիւնն ունենաք մեզ գոհացնել՝ անհունապէս շնոր-  
հապարտ պիտի թողուք մեզ:*

*Անկեղծ սիրով ու ջերմ համբոյրներով  
Ձերդ  
ԱՍԼԱՆ*

*Դիւրութեան համար կը կրկնեմ իմ հասցէս. անշուշտ անվնաս  
նամակներու կամ սեպհական գրութիւններու համար:*

*7.2.3.11.16.22 24.12.4.9.12.4.6.12.22 (4)*

*Խարբերդ*

1.- Նամակը ուղղուած է Եգիպտոս: Վահան՝ ծածկանունն էր Դաշնակցութեան առաջին  
շրջանի գործիչներէն Նիկոլ Մատինեանի, որ այդ օրերուն կը գտնուէր Աղեփսանդիա:

2.- Խօսքը կը վերաբերի Հ. Յ. Դաշնակցութեան նախաձեռնութեամբ եւ Քրիստափոր  
Միֆայելեանի ջանքերով Փարիզի մէջ ի մօտոյ (1900 Հոկտեմբեր) լոյս տեսնելիք Փրօ-Ար-  
մենիա-ին, որ Փիեռ Քիյառի խմբագրապետութեամբ եւ հանրածանօթ հեղինակութիւն-  
ներու աշխատակցութեամբ պիտի ծառայէր Եւրոպայի մէջ Հայ դատի քարոզչութեան:

3.- Գրաֆննութենէն:

4.- Հասցէն տրուած է թուանշանային ծածկագրով, որ կը վերձանուի հետեւեալ կերպ.-  
Ռուբէն Զարդարեան:

Փաստ. 819-6

[1]900 Դեկտ[եմբեր] 28  
Խարբերդ

Մեծայարգ բարեկամ(1)

Բաւական ատենէ ի վեր ձեզի գրած չեմ կամքէ անկախ պատճառներով՝ որոնց մասին կը գրեմ ուրիշ անգամ երկարօրէն:

Պ. Սեպուհէն(2) նամակ մը ստացայ ուր կը կարդայի ձեր նոր հասցէն եւ կ'իմանայի թէ մեր նոր հասցէին կը փափաքէիք «կարգ մը գրական կարեւոր տեղեկութիւններ տալու»:

Մեր հին հասցէն անգործածելի է, կը խնդրենք որ անով այլեւս ոեւէ ծրար չի դրկէք, մինչեւ ցնոր տնօրինութիւն: Գործերնիս ձախող հանգամանք մ'առած ըլլալուն համար, ստիպուեցանք այս որոշումը ընել: Անհատական նամակներ՝ առանց ոեւէ ծրարի՝ կրնաք ուղղել իմ հասցէիս թէեւ, բայց աւելի ապահով ըլլալու համար՝ հաճեցէք գրել սա հասցէով.

Պ. Տիգրան Պաղտիկեան

Եղէգի գիւղ

[Նոյնը՝ արաբատառ հին օսմաներէնով]

Անշուշտ կը հասկնաք թէ ներկայ հասցէն՝ իրական բարեկամի մ'ըլլալով՝ պէտք չէ չարաչար գործածել ոեւէ անպատեհութիւն մ'առաջ չի բերելու համար:

Երկար ատենէ ի վեր մեր գրական թերթին երեսը տեսած չըլլալով՝ անոր կարօտը կը քաշենք. սակայն ինչ ընել, քանի որ պարագաները այնպէս կը տրամադրեն, մինչեւ նոր տնօրինութիւն:

Ասկէ առաջ թէեւ Եւրոպա մեկնելու դիտաւորութիւն մ'ունեցայ, բայց այլեւայլ արգելիչ պատճառներ հարկադրեցին զիս որ այդ միտքը ատենուան մը համար յետաձգեմ. ամէն պարագայի տակ ապահով կրնաք ըլլալ թէ տեղ մը գացած չեմ եւ ուր էի հոն կը մնամ:

Կարգ մը խիստ շահեկան նիւթերու մասին գալիք անգամով կը

գրեմ անպատճառ – ծանօթ դրուժեամբ, որը կարդալէ ետք՝ հաճեցէք անյապաղ պատասխանել: Թէ ինչո՞ւ այս հեղով կը զլանամ, պատճառները կ'իմացնեմ ձեզ յաջորդով:

Ընկերական սիրով ու կարօտով՝ Զերդ  
Ա. ԱՍԼԱՆ

Յ. Գ.- Յառաջիկայ Նոր Տարուայ առթիւ կը ղրկեմ ձեզի ու ձեր երջանկութեան համար իմ սրտագին ցանկութիւններս:

ՆՈՅՆ

1.- Յայտնաբար նամակը Եգիպտոսի նամբով ուղղուած էր ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան:

2.- Սեպտեմբեր Ժամանակներէն մէկն էր յեղափոխական յայտնի գործիչ Հայկ Թիւեաթեանի, որ այդ օրերուն Եգիպտոս կը գտնուէր:

Փաստ. 819-7

Ստորեւ բերուած նամակը, որուն վերեւ փակագծերու մէջ գրուած է՝ Պատճէն Ասլանի նամակին, գրուած է գաղտնի թանաքով: Հաւանաբար ժընեւ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան կողմէ բաւական յաջողութեամբ «բացուած» է, այլ խօսքով վերծանուած է:

(Պատճէն Ասլանի նամակին)

Խարբերդ, 9 օգոստոս 1900

Նամակներուդ պատասխանները անոր համար ուշացան որ ես մեկնած էի Մալաթիա, այնտեղ կեցայ մօտաւորապէս քսան օրի չափ. գիտես արդէն թէ մեր արտասահմանի ընկերներուն մեծագոյն փափաքն էր որ հոն կազմակերպութիւն մը յառաջ բերէինք. ուրախութեամբ կը ծանուցանեմ թէ յաջողեցայ թանկագին կազմակերպութիւն մը յառաջ բերել: Հիացումով պէտք է խօսիմ Մալաթիայի ժողովուրդին վրայ: Ծերեր տեսայ որ կտրիճներու պէս կը խօսէին ու երիտասարդներ գտայ որ մէկ մէկ հերոսներ էին: Ես հոս չպիտի կրնամ մանրամասն գրել բոլոր այն դիւցազնութիւններու մասին, որոնք անոնք ցոյց տւած են ջարդի օրերուն: Միայն կրնամ ըսել թէ գէյթունցիներ կամ տարբեր սասունցիներ են այդ մարդիկը: Կազմակերպութիւնը գրեթէ լայն հանգամանք մը առաւ հոն, որովհետեւ այդ կազմակերպութեան մէջ գործ ունին բոլոր երեւելիները – այսինքն անոնք, որոնք վստահելի են: Հաւատացէք թէ Դաշնակցութեան ամենափայլուն կոմիտէներէն մին պիտի ըլլայ այդ քաղաքը եւ ո՛րեւէ պարագայի տակ աննման քաջագործութիւն եւ արդիւնք ցոյց պիտի տայ: Մեծէն սկսած մինչեւ փոքրը յեղաշրջւած են արդէն եւ իրենց անցեալ քաջագործութիւնները վստահող ու կտրիճ ըրած է զիրենք ա՛լ աւելի: Զիս բաց գրկով ընդունեցին. բացատրեցի իրենց Դաշնակցութեան ընդհանուր ծրագիրն ու գործունէութեան եղանակը. ըսի անոնք մեր կուելու կերպն ու նպատակը եւ այն միջոց-

ները որոնցմով կը կուինք ամէն տեղ: Այժմ ինը հոգիէ գործադիր կոմիտէ մը կազմեցի որ տեղական պայմաններու համերաշխութեամբ ծրագիր մը պիտի պատրաստէ իր համար եւ պիտի սկսի գործի: Գլխաւորապէս զէնք ու միայն զէնք է հարկաւոր այդ ժողովրդին, եւ ատոր համար ալ ամէն դիւրութիւն ունի, որովհետեւ այնտեղ խիստ նշանաւոր զինագործ մը կայ որ կարող է շինել ամէն տեսակ զէնքեր, մասնաւորապէս Մարթինին(1) եւ ամենապատկանը, այնպէս որ եթէ Դաշնակցութիւնը տակաւին Կիլիկիա մարդ մտցուցած չէ, յիշեալ քաղաքը կարող է ընտիր կայան մը ըլլալ թէ անցման եւ թէ զէնքերու փոխադրութեան տեսակէտով: Բայց ասոնց ամէնուն համար կարեւորն այն է որ Դաշնակցութիւնը իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնէ հոն. կը հաւատամ թէ այդ քաղաքը մեզ խիստ օգտակար պիտի ըլլայ, միայն եթէ պէտք եղածին չափ հոգատար գտնւինք անոր մասին, որովհետեւ, ինչպէս ըսի, այնտեղ յառաջ բերած կոմիտէս ամէն վահանութեան արժանի է: Մեր ներկայացուցիչները ընտրւած են ամենաբարձր ս[կզ]բունքներու[?] անհատներէն: Արդէն ես Ամերիկայի Կեդր. կոմիտէի հասցէն տւած եմ իրենց եւ մօտ օրերէն պիտի գրեն ձեզի նոյնպէս ծածկագիր մելանով: Դուք կը պատասխանէք իրենց նոյն եղանակով եւ կը ջանաք ամէն ուղղութեամբ քաջալերել զիրենք:

Նոյն տեղի կոմիտէին ամենագործօն անդամն է հերոս մը՝ Տէր Եշիշէ քահանայ. կարող էք զինքը հարցնել ու ճանչնալ հոգ գտնող համաքաղաքացիներէն: Անիկա երկար ատեն վարժապետութիւն ըրած է Կէրկէրի(2) մէջ եւ հիանալի հրացանաձիգ մ'ըլլալով մէկտեղ, այժմ իր տրամադրութեան տակ ունի վերել յիշւած տեղին մէջ մօտ 300-ի չափ շախմատներ(3). անիկա արդէն քանի մը օրէն պիտի անցնէր նոյն տեղը, հոն եւս պէտք եղածը տնօրինելու համար: Այդտեղ կարող պիտի ըլլանք ուրիշ ծրագիր մը եւս գործադրել բայց անոր համար առայժմ ապագային կամ երկրորդ պատեհութեան մը կը թողում խօսիլ: Արտասահմանի մեր կոմիտէները պէտք է ջանան այդ կտրիճ բայց աղքատ ժողովուրդին ամբողջ գրամ դնել. գիտէ՞ք թէ ինչ սոսկալի կերպով վնասուած դուրս եկած է այդ քաղաքը. ամէն բան վառած, թալլւած, այժմ իր օրական հացն իսկ դժուար ձեռք կը ձգէ: Ես պիտի խնդրէի որ Մալաթիացի Աշոտին իսկական անունն ու հասցէն ցոյց տայիր ինծի, անիկա խիստ օգտակար պիտի ըլլայ մեզ: Անցնինք ուրիշ խնդրի:

Քեզի աւետեմ թէ այժմ Սամուէլը – Խանասորի Սամուէլը – հոս է եւ մեր տրամագրութեան տակ. Քեռին(4) իր մասին յանձնարարական տւած է եւ լաւ խօսած իր վրայ: Իրաւ որ հիանալի գործող մըն է ինքը: Բայց եղբայր, ինչպէս գրեմ քեզի. անիկա թաքստոցի մէջ է, արդէն դուրս չի կրնար ելլել այդ ծախքերը հոգալու համար. գիտես թէ մէկ դրամ չկայ եւ տուղ ալ չի գտնուի. ստիպւած եմ իմ անձնական քսակէս հոգալ զինքը եւ արդէն գիտես թէ իմ առածս դրամը հազիւ ինծի կը բաւէ. բայց վատութիւն պիտի ըլլար այնքան անձնուէր զինուոր մը անօթի թողուլ եւ իր դէմ գոցել ծանր դուռը:

Դատը վատ վախճան ունեցաւ, այինքն մեր հակառակորդները շահեցան. մօտ օրերէն նորէն պիտի սկսինք նոր դատի մը. ա՛խ եթէ անգամ մը ասկէ ազատէինք. շատ կը վախճամ թէ անպիտան ընկերները էն վերջը վատութեան պիտի դիմեն. վերջին աստիճանի տազնապալից եմ: Այս բոլորը ծանրացած են միայն ու միայն իմ վրայ, ազնիւ Սալման(5), եւ պէտք է որ տոկամ, այնպէս չէ՛: Բայց վերջապէս ես ալ իմ արիութիւնս կորսնցնել կը սկսիմ:

Հաշուետութեան մասին կը խօսիս, շատ լաւ, բայց գիտես թէ ինքնին ինչքան դժուար հարց է որ մէջտեղ կը դնես. անհուն լաբիւրինթոս մըն է այդ. սակայն, ամէն պարագայի տակ պիտի ջանամ բաց ճակատով դուրս գալ, քանի որ միշտ բաց ճակատով անցած եմ այդ ամէնուն մէջէն. ....(6) Ալեքսանդրիա հասած է:

Հաշիւները այս շաբաթով պիտի չի կրնանք ղրկել, որովհետեւ նոյն դատով ծանրապէս զբաղւած ենք. որոշած ենք սպառնական ցոյց մը ընել նոյնին տէրերուն. գրեթէ վերջին ակնկալութիւնն է այս:

(Մնացածը անձնական)

- 1.- Մարթին, բուն անունով Մուսատեան Մարտիրոս:
- 2.- Կէրկէր – Մալաթիա գաւառի մէկ գիւղէն:
- 3.- Չախմախլի – կայծքառով բանող հրացան:
- 4.- Խօսքը հաւանաբար Տերսիմի ֆեոիին մասին է, բուն անունով Ռուբէն Շիշմանեան (1865-1903):
- 5.- Սալման – ծածկանուն Յարութիւն Մանկունիի, որ, իբրեւ կուս. գործիչ Ամերիկայէն ուղարկուած էր Խարբերդ:
- 6.- Անընթեռնելի անձնանուն:

Փաստ. 820-2

Ներկայ գրութեան առաջին բաժինը յայտնաբար կեղծ նամակ է՝ ֆո-դարկելու համար «Սիրելի ընկերներ»ով սկսող բուն նամակը, որ զբր-ւած պէտք է ըլլայ գաղտնի թանափով եւ ուղարկուած ժընե՝ «Դրօշակ»ի խմբագրութեան:

[1]901 Փետ[րուար] 22/7  
Խարբերդ

Ազնիւ եղբայրակից

Կը պատասխանեմ ձեր փետ. 9 պատուականին:

Սրտի անկեղծ վշտով մը արդէն մայրաքաղաքի թերթերէն իմացած էի համալսարանի ողբալի խմբագիրին երիտասարդ մահը, ու նոյնքան ցա-ւակցութեամբ կ'իմանամ նաեւ նոյն թերթին ալ դադարումը ձեր միջոցով: Ինչ որ ալ ըլլայ, ո՛րէն հրատարակութեան դադարում, որը իր համար յա-տուկ նպատակ մը ունեցած է օգտակարութեան բաժինով, ինծի համար կսկիծ մըն է: Համալսարան կրնար լաւ թերթ մ'ըլլալ, քիչ մ'աւելի խնամ-ւած պայմաններով, ու ասոր համար սրտանց կը բաղձամ իր երեւման:

Կը յուսամ ստացած է՞ գրութիւնս եւ օգտուած իր պարունակութենէն: Նոյնը կը կրկնէի ներկայիս համար, խնդրելով որ հանէիք փոստով պա-տասխանել:

Եղբայրական սիրով՝  
Ջերդ ԱՍԼԱՆ

\* \* \*

Սիրելի ընկերներ,

Արդէն մինչեւ հիմա ստացած ըլլալու էք նախորդ նամակս, ուր ձեզի գրած էի կարգ մը խնդիրներու մասին:

Այս շաբթու Ամերիկայէն խիստ ուրախառիթ գրութիւններ ստա-ցանք՝ որոնք մեր տեղական գործերու մասին այնքան մխիթարա-կան են: Կը յուսանք թէ դուք եւս, յատկապէս խորհրդակցելով նոյն

տեղի Կ. կոմիտէին հետ, պիտի ուզէք ձեր աջակցութիւնը մասնաւոր կերպով նուիրել մեզի:

Կ'իմանանք նոյնպէս թէ Փարիզի մէջ արդէն սկսած է հրատարակել Պ. Պ. Փիէռ-Քիյարի, Ժօրէսի եւ ուրիշ ականաւոր գրողներու խմբագրութեամբ ֆրանսերէն թերթ մը, որը իրեն նպատակ դրած է սատարել հայկական հարցին(1): Այս թերթը իր առանձին կարեւորութիւնը կրնար ունենալ այս տեղին համար, ուստի կարելի՞ չէր ամէն անգամ օրինակ մըն ալ մեզի ղրկելու հնարը գտնէիք: Մենք միջոց մը կը ներկայացնենք ձեզի ահա: Այս տեղի ամերիկեան դեսպանէն խնդրեցինք որ իր հասցէն տայ մեզի՝ կարգ մը ֆրանսերէն հանդէսներ բերել տալու. ինքը հաճութեամբ տուաւ: Արդ, եթէ ֆրանսերէն թերթ մը – հանդէս – ղրկուի մեզի եւ անոր ծոցը ներփակւի նոյն թերթը՝ կարելի չէ՞ ապահովութեամբ ստանալ: Կ'ամ, միջոցը կ'այ այս եղանակը հոտ դիւրութեամբ կարգադրելու. եթէ այո՛, այն ատեն իմաց տուէք մեզի, որ ղրկենք ձեզի յիշեալ հասցէն:

Շատոնց է որ Դրօշակի երես տեսած շունինք, ձեզի ծանօթ պատճառով, եթէ մեր վերոյիշեալ միջոցը յարմար դատէք, գուցէ այս մասին ալ յաջողութիւնը ձեռք բերենք:

Կը սպասենք ձեր գրութիւններուն:

Եղբայրական բարեւներով  
ԱԽԱՐ-ԱԻԵՐ(2)

1.- Հարցը կը վերաբերի Փրօ-Արմենիա-ին, որուն առաջին թիւը սկսած էր լոյս տեսնել 1900 թ. Հոկտեմբերին:

2.- Աւար-Աւերը կուսակցական ծածկանունն էր Խարբերդի շրջանին:

Փաստ. 820-4ա

Հ.Յ.Դ. Կեդր. դիւան

Պատճէն(1)

[1]901 Մարտ 8/21  
Լեռնավայրի Կ. Կոմիտէին(2),

Սիրելի ընկերներ,

Կը պատասխանեմք Ձեր փետր. 12 թուակիրին գործածելով Ձեր իսկ ծածկագրին բանալին, աւելի դիւրութիւն տալու համար Ձեզի:

Շատ դառնացած սրտով կը բողոքէք Ամեր.Կ. Կոմիտէի այդ որոշման մասին, որով անոնք կը տնօրինէին ասկէ ետք իրենց աջակցութեան կեդրոնավայր ընտրել Աւար-Աւերը(3): Մենք այս խնդրոյ նկատմամբ ոեւէ բան չունինք գրելու, քանի որ նոյն այդ տնօրինութիւնն ու պատասխանատուութիւնը մեզի չ'երթար: Բայց, որովհետեւ գործը հաւասարապէս մեզի ամէնուս կը պատկանի մենք ձեր ցաւակցութեանց բաժնեկից կ'ըլլանք, միեւնոյն ատեն յարելով թէ Ամեր. Կ. Կոմիտէն հարկաւ իր այդ որոշումը լուրջ հայեցակէտով մ'ըրած ըլլալու է, կամ այդ մասին իրեն ձեռնտու պատճառներ ու թելադրութիւններ ունեցած է: Ինչ որ է, այս կէտը թողլով ձեր ու իրենց միջեւ տեղի ունենալիք իրաւախոհութեան, մենք կը դառնանք մեր գործին շուրջը:

Իրաւամբ կը գանգատիք թէ ինչու կանխաւ ձեզի չիմացուցինք մեր մշակած ծրագիրը եւ ինչո՞ւ ձեզի հետ չը խորհրդակցեցանք: Շիտակն ըսելով, սիրելի ընկերներ, այդպէս վարուելու, բաւական զօրաւոր պատճառներ ունէինք. նախ որ կը կարծէինք մօտաւորապէս երկու տարիէ ի վեր ձեզի հետ կը թղթակցինք ու ձեզմէ այսքան ժամանակամիջոցի մէջ ոեւէ գործնական խնդրոյ մասին կարելոր հրահանգ մը չառինք. շրջաբերական մ'ուղղեցինք ձեզի ու նորէն անպատասխան մնացինք. այնպէս որ ամբողջ երկու տարուայ անգին միջոց մը լոկ ապարդիւն թղթակցութիւններով անցաւ, ահա ինչն էր

որ մեզ ստիպեց Ամեր.ի դիմելու: Ընդհանուր գործի մասին մենք մեր յատուկ մտածումներն ու տեսութիւններն ունինք, որոնք անոր համար օգտակար են, կը կարծենք, երբ ուղղակի կը բղխին երկրի ներքին ու ընդհանուր ուսումնասիրութենէն: Հաւատացէք, սիրելի ընկերներ արտասահմանի մեր կոմիտէները շատ օտարոտի անտարբերութեամբ մը կ'անցնին ներքին գաւառներու վերաբերմամբ. օրինակի համար նախորդ Ընդհ. պատգ. ժողովէն հրաւէր չընդունեցանք, հիմա ալ կը լսենք թէ նորէն պիտի կայանայ, եւ սակայն այս մասին ոեւէ պաշտօնական աղբիւրէ մը լուր առած չենք. Աւար-Աւերի պէս զօրաւոր կեդրոնի մը մարդիկ կը խորհինք թէ նոյն այդ ժողովին մէջ կրնան օգտակար ըլլալ կամ օգտակար բան մը տանել: Ուստի կը խնդրենք Ձեզմէ որ այս մասին կարեւոր տեղերը, արեւմտ. կամ արեւել. բիրտին իմացնէք ու շեշտէք Աւար-Աւերի ներկայ գտնուելու պարագան. միայն խիստ յարմար պիտի ըլլար որ այդ ժողովը յետաձգուէր Օգոստոսին, որովհետեւ մենք մեր շրջանական ժողովը պիտի կազմենք մինչեւ Մայիս 1: Արդ, ձեր հրահանգին համաձայն մենք կը գրենք 2.3.14.28.2.25.(4) ու կը հրաւիրենք զիրենք. դուք եւս ձեր հրահանգները աճապարեցէք տալ հոն: Այս ժողովը մեծապէս օգտակար պիտի ըլլայ մեզի. որովհետեւ հոն մեր երկուքին ալ ծրագիրները լուրջ քննադատութեան մը տակ կը ձգենք եւ յարմարագոյնը որոշելէ ետք, կը ջանանք եւ մեզի նպատակ կը դնենք անոր գործադրութեան աշխատիլ մեր բոլոր տրամադրելի ուժերովը:

Իսկ 1.2.12.2.28.7.2.ի(5) կազմակերպութեան գալով, կը յիշէք թէ անկէ առաջ դուք մեզի անգամ մը հրահանգ տուած էիք յաջողցնել այդ: Ասլանը յատկապէս մեկնեցաւ հոն այս տարի եւ կարողացան նոյն տեղի ամենակարեւոր անձնաւորութիւններէն շրջան մը կազմել, եւ գիտէք թէ այդ տեղի ժողովուրդը գաւառներու ամէնէն ընտիրը, քաջարին եւ վստահելին է. հետեւաբար այս կէտի վրայ լիակատար վստահութիւն կրնաք ունենալ: Բայց բոլոր այս ոյժերը կենդանի գործունէութեան եւ շարժման մէջ դնելու համար դրամ, լոկ դրամ է հարկաւոր, ու ան ալ երկրին մէջ կարելի չէ ձեռք բերել, դրամ ու գէնք. այս միայն կ'ուզէ երկրի մարդը եւ երբեք դատարկ խօսքերուն ականջ չի տանիր եւ շատ իրաւամբ:

Շնորհակալութեամբ եւ սիրով կ'ընդունինք ձեր հրաւէրը Pro Armenia-ի մասին մեր աշխատակցութեան հրաւէրը, սակայն որոշակի

չէք յայտնած թէ հայերէն պէտք էր գրէինք յօդուածները թէ ֆրանսերէն. օրը օրին գրելու համար հայերէնը դիւրութիւն մըն էր մեզի, եթէ խմբագրութեան դժուարութիւն մը չէր ըլլար, ուստի հաճեցէք այս նկատմամբ կարեւորը շուտով իմացնել:

Բաւական ատենէ ի վեր թերթէ զրկուած ենք ու այս պարագան շատ խորհիլ կու տայ մեզ. մեր հասցէները վտանգուած են ու նոր մըն ալ գտնելը անյքան դժուար: Դուք կերպ մը չէիք գիտեր կամ Ծովափը(6) դիւրութիւն մը չէր կարող հայթայթել ոեւէ միջոցով մը ղրկելու, հոգ չէ թէ փոստով չըլլայ:

Սպասելով ձեր գրութիւններուն կը մնանք ընկերական սիրով եւ անձնուիրութեամբ:

Ի դիմաց  
Աւար-Աւերի  
ԱՍԼԱՆ

- 1.- Այլ ձեռագրով գրուած ու «պատնէն» մակագրուած, ինչ որ կը նշանակէ թէ բնագիրը գրուած է գաղտնի մելանով:
- 2.- Լեոնավայր – ծածկանուն Կիլիկիոյ եւ շրջակայի:
- 3.- Աւար-Աւեր – ծածկանուն հարբերդի Կ. կոմիտէութեան:
- 4.- Այնթապ:
- 5.- Մալաթիա:
- 6.- Ծովափ – ծածկանուն Տրապիզոն քաղաքի:

Ստորև տրուած 820-5 համարը կրող փաստաթուղթը կը գտնուի ծայրայեղօրէն վատթար վիճակի մէջ, հաւանաբար գաղտնի մեղանով գրուած ըլլալուն հետեւանով:

Ամերիկայի Հ.Յ.Դ. Կեդր. կոմիտէին ուղղուած այս նամակին առաջին էջին վրայ, ինչպէս գաղտնի թանաքով գրուած համարեաբոլոր նամակներուն, կայ «Սիրելի եղբայր»ով սկսող կեղծ գրութիւն մը, խժբծուած ստորագրութեամբ: Այս վերջինը կարելի է կարդալ մօտատրապէս իբրեւ հարբերդի ծածկանունը հանդիսացող՝ Աւար-Աւեր:

Քուն նամակը գրուած է, ինչպէս յիշուեցաւ, գաղտնի թանաքով, գոր վերծանելու համար հարկ եղաւ համբերատար եւ տոնաշան աշխատանքի: Ի վերջոյ կը ներկայացնենք զայն բաւական ընթերնելի տեսով: Անընթերնելի բառերը նշուած են թիւ 1 ծանօթագրութեամբ եւ բազմակէտով:

[1]901 Մարտ 8/23  
հարբերդ

Սիրելի եղբայր,

Ստացած ենք ձեր (5) հինգ ոսկիի փոխանակագիրը եւ իր ատենին գանձած ու յանձնած Պ. Սամուէլ Կարապետեանի, ինչպէս որ յանձնարարած էիք: Ու թոյլ տուէք որ, իր կողմէն, յայտնենք այն անհուն շնորհակալութիւնը եւ երախտապարտութիւնը՝ որ պարտք կը դնէ իր վրայ ձեր ազնոութիւնը:

Մենք պարագաներով ու ազգականներով հանգիստ ենք ու լաւ վիճակի մէջ, երբ մանաւանդ եղանակն ալ աղէկ կ'երթայ, միայն թէ քիչ մը հարկերու մասին կը նեղուինք, որովհետեւ բարեխնամ կառավարութիւնը իր յետնեալ տուրքերը կը գանձէ այս պահուս. շիտակը, մեր պարտքն է ու պէտք է որ տանք, սակայն չունենորութիւնը այնքան կրակէ շապիկ

մըն է որ Աստուած թշնամիիս չի հագցնէ. աղփատ եմք, մանաւանդ այս գարնան սկիզբը դրամի ալ այնքան կարօտութիւն ունինք:

Եթէ երբեք պզտիկ օգնութիւն մ'ըրած ըլլաք, խիստ երջանիկ պիտի ընէք մեզ. մէկ կողմէն պարտքերնիս կը վճարենք ու միւս կողմէն ալ ցորեն կ'առնենք որ անհաւատալի կերպով աժանագին է:

Տունով տեղով հանգիստ եմք. դուռ դրացի կը բարեւեն ձեզ ու կարօտով իրենց սէրը կը յայտնեն:

Ձեր եղբայր՝  
[Խժբժուած ստորագրութիւն]

\* \* \*

Ամերիկայի Կ. Կոմիտէին,

Սիրելի ընկերներ

Այս անգամ կը գրենք ձեզ խիստ կարեւոր խնդիրներու մասին եւ հետեւաբար կը գործածենք իբրեւ ծածկագիր Մայր Արաքսի ափերով .....(1) համարը:

2.33.9.5.1.2.14.17.4.7.2.-ի (Աղեքսանդրիա)-ի Կոմիտէն մեզ սեպտ. 12 թուակիր .....(1) մեզի, որ գանգատ կը յայտնէր ձեր այն որոշումի մասին, որով կ'ուզէիք ասկէ ետք ձեզի իբր գործունէութեան վայր ընտրել Աւար-Աւերը(2), ու յետոյ կը ստիպէք մեզ որ մենք մեր ծրագիրը իրենց յայտնել ուզէինք: Այդ նամակին մենք այս փոստով իսկ պատասխանեցինք թէ արդէն մինչեւ Մայիս «Շըր-ջանական ժողով» մը պիտի գումարենք եւ հետեւաբար ասկէ ետք դուք կը .....(2), որովհետեւ իրենց կանխաւ գրած էինք այդ Շըր-ջանական ժողովի մասին: Նոյն այդ նամակին մէջ Պ. Սեպուհ(3) կը խնդրէր մեզմէ որ մեր շրջանական ժողովին մէջ մենք ընդունինք նաեւ 2.3.14.28.2.25ի (Այնթապի) իրենց ներկայացուցիչը. մենք սիրով յանձն առինք այդ եւ այս փոստով պիտի գրենք այս վերջին տեղը ցոյց տրուած հասցէն Մայիսի ժողովին ու իմաց տանք ժողովին .....(1) պատասխանը: Բայց ժողովը ..... մեզ որ 9.4.27.2.1).7.26.-էն (երիզացիներ)-էն, 1.2.12.2.28.7.2.18-ներէն [մալաթիացի]-ներէն եւ վերը յիշուած քաղաքէն: Կը խորհինք թէ այս ժողովը խիստ

արդիւնաւոր պիտի ըլլայ վաղուան մեր գործունէութեան համար: Այս մասին յետոյ կարեւորները եւ ժողովին արդիւնքը անպատճառ կը տեղեկագրենք ձեզ:

Ասկէ զատ ամենակարեւոր հարցի մը մասին ալ կը դիմենք ահա ձեզի:

9.4.7.27.2.- (Երիզա)-էն կը գրեն մեզի որ մօտերս տեղի պիտի ունենայ Դաշնակցութեան ընդհանուր պատգ. ժողովը:

Մենք մինչեւ այսօր այդ մասին ռեւէ պաշտօնական տեղեկութիւն չունինք, ուստի կը խնդրենք ձեզի որ հարկ եղած տեղը գրէք ու պահանջէք որ մենք եւս կարող ըլլանք մեր պատգամաւորները ղրկելու հոն: Այս կէտը խիստ կարեւոր է որովհետեւ ներքին կարգ մը գաւառներու մասին մենք խորին ծանօթութիւն եւ յատուկ ծրագիրներ ունինք որոնք պէտք է առաջարկենք, ու կրնաք խորհիլ թէ անոնք օգտակարութենէ զուրկ չեն: Ուստի, մեր կողմէն դիմեցէք հարկ եղած տեղը եւ խնդրեցէք որ ըստ սովորութեան կարելի ճանապարհաձախսը տրամադրեն մեր պատգամաւորին, որպէսզի անիկա կարող ըլլայ ժամանակին մեկնիլ. մանաւանդ խիստ յարմար պիտի ըլլայ եթէ ժողովը Օգոստոսին տեղի ունենայ. մինչեւ այդ ատեն մեր շրջանակ[ան] ժողովն ալ եղած աւարտած ըլլալով՝ օգտակար ու շահեկան առաջարկներ ունեցած կ'ըլլանք ներկայացնելու:

Անցած փոստով 5 ոսկին ստացած ու Սամուէլին յանձնած ենք: Սակայն Սամուէլը կ'ուզէ ատիկա զէնքի մը յատկացնել: Ընդունեցէք իր, ինչպէս նաեւ մեր խորին շնորհակալութիւնը:

Զենք գիտեր թէ կարեւոր գործիչի մը համար մինչեւ հիմա իրօք կարգադրութիւն մ'ընել(4). այս պարագան շատ հարկեցուցիչ է. ուստի թախանձանքով կը խնդրենք որ առանց վայրկեան մ'իսկ կորսնցնելու հաճիք փութացնել, միայն թէ ձեր ընտրութիւնը կարող ոյժի մը վրայ պէտք է ընէք. երկրորդական կամ աննպատակաւարմար գործիչ մը փոխանակ օգտակար դառնալու, աւելի վնասակար կ'ըլլայ մեզի ու մեր գործին, մեր միջավայրին մէջ փորձ մտաւորապէս բարձր անձնաւորութիւն մը հարկաւոր է. ուստի դիւրութեան համար կը ներկայացնենք ձեզ հետեւեալ անունը, որու մասին բաւական լաւ գաղափար մը կազմած ենք որն է 26.2.4.6.9.33. 1.9.12.7.5. 13.4.7.13.10.4.9.2.14.18. (Բարսեղ Մելիք Գրիգորեանց) (5). խնդիր չէ անիկա կամ ուրիշ մը, միայն մեր պահանջած կարողութիւններովը օժտուած ըլլայ. երբեք չէինք ուզեր դպրոցէն նորուս[?] ելած ան-

փորձ եւ խակ դպրոցական մը, այլ այն որ արդէն գործած ու տարիներ ալ գործին մէջ փորձառութիւն ունեցած է:

Բայց մանաւանդ կը կրկնենք Հնդհ. Ժողովի մասին եւ կը սպասենք որ բաղձալի պատասխան մը հաղորդել չէք զլանար[?], իսկ մեր յարաբերութեանց .....(1) գործնական հաղորդութեան մասին ալ ապահով ենք թէ կը ջանաք արդէն մեր նախորդ նամակին համաձայն՝ գոհացում մը տալ:

Հնկերական սիրով ու անձնուիրութեամբ

Ձերդ՝

Ի դիմաց Աւար-Աւերի

ԱՍԼԱՆ

1.- Անընթեռնելի բառ:

2.- Աւար-Աւեր – ծածկանուն հարբերդի:

3.- Սեպուն – ծածկանուն Պանֆ Օթթումանի գրաման դեկավարներէն եւ այդ տարիներուն Եգիպտոսի Աղեֆսանդրիա ֆաղաֆը գտնուող Հայկ Թիրեաֆեանի, ծանօթ նաեւ Հրաչ կեղծանունով:

4.- Պէտք է ըլլայ՝ կարգադրութիւն մը ըրած է:

5.- Ղարա Մելիք (1865-1915) ծածկանունով ծանօթ դաշնակցական գործիչ, որ այդ օրերուն Ամերիկա կը գտնուէր:

Փաստ. 820-8

Հ.Յ.Դ. Կեղր. դիւան

Պատճէն

1901 Մայիս 17/30

Խարբերդ

Սիրելի ընկերներ,

Ձեր վերջին նամակէն զատ՝ որով պատգ. ժողովի գումարման մասին միայն տեղեկութիւն կու տայիք՝ այլեւս տող մ'անգամ ստացած չենք, ինչ որ տխրալի պարագայ մըն է մեզի համար: Այս անգամ կը խօսինք ձեզի ամփոփ կերպով մեր շրջանական ժողովի նկատմամբ, որ տեղի ունեցաւ այս ամսուն 6-ին եւ շարունակուեցաւ աւելի քան ութ օր: Մենք կը գործածենք ամէնէն ծանօթ թուագիրը՝ որը եթէ մոռցած էք, կրնաք իմանալ Սալմանէն(1), բանալին ինքը լաւ գիտէ:

Ձի մոռնանք ըսելու թէ պ. Սեպուհ(2) իր ատենին մեզի գրած ու բողոքած էր ձեր որոշումներու մասին եւ առաջարկած էր գոնէ համախորհուրդ գործէինք իրենց հետ, ինչ որ ցանկալի պարագայ մըն էր մեզ համար եւ մերժելու պատճառ մը չունէինք զայն: Յետոյ, բաղձանք յայտնած էր նաեւ որ մեր շրջանական ժողովին ընդունինք նաեւ 11.13.22.26.11.32.(Այնթապ)-ի պատգամաւորը. գեղեցիկ պարագայ մը եղաւ եւ մենք հրաւիրեցինք զայն: Ըսենք թէ որո՞նք մասնակցեցան այդ ժողովին: Մասնակցողներն էին 11.13.22.26.11.32.(Այնթապ)-ի, 17.11.32.20.22.-23.11.4.11.22.20.11.4.(Շապին Գարահիսար)-ի (Բերդ), 6.4.24.22.21.11.(Երզնկա)-ի (Արծիւ), 15.11.18.11.26.-----11.-ի (Մալաթիա) (Եփրատ) կօմիտէները. իւրաքանչիւրը ղրկած էր----- (3), միայն, վերջին կօմիտէն----- (3) մեզի ----- (3) ընկերներէն մէկ ներկայացուց ----- (3) Արծիւը մէջտեղ դրաւ Քարա[ժայռ] (4) ----- (3) մեծամասնութեամբ մերժուեցաւ, որովհետեւ խիստ ----- (3) վտանգաւոր եւ միեւնոյն ատեն բազմաթիւս գտանք: ----- (3)

Դրուեցաւ Լեռնավայրի(5) խնդիրը՝ որը նոյնպէս մեծամասնու-

Թեամբ ընդունուեցաւ: Միայն, սիրելի՛ ընկերներ, Լեոնավայրի պատգամաւորէն տեղեկացանք թէ այդ կենսական գործը խիստ դանդաղ ընթացքով մը կը յառաջանայ եւ երեք տարուան մէջ ձեռք բերուած արդիւնքը այնքան չնչին է: Այս մասին ուղղակի պատասխանատու չենք կրնար ընդունիլ պատասխանատու մարմինը իրեն, բայց իր կեցած տեղին ու վիճակին համար ալ կը գանգատինք, որովհետեւ Եգիպտոս նստելով կամ արտասահմանի մէկ անկիւնէն կարելի չէ երկրի այնքան մէկ կարեւոր գործը վարել: Ուստի Շրջանական Ժողովը որոշեց դիւրութիւններ տալ իրեն եւ հետեւաբար որոշեց, որ այդ պատասխանատու մարմնի մէկ կարեւոր անդամը, կամ որ նոյնն է Պատասխանատու մարմինն ամբողջովին Աւար-Աւեր(6) փոխադրուի, ուր գործելու ամէն ազատութիւն պիտի ունենայ:

Ժողովի որոշումներէն օրինակ մըն ալ Սեպուհի պիտի ղրկուի, ինչպէս մէկ-մէկ օրինակ ալ Արեւմտեան եւ Արեւելեան բիւրոներուն:

Հնկերական պարտք կը դնենք որ դուք եւս ձեր բոլոր ուժովը աշակցիք մեր առաջարկած հարցը գործնական հիմի մը վրայ կը հաստատէ(7): Աւար-Աւերը ամէն դիւրութիւն կ'ընծայէ մօտէն հսկելու գործին կանխապատրաստութեան եւ Աւար-Աւերի ոեւէ գործիչ կարող է նոյնիսկ ----- (3) աչքով տեսնել եւ վերադառնալ: Յետոյ, զէնքերու ----- (3) փոխադրութեան ապահով միջոցներ կրնանք ----- (3) ուրիշ ----- (3), որով անկէ անցած ----- (3) հակառակ ----- (3) Լեոնավայրի ----- (3) ուղղութիւն ----- (3) չեն պատճառեր, մինչդեռ ուղղակի Լեոնավայրի կողմերը բռնուող զէնքերը կարող են գործը ժամանակէն առաջ վերջ տալ:

Պ. Սեպուհի իր վերջին նամակով արդէն տեղեկութիւններ կ'ուզէր Եփրատի(8) վրայ, որպէսզի հոն մտցնել ուզէր ընկեր մը. մենք տուինք այդ տեղեկութիւնները անմիջապէս, բայց երկրորդական գործիչ մը չէ որ կ'ուզենք, անիկա աւելորդ բեռ մը պիտի ըլլար. մեր պահանջը, եթէ ուղիղը կ'ուզէք, ուղղակի ինքը Սեպուհին է: Եփրատի գործերը այնքան բարեկաշտող են եւ այնքան լաւ կազմկապերութեան մը մէջ կը գտնուին՝ որ այս վերջին երկու-երեք ամսուան միջոցին ուղղակի մեր ընկերներու թելադրութեամբ 400 զէնք գնած է հասարակութիւնը անհատապէս. հաւատացէք, հիանալի ժողովուրդ մըն է. ամէն սքանչացման եւ աշակցութեան արժանի, կրնանք ըսել հայուն էն ազնիւ մասն է, որ ամէն իրաւունք ունի ապրելու. իրենց

*հացէն կը կտրեն ու զէնքի կու տան:*

*Անձկութեամբ կը սպասենք որ երկար գրէք. կը զարմանանք ձեր այսքան յապաղման նկատմամբ: Մենք շատ կորով ունինք, եթէ դուք ուզէք սատարել ու աջակցիլ մեզի:*

*Հնկերական սիրով եւ համակրութեամբ,  
Ի դիմաց Աւար-Աւերի  
ԱՍԼԱՆ*

1.- Սալման – ծածկանուն Յարութին Մանկունիի, որ քանի մը տարի առաջ իբրեւ գործիչ եկած էր Ամերիկայէն, ուր այժմ վերադարձած է: Յիշուած «թուագիր» բառը, նամակին մէջ գործածուած ծածկագրի մասին է: Կողմին, փակագիծերու մէջ տրուած է բուն անունը:

2.- Սեպուն – ծածկանուն Հայկ Թիրեաբեանի, որ այդ օրերուն կը գտնուէր Եգիպտոս:

3.- Բաց ձգուած մէկ բառ:

4.- Պիտի ըլլայ Քարաժայռ, որ ծածկանունն էր Տերսիմի:

5.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ եւ շրջակայքի, որոնք կը ղեկավարուէին աւելի ազատ պայմաններու մէջ գտնուող Եգիպտոսի ընկերներէն:

6.- Աւար-Աւեր – ծածկանուն հարբերդի:

7.- Պէտք է ըլլայ՝ հաստատելու:

8.- Եփրատ – ծածկանուններէն մէկը Մալաթիա քաղաքի:

Փաստ. 820-7

[1]901 Մայիս 17/30  
Խարբերդ

Ազնիւ եղբայրակից Պ. Սեպուհ(1)

Ձեր վերջին թիւ նամակով կը յանձնարարէիք մեզի ուսեալ վարժուհի մը որ կարող պիտի ըլլար մեր վարժարաններուն մէջ դասախօսել ու օգտակար ըլլալ՝ եթէ գտնուէր հոս յարմար վարժարան մ'իր համար: Ինչպէս գրէի որ հասկնայիք մեր աղջկանց վարժարաններուն ներքին կացութեան մասին. աւա՛ղ շատ ողբալի վիճակի մը մէջ է որ կ'ապրին անոնք. գաւառացիին հազիւ կը հասկնայ ուսեալ ու զարգացած աղջկան դերը ընտանիքին մէջ ու միեւնոյն ատեն հացին դժուարութիւնն ալ ուրիշ արգելիչ պատճառ որ գէթ իր բնագրական հակումներուն միջոց տալուն. որովհետեւ հայը՝ եթէ ոչ գիտակցօրէն, գէթ բնագրօրէն կը զգայ դաստիարակութեան կարեւորութիւնը եւ ես երբեք յոռետես չեմ իր մասին: Միայն, ինչպէս ըսի, նիւթական ձեռնտուութիւնները սատարեն իրեն: Այս պատճառով որոշ բան մը չի պիտի կրնամ գրել առայժմ ձեզի. միայն սաշափ կըրնամ աւելցնել թէ՛ երբ նման վարժուհի մը հոս, տեղին վրայ գայ ու երեւնայ՝ գուցէ զինքը տեղաւորելու շատ դժուարութիւն չի քաշենք: Կը յուսամ թէ արդէն դարձած կ'ըլլաք եւ այս մասին կը փութաք պատասխանել, որով մենք ալ հոս կարեւորը ձեռք կ'առնենք:

Ձերդ  
Ա. ԱՍԼԱՆ

Յ. Գ.- Եթէ պ. Անտոնը եկած չէ, կը խնդրենք որ ներկայ գրութիւնը իրեն հասցնելու բարեհաճութիւնն ունենաք, որչափ կարելի է փութով:

1.- Սեպուհ – ծածկանուն Հայկ Թիւեաբեանի, որ այդ օրերուն կը գտնուէր Եգիպտոս, ուր եւ ուղղուած է այս նամակը:

Փաստ. 820-7ա

[1]901 Մայիս 17/30  
Խարբերդ

Ազնիւ եղբայրս(1),

Կը փութամ գրել թէ դեռ Շրջանական ժողովի պատգամաւորները չի ցրուած՝ ստացանք ձեր 25 Ապրիլ թուակիրը, ինչ որ գեղեցիկ զուգահիւսութիւն մ'եղաւ, մանաւանդ պարագաներու հիանալի համերաշխութիւնը հոն է որ՝ ձեր նամակին պարունակութիւնը կը համերաշխի Շրջանակ. ժողովի որոշումներուն հետ: Արդէն քանի մը շաբաթէն պիտի ստանաք մեր պաշտօնական ատենագրութեան մէկ օրինակը՝ որով մանրամասնօրէն պիտի տեղեկանաք մեր որոշումներուն. եթէ այս անգամ չենք զրկեր զայն, պատճառն այն է որ զգուշութեան համար Ծովափի(2) միջոցով զրկել որոշեցինք: Պաշտօնական արձանագրութեան մէջ դիտմամբ քիչ մը ծանր լեզու գործածած ենք Լեռնավայրի(3) գործերու մասին, որպէսզի բիւրոնները ստիպուին աւելի արտորալ եւ ուշադիր ըլլալ ձեր մասին: Կը յուսանք կը հասկնաք մեր նպատակը:

Բայց, այժմէն կը փութանք ամփոփ կերպով մը ըսել թէ ինչ որոշումներ տուած ենք ձեր եւ Լեռնավայրի նկատմամբ, որոնց գործունէութեան համար ապահով ենք թէ դուք ալ ամէն կարելին ի գործ պիտի դնէք: Ժողովը որ կը բաղկանար 9.4.27.14.21.(Նրզնկ)այի, 19.2.25.7.14.13.2.4.2.16.7.6.2.4.7. (Շապին Գարահիսարի), 2.3.14.28.2.25.7. (Այնթապի), 1.2.12.2.28. (Մալաթիա)ի եւ մեր կօմիտէի պատգամաւորներէ՝ միաձայնութեամբ ընդունեց Լեռնավայրի գործը եւ որոշեց աջակցիլ անոր իր բոլոր նիւթական եւ բարոյական կարելի միջոցներով: Միայն, աւելի լայն եւ ուժգին մղում տալու համար արդէն սկսուած գործին՝ որոշեց որ Լեռնավայրի պատասխանատու մարմինը եթէ ոչ ամբողջութիւնը, գէթ անոր կարեւոր մէկ ներկայացուցիչը, Աւար-Աւեր(4) գայ ու մնայ, որովհետեւ Աւար-Աւերէն աւելի դիւրութեամբ կարելի է վարել գործը, նոյն իսկ հարկ եղած ատեն կարելի է անձամբ երթալ տեսնել գործը եւ վերադառնալ, եւ հաւատացէք, սիրելի Հրաճ(5), այն ատեն գործը խիստ հաստատուն հիմերու վրայ կարելի է դնել. երկրէն դուրս նստելով դուք շատ աւելի ծախքերու կ'ենթարկուիք, յետոյ միշտ յարաբերութեանց համար դժուարութեանց կը բաղխիք, մինդեռ հոս այնպէս չպէտք է ըլլայ եւ այս .....(6)դէպի Լեռնավայրը եղած յարաբերութիւնները երբեք կասկած չեն արթնցը-

ներ: Աստուծոյմէ զատ դեռ հազար մեզի առաջնորդող պատճառներ ու տեսութիւններ ունինք, որոնք գրեւ հոս եւ մանրամասնել տեղը չէ: Ուրախ ենք որ դուք եւս որոշած էք եղեր ձեր ընկերներէն մին հոս մտցնել, մենք նոյնիսկ ձեզ պիտի առաջարկենք եւ եթէ դուք հաճութիւն տաք, մենք հոս ձեր մասին ամէն բան պատրաստած ենք արդէն, այսինքն այնքան լաւ պարագաներ ձեռք առած ենք որ դուք հոս երբեք կասկածելի չըլլալով մէկտեղ, Լեռնավայրն անգամ ազատօրէն պիտի երթեւեկէիք: Ուրեմն կը մնայ ձեզի միայն երկիր անցնիլ:

Գանք 1.2.12.2.28.7.2.7. (Մալաթիա)ի մասին ձեր ուզած տեղեկութիւններուն: Անիկա այնքան ընտիր կազմակերպութեան մը տակ կը գտնուի որ իր մէջ առնուած են ամէնէն կարող ու ազդեցիկ անձնաւորութիւնները, եւ ամէնէն .....(6) թարմ ոյժ կայ հոն որ կը կարծեմ թէ ամբողջ քաղաքին կարելի է վստահիլ, վերջերս հրահանգի մը վրայ այդ աղքատ ժողովուրդը 400 հասարակ հրացան գնեց, եթէ լաւ գործող եւ դրամ մտնէր հոն, կարելի է այդ լաւայի խմորով էն սքանչելի հնոցը բորբոքել:

Մենք մեր արձանագրութեանց օրինակները պիտի ցրուենք Արեւել, Արեւմտ, Բիւրօներուն, Ամերիկայի Կ. Կոմիտէին եւ օրինակ մըն ալ ձեզի: Կը սպասենք որ փութով պատասխանէք. մանաւանդ այդ պատասխանը մեր բաղձացած կերպով եղած ըլլայ: Աւար-Աւեր իր բոլոր տրամադրելի ոյժերը ձեզի պիտի տայ, վստահ եղէք:

Ձի մոռնաք ուրիշ խնդիր մըն ալ: Ճիհանկիւլեանը (7) եթէ դաշնակցական է եւ վստահելի, յանձնարարեցէք իրեն որ նամակ մը գրէր 19.2.25.7.14.13.2.4.2.16.7.6.2.4.7. (Շապին Գարահիսարի) հին հնչակեան ներկայացուցիչ Արամին – որուն մտերիմն է – որպէսզի միանայ մեր այնտեղի գործին, որովհետեւ անոնց միացումը խիստ կարեւոր է նոյնիսկ մեր վաղուան ձեռնարկներուն:

Համբուրելով զձեզ եղբայրական ամենատաք սիրով՝  
 Ձերդ  
 ԱՍԼԱՆ

1.- Ռ. Զարդաբեանի այս նամակը եգիպտոսի նամբով՝ ուղղուած է Ժընեւ՝ Հ.Յ.Դ. Արեւմտեան բիւրոյին::

2.- Մովսիս – ծածկանուն Տրապիզոնի:

3.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի շրջաններուն:

4.- Աւար-Աւեր – ծածկանուն Խարբերդի:

5.- Հրաչ – ծածկանուններէն մէկը նոյնիմֆն Հայկ Թիւրեաբեանի:

6.- Անընթեռնելի մէկ բառ:

7.- Ջհանգիւլեան կամ Ճանկիւլեան Յարութիւն՝ (1855-1915) հնչակեան ծանօթ գործիչ:

Փաստ. 820-10ա

Յիշեցնենք որ եթէ փաստաթուղթի վերեւ գրուած է «Պատնէն», կը նշանակէ որ գաղտնի թանաքով գրուած բնագրէն արտագրուած է: Այդպիսին է ներկայ, ինչպէս նաեւ «Պատնէն» վերտառութեամբ ներկայացող բոլոր գրութիւններու պարագան: Ասլան-Ջարդարեանին ուղղուած այս պատնէն-նամակը գրուած է այլ անձնատրութեան մը ձեռագրով:

Գրութիւնը ուղղուած է Վահանեանին, որ ծածկանունն էր Ամերիկայի գործիչներէն Յովհաննէս Իսութեանի:

Հ.Յ.Դ. Կեդր. գիւհան

Պատնէն

[1]901 Օգոս. 17/30

Խարբերդ

Մեծայարգ բարեկամս Պ. Վահանեան,

Ձեր նամակները շատ ուշացուցիք, չենք գիտեր թէ պատճառն ինչ է: Կը յուսանք թէ ասկէ առաջ մեր ղրկած բոլոր նամակներն ստացած էք, որոնց պատասխանին անհամբեր կը սպասենք:

Ներփակ նամակը կը խնդրենք որ անյապաղ ղրկէք Արեւմտ. Բ[իւրօ]ի, իմ մէկ ծանօթիս, որմէ երկար ատենէ ի վեր տեղեկութիւն առած չեմ, միայն, կրկին կ'աղաչէի որ անյապաղ ղրկէիք, աւելցնելով ձեր կողմէն ալ որ պատասխանը ուղղակի ձեր միջոցով ղրկուէր:

Պ. Միսաքի մասին անշուշտ կ'ուզէիք տեղեկութիւններ ունենալ: Գրեմ ձեզի թէ՛ անիկա ստիպուեցաւ իր ծննդավայրը մնալ, անցագիր մը ձեռք չի կրնալ անցնելուն համար, որովհետեւ դրամ չունէր ու ձեր ղրկած ալ անկանոն գալուն եւ իր ձեռքը չի հասնելուն համար: Տարի մը, կարծեմ, պիտի ստիպուած իր ծննդավայրը մնալ եւ ոեւէ գործով զբաղուելով, գէթ այսպէս կ'իմացնէր ինծի իւր վերջին

նամակովը: Ի՞նչ ընէ. ջերմուկներու ատենն անցաւ եւ ալ կարելի չէ որ իր հիւանդութիւնը վտանգէ ճամբորդելով: Մանաւանդ որ արդիւնք մըն ալ պիտի չունենայ իր ճամբորդութիւնը: Բայց, ձեզի կը հարցնեմ թէ, շիտա՞կ էր որ քանի մը ոսկիի համար այնպէս ո՛չ-բաղձալի կացութեան մ'ենթարկէր ինքզինք պ. Միսաք. ասիկա մեր գործերուն անկանոն ընթացքը չի՞ ցոյց տար: Ինչ որ է, մենք ի հարկէ աւելի առաջ չենք կրնար երթալ, քանի որ վստահ ենք թէ դուք եւս կարող էք հետեւութիւններուն վրայ լրջօրէն խորհրդածել:

Դեռ երկար պիտի գրէինք, եթէ գիտնայինք թէ վերադարձած էք Աղեքսանդրիա, ուստի կը սպասենք որ ձեր վերադարձը փութով իմացնէք մեզի:

Եթէ պ. Միսաքի ոեւէ գրելիքներ կամ յանձնարարութիւններ ունիք, կրնաք մեր միջոցով ընել. այսպէս գրած է մեզ ինքը եւ կը խընդրէ որ ձեր թղթակցութիւնը ուղղակի ղրկէք մեր արդէն ձեզի տուած հասցէին:

Եթէ պ. Վահանեան իսկ եկած չէ, կը խնդրենք իր փոխանորդէն որ փութով մեզի գրելու եղբայրութիւնն ունենայ:

Եղբայրական սիրով ու համբոյրներով

Ձերդ

Ռ. ԱՍԼԱՆԵԱՆ

Յ. Գ.- Ձի մոռնաք նաեւ իմացնել որ Արեւմտ. Բ[իւրոն] օգտուի ձեր գործածած բանալիով(1):

1.- Իմա՝ գաղտնի թանաքով գրուած այս նամակին վերձամման համար օգտագործելի բանալին:

Փաստ. 820-12

Հ.Յ.Դ. Կեղր. դիւան

Պատճէն

[1]901 Օգոս. 31/3  
Խարբերդ

Սիրելի եղբայրակից պ. Վարաժնունի(1),

Ստացած ենք ձեր վերջին նամակը՝ որուն ահա փութով կը պատասխանենք:

Ուրախ ենք իմանալով որ ձեր լռութիւնը իր ետեւէն գործը կը բերէ. մանաւանդ աւելի ուրախ Ս.Ի(2) վերջին որոշման համար՝ որով կ'ուզէ երկիր(3) մտնել: Մենք ասկէ առաջ արդէն գրած ենք մանրամասնաբար եւ իմացուցած թէ Աւար-Աւերը(4) ամէնէն յարմար միջավայրն է իր համար եւ ամէն դիւրութիւն կ'ընծայէ իր նպատակին ու գործունէութեան: Եթէ ինքը Կիլ[իկի]ոյ համար կը մտնէ, բացարձակապէս կը վստահեցնենք թէ Աւար-Աւեր միակ տեղն է՝ ուրկէ ինք ապահովութեամբ եւ ազատութեամբ կրնայ հսկել առաջադրուած տեղին ու գործերուն վրայ: Հակառակ ուղեգրի մը կը վախճանք թէ ձախողութեան առաջնորդէ զինք. եւ գիտէք թէ նման կարեւոր գործիչի մը ձախողութիւնը որքան աղէտալի հետեւութիւն կրնայ ունենալ գործին համար: Ուստի, պիտի խնդրէինք ձեզմէ որ կարեւորն իմացնէիք իրեն փութով եւ եթէ մեր կողմը պիտի գար՝ մեզի ալ տեղեկագրէք որ կարեւոր միջոցներն ու կանխապատրաստութիւնները ձեռք առնէինք:

Իսկ եթէ արդէն երկիր մտած է, կը խնդրէինք որ իր տեղն ու վրստահելի հասցէն իմացնէք մեզ որ հարկ եղած ատեն ուղղակի յարաբերութեան մէջ մտնէինք իր հետ:

Չէքի մասին ձեր գրածներն կ'իմացնենք իրեն շուտով:

Ձեր վերջին նամակը սխալ հասցէով ղրկած էիք: Ահա մեր նամակներուն յատկացուած հասցէն.

Պ. Տիգրան Պաղտիկեան  
Եղեգի գիւղ  
Մամուրէթ Իւլ Ազիզ

Կը խնդրենք ձեզմէ նոյնպէս որ հրատարակութեան համար մեր ղրկելիք յօդուածները կարելի եղածին չափ շուտ ղրկէք իրենց տեղերը: Ասկէ առաջ Pro-Armenia-ի յօդուած մը ղրկեցինք, արդեօք ստացա՞ք ու ղրկեցի՞ք իր հասցէին. յետոյ, լուր ունէի՞ք անոր հրատարակուելուն: Գոհ պիտի թողէիք մեզ՝ եթէ իմացնէիք:

Ասկէ ետք Pro-Armenia-ի համար մեր ղրկելիք յօդուածներուն գլուխը P. A. սկզբնատառերը գրած կ'ըլլանք, որով դուք կարող էք «Դրօշակ»ի համար ղրկուելիքներէն զանազանել:

Ասկէ մէկ քանի վաշտ զինուոր ղրկուեցաւ արդէն Մուշ ու տակաւին պատրաստութիւններ ալ կը տեսնուին: Չենք գիտեր ստոյգ թէ ի՞նչ պատահած է հոն. միայն զրոյց կը շրջի թէ մերիները իբր թէ օդն հանած են զօրանոց մը եւ կառավարութիւնն ալ կոտորած է երեք շորս գիւղեր: Ի՞նչ է ստոյգ իրականութիւնը:

Սպասելով ձեր նամակներուն՝ կը մնանք միշտ անձնուէր՝

Ի դիմաց Աւար-Աւերի  
ԱՍԼԱՆ

1.- Վարաժնունի – ծածկանուն Կիլիկիոյ գործիչներէն Յարութիւն Գալֆայեանի (1870-1915), որ այդ օրերուն հաւանաբար կը գտնուէր Եգիպտոսի Աղեֆսանդրիա քաղաքը, ուր հաւանաբար ուղղուած պիտի ըլլայ այս նամակը:

2.- Ս.ն հաւանաբար Սեպունի համար է: Արդարեւ այս վերջինը, բուն անունով Հայկ Թիւեաֆեան, Պանֆ Օթթումանի գրաման դերակատարներէն էր եւ գործը հարբերդի կազմակերպութիւնը կը փափաքէր իբրեւ գործիչ հրաւիրել իրենց մօտ:

3.- Երկիր առ հասարակ կը գործածուէր Արեւմտեան Հայաստանի համար: Հոս «Երկիր»ը Կիլիկիան է:

4.- Աւար-Աւեր – ծածկանուն հարբերդի:

Փաստ. 820-14

Հ.Յ.Դ. Կեդր. դիւան

Պատճէն

[1]901 Սեպտ. 18/1

Սիրելի եղբայրակից,

Այս անգամ կը ղրկենք ձեզ երկու ծրար, որոնց մէջ ներփակուած պիտի գտնէք յօդուած մը «Դրօշակ»ի ղրկուելիք. կը յուսանք անյապաղ կը հասցնէք իր տեղը:

Այս փոստին ստացանք Արեւմտ. բիւրոյի նամակը, որուն գուցէ պատասխանենք ալ, եթէ չի կրցինք փոստին հասցնել՝ անպատճառ գալիքով կը գրենք իրենց:

Կը յուսանք նոյնպէս թէ մինչեւ հիմա ստացած կ'ըլլաք արդէն մեր նախորդ նամակն ու Բրօ-Արմէնիայի համար ղրկած մեր յօդուածը եւ զայն իր տեղն հասցուցած: Գրեցէք մեզի եւ իմացուցէք նոյնպէս թէ Արապներուն վրայ մեր նախօրօք ղրկած յօդուածն եւս արտատպուած էր Բրօ-Արմէնիայի մէջ:

Վանէն ու Մուշէն ծանր լուրեր կը հասնին. իբր թէ այդ երկու քաղաքներն ալ ջարդուած են զինուորներու կողմէ. անհամբեր ենք ստուգութիւնն իմանալու: Մեր ընկերները արդէօք հոն շարժում ըրած են:

Աւելորդ չըլլայ ձեզ իմացնել թէ, մենք հոս զինագործի մը հետ պայմանաւորուած ենք, որով անիկա իւրաքանչիւր Մարթին երեք ոսկիի պիտի յանձնէ մեզի. միայն Մարթինի փամփուշտ չունի եւ ստիպուած ենք այս վերջինը մենք հայթայթել, ուստի կը հարցնենք ձեզի թէ՝ ո՞ր կոմիտէն կարող է մեզ հայթայթել զայն. յետոյ Կ[իլիկի]ոյ համար հարկաւոր չէին կրնար ըլլալ այդ զէնքերը եւ աւելի դիւրին չէր ըլլար անոնց փոխադրութիւնը ասկէ: Իմացուցէք մեզի երկու կէտերն ալ:

Սեպտեմբեր(1) ո՞ւր մնաց. անհամբեր ենք իր մասին տեղեկանալու: Թերթերուն կը սպասենք անհամբեր: Արեւմտ. բիւրօն կ'իմացնէ

Թէ ձեր քաղաքէն (2) պիտի խնդրուին, մինչդեռ մենք խնդրած էինք որ Մարսիլիայէն յանձնուին փօստին, հոս կասկածի տեղի չի տալու համար: Իմացուցէք մեզի թէ ինչպէ՞ս կարգադրած էք: Անհամբեր ենք թերթերուն, որովհետեւ շատոնց ի վեր տեսած չենք:

Գալիքով կը գրենք նոյնպէս Բրօ-Արմէնիայի:

Ընկերական բարեւանքով՝  
Հ. Յ. Դաշնակցութեան  
ԱԻԱՐ-ԱԻԵՐ ԿՈՄԻՏԷ

1.- Սեպուն – ծածկանուն Պանֆ Օթթումանի գրասան ղեկավարներէն Հայկ Թիրեաֆեանի:

2.- Ձեր ֆաղափը – հաւանաբար Աղեֆսանդրիան է, որուն ուղղուած է գաղտնի թանափով գրուած այս նամակը:



Թիրեաֆեան Հայկ – Սեպուն

Փաստ. 820-15

Հ.Յ.Դ. Կեղր, դիւան

Պատճէն

[1]901 Սեպտ. 23/6

Սիրելի ընկեր(1),

Կը յուսանք թէ արդէն անցած փոստով մեր զրկած ծրարները ընդունած եւ յօդուածը զրկած էք Դրօշակի: Ներփակ նամակս ալ վըստահաբար կը փութաք Արեւմտ. բիւրօի զրկել նոյնպէս անյապաղ:

Այս անգամ ալ, ներկայ ծրարէն զատ կը զրկենք նոյնպէս մէկ կամ երկու ծրար, մէյ մէկ յօդուած Դրօշակի ու Pro-ի համար: Կը խընդրենք որ անոնք ալ փութով զրկէք իրենց հասցէներուն:

Պիտի խնդրէինք նոյնպէս որ մեզի մասնաւոր հասցէ մը նշանակէիք, յատկապէս յօդուածներու գործածութեան համար: Գուցէ ճամբան անոնք վտանգուին օր մը ու անով մեր հասցէն ալ վտանգուած ըլլայ:

Թերթերու մասին բան մը չէք գրեր: Իմացուցէք մեզի թէ ինչ տնօրինութիւն ըրիք, երկար ատենէ ի վեր զրկուած ենք ընթերցումէ. կը կարծենք թէ Ծովափն ալ խիստ անկանոն կերպով կը զրկէ թերթերը «Արծիւի»(2), եթէ ոչ մենք անկէ ալ կրնայինք ստանալ, թէեւ այս վերջին ուղեգծով ալ խիստ ուշ եւ օթեկ պիտի հասնէին թերթերը, կորսնցնելով օրուան իրենց շահագրգռութիւնն ու տպաւորութեան ուժգնութիւնը:

Ինչպէս ասկէ առաջ ալ գրեցինք ձեզի, հաճեցէք ձեր նամակները մեր ցոյց տուած Եղեգի գիւղի հասցէով զրկել: Եթէ մոռցած էք այն հասցէն, հաճեցէք իմացնել որ թուանշանով(3) տեղեկագրենք ձեզի:

Սեպտեմբեր(4) ինչ լուր: Մուշի մասին հոս ստոյգ տեղեկութիւններ կը պակսին. մանրամասնութիւնները իմացնել հաճեցէք: Նոյնպէս թերթերու հասցէով գէթ մեր յօդուածները պարունակող եւ միւս կարեւոր թիւերէն Pro-էն ալ մէկ օրինակ զրկեցէք երբեմն:

Ինչպէս նախորդ յօդուածովս ալ իմացուցած եմ, Դրօշակի եւ

Pro-ի համար գրուած յօդուածները մէկ մէկէ դիւրաւ զանազանել տալու համար, յօդուածներուն առաջին ճակատները կամ Դ. գիր մը կամ P. A. սկզբնատառերը կը նշանակեմ, որոնցմով դուք դիւրու- թեամբ կրնաք հասկնալ թէ անոնք ո՛ր հասցէներուն պիտի ղրկուին: Զի մոռնանք նոյնպէս գրելու թէ մենք հոս զինագործի մը հետ պայ- մանաւորուած ենք որ մեզի յանձնէ 3 Օսմ. ոսկի փոխարէն մէկ մէկ մարթին: Մարթինը 1500 մեթր պիտի նետէ, բայց փամփուշտ – մար- թինի յատուկ – հոս կարելի չէ գտնել. ո՛ր կոմիտէն կարող է հայթայ- թել, հաճեցէք փութով մեզ իմացնել: Կը կարծենք թէ այս զէնքերու հայթայթումի[ն] Լեռնավայրն(5) ալ կարող է նպաստել: Այս մասին ալ ձեր կարծիքը իմացուցէք:

Եղբայրական յարգանքներով՝  
Ի դիմաց Հ.Յ.Դ.  
ԱՍԼԱՆ

- 1.- «Սիրելի ընկեր»ը այս պարագային կը վերաբերի Եգիպտոսի Հ.Յ.Դ. մարմնին, որուն միջոցով հարբերդ կը հաղորդակցէր «Դրօշակ» խմբագրութեան հետ: Յիշեցնեմ որ գրութեան վերեւ նշանակուած «պատնէն»ը նշան է որ նամակին բնօրինակը գրուած է գաղտնի թանաքով:
- 2.- «Արծիւ» – ծածկանուն Երզնկայի: Կը նշանակէ որ Տրապիզոն (Մովսիս) ուղարկը- ւած նամակները Երիզայի [Արծիւ] համբով պիտի հասցունէին հարբերդ (Աւար-Աւեր):
- 3.- Իմա՝ թուանշանային ծածկագրով:
- 4.- Սեպուն – ծածկանուն Հայկ Թիւեաբեանի:
- 5.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ եւ յարակից Սուրիոյ եւ Կիբանանի:

Ռուբեն Զարդարեան-Ասլանի այս գրութիւնը՝ «Նամակ հարբերդէն» միեւնոյն խորագրով, բայց ֆրանսերէն եւ կարգ մը յապատումներով, լոյս տեսած է նաեւ Փարիզի մէջ հրատարակուող Փրօ-Արմենիայի 25 Դեկտ. 1901-ի թիւով (Տես *Pro-Armenia*, թիւ 3 (27) էջ 22-23):

Յայտնենք որ 1901 եւ 1902 տարիներուն *Pro-Armenia*-ի մէջ, միշտ «Նամակ հարբերդէն» խորագրով, հրատարակուած են ուրիշ երեք գրութիւններ եւս: Այս վերջիններէն յատկանշական որոշ հատւածներ կը գտնենք Զարդարեան-Ասլանի «Դրօշակ»ի մէջ լոյս տեսած գրութիւններուն մէջ:

10 Հոկտ. 1901

Անստոյգ եւ ապականիչ անշարժութիւնը, թուրք աշխարհին կայուն մեռելութիւնը կը շարունակուի միշտ: Յանկարծ զսպանակը կոտորած ժամացոյցի մը խուլ աղմուկին մտիկ ըրած էք երբեք. կը սպասես որ վայրկեանէ վայրկեան այդ խլրտուքը դադրի եւ տեղի տայ ստոյգ անգործութեան, որպէսզի հաւտաս թէ ափիդ մէջ բռնած այդ կարգ մը մեքենաներու ամբողջութիւնը ա՛լ բան մը չ'արժեր, ա՛լ նշանակութիւն մը չունի. սակայն խժտուքը, աղմուկը չի դադրիր ու կը նեղէ քեզ:

Ահա այն ստոյգ տպաւորութիւնը, որ մենք կը զգանք այսօր քայքայուած, հիմունքէն ապականած կեղծաւոր վարչութեան մը նկատմամբ, որ կը ճնշէ գերեզմանական քարի մը պէս խաղաղ բնակչութեան կուրծքին:

Օսմանեան կառավարութեան արդի ռեժիմի բարեշրջութիւնը կամ բարեփոխութիւնը՝ այնքան ծիծաղառիթ իւթօպի(1) մըն է ոչ միայն զարգացած ամէն հայու, այլ նաեւ քիչ շատ խելահաս ամէն թուրքի, որ անոր հաւատացող ոեւէ անձնաւորութիւն ինքզինք խենթ հռչակած պիտի ըլլար: Թուրքիան՝ իր ձեռքով՝ երբեք կարելի

չէ բարեկարգել: Գիտէ՞ք թէ հիմա ներքին գաւառներու վարչութիւնը ինչպէս տեղի կ'ունենայ: Վալին գրեթէ ուղղակի պատասխանատուութեամբ մը կապուած է սուլթանին կամեցողութեան հետ եւ ներքին գործոց նախարարութիւնը լոկ անուանական հսկողութիւն մը կամ իրաւասութեան բաժին մ'ունի առաջնոյն վրայ. սուլթանին անձնական հակամիտութիւնները այն միակ վարչական ուղեգիծն են, որուն ուշիւ պէտք է հետեւին կուսակալը եւ հետեւաբար իրեն ստորադաս բոլոր պաշտօնէութիւնները: Ուրեմն այս անարդար եւ ոչ-օրինական պայմաններով՝ պաշտօնեային խիղճն ու լոկ բարութեան յարաբերական հանգամանքը պիտի ըլլան գաւառի մէջ կառավարութեան ուղեցոյց. այս պատճառով էր, որ մէկ կուսակալութեան մէջ տիրող բռնութիւնը, հարստահարութիւնը եւ զեղծումները ուրիշ մէկ կուսակալութեան մը, նոյնիսկ ամենամօտիկին հետ բաղդատմամբ շատ աւելի ցցուած կը մնան, օրինակ, երբեք կարելի չէ զուգակշռի դնել խարբերդի եւ Տիարպեքիւրի կուսակալութիւնները. այս վերջնոյն կուսակալը, որ հռչակաւոր հարստահարիչ մը, բռնապետ ու կաշառակեր մըն է, իր ամբողջ հսկողութեան սահմաններուն վրայ սարսափ ու թշուառութիւն սփռած է: Հասարակութիւնը հարկաւ իր կրած չարչարանքներուն եւ տառապանքին համար գանգատելու տեղ մը չունէր, քանի որ բարձրագոյն հեղինակութեան ներքին վարչագիտութիւնն էր, որ կը գործադրէր նշանակուած պաշտօնեան, ու եթէ ես ընդհանուր բառով հասարակութիւն կ'ըսեմ, դուք յատկապէս պէտք է ըմբռնէք հայ հասարակութիւնը, որովհետեւ խարազանին էն մահաբեր հարուածները իր մերկ մարմնին ու կողերուն վրայ է որ կ'իջնեն, եւ եթէ հայ տարրը համբերութեան վերջին կլափին մէջ փորձուի ամէնէն հրէշաւոր պաշտօնեային դէմ գանգատ մը կամ բողոք մը յայտնելու բարձրագոյն իշխանութեան՝ նոյն այդ յանցաւոր ու խնդրոյ առարկայ եղողին բարի վկայութիւն մը, իր պաշտօնին տեւականութեան ալ հաստատուն տօքիւման մը հայթայթած կ'ըլլայ:

Արաբկիրի միւթէսարիֆը յայտնի սրիկայ մը, անբարոյական մըն է, որը հերու ջարդերէն որբացած կարգ մ'անտէր անտիրական հայ աղջիկներ բռնութեամբ փակած իր տունը՝ իր հսկողութեան յանձնուած հայ համայնքին հրապարակային նախատինք ու թուրք խուժանին ալ իր օրինակին հետեւելու հրաւեր կ'ընէր: Տեղւոյն հայ հոգեւոր պաշտօնեան դիմեց ուր որ անկ էր եւ բողոքեց. եւ երբ իր գրաւոր բողոքները չի կրցին բաղձացուած բաւարարութիւնը ձեռք բերելու, նոյն հայ առաջնորդը դիմեց կուսակալին եւ սպառնաց որ հակառակ պարագային, պիտի դիմէ ներքին գործոց նախարարու-

թեան: Գիտէ՞ք ինչ պատասխանուեցաւ իրեն: Բարի կուսակալը հայրական ժպիտով մ'աւելցուց.

– Տղան, պէտք է գիտնաս որ այսօր հայուն բողոքովը ամենայն-տին պաշտօնեան անգամ կարելի չէ իր տեղէն խախտել, ընդհակառակը, նոյն պաշտօնեային դիրքն աւելի ապահովուած պիտի ըլլար, ուստի դարձիւր տեղդ եւ քաղցրութեամբ կենցաղավարելու միջոցները գտիր:

Կուսակալը եթէ մէկ կողմէն տիրող վարչական ըմբռնումներուն դժոխային ճշմարտութիւնը կը յայտնէր, միւս կողմէն ալ ապահովաբար նոյնքան ահաւոր խրատ մըն էր որ կը յանձնարարէր, այսինքն հայ կրօնաւորը պէտք էր երթար իր տեղը եւ իր բոլոր ազնիւ զգացումները, պարտաւորութիւնները, արդարութեան եւ իրաւունքի ձայնը, իր կոչումն ու հովւի իր ստանձնած պատասխանատուութիւնը՝ անբարոյական ու անպատիւ համակերպութեան մը ենթարկէր:

Ահա ստոյգ դէպք մը, որ պէտք եղածէն աւելի կը բացատրէ թուրք կառավարութեան շնիկ դիւանագիտութիւնը՝ հանդէպ հայ խաղաղ ու արդիւնաբերող հասարակութեան: Հարստահարել զայն ամէն ուղղութեամբ, բողոքի եւ գանգատի ամէն դուռ գոցել իր առջեւը եւ ջանալ որ անիկա լքուի, տրորուի ու հատնի: Նոյն այդ սահայէլական նենգ նպատակին յաջողութեան համար է որ երբ հայ ժողովուրդին առջեւ օտար երկրի բոլոր անցքերը պատուարած է, միւս կողմէն թոյլ չի տար որ պանդուխտ տղամարդը իր տունն ու երկիրը դառնայ եւ գէթ իր անձին գնովը ձեռք բերած դրամը երկրին մէջ գործածելու, երկրին մէջ շրջաբերութեան դնելու բարիքը գործէ: Խարբերդ իր քաղաքովը ու գիւղերովը մօտաւորապէս Ամերիկայի մէջ 15,000-ի մօտ պանդխտութիւն մը ունի, ամէնքն ալ երիտասարդ կամ ընտանիքի հայրեր, որ հոս թողուցած իրենց ծնողքը, զաւակները, սիրելիները, գացած են ամենահեռաւոր երկրի մէջ գործաւոր դառնալու եւ դարձին խաղաղ աշխատութեան դրամագլուխ մ'ապահովելու, եւ ահա այդ պանդխտողները այսօր բացարձակ տարագրեալներ, բացարձակ աքսորեալներ նկատուելով՝ ազատ չեն իրենց սիրելիներու գիրկը վերադառնալու: Պանդխտութեան թողած պարապը այնքան լայն է որ չես կրնար դուռ մ'անցնիլ, առանց մէկ կամ երկու պանդուխտ նշանակելու հոն, եւ այսօր կրնաք երեւակայել թէ այդ հազարաւոր տունները, ընտանիքները ինչ լքումի, սպա-

սումի ու զրկանքներու ենթարկուած են. մայրեր գիտեմ ես որ իրենց հոգեվարքի պահուն ահռելի ճգնաժամեր ունեցած են, իրենց զաւկին կարօտովը մէկ քանի ժամեր քստմնեցուցիչ շարշարանքներու տակ երկարած են իրենց հոգեվարքը, մինչեւ որ իրենց շուրջը զըտնուողներ այդ բացակայ սիրելիին մէկ հին զգեստը բերած դրած են մահամերձին աչքերուն հանդիպակաց տեղ մը, որով անիկա բացակային վերադարձի պատրանքը կրելով կարողացած է հանգարտիլ եւ փութացնել իր յաւիտենական հանգիստը: Տանջանքը անսահման է. երբեք մարդկային լեզու մը չպիտի կրնայ ամբողջովին արտայայտել հայուն արիւնոտ պատմութիւնը: Հայը մարդ էակ չի նկատւիր բնաւ ոչ իր հայրենիքին, ոչ իր ընտանիքին մէջ եւ ոչ ալ օրինաւոր դատարանին առջեւ, կարծես թրքական հալածանքը իր կոյր քանդումին ու ջնջումին մէջ՝ կ'ուզէ անգիտանալ նաեւ անոր բնական ու լոկ մարդկային զգացումներն ալ, ինչպէս զաւկի ու ծնողքի փոխադարձ զգացումները: Եւ այդ մոլեգին հարստահարութիւնը այնքան ծայրայեղութեան հասած է որ քանի մ'օր առաջ ամերիկեան հիւպատոսարանին մէջ Մէքքինլիի հոգեհանգստեան արարողութեան համար յատկապէս հրաւիրեալ բոլոր հայերը խիստ կերպով յանդիմանուեցան կուսակալէն. հայն ինչ գործ ունի օտար հիւպատոսարանի մը մէջ, Մէքքինլին հայուն ինչն էր: Մինչդեռ միւս թուրք հրաւիրեալները, որ նոյն հրաւերովը ներկայ գտնուած էին, երբեք խիստ ազդարարութիւն մը չլսեցին:

Հայուն ու թուրքին մէջ, մասնաւորապէս տիրող թուրք կառավարութեան միջեւ խրամատը երթալով կը լայննայ: Ազատ եւրոպացին, եթէ նոյնիսկ ամենազօրաւոր երեւակայութեամբ իսկ օժտուած ըլլայ, կարող չէ աչքի առջեւ բերել այն զարհուրելի համայնապատկերը, ուր կ'ապրի հայը իր արիւնովը ներկուած եւ իր թշուառութեանը մէջ: Հասարակ կենդանիները, փողոցի շուներն անգամ օրէնքին առջեւ աւելի արժէքով ու իրաւունքով կը ներկայանան քան հայը. քմածին անէքտոտ մը կարծէք. եթէ ձեզի պատմեմ թէ անցեալ տարի հայ մսավաճառ մը՝ անտանելի ու վնասակար փողոցի շան մը զարկած ըլլալուն համար մէկ ոսկի տուգանքի դատապարտուեցաւ, մինչդեռ եթէ նոյն այդ հայը իր անձնական ոեւէ մէկ վնասի հատուցման համար դատարան դիմած ըլլար՝ յայտնապէս պիտի վճռուէր:

Երկու տարիէ ի վեր Խարբերդի հին քաղաքը գայմագամութեան փոխուեցաւ. դէպքին աղէտալի հետեւանքը իրենց շահերուն ի

նպաստ յարմարացնելու համար թուրքերու կողմէն տխմար փորձ մըն է ասիկա, որովհետեւ ջարդի թուականէն անմիջապէս ետքը հայ վաճառականներ նոր քաղաքը՝ Մեզիրէն փոխադրուեցան, ուր համեմատաբար թուրք խուժանը սակաւ եւ հետեւաբար կեանքի ու ստացուածքի ապահովութիւնն ալ աւելի երաշխաւորուած կրնայ ըլլալ. այս լքումը մեծապէս վնասեց թուրք կալուածատէրերու եւ իւլէմա(2) դասակարգին, քանի որ խանութներու մեծամասնութեան սեփականութիւնը ասոնցն է եւ ասոնց վարձքովը կ'ապրին իրենք. հին քաղաքը այլեւս առուտուրի կեդրոն ըլլալէ դադրելով՝ դատապարտուած պիտի ըլլար հետզհետէ քայքայուելու եւ օր մըն ալ անբնակելի ըլլալու: Թուրք տարրը այս իրողութիւնը հակակշռելու համար փորձեց գայմագամութեան վերածել քաղաքը եւ ասով մեռելացած վայրի մը արուեստական կենդանութիւն մը տալ: Շատ փորձերէ ետք, վերջապէս յաջողեցան իրենց բաղձալի նպատակին հասնիլ: Հայերը գիտէին թէ եկող գայմագամը նոր շարիք մը պիտի դառնար իրենց գլխուն, որովհետեւ կարգ մը մէտրէսէներու մէջ որջացած իւլէմաներու պարզ խաղալիքը պիտի ըլլար: Եւ այնպէս ալ եղաւ. նշանակուած գայմագամը աննման սրիկայ մըն է, որ էն աղտոտ ու անբարոյական մարդոց մտերմութիւնը կը փնտռէ միշտ եւ անոնց հետ կ'ապրի քիթ քիթ, գինովութիւնը մինչեւ ի լոյս գլուխէն չի թափիր եւ իր պաշտօնատեղին ալ, ուր շաբաթուան մէջ երկու օր եւ օրն ալ երեք ժամ կ'երթայ անցնել՝ միշտ գինով, ախտաւորուած հակամարդկային ամենազգուելի անբարոյականութեամբ, գեղեցիկ տղու մը ետեւէն անգղի թառաշով կը նայի ու կը հեկեկայ: Իր նշանաւոր գործն եղաւ կառավարական պաշտօնատան մը հիմնարկութիւնը, որ երկու տարիէ ի վեր սկսած եւ վերջացած չէ. անշուշտ պիտի խորհէիք թէ այդ շէնքին յատկացուած ծախքերը կառավարական սնտուկը հոգաց, բայց պէտք է գիտնաք թէ այդ սնտուկը այնքան դատարկ է, որ երբ տարին քանի մ'անգամ կը յաջողի իր պաշտօնեաներուն ամսականը հայթայթել՝ օսմանեան պաշտօնական թերթերը գոհութեամբ կը տարփողեն ու կը հռչակեն կայսերական բարեհաճ իրադէն(3).- ոչ, այլ հայթայթուեցաւ եւ կը հայթայթուի բռնի հանգանակութեամբ (իյանէի ճէպրիով), որուն մեծագոյն բաժինը վիճակուած է թալլուած, կողոպտուած եւ կոտորուած հայուն: Եւ տեսէք թէ ինչպէս ամենամեծ, նոյնպէս ամենաչնչին պարագաներէն իսկ օգտուիլ գիտէ թուրք կառավարութիւնը՝ վնա-

սելու հայուն ամէն բանով ու ամէն բանի մէջ. այդ կառուցուելիք պաշտօնական տեղը այնպիսի գետնի մը վրայ որոշուեցաւ, որուն շրջակայ շէնքերը ամբողջովին հայերու կը պատկանէին. արդ, թուրքերէ կազմուած քօմիսիոն մը անոնց սեփականատէրերը կանչեց եւ իրենց ստացուածքներուն խիստ չնչին, իրական արժէքին տասն անգամ պակաս գին առաջարկեց. բնականաբար խեղճ մարդիկը չպիտի ուզէին կեղեքուիլ եւ պիտի յայտարարէին թէ իրենք ծախու ապրանք չունէին. ո՞վ կը լսէ: Բահերը, բրիչները գործի սկսան եւ օտարի այդ շէնքերը՝ առանց տէրերուն հաւանութեան՝ քակուեցան, տարտղնուեցան եւ գրաւուեցան:

Այսպէս, կը հարստահարուինք մեր աջէն ու ձախէն, ամէն քայլափոխի ու ամէն պարագայի: Ամենափոքր բողոքը կամ դիմադրութիւնը՝ սոսկալի թշնամանք մը կը մեկնուի եւ որը պէտք է տուժենք չարաչար կերպով. ի՞նչ ընենք, ո՞ր երթանք, մեզի կը պատուիրեն որ չպանդխտենք, սակայն անօթի կը թողուն մեզ. մեր աշխատանքէն մեզ կը զրկեն ու բողոքելու իրաւունքն անգամ մեզմէ կ'առնեն, մեր առջեւ պանդխտութեան ճամբաները կը փակեն ու մեր պանդուխտները ներս չեն առներ. զաւակը իր հօր կարօտովը ու հայրն իր զաւկին սիրովը կը մեռնի եւ գթացող չի կայ, ի՞նչ ընենք, որո՞ւ դիմենք:

Բայց բոլոր այս հոգեվարքին ու չարչարանքին մէջ որոշած ենք երբեք չկորսնցնել մեր արիութիւնն ու կորովը, որովհետեւ դարաւոր հալածանքներու զաւակն ենք մենք եւ դիմադրութեան վարժուած մեր բոլոր անսասան հոգիովը. ցաւի բլուրներուն վրայէն մենք անթարթ ու անձկութեամբ կը նայինք Բաբելոնին, որ ահա իր անիրաւութեան, զեղխութեան ու շուայտութեան պարիսպներուն տակ կը քայքայուի եւ որոնց տակ պիտի անհետանայ ամբողջովին:

«Դրօշակ», Դեկտ. 1901, էջ 152-154

- 1.- Ֆրանսերէն՝ երագական, անիրականանալի:
- 2.- Իվէմա – կրօնաւոր գիտնական իսլամ կրօնի:
- 3.- Իրադէ – հրովարտակ, հրամանագիր:

Փաստ. 820-16

Հ.Յ.Դ. Կեդր. դիւան

Պատճէն

[1]901 Հոկտ. 14/27  
Խարբերդ (Harpout)

Սիրելի ընկեր,

Մերէմիկ գիւղի հասցէին ձեր ղրկած բոլոր գրութիւնները վտանգուած կրնաք համարել: Անցած փօստով բռնուեցան երկու շրջաբերականներ, որոնց պարունակութենէն բան չի կրցանք հասկնալ, որչափ որ աշխատեցանք. անշուշտ[?] ենք թէ այդ շրջաբերականները մեզի կը վերաբերէին եւ ձեր կողմէն ղրկուած էին: Հաճեցէք անոնց պարունակութիւնը գրաւոր կերպով հաղորդել մեզի, եւ կամ եթէ հնար է՝ նոյնին միւս օրինակները ղրկել Ծովափի(1) միջոցով, որպէսզի Արծիւի(2) ղրկուի եւ անկէ ալ մեզի: Մենք ասկէ առաջ ալ գրեցինք ձեզի որ Մերէնիքի հասցէները վտանգուած են, մանաւանդ Աղեքսանդրիայէն բոլոր նամակները՝ կասկածելի: Վտանգուած է նոյնպէս Ասլան(3) անունը. ասկէ ետք ձեր հասցէներուն վրայ մի գրէք այդ անունը, այլ Շահրուման: Լաւ պիտի ըլլար որ թերթ կամ ոեւէ տպուած գիր, շրջաբերական՝ Ծովափը ստանձնէ ղրկել կարելի եղածին չափ շուտ, որովհետեւ ամէնէն ապահով ուղեգիր յայս վերջինն է, միայն թէ Ծովափ պէտք չէ ուշացնէ իր քով՝ իրեն ղրկածները: Գրեցէք իրեն եւ այդպէս կարգադրեցէք: Իսկ ոեւէ ծածկագիր նամակ կրնաք ղրկել, ինչպէս գրած ենք, Տիգրան Պաղտիկեանի, Եղեգի գիւղ, Մամուրէթ Իւլ Ազիզ: Այս հասցէն վերապահուած է սոսկ նամակներու եւ ապահով է:

Մոռցանք գրելու թէ բռնուած շրջաբերականներէն մենք երբեք վնաս չի կրեցինք. կառավարութիւնը խուզարկութիւններու դիմեց, սակայն բոլորովին դուրսի մարդոց տունները: Ասլան կամ Ասլանեան կոչուածները բոլորն ալ խուզարկուեցան եւ որովհետեւ արդիւնքի մը չը հասան, կարծուեցաւ թէ թշնամաբար ղրկուած գրութիւններ

են ատոնք: Խարբերդի վալին՝ թէեւ տգէտ մարդ՝ բայց չափազանց բարի ու բարեացակամ է. կրնանք օգտուիլ միամիտ բարութիւններէ միշտ:

Բայց, չեմ գիտեր թէմեր գրութիւնները ապահով կը հասնին ձեզի. մանաւանդ վերջերս կարգ մը յօդուածներ ղրկեցինք, որոնց մասին կասկածի մէջ եմ: Իմացուցէք: Եթէ հասած չեն շուտով գրեցէք մեզի եւ ձեր հասցէն փոխեցէք:

Այս անգամ ուրիշ խնդիրներու մասին չեմ ուզեր գրել, նոյնիսկ ներկայ գրութեան նկատմամբ ալ կասկածելով. եւ այս իսկ պատճառով բաց նամակը ֆրանսերէն գրեցի:

Ընկերական բարեւներով՝  
ԱՍԼԱՆ

- 1.- Ծովափ – ծածկանուն Տրապիզոնի:
- 2.- Արծիւ – ծածկանուն Երզնկայի:
- 3.- Ասլան – ծածկանուն նամակագիր Ռուբէն Զարդարեանի:

Փաստ. 821-2ա

Հ.Յ.Դ. Կեդր. դիւան

Պատճէն

[1]902 Յունուար 12/25  
Խարբերդ (Harpout)

Սիրելի եղբայրակից պ. Ֆարհատ(1),

Ստացած եմ ձեր 25/2 Դեկտ. (1901) նամակը, բայց ցաւալի սխալումով մը՝ որով առաջին երեսին տողերը մէկ մէկու վրայ գրած էիք՝ նամակը գրեթէ ամբողջովին անընթեռնելի ու հետեւաբար անհասկընալի վիճակի մը մատնուած էր(2): Հազիւ կրցանք հատուկօրէն բաներ հասկնալ: Այդ կտոր բրդուն նախադասութիւններէն հասկըցանք թէ պատիւը ըրած էիք Լեոնավայրի Մարմինն անդամակցութեան երջանկութիւնը տալ(3): Անհունապէս շնորհակալ ու պարտաւոր եմ: Արդէն իմ բոլոր հաւատքս Լեոնավայրէն կախուած է, եւ անոր համար է որ միշտ կը ցաւիմ թէ բաւական ուշ մնացած ենք եւ գործերը խիստ դանդաղօրէն յառաջ կը տարուին: Այս մասին ձեր գրած բայց անընթեռնելի մնացած տողերէն կարգ մը բառեր փրկելով կրցի իմանալ թէ էտուարտ անունով ընկեր մը ներսերը կը մեկնի. թէ ո՞ր, թէ Աւար-Աւեր պիտի գայ, թէ ե՞րբ – չը կրցի իմանալ: Ուստի կը խնդրեմ որ ձեր այդ նամակը կարելի եղածին չափ շուտով կրկնէք:

Էդուարտը[?] իր ծննդավայրը կը մնայ եւ կարծեմ, հոն առեւտրական գործի ձեռնարկած է: Այս շաբթու գրեցի իրեն որ կամ ինք գայ հոս հեղ մը եւ կամ միշտ ցոյց տայ մեզի ապահովութեամբ գրելու իրեն:

Լեոնավայրի խնդիրը շօշափող կարգ մը ուրախառիթ պարագաներ գրեմ ձեզի: Աւար-Աւեր հաստատուած մէկ երկու կարող եւ վրստահելի 2.3.14.28.2.25.18.7.14.9.4.-ներ մեզի 24.14.21.9.4.2.15.2.31.9.14.(4), որոնք ընդարձակ կերպով խօսած են իրենց քաղաքին

վրայ եւ ցոյց տուած այն բոլոր միջոցները, որոնցմով պիտի կրնանք հոն շատ յաջող գործի մը ձեռնարկել: Անոնցմէ մէկը գուցէ մօտ օրերէն մեկնի իր ծննդավայրը, ուր անմիջապէս գործի պիտի ձեռնարկէ եւ ապահովէ մեզի կարեւոր ոյժեր: Հետեւաբար կրնաք վստահ ըլլալ այժմէն թէ հոն յաջող ու ապահովուած սկզբնաւորութիւն մը պիտի ունենանք:

Ասկէ զատ, մօտ օրերին մեր ընկերներէն մին նոյնպէս պիտի մեկնի 9.4.27.14.21.2.(5), ուր պիտի աշխատի ի նպաստ Լեռնավայրի ընդհանուր համոզում մը յառաջ բերել, եւ արդէն եթէ այս տարի կրկին ունենանք մեր Շրջանական ժողովը՝ ես վստահ եմ թէ Լեռնավայրի համար ամէնքն ալ կարեւոր ուժեր, նուիրուին եւ պիտի աշխատին:

Շնորհակալ ենք նոյնպէս, ֆրանսական խորհրդարանին մէջ յուզուած մեր խնդրոյն նկատմամբ ձեր տուած տեղեկութիւններուն համար, բայց արդէն Նոյեմբերի Դրօշակը ստացած ըլլալով՝ կարեւորը իմացած էինք կանխաւ:

Սպասելով որ մանրամասնօրէն կրկնէք ձեր վերջին նամակին պարունակութիւնը – ուր կը խորհինք թէ շատ կարեւոր խնդիրներու մասին խօսած էիք, մանաւանդ ուղեգծի մը, ժընեւ յանձնարարուելիք յանձնարարականի մը՝ զորս չի կրցինք հասկնալ – կը մնանք եղբայրական անձնուիրութեամբ՝


Ձերդ՝ ԱՍԼԱՆ

- 1.- Ֆարհատ – ծածկանուններէն մէկը Հրաչ Թիրեաֆեանի:
- 2.- Խօսքը բնօրինակին գաղտնի թանափով գրուածին մասին է, որուն տողերը իրար վրայ գրուած են:
- 3.- Այլ խօսքով՝ Խարբերդի (Աւար-Աւեր) շրջանը համարուած է Լեռնավայր (Կիլիկիոյ) Կեդր. կոմիտէութեան շրջաններէն մէկը:
- 4.- Թուանշանային այս ծածկագիրը կը կարդացուէ՝ այնպայցիներ մեզի ընկերացած են:
- 5.- Կը վերծանուի՝ երգնկա:

Փաստ. 821-1ա

Արխիային 821-1ա համարը կրող անընթեռնելի նամակի երեսին կայ հետևեալ գրութիւնը:

Յայտնաբար յաջորդ՝ 821-2բ փաստաթուղթը եւս կարելի չէ եղած վերծանել:



Կարգաւորելու համար  
 Գրած է Լեւոն Զեմախ  
 որ Կ. Ստամբուլ  
 (Գրած է 902 թ. Օգոստ. 30-ին)  
 (Թուղթը Կ. Ստամբուլ Կաթողիկոսական Կոնստանդուպոլիս քաղաքում է տեղից որ շարժւելը փշրուում է լրիւ):


Անհնար էր ընդօրինակելը

Խարբերդից Ասլանի գրած ծածկագիր նամակը որ չէ կարդացւում:

(Գրւած է 902 թ. Օգոստ. 30-ին)

(Թուղթը այնքան քայքայւած է տեղից որ շարժւելը փշրուում է լրիւ):

Փաստ. 821-2բ



Ասլանի նամակը գրած 1902 թ. Յունուար 12/25, Խոստ/ԴԿ

12/25 Յունուար 1902

Անցնող տարուան վրայ յետադարձ ակնարկ մը՝ այնքան ցաւագին, որքան ձանձրալի պիտի ըլլար, քանի որ նոյն հարստահարութեանց, նոյն հասարակական գանգատներու եւ վշտին, ու կառավարական նոյն անողոք ահաւարչութեան մանրամասնութիւններն էին, որ պիտի նշանակէինք: Եւ արդէն Թուրքիոյ ու Հայաստանի մեռելական կացութեան մէջ այլազանութիւնը կամ փոփոխութիւնը արիւնի անցքեր, ահաւոր տռամներ ու ժողովուրդներու աղաղակին երբեմն ուժգին, երբեմն հոգեվարք արձագանգները կը կազմեն: Այսօրը այնքան նման է ասկէ հինգ վեց տարի առաջուայ երէկին ու վստահաբար կրնաք ըսել թէ գալիք բոլոր վաղերն ալ այնքան կսկծօրէն նոյնը պիտի ըլլան իրենց բոլոր նախորդներուն: Եւ ինչ դառնութիւն, հոգիի ինչ դժոխային գիտակցութիւն երբ ժողովուրդ մը, ինչպէս հայը, նոր տարին կը սկսի յուսահատութեան, անմխիթար լքումի եւ ամէնէն խելագար բռնապետութեան մը քմահաճոյքին թողուածի համակերպութեամբ. հրա՛ջը մը չէ՞ որ վաղը, գարնան դուռը բացուածին պէս նորէն երկրագործն իր հողուն գլուխը գտնար ու այս ցուրտին բուքին՝ խանութպանը իր ափ մը խանութին մէջ կծկտած՝ արիութեամբ մղէ աշխատութեան պայքարը: Եթէ ապրելու բնագդական ազնիւ բաղձանք մը, աշխատութեան յամառ ու տեւական կորով մը օժտած չըլլար մեզ, հաւատացէք որ վայրկեան մ'իսկ անհնար էր ապրիլ այս արիւնաշաղախ գետիններուն, այս ընդարձակ ու համատարած գերեզմանոցին մէջ: Հաղորդակցութեան բոլոր միջոցները կտրուած, այնպէս որ ամենավստահելի երաշխաւորութեամբ իսկ էն պատուաւոր վաճառականը արգիլուած է մօտաւոր գաւառ մը ճամբորդել, արդիւնաբերութեան բոլոր աղբիւրները ցամքած, միայն ժողովուրդը իր մսին ու ոսկորին հետ դատապարտուած է մեքենական կեանք մը քաշկրտել ու աւելին չի պահանջել:

Եւ սակայն այդ միսն ու ոսկորը իրեն թողուած ըլլային. սիստէմատիքաբար պատրաստուած այս աղքատութեան, թշուառութեան մէջ, ուր ալ բան մը չի կայ զոհաբերութեան, այդ միսն է որ կը պահանջեն: Վերջին պայրամի օրերէն մէկ երկու շաբաթ առաջ խեղճ

աղքատներու անկողինները, ուտելիքը, ափ մը պաշարը ծախու հանեց կառավարութիւնը կամ գրաւեց. ամբողջ ընտանիքներ մնացին ձիւնին ու սառույցին վրայ այս սոսկալի ձմեռուան մէջ, ուր դուրսը ագռաւին թեւը թռած ատեն կը սառի: Հարկահաւաքութիւնը երբեք այսքան ծայրայեղ հարստահարութեան միջոց մը դարձած չէր. տասնեակ տարիներով բացակայ եղողներուն, անդարձ պանդխտացողներուն – որոնց ողջ ըլլալն իսկ տարակուսական է – բարդուած տուրքերը կը գանձուին, գիտէ՞ք ուրկէ, – ամենահեռաւոր ազգականներէ, հեռուէ հեռու ծանօթներէ կամ – հաւատացէ՞ք թէ սխալ չի կայ – անոնցմէ, որոնք առաջին հարցումի մը այդ բացականերուն լոկ անունը գիտցած կ'ըլլան: Եւ այս բոլոր վագերային սկզբունքին գործադրիչն են քաղաքիս Մալ-միւտիւրին եւ յետին թահսիլտար(1) Ահմէտ էֆէնտի անունով մէկը. այս վերջինը թրքացած հայ սերունդէ մը կ'իջնէ. ասով յայտնի է արդէն իր արիւնին որքան ապականւած ըլլալը, որով իր նախահայրերը դուրս են եկած տառապող, բայց ազնիւ հայերու շարքէն եւ անցած ապականակիր ընկերութեան մը ծոցը: Քանի քանի անգամ բողոքուեցաւ այս 100 դրշ. ամսականով ծառայող բռնաւոր ու վնասակար պաշտօնեային դէմ, բայց գայմագամը իր գինովութեան ժամերէն ազատ միտք ունեցած չեղաւ, որպէսզի իր պաշտօնին արդարութիւնը գործադրէր: Ասկէ տասն օր առաջ Ս. Ստեփանոս թաղի ներկայացուցիչները (աղաները) վեց օր բանտարկուեցան, գիտէ՞ք ինչու, որովհետեւ նոյն թաղէն չէին կրցած գանձել չեմ գիտեր քանի հազար դահեկան զինուորական տուրք: Բայց աղան ինչո՞վ յանցաւոր է, ինչ բանով պարտական է թաղին տուրքը իր քսակէն վճարելու: Օ՛հ, եւ այս բանտարկութիւնը լոկ այդ 100 դուրուշնոց թահսիլտարին քմահաճոյքին պատճառով: Նախատինք մըն է ասիկա, անիրաւութիւն մը, որուն մարդ չի կրնար դիմանալ, բայց որո՞ւ պէտք է գանգատիլ, որո՞ւ դիմել: Կ'իմանանք թէ այդ բանտարկուած հայերը – որոնք պատուաւոր եւ կարող մարդիկ են – դատ բացած են նոյն թահսիլտարին դէմ: Դատին վերջաւորութիւնը հիմակուրնէ իսկ գուշակելը դժուար չէ: Հայերը պիտի վռնտուին եւ պիտի ստիպուին ասկէ ետք խորին մեծարանքով վերաբերուիլ այդ թահսիլտարին հետ ու յարգել անոր բոլոր քմահաճոյքները:

Եւ հայը ինչո՞վ իր պարտքը, իր տուրքը վճարէ, երբ քաղաքական, տնտեսական աներեւակայելի կաշկանդումներէ, հալածանքներէ ետք կը ծանրանայ տակաւին պաշտօնեային, թուրք խուժանին մասնակի ու առանձին բռնակալութիւնը, կամայականութիւնը եւ

ընկերութեան յետին շարագործներուն բոլոր սանձարձակ սխրագործութիւնները: Գողերու յատուկ ընկերութիւններ կազմակերպուած են, վստահաբար օրինաւոր պաշտօնեաներու պաշտպանութեանը տակ, համարձակութեամբ կը գողնան, կը թալանեն, թէ գիւղերը եւ թէ քաղաքը, հայ տուններ: Գրեթէ ամէն գիշեր տուն մը կը բացուի եւ բնակիչներու քնացած միջոցին տանը բոլոր իրեղէնները կը կողոպտուին. արթուն վճիպկը աւելի վնասակար է, որովհետեւ բողոքի կամ իրարանցման մը պատահականութեան առջեւ անզէն բնակիչը կամ կը սպաննուի եւ կամ մահու չափ կը վիրաւորուի: Ասկէ մէկ երկու ամիս առաջ Խուլլու գիւղի խոջաբաշին սոսկալի կերպով վիրաւորուած գտնուեցաւ գիշեր մը, յայտնի աւագակ Մուլլագեղցի պէկի մը ձեռքով, որովհետեւ խոջաբաշին ու գիւղի կարգ մը ազգեցիկ հայեր այս անցնող տարուան ամառը արգելք եղած էին նոյն պէկին Խուլլուի աշարը(2) առնելու, քանի որ պէկը աւագակի ընչաքաղցութեամբ վերջին աստիճանի հարստահարած էր քանի մը տարի այդ գիւղն ու գիւղացիները: Խոջաբաշին երբ կառավարութեան դիմեց վիրաւոր ու հիւանդ, վռնտուեցաւ լրբօրէն:

Եւ այս դրութիւնը այնքան տարածուն, այնքան մահացու հանգամանք մ'առած է, որ ազատ խիղճն ու ազնիւ գիտակցութիւնը անկարելի է որ չընդվզին: Պայրամէն երկու շաբաթ առաջ 4-5 թուրք զինուորական սպաներ ցորեկ ատեն շուկայի մէջ յարձակեցան տէֆթէրտարին(3) վրայ եւ զայն շարաշար կերպով ծեծեցին, իրենց ապառիկ ամսականները պահանջելով: Մենք չենք մեղադրեր այս սպաները, երբ տարուան մէջ մէկ ամսական մ'իսկ առնելու անկարելիութիւնը կը տեսնեն: Հարկաւ տէֆթէրտարը յանցաւոր չէ, բայց սպաներն ալ տէֆթէրտարը գանակոծելով՝ վերին, բարձրագոյն իշխանութիւնն է, որ կը խայտառակեն եւ անոր դէմ է որ կ'ընեն իրենց ցոյցը:

Այս շաբթուան կարեւոր եւ միանգամայն քստմնելի լուրը Տիգրանակերտէն է որ կու գայ: Կը լսենք թէ ցորեկ ատեն կարգ մը սրիկայ թուրքեր բռնութեամբ կը մտնեն հայ պատուաւորի մը տունը եւ հոն հաւաքուած հինգ վեց հատ հայ պատուաւոր տիկիներ կը բռնաբարեն ու կը լլկեն: Ասոր վրայ հայերը տագնապալի իրարանցում մը կ'ունենան. իրենց բոլոր խանութները գոցելով զէնքի կը դիմեն: Շուկաները երեք օր փակ կը մնան. կուսակալ – որ ահաւոր տեսակէն կաշառակեր, հարստահարիչ շարագործ մըն է, ի գո՛ւր կ'աշխատի հայերը համոզել ու գրգռուած զգացմունքները հանդարտեցնել, քաղաքը զինուորական պաշարման տակ կ'առնուի եւ ալ չենք գի-

տեր ինչպէս կարելի կ'ըլլայ մտքերը խաղաղեցնել: Տակաւին ստոյգ մանրամասնութիւններ կը պակսին մեզի եղելութիւնը իր վաւերական ու ամբողջական հանգամանքով ներկայացնելու: Դուք ասկէ իսկ կրնաք չափել թէ յարաբերութիւնները որքան սեղմ են Հայաստանի մէջ, քանի որ խորքերդ Տիգրանակերտէն երեք օրուան հեռաւորութեամբ մը բաժանուած է եւ հոն տեղի ունեցող դէպք մ'իմանալու համար ստիպուած ենք տասնեւհինգ օրով սպասել: Մենք այնքան սովորած ենք այս կարգի վատ շարագործներու, ոճիրներու, որոնք մեզ վայրկեան մը կամ շատ շատ օր մը կը հետաքրքրեն. մտքի լարուած շահագրգռութիւնը իրաւ է թէ կ'անցնի, սակայն անոր կը յաջորդէ ջախջախիչ տրտմութիւն մը, ակօսուած յուսահատութիւն մը եւ խուլ զայրոյթի մը քնացած փոթորիկը:

Հայը լոկ յոյսով մը կ'ապրի եւ այս յոյսը, ամէն պարագայի տակ կրկնած ենք, քրիստոնեայ Եւրոպային վրայ դրուած վստահութիւնն է: Պոլսոյ թերթերը երբ հոս կը հասնին, այս հեռաւոր անկիւններուն, գիւղերուն մէջ քիչ մը կարդալ գիտցող ամէն հայ անյագօրէն քաղաքական լուրերուն է որ կը յառէ իր ուշադրութիւնն ու աչքերը, անոնց մանուածապատ, շատ անգամ հակասական ցանցին մէջ իր համար մխիթարական հետեւութիւն մը, մխիթարական լոյս մը գըտնելու: Դուք կրնաք երեւակայել թէ այդ հետեւութիւնը կամ լոյսն ալ որքան մութ ու պղտոր կրնան ըլլալ, երբ վերը մայրաքաղաքին մէջ լարուած գրաքննութեան արգոսի աչքերը վաղուց ամէն բան իրենց ապակիին մէջէն անցուցած արուելու շափ բեկբեկած են:

Ահա այս վիճակին, այս տուայտանքին, այս ահռելի իրականութեան մէջ է որ հայը կը սկսի նոր տարին. թէ յաջորդող օրերը դեռ ի՞նչ վշտի, արցունքի ու ցաւի անակնկալներ պահած են, այդ թէեւ այժմէն չենք կրնար ըսել եւ որուն կը հաւատանք սակայն, բայց ուրախութեան, սփոփման, հաւատքի օրեր, ո՛հ, չենք ուզեր համոզուիլ:

«Դրօշակ», XII տարի, Մարտ 1902, թիւ 3 (123), էջ 38-39

1.- Թահսիլտար – հարկահաւաք:

2.- Աշար – տուրճ՝ բերքի տասանորդը:

3.- Տէֆթարտար – ֆինանսներու կառավարիչ, կուսակալէն ետք գլխաւոր պաշտօնեայ:

Փաստ. 821-5ա

**Յիշեցնենք որ վերել գրուած «պատճեն»ը կը նշանակէ որ բուն նամակը գրուած եղած է գաղտնի թանաքով:**

Հ.Յ.Դ. Կեդր. դիւան

Պատճէն

[1]902 Փետ[րուար] 7/20

Սիրելի բարեկամ,

Կը պատասխանեմ ձեր 4/17 Յունվ. վերջին գրութեան. եթէ ուշացայ, պատճառը Ռահվերին(1) սպասումն էր. անիկա վաղն իսկ կը մեկնի արդէն իր ծննդավայրը, որպէսզի կարելի եղածին չափ փութով անցագիրը ձեռք բերէ եւ անցնի իր որոշուած տեղը: Անցած փոստով գրեցի ձեզի եւ կը յուսամ տեղ հասել է. ինքն ալ կ'աճապարէ հարկաւորը գրել: Իրեն յանձնեցինք սահմանուած 10 ոսկին. միայն իր ցոյց տուած հաշիւին համաձայն այս գումար[էն] հազիւ 100-200 դահեկան մը կ'աւելնայ իր տեղ հասնելէն ետք, որովհետեւ անցագրի խիստ դժուարութիւն կայ:

Ռահվերի հետ համաձայնեցանք, որ ես այս գալիք ամիսն անպատճառ Հովիտ(2) հաստատուիմ. չեմ գիտեր թէ ինչ է ձեր կարծիքը եւ խորհուրդը այս մասին, որովհետեւ բաւական պիտի յոգնինք արդի հաշիւով՝ մինչեւ որ ոտք դնենք Արծուաբերդ(3): Առայժմ դուր հոտ կը մնաք, քանի որ նախապատրաստութիւնները բաւականէն աւելի ժամանակ պիտի առնեն: Առ այժմ հարկ ալ չի կայ նոր ընկերներ մտցնել, ծախքերու ենթարկուելով: Ես եւ Ռահվերը կը բաւենք. ես Հովիտ մնալով այս տեղի գործերը կը վարեմ, միեւնոյն ատեն խորհրդակցելով ձեզի հետ, իսկ Ռահվեր իրբեւ շրջուն ընկեր՝ միշտ գործի վրայ կը մնայ եւ ամիսը կամ երկու ամիսն անգամ մը վերադառնալով քովս իր տեղեկագիրը կը յայտնէ ինձ բերանացի, զոր կը հաղորդեմ ձեզ եւ կարելորդ խորհրդակցաբար կը տեղեկագրենք:

Կ'ուղէի իմանալ ձեր եւ ինչպէս նաեւ ընկերներու տեսութիւնը այս մասին: Յետոյ, քիչ մ'աւելի մօտէն կ'ուզեմ տեղեկանալ Լեոնավայրի համար ձեր գծած առանձին ծրագրին, ըստ այնմ կարգադրելու կամ պատշաճեցնելու իմ որոշ դիտաւորութիւններս այս նկատմամբ: Գալով 1.2.12.2.28.7.2.(4) ապսպրուած երկարներուն(5), մենք անոնցմէ հատ մը անմիջապէս փոխադրել տուինք. երեւութապէս շատ լաւ կ'երեւի, բայց քանի որ փորձած չենք, որոշ բան մը չենք կրնար գրել անոր նկատմամբ: Ուղեցինք անմիջապէս փորձել, սակայն դիւրութիւն չը գտանք. առ այժմ կ'երեւի թէ ամիս մը, երկուք պիտի սպասենք: Արդիւնքը իր ատենին անպատճառ կը տեղեկագրենք: Իսկ ծայրերու(6) համար ձեր ըսած մեքենան նոյնպէս թող մնայ առ այժմ, որովհետեւ մեզի թէ Արծիւ եւ թէ Ծովափ(7) խոստացած են հայթայթել. ասկէ զատ մենք պիտի ջանանք ուրիշ -----յի մէջ(8) եթէ կարիքը տեսանք այդ մեքենային, դիւրին է այն ատեն:

8.10.6.20.7.-ի 27.2.4.14.9.12.10.15.(9) ծրագիրն ալ առ այժմ յետաձգեցինք քանի մը պատճառներով: Նախ որ որոշ իմացանք թէ ստակի փոխադրութիւն չի կայ, երկրորդ, պէտք եղած զէնքերն ալ կը պակսին: Մինչեւ գարուն կը սպասենք, ասով հանդերձ լրտեսելով ուրիշ գործ մը, ուրկէ կարելի է մօտաւորապէս 100 ոսկիի չափ արդիւնք մը ձեռք բերել:

Կը սպասենք 34.2.1.26.2.3. 9.12.12.9.12.7.5. 24.14.21.4.4. 10.2.(10) որուն իսկական անունը եւ մականունն ալ չէք մոռնար իմացնել ինձ, ինչպէս իր պաշտօնը:

Ուրախ ենք որ Ամերիկացիք իրենց օգնութիւնը խոստացած կամ գոնէ միայն մինչեւ հիմա ղրկած իսկ են ձեզ: Այս փոստով կարելին պիտի գրեմ, որպէս զի տարիներ չի սպասեցնեն՝ կտոր մը բան ղըրկելու երկրի ամէնէն կենսական գործին. պէտք է իրենց բոլոր մտասեւեռումը Լեոնավայրը եւ անոր նիւթական պէտքերն ըլլայ:

Ու յետոյ, անշուշտ պիտի ներէք որ՝ զիս Պատ.(11) Մարմ. անդամ ճանչնալու պատիւն ընելէ ետք ինծի, հարցնեմ թէ քանի՞ անդամներ է կը բաղկանանք, որոնք են եւ ո՞ւր կը մնան անոնք: Ուէ՛ գործի ձեռնարկութիւնը ընելէ առաջ միշտ կը սիրեմ մանրամասնութիւնները: Ասկէ զատ որքան նիւթական ուժ սահմանուած է Լեոնավայրին եւ մեր տրամադրութեան տակ որքան բան կայ:

Խիստ գոհ թողուցած պիտի ըլլաք զիս, եթէ եղբայրութիւնն ունե-

նաք ասոնց մասին գրել:

Անցած -----(12) ստացանք Pro Armenia -----(12) երկու յօդ-  
ւածներս, խիստ գոհ մնացի մեր Եգիպտոսի ընկերներէն, որ հոգա-  
ծութիւնն ունեցած էին այն թիւը ղրկելու: Այս փօստով պիտի գրեմ  
նոյնպէս իրենց, ինչպէս նաեւ յօդուած մըն ալ Pro-ի:

Ձեր տեղական գործերը, ինչպէ՞ս, լաւ կ'երթան. երիտասարդու-  
թենէն միւրթարական բան կարելի է յուսալ: Հոտ 1.2.12.2.28.7.2.18.7

20.33.2.3.(13) մը կայ, որ կը ճանչնամ խիստ վստահելի է. ձեռքի  
վրայ եթէ պէտք կրնաք ունենալ իրեն՝ յանձնարարեցէք:

Եղբայրական յանգանքներով ու աղապատանքով՝  
ԱՍԼԱՆ

- 1.- Ռահվեր – ծածկանուն Լեոնավայր-Կիլիկիոյ գործիչներէն Միսաք Վարդանեանի  
(1874-1949):
- 2.- Հովիտ – ծածկանուն Այնթապ ֆաղափ:
- 3.- Արծուաբերդ – ծածկանուն Զէյթունի:
- 4.- Մալաթիա:
- 5.- Երկաթը հրացանն է:
- 6.- Ծայրը՝ փամփուշտ:
- 7.- Ծովափ – ծածկանուն Տրապիզոնի:
- 8.- Պատնէնին մէջ գծիկներով:
- 9.- Փոստի գարնելու:
- 10.- Ճամբայ ելլելիք ընկերոջ:
- 11.- Իմա՝ Ռ. Զարդարեան ընտրուած է անդամ Լեոնավայր-Կիլիկիոյ Պատասխանատու  
մարմին:
- 12.- Պատնէնին մէջ գծիկներով:
- 13.- Մալաթիացի տղայ:

Փաստ. 821-6

821-6 համարը կրող ներկայ փաստաթուղթը Ռ. Զարդարեան-Ասլանի կողմէ գրուած կեղծ նամակ է, որուն վերեւ գրուած է՝ ընդօրինակուած է: Արդարեւ, յաջորդ իսկական նամակը, որ տրուած է 821-6ա համարով, պատճեն-ընդօրինակութիւն է:

[1]902 Փետ[րուար] 28/13

Մեծայարգ բարեկամ

Ստացած եմ ձեր վերջին երկու նամակները, ինչպէս նաեւ 4,5 ոսկիի փոխանակագիրը եւ գանձած, որուն համար սրտագին շնորհակալութիւնս կը յայտնեմ:

Այս անգամ երկար պիտի արդէն չի կրնամ գրել, որովհետեւ .....կան(1) մեծ պատճառ մը կայ, շուկայի հրապարակը ծանր մտահոգութեան եւ տագնապի մէջ է, լուր կը պտտի թէ մէնիտը .....(2) դահեկան է, արժէքէն նուազում պիտի կրէ. եւ արդէն Տիգրանակերտի մէջ մինչեւ 12 դահեկանի իջած է: Մինչեւ որ այս մասին վերջնական ապահովութիւն մը չի տիրէ, առետրական հրապարակը իր սովորական վիճակը չ'առնէր:

Ուստի, կը խնդրեմ որ առայժմ ընդունի՛ք բարեկամական յարգանքներս ու մեծարանքս՝

Որով կը մնամ ձերդ  
Ռ. ԱՍԼԱՆԵԱՆ

\* \* \*

Փաստ. 821-6ա

Հ.Յ.Դ. Կեդր. դիւան

Պատճէն

[1]902 Փետ[րուար] 28/13  
Աւար-Աւեր

Սիրելի Ֆարհատ,

Ստացած եմ ձեր 6/19 վերջին նամակը, ինչպէս նաեւ անկէ նախորդը, ուր ներփակուած էր 4,5 օսմ. ոսկիի փոխանակագիր մը: Ան-

միջապէս եւ առանց առարկութեան գանձեցի զայն, ուստի կը խնդրեմ որ հարկ եղած տեղը յայտնէք այս մասին իմ սրտագին շընորհակալութիւնս:

Ուսանող[ական] միութեան համագումար ժողովին վերաբերած ձեր առաջարկը չէի կրցած ձեր վտանգուած նամակին մէջ կարդալ ամբողջովին. իմացածս հատուկոտոր բաներ էին. ձեր այս վերջին նամակովն է որ ամբողջովին կը հասկնամ եւ արդէն իսկ գործի կը սկսիմ քիչ ատենէն կարելի եղածը հասցնել իրենց: Ի հարկէ չեմ կրնար ձեր հասցէին ուղղել, այլ աւելի ապահով կը սեպեմ Աղեքս[անդրիա]-ի ուղեգրի: Եթէ կ'ուզէք գրեցէք հոն որ մաս առ մաս հասածները ամփոփելով մէկ անգամէն ղրկեն իր ճակատագրուած տեղը:

Շնորհակալ եմ որ Լեոնավայրի Պատ. մարմնի պարտականութիւններուն եւ իրաւունքներուն նկատմամբ մաս մը բան գրած էիք. պիտի ջանամ այն մասնակի իրաւունքներէն օգտուիլ բոլոր իմ ներած միջոցներովս հոս կազմակերպական առաւելութիւններ ձեռք բերել: Հովիտի մէջ գործունէութեան մը համար իմ վերջին նամակիս մէջ արդէն ծրագիր մը ներկայացուցած էի Ռահվերի(2) հետ պէտք եղած խորհրդակցութիւնն ունենալէ ետք, կը յուսամ թէ մինչեւ .....(3) ստացած եւ անոր պատասխանած ալ կ'ըլլաք. եթէ ես հոն անցնիմ՝ վստահ եմ թէ այնտեղ ունեցած վիճակս, պայմաններս եւ արդէն հիմակու[ը]նէ ձեռք առած միջոցներս խիստ արդիւնաւոր շրջան մը պիտի ստեղծեն: Հովիտ շատ շատ կոյս քաղաք է. կրակոտ ու ատակ երիտասարդութիւն մը կայ որ մեզի օգտակար կրնայ ըլլալ ամէն ուղղութեամբ. եւ եթէ մենք անգամ մը հարկաւոր եղած վստահութիւնը ներշնչենք՝ դրամական ալ առատ հունձքեր կարող ենք ունենալ. կը սպասեմ որ փութով պատասխանէք այս հարցին:

Ռահվերը սկսած է անցագրի աշխատիլ, բայց իր գրածին նայելով կ'երեւի թէ բաւական դժուարութիւններու պիտի հանդիպի:

Նոր գործածուելիք մելանը(4) որքան որ կրցի հասկնալ Ռահվերէն շատ դժուարագործածելի է, հարկ է տողերը մէկիկ մէկիկ բանալ, քանի որ քիչ ատենէն կը մարի. ինծի կու գայ թէ այլ մելան ալ հիմակուհիմա անպատեհութիւն մը չունի:

Խոր-Վիրապի եւ Բարձր-բերդի(5) մէջ ընկերներ ունենալու մասին կը ծանրանաք եւ կը հարցնէք թէ Սալմանի(6) նշանակած մարդը ընդունակ է Խոր-Վիրապի համար: Այս մարդը իր ատենին կ'երեւի թէ բաւական աղէկ եղեր է, բայց հիմա խոշոր զրօ մըն ալ չ'արժեր: Սալմանի հին տպաւորութեանը ազդեցութեանը տակ մենք

հոս բաւական զոհողութիւն ըրինք այն ատեն զինքը կրկին ձեռք բերելու համար: Սակայն հմայաթափ եղանք. նախ որ ալ առջի կորովը չունի, յետոյ ժամանակին իբր կարող եղած չէ փոխուիլ, մանաւանդ դրամական զեղծումներ ալ բաւական գործած է:

Այս մարդուն մեր իսկ փոխ տուած 2 ոսկին մինչեւ հիմա չենք կրցած գանձել: Հետեւաբար այս կողմէն մենք կարգադրութիւն չենք կրնար ընել ոչ Խոր-Վիրապի եւ ոչ ալ Բարձր-Բ[երդ]-ի մասին: Դուք ձեր միջոցներով գուցէ աւելի դիւրութիւն ունենաք: Ես հոս կատարելապէս կը ստանձնեմ Հովիտի պատասխանատուութիւնը, որովհետեւ շատ դիւրութիւն ունիմ: Գուցէ հոն հաստատուելէ ետք կարելի ըլլայ խնդրոյ առարկայ եղած տեղերուն համար ալ դիւրութիւններ գտնել:

Բայց ամէն բանէ առաջ ես պիտի խնդրէի որ, սիրելի եղբայրակից, դուք վերջնական կարծիքն առնէիք մեր միւս ընկերներուն, որոնց տակաւին իմացուցած չենք – իմ ձեզի ընկերակցութեանս նըկատմամբ այս պարագան, ինչպէս դուք ալ դիտել տուած էիք, ապագային կրնայ անպատեհութիւններ առաջացնել:

Բարեւներով ձեզ եղբայրական ողջագուրանքով՝  
Ձերդ  
ԱՍԼԱՆ

- 1.- Հովիտ – ծածկանուն Այնթապի:
- 2.- Ռահվեր – ծածկանուն Միսաֆ Վարդանեանի:
- 3.- Մէկ բառ բաց մնացած:
- 4.- Խօսքը զաղտնի մեղանով գրուած նամակներու մասին է:
- 5.- Խոր Վիրապ – ծածկանուն Ատանա Բաղաֆի: Բարձր-բերդ – ծածկանուն Հանընի:
- 6.- Սալման – ծածկանուն Յարութիւն Մանկունիի:

Փաստ. 821-7ա

Գաղտնի թանափով գրուած, ապա «Դժոշակ»ի խմբագրութեան կողմէ վերծանուած այս նամակը, Եգիպտոսի նամբով ուղարկուած է Ժընեւ:

Հ.Յ.Դ. Կեդր. դիւան

Պատճէն

[1]902 Մարտ 1/14

Սիրելի եղբայր(1),

Ուրախութեամբ ստացած եմ ձեր փետ. 25/10 գրութիւնը եւ նոյն-  
քան ուրախութեամբ տեղեկացած թէ ամբողջովին ստացած էք  
P[ro] A[rmenia]-ի եւ Դ[ժոշակ]-ի համար ղրկուածները եւ իրենց  
հասցէներուն ուղարկած: Ինչպէս շատ անգամ գրած եմ, թերթերու  
պրօշիւրներու պէտքը ամէնէն աւելի անհրաժեշտ է, որովհետեւ այս  
տեղի ընկերները ու միջավայրը համեմատապէս շատ զարգացած  
են եւ այս պատճառով գաղափարի պրօպականտը լիովին ըմբռնե-  
լու ատակ. թերթը եւ ազատ գրութիւնները հոս անհուն յաջողութիւն  
կը բերեն եւ զարգացած ընկերներ անհամբերութեամբ կը սպասեն  
անոնց: Հետեւաբար կրնաք խորհիլ թէ ամէն զոհողութիւն ալ  
ստանձնել պէտք է՝ այդ պահանջներուն գոհացում տալու համար:  
Թերթերը շարունակեցէք ղրկել Մերէմիկի ձեզ ծանօթ հասցէով, ի-  
րաւ է թէ վտանգուած էին այդ հասցէները, բայց կառավարութիւնը  
այն համոզումը գոյացուց վերջապէս թէ այդ թերթերը թշնամաբար  
կը ղրկուին: Հասցէներուն պատճառով խեղճուկին մէկը մէկ քանի  
օր բանտարկուելէ ետք ազատ արձակուեցաւ, եւ ալ անկէ ետք ե-  
կածները վտանգ չեն յառաջացներ, միայն, ինչպէս գրած էի, լաւ է  
որ Մարսէյլէն ձգուին: Իսկ անձնապէս, իմ նամակի հասցէս ձեր ու-  
նեցածն է: Բիւրօն կարող է միմիայն նամակ ղրկել այդ հասցէով,  
հոգ չէ թէ իմ նամակները Մարսէյլէն կամ ձեր միջոցով ղրկուին: Լաւ  
է որ դուք ճշդէք այս պարագան: Իսկ գալով գրքի կամ պրօշիւրի,  
միշտ յարմարագոյն ուղեգրի՞ծը Ծովափն է, անիկա կրնայ ցամաքի

ճամբով ու առանց փօստի – Արծիւ(2) ղրկել եւ այս վերջինն ալ արդէն միջոց ունի մեզի հասցնելու: Միայն պէտք է խիստ հրահանգ տալ որ ղրկուածները յապաղում չի կրեն անհոգութեան պատճառով: Շնորհակալութեամբ ստացած եմ նաեւ մէկ թիւ P[ro]A[rmenia] ուր կային իմ երկու նամակներս: Այս պահուն որ կը գրեմ, ստացած ենք դեկտ.ի թիւ Դրօշակը շատ կիսատ. միայն երկու թերթ, էջերէն յայտնի է թէ շատ ճոխ ըլլալու է այս անգամուան թիւը, բայց դժբախտաբար պակասները պակաս կը մնան: Այնքան հետաքրքիր էի տեսնելու «Խեղդեցէ՛ք զայն» յօդուածը պարունակող թիւը:

Ոսկեհանքի(3) հետ տաք յարաբերութեան մէջ ենք. վերջին թղթաբերներով ստացայ 4,5 ոսկին եւ որուն համար շնորհակալութիւնս կը յայտնեմ, արդէն գալիք անգամով պիտի գրեմ նաեւ Բիւրօին ալ:

Ռահվերը(4) ասկէ մէկ երկու շաբաթ առաջ հոս էր եւ իր հետ պէտք եղած տեսակցութիւնն ունեցայ: Իրեն ղրկած տասը ոսկին յանձնեցինք եւ այս պահուն ետեւէ է անցագրի. միայն իր գրածին համաձայն բաւական դժուարութիւն կայ այս մասին, պէտք պիտի ըլլայ որ քիչ մը կաշառք կերցնէ, ուստի դիւրաւ կարելի է ըմբռնել թէ մնացած ստակը զինքը իր տեղը հասցնելէն ետք հատած պիտի ըլլայ, կամ շատ շատ 1-20 ղուրուշ աւելցուք մը պէտք է ըլլայ մնացածը: Հետեւաբար, կը խնդրեմ որ աշխատիք միջոցներ ձեռք առնել զինքը հոն առանց դրամի չի ձգելու. այդ վիճակը զինքն անգործութեան պիտի մատնէ:

Ձեռք բերուած Լեոնավայրի(5) նոր յաջողութիւնները, որոնց տեղեկացուցած էիք, անհունապէս ուրախացուցին զիս: Այդ քահանան խիստ օգտակար պիտի ըլլայ մեզի, երբ ուզենք ուղղակի [զ]ինք դնել Արծուաբերդին(6) մէջ: Ռահվերի հետ խորհրդակցելէ ետք խիստ յարմար տեսանք որ ես Հովիտ(7) անցնիմ ուր կարելի է շատ աղուոր յաջողութիւններ ձեռք բերել, մանաւանդ հոն ունենալիք իմ պաշտօնս, զբաղումներս ու յարաբերութիւններս պիտի դիւրացնեն մեր գործունէութիւնը: Հովիտը խոստմնալից ու կոյս քաղաք մըն է. ճարպիկ ու շրջահայեաց գործիչ մը հարուստ հունձք կարող է ընել: Ինչ է ձեր կարծիքն այս մասին. աւելի ընդարձակը գրած ենք Ֆարհատին(8) որմէ կրնաք տեղեկանալ թէ անոնք եւ թէ իր կարծիքը: Մօտ օրերէն Հովիտցի մեր մէկ ընկերը կը մեկնի իր ծննդավայրը,

հոն անիկա կարող է լաւ օժանդակ ըլլալ մեզի. հիմա մենք կ'աշխատինք հոն մեզի ուսուցչական պաշտօն մը ճարել, նայինք:

Դրամական ձեռնարկներու նոր ծրագիրներ կը մշակենք, որոնց յաջողութենէն ետք կ'իմացնեմ ձեզ արդիւնքը. այո՛, երկիրը շատ ընդունակ է, միայն գործիչն է կարելորդ, սակայն առաջին քայլերը հարթելու համար արտասահմանեան կօմիտէները անպայման կերպով պէտք է օժանդակեն: Դալ փօստով պիտի ղրկեմ ձեզ կարգ մը գրութիւններ եւ հետզհետէ այսպէս շարունակաբար քանի մը շաբաթ: Այդ թուղթերը երբ ամբողջանան կը ղրկէք Եւրոպայի Ուսանողական միութեան, որոնց հասցէն գիտէ Ֆարհատ:

Եղբայրական ողջագուրանքով՝  
ԱՍԼԱՆ


Որքան ալ որ գրած եմ հասցէներու մասին, աւելի լաւ է որ հետեւեալները գործածէք ասկէ ետք՝ ձեր ծանօթ գիւղով այսինքն (Մ.ի): Ահաւասիկ՝

Սամուէլ Մանուկեան, Մինաս Մուրատեան, Միսաք Դաւիթեան, Մովսէս Հէրօեան: Ձգեցէք ձեզի ցոյց տրուած քաղաքէն: Միայն պահարանները հաստատուն եւ մէջիններն ալ ճերմակ թուղթով մը պատուած:

- 1.- Սիրելի եղբայր՝ «Դրօշակ»ի խմբագրութիւնն է կամ նոյնիմֆն Արեւմտեան բիւրոն:
- 2.- Ծովափ – ծածկանուն Տրապիզոնի, Արծիւ՝ Երզնկայի:
- 3.- Ոսկեհանք – ծածկանուն Իզմիրի:
- 4.- Ռահվեր – ծածկանուն Կիլիկիոյ գործիչներէն Միսաք Վարդանեանի:
- 5.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ:
- 6.- Արծուաբերդ – ծածկանուն Զէյթունի:
- 7.- Հովիտ – ծածկանուն Այնթապի:
- 8.- Ֆարհատ – ծածկանուն Թիւրքմէն Հայկի, որուն կը տրուէին նոյնպէս Հրաչ եւ Սեպուհ ծածկանուններ:


Փաստ. 821-7բ

Հետեւեալ երկու նամակները, հաւանաբար գաղտնի թանաքով գրուած ըլլալու եւ չկարենալ «բանալու» բերումով, Հ.Յ.Դ. արխիւներու պատասխանատուները «Ասլանի գրած նամակները» նշումով տուած են երկու էջի վրայ:



Ասլանի գրած նամակը 1902 Մարտ 1/14:

Փաստ. 821-9բ



Ասլանի գրած նամակը 1902 Մայիս 1/14:

Գաղտնի թանաքով գրուած եւ ապա արտագրուած այս նամակին հեղինակն է Լեոնավայր-Կիլիկիոյ գործիչներէն Ռանվեր (Վարդանեան Միսաք): Ուղղուած է Պանֆ Օթթոմանի հերոսներէն Հայկ Թիրեաքեանի (Ֆարհատ):

Ռ. Զարդարեան-Ասլանի մէկ գրութիւնը չըլլալով հանդերձ Ռանվերի գրութիւնը հետաքրքրական է Զարդարեանի մասին իր կատարած բնութագրումով, ինչպէս նաեւ Կիլիկիայէն հարբերդ երկարող շրջանի մասին տուած տեղեկութիւններով:

Կու տանք ամբողջութեամբ:

Արաբկիր, Մարտ 2/15 1902

Սիրելի Ֆարհատ(1),

10 հատ ոսկին այս շաբաթ միայն ստացայ Ասլանէն(2), թէւ ամիս մը առաջ իր բովն էի: Ձեր ինն ուղարկած չէք որ 10 օսմ. ոսկի կը պարունակէր, գանձեցի: Եռանդով կ'աշխատիմ 2.14.18.2.13.7.4.(3) ստանալու եւ մեկնելու դէպի Ս[ղերդ]:

Ասլանի վրայ ունեցած գաղափարս հետեւեալն է առանց վերապահութեան: Ասլանը ազնիւ, եռանդուն բայց ոչ բաւականաչափ զգոյշ տղայ մ'ն է: Զերմեռանդ աշխատող մ'է մեր գործին համար: Մեծ հաւատ ունի Արծուաբերդի(4) գործին վրայ ու սրտանց կը ցանկայ յաջողութեան համար: Միայն քիչ մը ցատկելով հասնիլ կ'ուզէ նպատակին, որովհետեւ ուշ մնացած կարծելով անապարել կարող է, վտանգներէ վախցող չէ, սակայն վտանգի չի հանդիպած ըլլալը կրնայ ատոր պատճառ նկատուիլ: Ասլանը կրնայ օգտակար դառնալ մեզի, պայմանաւ որ զինքը չը մղենք այն կարգի գործերուն մէջ, որոնց մէջ այո մը ըսելով կա-

րենայ ծանրակշիռ գործ մը կատարուած նկատուիլ: Ձեմ գիտեր թէ ինչափ տոկուն է վտանգի ժամանակ: Ասլանը Հովիտ(5) գնալու յօժար է, եթէ հոն գտնուի պաշտօն մը, որ իր այսօրուայ պիտնէն չի պակսեցնէ, այսինքն 4-8 ոսկիէն պակաս չլինի: Լուրջ տղայ է եւ կրնայ հոն օգտակար ըլլալ, մանաւանդ ֆանի որ իր ծննդավայրը չէ: Հիմակ, եթէ Հովիտի մէջ պաշտօն մը գտնուի ----- եւ պաշտօնէն ստանալիք գումարը 4-8 ոսկիէն ինչ որ պակաս ըլլայ, այդ պէտք է լրացուի, կ'ըսէ, իր ընտանիքը պահելու համար:

Նախորդ նամակիդ մէջ գրած էիր թէ մեր ընկերներէն մէկը կարծեմ Եղուարդ անունով պիտի գայ Աւար-Աւեր(6) ուր երեքովի խորհրդակցութիւն պիտի կատարէիք եւ այլն: Ո՞ր մնաց այդ ընկերը: Այդ մասին բան մը չէք գրած: Պատգ. Ժողովի խօսք մ'ալ կար այն կէս բացուած նամակին մէջ. ի՞նչ Եղուարդ:

Հովիտի մէջ երեսան եկած ուժերը որո՞նք են արդեօք, չեմ գիտեր թէ եւ, բայց հաւանական է թէ Ասլանը կը գրէ, ֆանի որ գիտէ: Ձեր գրած Ք---- եթէ մեկնած չլինի, կրնամ տեսնել եւ հասկնալ ինչ ըլլալը ու հարկ դատածս խորհուրդները տալ եւ առնել: Կը ջանամ կապել զինքը գործին:

Յօժար եմ մնալ Ս[ղերդ]. ոչ թէ բաւական ժամանակ, այլ որքան որ հարկաւոր լինի եւ յօժար եմ նաեւ գնալ հոն ուր գործը զիս կը մղէ:

Թէ ինչքան կարողութիւն ու ձեռնհասութիւն պիտի կարող լինեմ ի հանդէս բերել գործունէութեան այդ նոր շրջանին մէջ, ատիկա տակաւին ես իսկ չեմ գիտեր: Կը լարեմ բոլոր ոյժերս, որպէսզի կարող լինեմ գործին պահանջուած անձնատրութիւնը լինելու:

Տեղեկագիր կը պահանջես, սակայն չեմ գիտեր թէ ինչ բաժնի վրայ: Քանի որ տասը ամիսներէ աւելի է որ գործէն հեռու եմ, ու գաղափար չունիմ այդ ժամանակաշրջանին մէջ կատարուածներուն, կամ չի կատարուածներուն վրայ: Իրաւի ցաւալի շրջան մ'էր այդ մօտ միամեայ բացակայութիւնս գործին վայրէն, սակայն ի՞նչ արած երբ այս ֆաղափին մէջ յուսացածս դրամը շուտ ձեռք պէտք է անցընէի անկարելի եղաւ, մինչդեռ միւս կողմէ դուք չունէիք ինձ հասցնելու դրամական տրամադրելի ոյժեր:

Որքան որ այսօր դրամական – առ այժմ բաւելի – գումար մը կայ ձեռքիս մէջ, սակայն, պիտի ջանամ կարելի եղածին չափ ֆիշ ծախսել:

2.14.18.2.13.4.7.-ս(3) յաջողութիւն անմիջապէս պիտի գրեմ ձեզ եւ պիտի մեկնիմ: Դուք կրնաք նախկին հասցէով գրել, միայն թէ՛ տանկերէնին մէջ միայն արդէն գրածս անձին անունը մականունը, առանց իմ անուն

մականունն գրելու: Հայերէնին մէջ միայն կը խնդրէ՛ հասցնել ինձ:

Ս[ղ]երդ-էն 14.19.2.14.-ին(7) գրուածները, իմ կարծիքով դիւրաւ վնոէ-լի բաներ չեն. շատ ծանր, շատ սուղ կրնայ նստիլ մեր վրայ այդ ձեռ-նարկը, մանաւանդ որ ապագայ գործերուն հիմին հետ կը խաղայ: Այդ պատճառով ինչպէս այս փօստով գրած եմ նաեւ Գալֆային(8), պէտք է զգուշացնել այդ անձինքն այդ կարգի ֆայլէ մը, մինչեւ որ հոն հասնելով, ճշգրիտ գաղափար մը կազմեմ ու ձեզ տեղեկագրեմ:

Մոռցայ գրելու թէ Հովիտի համար երեսան եկած նոր ոյժերը, եթէ Աս-լանը ներկայացուցած է ձեզ, ատոնք արդէն ծանօթ բարեկամներ են ինձ, սակայն, տակաւին Աւար-Աւեր կը գտնուին: Զատիկէն ետքը անոնցմէ մին պիտի մեկնի դէպի Հովիտ:

Նոր հրահանգներդ կրնաս տալ ինձ արդէն տուածս հասցէով:

Կը կարծեմ թէ թուականէս ֆանի մը շաբաթ ետքը մեկնած կը լինեմ: Կը ջանամ հոն հասնելուս իսկոյն հասցէ տալ ձեզ որպէսզի նամբան կարճընայ, ըստ որում նախկին հասցէով ալ կը հասնի:

Գրածիդ պէս կ'ընեմ, երբ 14.19.2.14.ը(7) ուղարկեմ դէպի Արծուա-բերդ:

Բարեւներ, իսկ քեզ ընկերական ջերմ համբոյրներ:

ՌԱՀՎԵՐ

1.- Ֆարհատ – ծածկանուն Պանֆ Օթթումանը գրաւող յեղափոխականներու ղեկավար ղէմֆերէն Հայկ Թիրեաֆեանի, որ այլապէս կը կրէր նաեւ Հրաչ եւ Սեպուհ կեղծանունները:

2.- Ասլան – ծածկանուն Ռուբէն Զարդարեանի:

3.- Կը վերծանուի՝ անցագիր:

4.- Արծուաբերդ – ծածկանուն Զէյթունի:

5.- Հովիտ – ծածկանուն Կիլիկիոյ Այնթապ ֆաղափ:

6.- Աւար-Աւեր – ծածկանուն Խարբերդի:

7.- Կը վերծանուի՝ Նշան:

8.- Գալֆայեան Յարութիւն:

Փաստ. 821-9ա

Հ.Յ.Դ. Կեդր. դիւան

Պատճէն(1)

[1]902 Մայիս 1/14

Սիրելի՛ ընկեր(2),

Բազմաթիւ պատճառներ արգելք եղան որ նամակս այսքան ուշանայ: Նախ որ Փարիզէն եկած Միսաք Պաղտասարեանի մէկ նամակը բացուած ըլլալով՝ թէեւ անվնաս բայց կասկած վերցնող տողի մը համար մեզ հարցաքննութեան ենթարկեցին. արդէն իսկ ձեր վրայ մօտէն հսկողութիւն տեղի կ'ունենայ այժմ: Երկրորդ, մեր ընկերներէն մէկը ուրիշ գործի մը համար ձերբակալուեցաւ եւ տակաւին հարցաքննութեան տակ է: Ուստի, ամենայն փութով գրեցէք Միսաք Պաղտասարեանի որ ասկէ վերջ ոչ իր թերթէն եւ ոչ ալ նամակ ղրկէ մեզի: Յետոյ, այս անցած շաբաթներուն մէջ՝ նպաստաւոր առիթէ մը օգտուելով դէպի Տիգրանակերտ ճամբորդութիւն մ'ըրի, հոն կազմակերպութիւն մը կարենալ ստեղծելու համար: Հիանալի դիրք մը ունի Տիգրանակերտ եւ շատ ալ յարմարութիւն՝ ինքնապաշտպանութեան խիստ յաջող ծրագիր մը մշակելու համար, միայն թէ գործող պէտք է ու դժբախտաբար մարդն է որ կը պակսի: Վերջապէս յաջողեցայ մէկ քանի շատ կարելոր անձնաւորութիւններ ձեռք բերել, որոնք խոստացան կամաց կամաց աղէկ գործի մը սկզբնաւորութիւնը դնել:

Ասկէ առաջ ալ թէեւ փորձել ըրած ենք, բայց այդ տեղէն ժամանակին Սեպուհի(3) ներկայացուցած քահանան երբեք լաւ յանձնարարուած չէր մեզի. աղէկ քահանայ մըն է, բայց նոյնքան ալ անգաղտնապահ եւ դիւրափոփոխ, ոչ ալ պէտք եղած վարկը կը վայելէ իր քաղաքացիներուն քով:

Տիգրանակերտ եթէ լաւ կազմակերպութեան մը տակ դրուի՝ ապագային կարող է մեզի շատ շատ օգտակար դառնալ. դրամը չէ որ հոն կը պակսի, մարդիկը շատ հարուստ են ու եթէ գործին վրայ

պէտք եղած հաւատքը կազմեն, ես կը հաւատամ թէ յեղափոխութիւնը պէտք եղածէն աւելի պիտի կրնայ նպաստաւորուիլ: Արդէն ձեր հասցէն տուած եմ իրենց եւ պիտի թղթակցին ձեզի հետ: Դուք անմիջապէս մեր հասցէէն տարբեր հասցէ մը ցոյց տուէ՛ք իրենց, որպէսզի այս ծանօթ հասցէն շատ գործածուելով չի վտանգուի, նոյնպէս ձեր նամակները հոն խիստ զգուշութեամբ գրեցէ՛ք, որովհետեւ այդ գաւառին մէջ կառավարական խստութիւնը տարապայման է: Քաջալերեցէ՛ք միշտ զիրենք ու թելադրեցէ՛ք որ վառ մնան ու կազմակերպուին: Զեզի հետ թղթակցողը հիւսմի է: Խիամ՝ Սասունի մօտ գաւառ մըն է, նոյնքան քաջարի: Այդ պարոնը խոստացած է որ հոն ալ կազմակերպութեան մը պիտի աշխատի եւ կապէ զայն Սասունի հետ: Այս մասին աւելի ընդարձակ տեղեկութիւններ կարող էք քաղել իրմէ: Իբրեւ ծածկագիր, տուած եմ իրենց Մայր Արաքսի առաջին համարը:

Դառնանք հիմա մեր խնդիրներուն: Ֆարհատի(4) ալ երկարատեւն է ի վեր նոյնպէս գրած չեմ, վերի պատճառներով. յետոյ, մանաւանդ Պոլսոյ թերթերէն իմացանք թէ իր կեցած քաղաքին մէջ սկսած են ձերբակալութիւններ տեղի ունենալ: Ուստի, կը կասկածէի թէ մեր գրածներն ալ մի գուցէ վտանգուին: Այսպէս, մինչեւ հիմա տարակոյսի մէջ եմ. իրմէ ալ երբեք լուր առած չունիմ: Կը սպասեմ որ դուք գրէք իրաց կացութիւնը. եւ եթէ դիւրութիւն ունիք միշտ՝ գրէք նոյնպէս մեր մասին Ֆարհատի եւ ցոյց տուէ՛ք ձեր քով գտնուած մեր հասցէն ու յանձնարարէ՛ք որ ասկէ ետք այլեւս նոյն հասցէով գրէ մեզի իր նամակները: Վերջին աստիճան տազնապի մէջ եմ հասկընալու թէ Ոսկեհանքի(5) գործերը ի՞նչ ընթացքի մէջ մնացեր են:

Խորէնին նամակն ալ ճիշդ տազնապալի օրերուն ընդունած եմ. չեմ գիտեր թէ ժամանակ պիտի ունենամ այս շաբթու իրեն ալ գրել, որովհետեւ բաւական կարեւոր գրութիւններ ունիմ հոս հոն ուղղելիք, ուստի եթէ այս անգամ չի կրցի գրել, ներողամիտ թող ըլլայ, գալ անգամին անպատճառ կը գրեմ ձեր միջոցաւ ու ծածկագիր: Ի հարկէ դուք երբ ղրկէք իրեն նամակը, պէտք եղածը կ'իմացնէք իրեն՝ որ բանայ գրութիւնս: Ուսումնասիրութիւն մըն ալ պիտի ղրկեմ իրեն որ «Մուրճ»ի(6) մէջ տայ, այն ալ կարելի չէ որ ձեր հասցէով ղրկեմ. ուստի Իզմիր «Արեւել[եան] մամուլ»ի(7) խմբագրութեան պիտի ղրկեմ՝ իր հասցէն ցոյց տալով, որպէսզի եւրոպական փոստով իրեն ղրկեն: Աշխարհագրական տեղեկագիրս ալ կ'իսատ մնաց,

որովհետեւ ստիպուեցայ ընդհատել՝ կասկածի օրերուն ու պահել.  
չեմ գիտեր թէ ե՞րբ պատեհութիւն պիտի ունենամ աւարտելու:

Ձեր վերջին նամակը ստացեր եմ: Ո՛ր մնաց արդեօք Մակեդո-  
նական եւ Ալպանական գործը: Հետաքրքիր ենք:»

Եղբայրական աղապանտանքով՝  
Ձերդ  
ԱՍԼԱՆ

1.- Պատենէն խորագրով կը նշուին ընդհանրապէս գաղտնի մելամով գրուած եւ ապա  
«Դրօշակ»ի խմբագրութեան միջոցով արտագրուած նամակները:

2.- Սիրելի ընկերը, այս պարագային, «Դրօշակ»ի խմբագրութիւնն է, որուն ուղղուած  
է Ասլան/Զարդարեանի այս նամակը:

3.- Սեպուն – ծածկանուն Թիրեաֆեան Հայկի:

4.- Ֆարհատ – ծածկանունն է միեւնոյն Թիրեաֆեան Հայկի, որ այդ օրերուն կը գտնուէր  
Եգիպտոսի Աղեֆսանդրիա ֆաղաֆը:

5.- Ոսկեհանֆ – ծածկանուն Իզմիրի:

6.- «Մուրն» – 1889-1907 տարիներուն Թիֆլիս հրատարակուող լրագիր:

7.- «Արեւելեան մամուլ» – 1871-1909 տարիներուն, ընդհատումներով Իզմիր (Զմիտ-  
նիա) հրատարակուող պարբերաբերք:

Փաստ. 821-10ա

Հ.Յ.Դ. Կեդր. դիւան

Պատճէն

[1]902 Յուլիս 26  
Խարբերդ

Սիրելի Ֆարհատ(1),

Ժամանակին ստացած եմ ձեր բաց նամակը եւ պատասխանած. չեմ գիտեր թէ ինչո՞ւ այսչափ երկար լռութիւն կը պահէք. կը կասկածիմ թէ մի գուցէ մեր գործերը հոտ խիստ ձախող հանգամանք մը առնելով՝ ստիպուած ըլլաք հեռանալ կամ վտանգուիլ. ամէն պարագայի տակ անձկութեամբ կը սպասեմ ձեր լուրերուն:

Անցած փոստով Ծովափէն(2) նամակ մ'առի Վարդանեանէն(3) որ կ'իմացնէր թէ մօտ օրերէն կը մեկնի դէպի Սահմանաբերդ(4), եւ այս առիթով վերիվերոյ հաշիւ մը կը ներկայացնէր իր ծախքերուն, յայտնելով թէ խիստ քիչ մաս մը դրամ մնացած է քովը, ուստի կը խնդրէր որ իր ցոյց տուած հասցէին՝ երկու ոսկիի փոխգիր մը քաշենք, հետեւաբար յառաջիկայ փոստով այս երկու ոսկին պիտի հանեմ իրեն:

Բայց, ամէն պարագայի տակ մեր գործունէութիւնները կանոնաւորութեան մը մէջ դնելու համար, պէտք է որ մասնաւոր տիտիբլին մ'ունենանք. օրինակ, կրնայ ըլլալ որ իմ այս ղրկելիք երկու ոսկիի մասին դուք արտօնութիւն չէք տար, ղրկելէս ետքը կրնայ ըլլալ որ դիտողութիւն մ'ընէք. եւ այսպէս փոխադարձաբար ուրիշ այլեւայլ պարագաներու տակ. ուստի լաւ է որ երկրի դրամական գործերը մեր ընկերներէն մէկու մը միայն յանձնուի եւ անոր ալ յատուկ վարկ մը տրուի մէկ տարուան միջոցին իւրաքանչիւր գործիչի ծախքերուն համար: Կը յուսամ թէ դուք ալ նկատի ունենալով ապագայ անպատեհութիւնները, այս մասին որոշում մը կու տաք:

Վերջին ծայր անհամբեր եմ իմանալու, թէ ո՞ւր յանգեցան ձեր տեղական գործերու մանրամասնութիւնները: Բռնի հանգանակութիւնը ի՞նչ արդիւնք տուաւ. տեղական կազմակերպութիւնը վտանգուեցա՞ւ. քանի՞ ընկերներ ձերբակալուած են եւ ի՞նչ յոյս կայ անոնց ազատմանը համար:

Իմ նախորդ նամակիս մէջ երկարօրէն պարզած եմ մեր տեղական

գործերու մասին եւ մօտակայ քաղաքի մը մէջ ըրած նոր ձեռնարկութեանցս նկատմամբ: Հետեւաբար նոր կրկնութիւններու տեղիք չկայ:

Ասկէ առաջ դիմում ըրած էի որ Արծիւի(5) մեր ընկերները իրենց մասնաւոր հոգածութեան առարկայ դարձնեն Լեռնավայրը(6) եւ կարելի եղած տեղեկութիւններով սատարեն անոր. անոնք սիրով ընդունած են այդ հրաւերը եւ նոյնիմաստ դիմում մ'ըրած են Ծովափի ալ, որուն հետ, ինչպէս գիտէք, սերտօրէն կապուած են: Ծովափը ելեր շատ տղայական պատասխան մը գրեր է մեզի, սխալ հասկնալով մեր առաջարկն ու դիմումը: Ես պէտք եղած կերպովը պատասխանեցի իրենց: Միայն այս ամէնուն մէջ իրողութիւն մը աչքիս զարկաւ. սա՛ թէ մեր երկրի կարելոր Կ. կոմիտէներն անգամ անտեղեակ են կուսակցութեան ընդհանուր եւ լուրջ հայեացքներուն: Յաւալի կէտ մըն է աս որ պէտք է ուղղել: Չէ՞ք կարծեր թէ նոր Պատգամ. Ժողովի մը պէտքն զգալի է: Ես կը կարծեմ թէ նման Ժողով մը նոր ոգեւորութիւն եւ ընդհանուր իրերահասկացողութիւն մը յառաջ պիտի բերէ:

Երկար ատենէ ի վեր նոյնպէս տեղեկութիւններ եւ գրութիւն ստացած չեմ Աղեքս[անդրիա]յէն եւ Արեւմտ. Բ[իւրօ]յէն, չեմ գիտեր թէ շահագրգռական նորութիւն մը կ'ա՛յ: Նոյնպէս տեղեկութիւն չունիմ Լեռնավայրի մասնաւոր տեղերէն: Հաճեցէք անոնց մասին երկարօրէն գրել: Ձեր նամակներու ընդհատումը շատ կը խռովէ զիս: Կը խընդրեմ որ առաջունան պէս ձեր նամակները ուղղէք իմ ճշմարիտ հասցէիս, միայն բաց նամակի մէջ իրական խնդիրներու վրայ խօսելով: Իսկ թուրքերէն [արաբատառ թրքերէն](7) կը գրէք (Մամուրէթ-Իւլ-Ազիզ), փոխանակ [արաբատառ թրքերէն]-ի(7):

Անձկութեամբ սպասելով ձեր գրութիւններուն, կը մնամ միշտ եղբայրակից ձեզի՝

ԱՍԼԱՆ

1.- Ֆարհատ – ծածկանուն Հայկ Թիրեաֆեանի, որ այդ օրերուն կը գտնուէր կամ Կիլիկիա եւ կամ Իզմիր: Յիշեցնեմ որ ներկայ գրութիւնը Ռ. Զարդարեանի (Ասլան) նամակի պատկէցն է:

2.- Ծովափ – ծածկանուն Տրապիզոնի:

3.- Կիլիկիոյ գործիչներէն Միսաֆ Վարդանեան:

4.- Սահմանաբերդ – ծածկանուն Մարաշ ֆաղափի:

5.- Արծիւ – ծածկանուն Երզնկա ֆաղափի:

6.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի շրջաններուն:

7.- Արաբատառ թրքերէնի կողմին, փակագծերու մէջ հայատառ Մամուրէթ- Իւլ-Ազիզ, որ խարբերդ նահանգին Կեդր. ֆաղափի անունն էր:

Հ.Յ.Դ. Կեդր. դիւան

Պատճէն

Փաստ. 821-11ա

[1]902 Օգոս. 30

Խարբերդ

Սիրելի՛ս Վահրամ(1)

Երկար ատենէ ի վեր ձեզմէ տեղեկութիւն մը չունիմ. Ֆարհատն(2) ալ շատոնց է որ չէր գրեր, բայց վերջապէս անկէ անցած փօստով ստացայ երկու նամակներ ու պատասխանեցի այս անգամով:

Այս անգամ երկու գրութիւններ կը ղրկեմ ձեզի, մէկը Ասլան ստորագրութեամբ, P[ro] A[rmenia]-ի ղրկելու, միւս «Դ[րօշակ]»-ի: Այդ միւսը վստահելի անձնաւորութիւն մը ղրկած է ինծի եւ կը խօսի [պարապ ձգուած բաժին] վրայ. գրութիւնն առանց սրբագրելու, որ իսկութեամբը խմբագրութեան կը ղրկեմ, իրենք իրենց ուզած լեզուի բարեփոխութեամբը թող հրատարակեն: Այս անգամ կարճ պիտի գրեմ ձեզի, արդէնն երկարօրէն գրած ըլլալով Ֆարհատի: Ուշադրութիւն տուէք ասկէ ետք ինծի ղրկուելիք նամակներու համար ցոյց տուած նոր հասցէիս:

Կարիճէն(3) լուրեր չունիմ, իրեն ղրկուելիք նամակս արդեօք հասցուցած էք իրեն, ինչո՞ւ չը պատասխանեց, հաճեցէք գրել իրեն եւ իմացնել ինծի իր պատասխանը: Ակնդէտ իր նամակին կը սպասեմ:

Առայժմ եղբայրական համբոյրներով՝  
Ձերդ ԱՍԼԱՆ

Նոր հասցէս՝


Պ. Նազարէթ Պիւլպիւլեան

Եղէգի գիւղ (Մամուրէթ-Իւլ-Ազիզ):

- 1.- Վահրամ – ծածկանուն Կիլիկիոյ գործիչներէն Յարութիւն Գալֆայեանի:
- 2.- Ֆարհատ – ծածկանուն Հայկ Թիւեաբեանի:
- 3.- Կարին – ծածկանուն Գոյումնեան Միսաի, ծանօթ Առանձաւ գրական ծածկանունով:

Փաստ. 821-11բ

Ռուբեն Զարդարեանի գաղտնի մեղանով գրուած բայց չվերժանուած  
մէկ այլ նամակ:



Ասլանի գրած նամակը 1902 թ. Օգոստոս 30, Խարբերդից

31/13 Օգոստոս 1902

Երթեւեկութեանց խստութիւնը կը շարունակուի, այնպէս որ, ինչպէս ասկից առաջ ալ առիթ ունեցած ենք գրելու, մէկ նահանգէն մօտաւոր մէկ նահանգն անցնելու համար իսկ անլուր դժուարութիւններ կան: Բայց երկրի ժողովուրդը բաւարարութիւն չի գտներ իր հողին վրայ՝ ուր կեանքի, պատուի, ինչքի անապահովութեան քով՝ չոր հացն ալ կը պակսի: Զեզի գաղափար մը տալու համար թէ ի՞նչ դժոխային դրութեան մը մէջ է որ կ'ապրի հայը, բաւական կը սեպեմ հետեւեալ իրողութիւնները ձեր նկատառութեան յանձնել:

Ամէն շաբաթ գրեթէ քսանով, յիսունով խումբեր ճամբայ կ'ելլեն ասկէ գաղտնի ճամբաներով արտասահման անցնելու. ամէնքն ալ Ամերիկա է, ուր երթալ կ'ուզեն: Իրաւ է թէ այդ խումբերու մէջ շատ քաղաքացիներ կան, բայց մեծամասնութիւնը գիւղացիներէ կ'ամբողջանայ: Երբ դուք տեսած ըլլաք Խարբերդի դաշտը, ուր ափ մը անմշակ հող իսկ չկայ, երբ իմանաք թէ Խարբերդի դաշտին պտղաբերութիւնը առածի կարգ անցած է Հայաստանի մէջ,՝ «Խարբերդ օվասի՛ ալթուն եուվասի»(1),՝ երբ մօտէն հետեւիք հայ երկրագործին շարքաշ, լարուած աշխատասիրութեան՝ այն ատեն միայն պիտի կըրնաք լայն ծանօթութիւն մ'ունենալ մեզ պաշարող թշուառութեան մասին: Արդ, ո՛չ այդ գերմարդկային աշխատութիւնը եւ ոչ ալ բնութեան լիառատ հոգածութիւնը կարող են նախնական սնունդ մ'ապահովել եւ որովհետեւ պանդխտութիւնը ի սպառ արգիլուած է, եւ որովհետեւ նաւահանգիստները երկաթէ պատնէշներով ամրափակուած են՝ հայաստանցի ժողովուրդը կը դիմէ մտքէ չանցած զոհողութեանց ու ճարտարութեանց: Մասնաւոր թուրք ջորեպաններ կան, որ կը բանին դէպի Կարնոյ կամ Հալէպի կողմերը. այդ ջորեպանները սովորական ճամբաներէն դուրս գաղտնի, ոստիկանութենէն անտեսանելի անցքեր կը ճանչնան, կամ այլեւայլ քաղաքներու մէջ աս ու ան փօլիսին հետ յատուկ համաձայնութեան եկած են՝ առանց

անցագրի ճամբորդներուն անցքը ապահովելով: Հոս մարդ գլուխ մօտաւորապէս 10 ոսկիի կը սակարկեն մինչեւ արտասահման անցնելու պայմանով. դիրին է հաշուել թէ ջորեպան մը մէկ անգամուան փոխադրութեամբ հարիւրաւոր ոսկիներու շահ մը կ'ունենայ: Բայց խնդիր է գիտնալ թէ փախչելու ստիպուած մարդը ինչ շարշարանքով, ինչ ծանր ու անգութ տոկոսներով է որ պէտք եղած դրամը կը գտնէ ասկէ անկէ եւ ճամբայ կ'ելլէ: Հիմա մտքով հետեւեցէք այդ փախստական ուղեւորութեան. պէտք է 10-15-20 օրուան ճամբայ մը մտքով կտրել, գիշերները առանց անկողնի, առանց ծածքի, քարի մը վրայ, լերան մը, ձորի մը մէջ գիշերել, շատ անգամ օրերով անօթի մնալ. շատեր երեք օր, երեք գիշեր ոստիկանութեան աչքէն ազատ մնալու համար ստիպուած են խոտ ուտել. պէտք է մտաբերել մէյ մը Հայաստանի լեռներն ու բարձունքները, ուր ամառը, այս ամսուն իսկ, ձիւնն անպակաս է եւ մարդ ստիպուած է կրակ ճարել տաքնալու համար. այս տեղերուն վրայ է որ շաբաթներով անպատըսպար, մերկ ու անօթի կը մնան դժբախտ փախստականները: Բայց յաճախ ու էն ահաւորը այն է որ սահմանագլխին մօտիկ, այդ բոլոր տանջանքներէն անցնելէ ետք՝ յանկարծ կը ձերբակալուին, ու գրեթէ միշտ ալ այսպէս կ'ըլլայ. հարիւրին յիսունը եթէ կը յաջողի խուսափիլ, միւս կէսը բռնուելով ետ կը դարձուի: Հիմա ալ հետեւեցէք այդ դարձին՝ բանտէ բանտ, ձեռքերը շղթայուած, անօթի, վրան գլուխ քրքրուած, բզքտուած, մերկ ու արիւնլուայ ոտքերով, քանի որ այդ ձերբակալութեան անմիջապէս կողոպուտն ալ կ'ընկերանայ, կամ չերքէզներ, քիւրտեր կը կողոպտեն եւ կամ կառավարական պաշտօնեաներ: Թշուառութիւնը հինգ անգամ դժոխային կը դառնայ այս կսկծեցուցիչ դարձէն ետք. աղքատութեան կ'ընկերանայ նաեւ պարտք մըն ալ, որ երթալով պիտի աճի տարուէ տարի: Եթէ խեղճ գիւղացին պզտիկ գետին մը, ափ մը պարտէզ ունէր – որը գրաւի դնելով անկասկած կրցած էր ճամբու ծախքը հայթայթել – ան ալ ձեռքէն կ'առնուի, ալ անկէ ետք Աստուծոյ ողորմութիւնն հասնի՜...: Անցած շաբթուն ոստիկանութիւնը լուր առած ըլլալով թէ խանգեղցի(2) ծանօթ թուրք ջորեպան մը նորէն փախստականներ կը տանէ՝ փութով հեծելազօրքեր ու փօլիս-գօմիսէր մը ղրկեց Մալաթիայէն անդին, ուրկէ 40 գիւղացիներ ձերբակալելով ետ դարձուցին: Տեսնելու էր այն ողբալի, այն վերին աստիճանի թշուառութիւնը, որ դրոշմուած էր անոնց դէմքերուն վրայ: Խումբը կանգ առաւ

կառավարական շէնքին առջեւ. հոն այդ թշուառները սկսան «Հաց, հաց կ'ուզենք մեր զաւակներուն» աղաղակել:

Այսօր լոկ Խարբերդի դաշտէն ու քաղաքէն 15,000-ի չափ պանդուխտ ունինք Ամերիկա, որոնց ընտանիքները հոս կը մնան, ոչ միջոց կայ պանդխտողներուն՝ հայրենիք դառնալ եւ ոչ ալ հոս մնացողներուն՝ երթալ իրենց սիրելիները գտնել. առեւտրականներուն մեծամասնութիւնը, որ փոքր դրամագլուխներէ, խանութպաններէ կազմուած է, տարուէ տարի կը քայքայի, կը չքանայ: Ապառիկները դժուարութեամբ կը գանձուին, որովհետեւ թուրքեր՝ բռնութեամբ հետդ սակարկելէ ետք՝ իրենց տալիքը ետ չեն դարձներ, սպասելով երկրորդ ջարդի մը. դատարանը բաց է, այո, սակայն ով պիտի ուզէր հոն դիմել, քանի որ ամենափոքր դատ մ'իսկ տարիներով կը ձգ-ձգուի ու էն ետքն ալ կը կորսուի ի վնաս հայուն:

Դատէմ անունով գիւղ մը ունինք, որ նահանգական կուսակալանիստ քաղաքէն երկու ժամու չափ հեռաւորութիւն մը ունի. թուրք եւ հայ խառն ազգաբնակութեամբ գիւղ մըն է, որուն հայ բնակչութիւնը երկրագործներէ կը բաղկանայ: Այդ գիւղին կարեւոր հողատէրն է Հաճի Պէկօ ըսուած հոշակաւոր աւագակը, որ քսան երեսուն տարիներէ ի վեր ոճիրի տեսակ չէ մնացած որ փորձած չըլլայ. գողութիւն, բռնաբարութիւն, անարգանք հասարակ յանցանքներ են, թուրքերն անգամ զինքը Չալքմ(3) բառով պսակած են: Անցած օր այդ Դահէմի հայ գիւղացիներն ալ հոգինին բերանին առնելով, ալ չի կրնալով դիմանալ եղած հարստահարութիւններուն, ամբողջ գիւղով՝ մանուկ, ծեր, կին, երիտասարդ՝ բոլոր իրենց սալերը, երկրագործական գործիքները բերին կառավարական շէնքին առջեւ, բարձրաձայն յայտարարելով թէ այլեւս չեն կրնար դիմանալ Հաճի Պէկօի ոճիրներուն, ուստի պէտք է որ իրենց նոր տեղ ցոյց տրուի, ուր հաստատուին: Ամբոխը հաւաքուած էր այդ միամիտ, թշուառ գեղջուկներուն շուրջը...: Աշխատող, արդիւնաբերող ձեռքն էր որ իր կուրծքին ծալուած՝ աշխատութեան, արդիւնաբերութեան գործիքին առջեւ բռնաւորին պատիժը կը խնդրէր: Կառավարութիւնը անտարբեր սառնասրտութեամբ հազիւ հաճեցաւ Հայ Առաջնորդը կանչելու եւ խորհրդակցութիւն մը ունենալու հետը: Առաջնորդը բացէ ի բաց յայտարարեց Հաճի Պէկօին ասկէ առաջ ըրած բոլոր շարիքներուն, կեղեքումներուն թումն մասանցը, պատմեց վերջին օրերուն վառած կալերը, գողցած ցորենի, գարիի դէզերը, հարսնե-

րու բռնաբարութիւնները, միեւնոյն ատեն հաւաստելով կուսակալին, թէ թուրք պէկեր, կարեւոր անձնաւորութիւններ կան իր ըսածները հաստատող: Կուսակալը հրամայեց որ խնդիրը պաշտօնական գոյն առնելու համար, գիւղացիները դատարան դիմեն: Գիւղացիք դատարան դիմեցին եւ դատը կը շարունակուի, բայց Հաճի Պէկօն իր գազանաբարոյ զաւակներէն մէկ-երկուքին – որոնք գործակից են իրենց 60 տարեկան հօր – անմիջապէս զինուորի լաթ հագցուց եւ զինուորագրել տուաւ զանոնք, որպէսզի քաղաքական դատարանի իշխանութենէն ազատ մնան: Նայինք ինչպէ՞ս պիտի վերջանայ այդ դատը, երբ հայերուն հետ միասին կ'աշխատին Ծոզէ գիւղի թուրք պէկերն ալ:

Ամէն հայ գիւղ ալ առաւել կամ նուազ Դատէմի ճակատագիրն ուէ նի, իր մեծ կամ պզտիկ Հաճի Պէկօներով: Արդ, երբ հաց չի կայ, երբ հարստահարութիւնը իր եզերքներէն կը յորդի ալ, երբ կառավարութիւնը փոխանակ պահպանելու՝ ինքն ալ իր կողմէն կը հարստահարէ՝ ինչ պէտք է ընել. պէտք է անիծել ու հեռանալ այդ հողէն, այնպէս չէ՞. բայց ահա բոլոր սահմանագծերը ամրացած, շրջափակուած են եւ արտասահմանի անցքը արգիլուած է: Ո՛ր դիմենք, ո՛ր երթանք:

«Դրօշակ», XII տարի, Սեպտեմբեր 1902, թիւ 9 (129), էջ 136-138

1.- Խարբերդի դաշտը՝ ոսկիի բոյն է:

2.- Խանգեղ – Տիարպեփի (Տիգրանակերտ) նահանգի քաղաքակ գիւղ:

3.- Դաժան, անգութ, բռնապետ:

Փաստ. 821-12ա

Հ.Յ.Դ. Կեղր. դիւան

Պատճէն

[1]902 Սեպտ. 27

Խարբերդ

Սիրելի Ֆարհատս(1)

Կը յուսամ արդէն ստացած կ'ըլլաք ասկէ առաջ գրած նամակս եւ անոր պատասխանն ալ ճամբայ հանած. անհամբերութեամբ կը սպասեմ ձեր գրութեան:

Այս անգամ ահա ձեզի կը ղրկեմ ներփակ երկու շատ հետաքրքրական լուսանկարներ: Առանձին առնուածը՝ Համիտիյէի ցեղապետ ու փաշա հռչակաւոր Իպրահիմ փաշան է որ վերջին արաբական խլրտումներուն պատճառ եղաւ: Իսկ միւսը՝ որուն վրայ չորս անձնաւորութիւններ կը կենան քով քովի՝ չորս մեծահամբաւ անձնաւորութիւններ են. նոյն Իպրահիմ փաշան նորէն, Համիտիյէի ցեղապետ Մստօ փաշան, չորրորդ զօրաբանակի հրամանատար՝ Ձէքի փաշան եւ Տիգրանակերտի նախորդ կուսակալ Սըրրի փաշան. չորս նոյնատեսակ գազաններ, որոնց քով քովի գալը հիանալի զուգադիպութիւն մըն է: Այս երկու նկարներն ալ ղրկեցէք Pro Arm[enia]ի որպէսզի տպագրէ: Վերջին պաշտօնական տեղեկութեամբ կ'իմանամ թէ Մստօ փաշան սպաննուած է արաբ էշտիշէտի(2) մը կողմէն. արդէն գիտէք թէ հռչակաւոր աւագակապետը որչափած էր ձեզիդէի մէջ եւ բացարձակ անիշխանութեան մը մատնելով շրջակաները, կը կողոպտէր, կը թալլէր ու կ'իշխէր ձեզիդէն անցնող ամէն ճամբորդ, հայ, թուրք, եւրոպացի, պաշտօնական թէ անպաշտօն ամէն բարձր անձնաւորութիւն, «Եօլ փաճի» կ'առնէր, ստակ չունեցողները կը կողոպտէր, ինչ որ վրանին գտնէր վերջապէս արժէք մ'ունեցող. շատ ասորիներու գիւղեր աւրեց ու զարկաւ. կառավարութիւնը ասոնք ամէնքը գիտնալով հանդերձ բան մը չէր ըներ անոր՝ կամ անգոր կը զգար ինքզինքը. այսօր կառավարութեան չըրածը արաբ ցեղ մ'ըրաւ:

Ասոնք գրեցէք իմ կողմէս խմբագրութեան(3). ես ալ արդէն յատուկ յօդուած մը պատրաստելով կը ղրկեմ: Դիտմամբ այս լուսանկարները ձեր միջոցով ղրկեցի, որպէսզի չը կորսուին:

Լեոնավայր(4) ղրկուելիք կարգ մը տղոց մասին գրած եմ արդէն ձեզ, կը սպասեմ որ անոնց համար գրէք վերջնականապէս ձեր մտածումները: Ամէնէն յարմարը Արծիւ(5) գտնուող երիտասարդն է. անկէ ալ կը յուսամ մօտ օրերէն տեղեկութիւն ստանալ:

Ի՞նչ հանգամանք առաւ այդ տեղի մեր գործերու ընթացքը, գլխաւոր դաւաճաններն ալ պատժուեցան, հանգանակութեան սկսա՞ք նորէն: Փութով կը սպասեմ ձեր լուրերուն:

Հետաքրքիր եմ իմանալու թէ ինտելիգենտ դասակարգը որքան համակիր է ձեզի հետ: Մամուրեանի(6) տղուն համար ի՞նչ գիտէք:

Ընկերական բարեւներով՝ կը սպասեմ որ ներկայ լուսանկարները ստանալնիդ շուտով իմացնէք:

Ձերդ ԱՍԼԱՆ

- 1.- Ֆարհատ – ծածկանուն Հայկ Թիրեաբեանի:
- 2.- Էշտիշէտ – անձանօք անուն կամ բառ. հաւանաբար պիտի ըլլայ Էշիւտ՝ ցեղախումբ իմաստով:
- 3.- Խօսքը կը վերաբերի ժընե՛ «Դրօշակ»ի խմբագրութեան:
- 4.- Լեոնավայր – ծածկանուն Կիլիկիոյ եւ շրջակայից:
- 5.- Արծիւ – ծածկանուն Երզնկա քաղաքի:
- 6.- Մամուրեան – հաւանաբար խօսքը կը վերաբերի Իզմիրի մէջ Մատթէոս Մամուրեանի (1830-1901) խմբագրութեամբ հրատարակուող «Արեւելեան մամուլ» պարբերաբերթի հեղինակի որդւոյն: Հաւանաբար նոյնպէս այս օրերուն Հ. Թիրեաբեան (Ֆարհատ) կը գտնուէր Իզմիրի շրջան:

Փաստ. 822-1ա

Հ.Յ.Դ. Կեղր. դիւան

Պատճէն

[1]903 թ. Ապրիլ 17/30

Սիրելի՛ ընկերներ,

Ստացանք ձեր Ապրիլ 8 թուակիրը, որուն ահա կը պատասխանեմ. կը ցաւիմ որ նախորդ նամակս անընթեռնելի ըլլալով չէք կրցեր կարդալ: Անոր մէջ բաւական խօսած էի մեր սկսած գործերու մասին:

Այս փոստով իսկ ստացայ 9.4.27.14.21.2.3.22.14.-ն(1) նամակ մը՝ որուն մէջ Ա-ի(2) համար տրամադրելի երիտասարդը՝ պարզելով իր անձնական, ընտանեկան եւ հանրային գործունէութեան տեղական պարագաները, անկեղծօրէն ինձմէ խորհուրդ կը հարցնէր եւ մանաւանդ կ'ուզէր գործին վրայ ընդհանուր գաղափար մը կազմած մեկնիլ: Ես ընդհանուր եւ ամփոփ գծերով բացատրեցի իրեն՝ գործը եւ այն վերջնական վճիռը որ կը սպասենք մեր դատին համար Լեռ-[նավայր]ի(3) գործերու ընթացքէն: Ըսի իրեն թէ իր անհատական ծախքերը հոգալու համար երաշխաւոր եմ, բայց ատկէ աւելին՝ իր ընտանեկան պարագաներուն բան մը չենք կրնար ընել. միեւնոյն ատեն աւելցուցի թէ եթէ մասնաւոր առաջարկներ ունիս՝ ըրէ եւ ես զանոնք պէտք եղած տեղը հաղորդելով, արդիւնքը կ'իմացնեմ ձեզի:

Պէտք է ըսեմ ձեզի թէ այս երիտասարդը՝ թէեւ անձնապէս տեսած չեմ բայց կարելոր եւ լուրջ ընկերներու վկայութեամբ՝ շատ կարող է եւ կրնայ խիստ նպատակայարմար գործիչ մը ըլլալ: Տաղանդաւոր[?] է, զարգացած է, ինքնաշխատութեամբ ֆրանսերէն ուսած է, հիանալի ֆիզիքական կազմ մ'ունի, զինավարժ է եւ Քեռիի(4) խումբին հին նշանաւոր հայդուկներէն մին եղած է: Հիանալի կարողութիւն ունի խմբական առաջնորդ ըլլալու: Այս պատճառով է որ կ'աշխատիմ զինքը համոզել եւ գործի մղել, որովհետեւ գիտեմ թէ անհունապէս օգտակար պիտի կրնայ ըլլալ մեզի: Մինչդեռ դուք այսպէս կը պնդէք, Ռահմեր(5) ինծի կը գրէ թէ նոր ընկերի պէտք չունի: Ձեր եւ Ռահմերի տեսութիւններու մէջ համերաշխութիւն չի

կայ, եթէ դուք ինծի վերջնական խորհուրդ կու տաք, ամէն ջանք ի գործ դնելով այդ թանկագին ոյժը մղել դէպի Լեռն[ավայր]: Ասկէ զատ պատրաստած եմ նաեւ ուրիշ ընկեր մըն ալ որ այսօր իսկ պատրաստ է մեկնիլ. ձեռքի վրայ գործող աղէկ ոյժ մը կրնայ ըլլալ: Տեղւոյս 21.10.1.7.20.22.14.(6) որոշած է որ այս վերջին տղան մէկ երկու 32.7.9.4.(7) առնելով՝ զայն իբրեւ 23.10.4.9.25.2.14.(8) երթեւեկութեան մէջ դնէ մեր եւ Լեռն[ավայր]ի միջեւ եւ կամ Լեռն[ավայր]ի վայրերուն միջեւ: Ինչ կ'ըսէք, յարմար կը գտնէ՞ք դուք ալ:

Գալով իմ մեկնումիս, քանի անգամ եղաւ որ կը գրեմ, եւ ոչ ձեզմէ եւ ոչ ալ Ռահվերէն վճռական բան մը չեմ ստանար: Ո՛ւր պէտք է մեկնիմ, ի՞նչ գործով եւ ինչպէ՞ս: Կ'ուզեմ որ գործս երաշխաւորուած ըլլայ կանխաւ, որպէսզի կառավարական ոեւէ ընդդիմութեան եւ կասկածի չի հանդիպիմ: Ինչպէս գիտէք 16.10.6.(9) բաւական 34.2.14.35.18.10.15.2.31. 9.1.(10) ուստի զգուշաւոր ըլլալը խոհեմութիւն է. մանաւանդ պիտի կրնամ 24.14.20.1.14.4.5.6.(11) եւ 8.10.30.2.17.4.9.12 (12): Հոս ոեւէ մարդ չունիմ, ուստի չեմ կրնար հոս երեսի վրայ թողուլ զանոնք: Եթէ Ռահվեր չի կրնար հոն գործ մը յաջողցնել՝ որոշած եմ անցնիլ Ոսկեհանք(12), ուր արդէն բարեկամներ կը ջանան զբաղում ճարել. անգամ մը որ հոն ելլեմ, անկէ դիւրին է ինծի՝ ուզած ատենս Լեռն[ավայր]ի ուզած կէտիս վրայ թառիլ: Ինչ է ձեր խորհուրդը այս մասին ալ. առանց ձեր գիտութեան եւ համամտութեան չեմ ուզեր բնաւ գործի ձեռնարկել ու վերջնական որոշման մը յանգիլ: Բայց աճապարեցէք փութով.....(13), որուն խօսքը կ'ընէք ձեր վերջին նամակին մէջ, ըսեմ թէ անիկա մեր ուղղակի ընկերը չէ, այլ ծանօթը 1.2.12.2.28.7.2.7.ի(14) ընկերներուն, որոնք ըսած են մեզի, թէ յարմար պարագային՝ կարելի է ..... զինքը(15) եւ ուզւած տեղը փոխադրել. երբ 1.2.12.2.28.7.1.22.14.(16) անցնիմ, այս մասին ալ լուրջ կարգադրութիւն մը կ'ընեմ եւ կը հասկնամ իր տրամադրութիւնները ու պայմանները: Միթէ այժմ պէ՛տք է իր ներկայութիւնը Լեռն[ավայր]ի(3) մէջ. երբ իմ ներկայութեամբս եղած բանակցութիւնը աւելի բանաւոր եւ օգտակար կրնայ ըլլալ:

Ուրախ եմ որ 20.7.13.4.2.14.2.21.9.4.20.7.-ի(17) մեր ընկերները սկսած են յարաբերութեան մէջ մտնել ձեզի հետ: Այդ քաղաքին մէջ գործ մը ընելու համար շատ աշխատած եմ -----(18) սուրբ նպատակով մասնաւոր 34.2.1.26.10.4.17.10.15.28.7.15.14.(19) միսկ ըրի եւ յաջողեցայ մէկ երկու լուրջ եւ կարեւոր անձնաւորութիւններ հա-

մոզել: Այս տարի ալ յատկապէս մեր 24.14.28.2.18.2.15.2.4.20.14. 9.4.22.14.-ն(20) մին մտցուցի հոն որ գործի ձեռնարկեց: Քաջալե-  
րեցէք զիրենք եւ ոգեւորեցէք. այդ քաղաքը շատ օգտակար կրնայ  
ըլլալ մեզի ապագային. Հիանալի դիրք մ'ունի, ու եթէ կրնաք կապել  
աշխատեցէք զայն 6.2.6.1.15.14.7.-ի(21) հետ: Ինծի կ'իմացնեն որ  
միջոց պիտի գտնէին հասցէ տալու, որ թերթ ալ ղրկէք, յաջողեցան  
արդեօք: Թերթը հրաշալի, փրկարար դեր կրնայ խաղալ այդ շատ  
պատրաստ եւ ընդունակ ժողովուրդը կայծելու: Ես կը հաւատամ թէ  
մեր աշխատութիւնները երբեք պարապ չեն երթար. բաւական է որ  
գործել զիտնանք եւ անձնուիրութիւն ունենանք:

Գրեցէք մեզի յատկապէս Ոսկեհանքի(12) գործերուն առած կեր-  
պարանքին վրայ, Ֆարհատի(19) վիճակը ո՞ւր մնաց, չը պիտի կըր-  
նանք ազատել զինք, Իսկուհին(21) ո՞ւր մնաց: Կարիճը(22)  
մեկնեցա՞ւ Ամերիկայէն թէ ոչ: 6.2.6.14.10.3.(23) գործերը ինչպէս  
են. շարժում կ'ա՞յ հոն: P[ro] A[rmenia] կ'ընդունինք, բայց «Դր[ո-  
շակ]» ո՞չ, արդեօք ինչո՞ւ. շատ կարօտցեր ենք:

Անձկութեամբ սպասելով ձեր նամակներուն՝ կարօտով

Ձերդ ԱՍԼԱՆ

Թերթի նոր հասցէներ

Խնամով .....(13) եւ ճերմակ թղթի մէջ փաթթելու է եւ .....(13)

եւ պահարանի մէջ դնելու է:

1) Հայկանուշ Խանճիօղլիեան

2) Կիւլխաթուն Թէրլէմէզեան – երկուքն ալ Մամուրէթ-Իւլ-Ազիզ

- 1.- Կը վերձանութի՝ Երզնկայէն:
- 2.- Ա.-ը հաւանաբար Այնթապ քաղաքն է:
- 3.- Լեւոնավայր – ծածկանուն Կիլիկիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի:
- 4.- Քեռի – հաւանաբար Խօսքը Տերսի-  
մի Քեռիին մասին է, բուն անունով Ռուբէն  
Շիշմանեան (1865-1903):
- 5.- Ռահվեր – ծածկանուն Միսաք Վար-  
դանեանի:
- 6.- Կը վերձանութի՝ Կոմիտէն:
- 7.- Կը վերձանութի՝ ձիեր:
- 8.- » » ջորեպան:
- 9.- » » հոս:
- 10.- » » հանչցուած եմ:
- 11.- » » ընտանիքս:

- 12.- Ոսկեհանք – ծածկանուն Իզմիր Բա-  
ղաթի:
- 13.- Պատնէն-բնագրին մէջ բաց ձգուած  
քանի մը բառեր:
- 14.- Կը վերձանութի՝ Մալաթիա-ի:
- 15.- Բաց ձգուած՝ մէկ բառ:
- 16.- Կը վերձանութի՝ Մալաթիան:
- 17.- » » Տիգրանակերտ-ի:
- 18.- Մէկ բառ բաց ձգուած:
- 19.- Կը վերձանութի՝ համբուրգոյ:
- 20.- » » ընթացաւարտներէն:
- 21.- Իսկուհի – անունն է Ֆարհատ-Հայկ  
Թիւրեաթեանի կնոջ:
- 22.- Կարին – ծածկանուն Միսաք Գու-  
յումեանի:
- 23.- Կը վերձանութի՝ Սասնոյ:

Փաստ. 822-2ա

Հ.Յ.Դ. Կեղր. դիւան

Պատճէն

[1]903 Մայիս 1/14

Խարբերդ

Թանկագին ընկեր,

Այսօր իսկ կը ստանամ Արծիւէ(1) նամակ մը՝ ի պատասխան իմ վերջին գրութեանս: Մեր այնտեղի ծանօթ ընկերը կը գրէ որ վերջնականապէս որոշած է մեկնիլ դէպի Լեռնավայր(2), եւ արդէն իսկ սկսած է անցագրի պատրաստութիւն տեսնել. կը յուսամ թէ մէկերկու ամսէն հոս կ'ըլլայ, որովհետեւ Աւար-Աւերի(2) վրայէն պիտի անցնի՝ անձամբ տեսնուելու համար հետս եւ պէտք եղած հրահանգները բերանացի առնելու համար ինձմէ: Բաւական շահաւոր առեւտրական գործ մըն է, որ կը -----(4) ու գործին ետեւէն կ'երթայ ընկեր մը վերջապէս որ առաջուց ցոյց կու տայ -----(4) եւ որուն վրայ ես խիստ մեծ յոյսեր դրած եմ: Արդ հաճեցէք ինծի գրել փութով թէ ուր պիտի հաստատուի ինք վերջնականապէս եւ երեւութական(5) ինչ գործ պիտի ընէ. յետոյ, ինչ պիտի ըլլայ իր բուն գործը, իր ծախսերը -----(4) կարելի պիտի ըլլայ հոգալ. գուցէ իր հետ տանիմ միւս երիտասարդն ալ՝ որուն համար գրած էի թէ մտադիր ենք ջորեպան ընել տալ: Հաճեցէք փութով պատասխանել նաեւ իմ ասկէ առաջուայ նամակիս ալ: Մի՛ մոռնաք գրել նաեւ իմ մասին. ահաւասիկ ժամանակս լրացաւ ու ընելիքիս եւ ո՛ւր երթալիքիս վճռականութիւնը պէտք է որ գիտնամ հիմակուրէն:

Կ'ըսեն թէ դաշնակցականները սպաննած են Ա-----ին(6) Վիեննայի մէջ, ստոյգ է. գրել հաճեցէք պարագաներն եւ իրողութիւնը:

Սասնոյ մասին տագնապեցուցիչ լուրեր կը լսենք. նոր շարժումներ տեղի ունեցած են եղեր իբր թէ հոն, թէ Անդրանիկ(7) սպաննուած կամ վիրաւոր ձերբակալուած է եղեր. ինչ գիտէք բոլոր ասոնց համար: Պոլսական թերթերէն այնպէս կ'իմանանք թէ մակեդոնա-

կան շարժումն առայժմ կեցաւ. ի հարկէ ստոյգ չենք կրնար գիտցած ըլլալ, խնդրոյն ինչ phase-ի մէջ մտած ըլլալը: Եւրոպայի մէջ ինչ նորութիւն կայ մեզի համար. բան մը չենք գիտեր հոս: Բաւական ատենէ ի վեր ոչ P[ro] A[rmenia] կ'առնենք եւ ոչ «Դրօշակ»:

Եղբայրական յարգանքներով Ձերդ  
ԱՍԼԱՆ

- 1.- Արծիւ – ծածկանուն Երզնկա ֆաղափ:
- 2.- Լեռնավայր – ծածկանուն Կիլիկիոյ եւ շրջակայի:
- 3.- Աւար-Աւեր – ծածկանուն Խարբերդի:
- 4.- Մէկ բառ բաց ձգուած:
- 5.- Իմա՝ բացայայտ, հրապարակով իմաստով՝ յեղափոխական գործունէութեան fo-  
դին տակ:
- 6.- Ենթակային անունը տրուած միայն Ա. սկզբնատառերով:
- 7.- Խօսքը նշանաւոր հայդուկապետ Անդրանիկի (Օզանեան) մասին է: Յիշեցնենք որ  
կը գտնուինք Սասնոյ Ա. ապստամբութեան նախօրեակին:
- 8.- Ֆրանսերէն՝ հանգրուան, փուլ իմաստով:

Փաստ. 822-4ա

Հ.Յ.Դ. Կեղր. դիւան

Պատճէն

1903 թ.

Սիրելի բարեկամ

Անշուշտ ստացած էք այն երկտողը՝ որով ձեզմէ կը խնդրէի, որ-  
պէսզի ինծի նամակ չի գրէիք մինչեւ ինձմէ նոր տեղեկութիւններ  
կ'առնէիք: Այն ատեն անկարելի էր ինծի ընդարձակ գրել ձեզի, ո-  
րովհետեւ շատ կրիտիկական պարագաներու տակ կը գտնուէի:

Հսեմ պատճառը:

Անշուշտ իմացած էք թէ 6.7.1.10.14.9.2.14.6.25.2.14.14.10.15.9.  
18.2.15.(1) անձնական վրէժխնդրութեան պատճառով, արդ հոս  
կարգ մը վայրեր -----(2) որ այն -----(2) գործը՝ 1.9.4.21.10.15.6.  
2.21.18.10.15.28.9.2.14.(3) վերագրուի, որպէսզի թէ կարգ մը ան-  
մեղներ վտանգուին, թէ գործը: Բայց, փառք Աստուծոյ, մինչեւ ցարդ  
ամէն վտանգ անցուցինք, թէեւ վաղը անստոյգ է միշտ: Նոր եղելու-  
թիւններ կը գրեմ ձեզի անպատճառ, եթէ հարկ ըլլայ: Կ'իմանամ թէ  
Սահմանաբերդի(4) մեր ընկերը սխալ տեղեկութիւն տուած է ձեզի,  
իմացնելով թէ իբր թէ մեր կողմէն եղած ըլլայ այդ ոճիրը, -----(2)  
բացարձակապէս կը հերքենք եւ կ'ուզենլ այնպէս գիտցունէք մեր  
ընկերներուն:

Ֆարհատի(5) մասին անհամբեր եմ լուրեր ստանալու. վտանգը-  
ւած է թէ ապահով. հաճեցէք փութով իմացնել: Ռահվերին(6) գրեցի  
թէ պէտք ունի օգնականներու, քանի որ Ֆարհատը ասկէ առաջ  
գրած էր թէ հին ընկերներ պէտք է -----(2), եւ ի՞նչ է ձեր կարծիքը,  
դուք ալ չէք խորհիր թէ արհեստաւոր եւ ոեւէ գործով մը զբաղող  
կարող ընկերներ կարող են Լեռնավայրի(7) մէջ օգտակար ըլլալ.  
գրեցէք այս մասին ձեր խորհուրդները:

Ես ալ, ինչպէս գիտէք, վաղուց է ի վեր որ կը փափաքիմ հոն  
անցնիլ, պայմանով որ անձնական զբաղում մը ունենամ մէկ կողմէն

գործին վրայ բեռ չըլլալու, միւս կողմէ ապահովուած ըլլալու համար. բայց, դժբախտաբար Հովհաննիս(8) մեր ընկերները չի կրցան այդ գործը կամ պաշտօնը գտնել, ուստի ձեզի կը դիմեմ որ հիմակ-ւրնէ իսկ գրէք Լեոնավայրի մեր բոլոր վայրերուն, որպէսզի յառա-ջիկայ տարուան համար -----(2) հոգ չէ թէ այնտեղի ոյժերը համախմբելու եւ յարաբերութեան մէջ դնելու համար մեզմէ այս [1]903 տարուայ մէջ անպատճառ ընկեր մը գնալու է: Այս բաղձան-քը Ֆարհատինն ալ էր, ու եթէ անիկա անվտանգ կրցեր է ձեզ տես-նել մինչեւ հիմա անշուշտ ձեզ ալ հաղորդած է:

Ոսկեհանքի(9) գործերը ի՞նչ հանգամանք առին. գրեցէք մանրա-մասնօրէն:

Մանաւանդ զգուշութիւն ըրէք որ ձեր մեկանը թանձր չըլլայ, որ-պէսզի բացուելէ առաջ իսկ երեւնայ, ինչպէս որ էր ձեր առաջին նա-մակը:

Կրկին անգամ կը խնդրեմ որ գրէք խմբագրութեան(10) ծանօթ ոճի մասին – որուն վրայ խօսեցայ նամակիս առաջին էջին վրայ – որպէսզի չըլլայ թէ ձեզ -----(2) գործ մը----- (2) կամ հրատա-րակեն. ընդհակառակը, ամէն ներկայացած առթիւ ալ թող հերքեն բոլոր ոյժով:

Մեր հասցէն նոյնն է. բայց աշխատեցէք միշտ զգոյշ ըլլալ:

Եղբայրական կարօտով՝  
Զերդ ԱՍԼԱՆ

- 1.- Կը վերծանուի՝ «Սիմոնեան սպաննուեցաւ»:
- 2.- Պատնէն-բնագրին մէջ բաց ձգուած մէկ բառ:
- 3.- Կը վերծանուի՝ «մեր կուսակցութեան»:
- 4.- Սահմանաբերդ – ծածկանուն Մարաշ ֆաղափ:
- 5.- Ֆարհատ – ծածկանուն Պանֆ Օթթումանի գրական ղեկավարներէն Հրաչ Թիւրեաֆ-եանի այլապէս նաեւ Սեպուհ, Հրաչ:
- 6.- Ռահմետ – Կիլիկիոյ գործիչներէն Միսաֆ Վարդանեանի:
- 7.- Լեոնավայր – ծածկանուն Կիլիկիոյ եւ շրջակայի:
- 8.- Հովիտ – ծածկանուն Այնթապ ֆաղափ:
- 9.- Ոսկեհանք – ծածկանուն Իզմիր ֆաղափ:
- 10.- Իմա՝ «Իրօշակ»ի խմբագրութեան:

Փաստ. 822-7ա

Հ.Յ.Դ. Կեղր. դիւան

Պատճէն(1)

1903 թ.

Թանկագին բարեկամ

Ինչպէս գրած եմ -----(2) մէջ ալ, ասկէ քանի մը շաբաթ առաջ, հասցէի սխալումով մը՝ փոխանակ 158-ի 52 միայն գրած եմ եղել ուղղած մէկ նամակիս հասցէն, զոր հաւանականաբար ստացած չէք, միայն թէ կը կասկածիմ, որ ետ եկած կամ ուրիշի մը ձեռքը անցած չըլլայ. եթէ կրնաք, հոտ փոստատան մէջ հեղ մը փնտռեցէք. երանի՜ թէ գտնէք, որովհետեւ մէջը կարելոր բաներ գրած էի:

Ձեզմէ ալ լուր առած չեմ, բնականաբար իմ տուած հրահանգիս պատճառով, անկէ ետք կրնաք գրել եւ եթէ կարելի է, միշտ աւելի երկար ու փաստերով:

Ոսկեհանքէն(3) ինչ լուր. տղոց վիճակը ղուր մնաց: Հրաշք(4) ձեր բակալուած է արդեօք. Իզմիրի դատարանէն արձակուած վճիռին մէջ Հայկի(4) եւ իր կնոջը յիշատակութիւնը կար, արդեօք ինքը Սեպուհն է, խնդրեմ, գրեցէք, այնքան անհանգիստ ու անհամբեր եմ:

Լեռնավայրի(5) գործերէն ալ երկար ատենէ ի վեր բնաւ լուր չունիմ, ինչպէս նաեւ արտասահմանի մեր ընթացիկ գործերէն ու գործօն նորութիւններէն, բնաւ որովհետեւ Ք[ԴՕ] Ա[րմենիա]ի մէկ երկու Նոյեմբ. եւ Դեկտ. թիւերէն, բնաւ թերթ տեսած ու կարդացած չենք: Արդեօք Մոսկուայի մէջ սպաննուող ժամհարեանցն(6) ալ մերիններուն գործն է, հապա պատրիարքինը: Ուր մնաց Խորէնը. տեղեկութիւն մ'ունի՞ք. լսածիս նայելով մեկնած է Ամերիկայէն, բայց չեմ գիտեր թէ դէպի ղուր:

Մեր նախապէս ցոյց տուած հասցէներուն արդեօք «Դրօշակ» կը ղրկուի՞, հապա ինչու չի հասնիր մեզի. այս մասին ալ կարելորը մի մոռնաք իմացնել:

Ասկէ ետք կանոնաւորապէս չը թղթակցելու պատճառ մը չու-

նինք: Եթէ նախորդ նամակս ձեռքերնիդ հասած է, արդէն իմացած կ'ըլլաք, թէ ինչ փոթորիկներէ եւ վտանգներէ անցանք ապահով՝ Սիմոնեանի(7) սպանութեան եւ դաւաճաններու վատութեանց հետեւանքով: Ձեզի սխալ տեղեկութիւն տրուած է թէ՛ մեր տեղորոններն ըլլան Սիմոնեանը սպաննողները. երբեք, ատիկա անհատական ոճիր մըն էր, որուն մէջ կոմիտէն մազի չափ մասնակցութիւն չունէր, ընդհակառակը, որովհետեւ Սիմոնեան վատ մը չէր եղած երբեք: Մենք նոյնիսկ այդ պարագաներուն տակ մասնաւոր զգուշութիւններ կ'ընէինք, որովհետեւ կարգ մը ծանօթ դաւաճաններ արդէն մեզ մատնած եւ մեր մէկ ընկերը կառավարութիւնը բռնի այս տեղէն քշել տուաւ: Դաւաճանները Սիմոնեանի ոճիրը մատի փաթթոց ընելով հրապարակեցին, մատնութեան դիմեցին. ինչպէս կը լսենք՝ «Ձայն Հայրենեանց»ի(8) մէջ կարգ մը անուններ – Զարդարեանի մասին բացարձակապէս սուտ եւ բաց զրպարտութիւններ ընելով: Մենք մեր Ամերիկայի ընկերներուն պէտք եղածը գրեցինք արդէն. ձեզի կը մնայ որ դուք ալ ձեր կողմէն ուժ տաք, որպէսզի «Հայրենիք»(9) անուղղակի կերպով հարկաւոր պաշտպանութիւնն ընէ:

Համբուրելով ձեզ, անձկութեամբ կը սպասենք ձեր կարօտալից գրչին:

Ձերդ ԱՍԼԱՆ

1.- Յիշեցնենք որ «պատենն» մակագրուած գրութիւններ գաղտնի թանաքով գրուած նամակներ են՝ «Դռնակ»ի խմբագրութեան կողմէ վերձանուած:

2.- Պատենն-գրութեան մէջ բաց ձգուած:

3.- Ոսկեհանձ – ծածկանուն Զմիտնիա-Իզմիր ֆաղափի:

4.- Հրաչ – ծածկանուն Հայկ Թիւրքաթեանի: Քիչ անդին յիշուած Հայկն ու Սեպուհը կը վերաբերին միեւնոյն անձնատրութեան:

5.- Լեւոնավայր – ծածկանուն Կիլիկիոյ եւ յարակից Սուրիոյ ու Լիբանանի:

6.- Ժամհարեան – Շուշի ֆաղափի մեծահարուստներէն՝ սպաննուած դաշնակցական ահաբեկիչի կողմէ:

7.- Խօսքը հաւանաբար Յակոբ Սիմոնեանի մասին է. արդարեւ, վերջինիս սպանութենէն ետք Ռ. Զարդարեան կը նշանակուի Խարբերդի վարժարանի տեսուչ:

8.- «Ձայն Հայրենեաց» – պաշտօնաթերթ Ամերիկայի հնչակեան կուսակցութեան:

9.- «Հայրենիք» – պաշտօնաթերթ Ամերիկայի Հ. Յ. Դաշնակցութեան:

## I

Վերջին մի քանի ամսուայ մէջ եղած ձերբակալութիւններն ու հալածանքները Խարբերդի մէջ մօտաւորապէս խոշոր տագնապի մը նախակարապետը կարելի է նկատել: Յիշենք քանի մը դէպքեր:

Մայիս 30-ին կիրակի օրը, Մեզրէի մէջ արաբկիրցի Չուճի երիտասարդի մը տունը կը խուզարկեն եւ մէկ քանի հրացան կը գրտնեն: Աներեւակայելի շարշարանքներու ենթարկելէ վերջ՝ պատուհանէն վար կը ձգեն, իբր թէ արդարանալու համար փախչելու պահուն ինկած եւ վնասուած ըլլայ: Վատերը իրենց սովորութեան համաձայն՝ բռնաբարած եւ անտանելի դրութեան մէջ ձգած են երիտասարդի կինը: Երիտասարդը ամերիկեան քաղաքացի ըլլալ կը կարծուի՝ հիւպատոսին միջամտութեան պատճառով:

Յունիսի 14-16-ը սարսափի օրեր էին, որ եկան վրդովելու խարբերդցիի կարծեցեալ հանգիստը: Աչքի զարնող ուսուցիչներ կը ձերբակալուին, առանց հարց ու փորձի, եւ հայերու տունները առհասարակ խուզարկութեան կ'ենթարկուին: Խարբերդը ամբողջովին վտանգուած կարելի է նկատել:

Լուր առնելով իբր Տէրսիմի մէջ յեղափոխականներ ապաստաներ են, կառավարութիւնը հրամայեց Խօզաթի եւ Չմշկածագի զօրքին՝ հետամուտ լինել խռովարարներին ձերբակալելու համար: Զօրքը կռիւ կ'ունենայ եւ պզտիկ վնասով (3 հոգի վիրաւոր) կը վերադառնայ: Կառավարութիւնը կասկածելով թէ ժողովուրդը հացի նպաստ կու տայ յեղափոխականներին, որոշած է որ իւրաքանչիւրը 6 չափէն աւելի ցորեն չստանայ. հակառակ պարագային՝ օրինազանցները 6 ամիս բանտարկութեան կը դատապարտուին:

Քանի որ կառավարութիւնը արտասովոր խստութեամբ կը հալածէ ու կը հարստահարէ ժողովուրդը, հայ երիտասարդութիւնն ալ գիտէ որոշ չափով վրէժխնդիր լինել այս անիրաւութեանց: Արձա-

նագրեմ մէկ դէպք, որ տեղի ունեցաւ յուլիս 20-ին Խարբերդի Իջմէ գիւղին մէջ: Երեք հայեր ատրճանակով կը սպաննեն այդ գիւղին մէջ գտնուող Սատրգ անուն մի ճէնտարմ եւ նոյն գիւղացի Իսմայիլ անուն մի կատղած թուրք: Կ'ըսուի թէ սպանութեան մասնակցող 2 հայերը բռնուած են Սարսըրի գիւղի մը տան մէջ:

Կառավարութիւնը դեռ եւս կը շարունակէ իր հալածանքները. ձերբակալուածներու թիւը 100-էն կ'անցնի:

\* \* \*

Եւրոպական թերթերը հաղորդեցին, որ ամերիկական, գերմանական եւ անգլիական հիւպատոսների ներկայացրած բողոքի վրայ՝ Խարբերդի կուսակալը հրաժարեցրած է:

ԽՄԲ.

## II

Ռ. Զարդարեան-Ասլանի նամակները կը դադրին այս վերջին գրութեամբ: Գլխաւոր պատճառը այն էր որ յիշուած ձերբակալութիւններու շարքին, ինք եւս իբրեւ կալանաւոր տառուած էր բանտ, ուր պիտի մնար ամիսներ:

Մ... գիւղ, 3/16 նոյեմբեր, 1903

Այս տարի դժբախտութիւնները շղթաշար կու գան մեր վրայ: Ծանօթ բանտարկութիւնները կը խորհիմ թէ ամէն տեղ լսուեցան: Քաղաքիս երեւելիներէն 40-ի չափ անտեղի զրպարտութիւններով բանտը կը գտնուին: Սեդրակ Սեմէրճեան անուն երիտասարդը այնչափ ծեծած էին, որ մարած ինկած էր բանտին մէջ, յետոյ բռնած վար նետած էին երրորդ յարկի բարձրութենէն, որպէս թէ փախել ուզած ու ինկած է: Պրօֆ. Թէնէքէճեանը 5 օր քնհատ թողուցած էին որ խելքը կորսնցուց ամիսի մը չափ:

Բայց ասոնցմէ աւելի ցաւալի դէպք մը պատահեցաւ անցեալ օր. մէզրեցի Պօղոս Զուլֆայեան անուն ազնիւ ու եռանդուն երիտասարդը երբ կը լսէ բանտարկեալներու այդ դառն տանջանքը, կ'երթայ տեսնելու զանոնք եւ քիչ մը յոյս ներշնչելու իր համոզիչ ու քաղցր խօսքերովը: Սակայն բանտին պահապան ոստիկանները զինքը կ'անարգեն ու հայհոյութիւններով ետ կը դարձնեն բանտին դռնէն ըսելով. «Իշտէն չեքէր օնլարի կէօմէկ սէ, տուր սէնի տէ եանլարընէ կէթիրիըզ» (եթէ կը փափագիս զանոնք տեսնել, մօտ ատենէն քեզ ալ անոնց քով կը բերենք): Անձնուէր եւ քաջ երիտասարդը խոցոտւած սրտով եւ արդար վրէժխնդրութեան ոգւով գինովցած ետ կը դառնայ: Ճամբուն վրայ կը հանդիպի թուրքի մը, որ հայու մը հայհոյելով ապտակել կը սկսի: Երիտասարդը այս բանին չհանդուրժելով վրայ կը հասնի կատաղութեամբ եւ խեղդամահ կ'ընէ թուրքը, որ կ'իյնայ կը սատկի. սակայն անդիէն ուրիշ թուրք մը վրայ հասնելով, դաշոյնը կը կոխէ երիտասարդի կուրծքը, որ գետին կ'իյնայ եւ կը մեռնի:

Հանգուցեալ Պօղոս Զուլֆայեան ծնած է Մէզրէ քաղաքը, իր նախնական ուսումը առած է Մէզրէի լատինացոց դպրոցը, յետոյ մտած է Խարբերդի Եփրատ գօլէճը, բայց հօրը աղքատութեան պատճառաւ հոն չի կրցաւ իր դասընթացքը աւարտել, եւ ստիպուեցաւ իրենց օրապահիկը ճարելու համար արհեստի երթալ: Սպաննուեցաւ 25 տարեկան ծաղիկ հասակին մէջ: Թէեւ չար ձեռք մը բաժնեց զայն մեզմէ, բայց իր յիշատակը միշտ կենդանի է մեր սրտերուն մէջ: Հանգիստ անձնուէրի մատղաշ ոսկորներուն:

«Դրօշակ», XIII տարի, Դեկտեմբեր 1903, թիւ 10 (141), էջ 160



## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ\*

|                                          |                                                                                    |
|------------------------------------------|------------------------------------------------------------------------------------|
| Աբրահամեան Սահակ - 104:                  | Գալբազճեան վարդապետ - 108:                                                         |
| Ազնաւորեան Գ. Հ. - 15:                   | Գալֆայեան Յարութիւն (Վարաժ-<br>նունի, Գալֆա, Վահրամ) - 142,<br>143, 176, 182:      |
| Ալեանաք (Ալեանաքեան) Հրանդ<br>- 24:      | Գասապեան Յովհաննէս (Տէլի<br>Փափա) - 39, 44, 48, 49, 52, 53, 65,<br>67, 72, 76, 81: |
| Ակնունի Է. - 22:                         | Գեղամ - Տես Փիլիկան Մխիթար:                                                        |
| Ահարոնեան Ա. - 25:                       | Գէորգ - Տես Փիլիկան Մխիթար:                                                        |
| Ամէտ էֆէնտի - 161:                       | Գոլյումճեան Միսաք (Կարիճ,<br>Առանձար) - 182, 192:                                  |
| Աղբալեան Նիկոլ - 32                      | Գուրգէն - Տես Մալեան Բաղդասար:                                                     |
| Ալլայեան - 105:                          | Գրիգոր Զօհրապ - 23:                                                                |
| Անդրանիկ (Օզանեան) - 31-33,<br>193, 194: |                                                                                    |
| Անթառամ - 65:                            |                                                                                    |
| Աշք Եհովայի (Ռ. Զարդարեան) -<br>7, 26:   |                                                                                    |
| Ասպար - Տես Թֆէնքչեան Վահան:             |                                                                                    |
| Ատուրեան Վրոյր - 38:                     | Դանիէլ Վարուժան - 22:                                                              |
| Արամ Հայկազ - 13:                        | Դարբինեան Ռուբէն - 21, 22:                                                         |
| Արզումանեան Նիկողոս - 105:               | Դաւիթեան Միսաք - 172:                                                              |
|                                          |                                                                                    |
|                                          | Եսայեան Զապէլ - 14, 15, 22:                                                        |
| Բաբգէն (Ռ. Զարդարեան) - 7:               |                                                                                    |
| Բարսեղեան Գեղամ - 22:                    |                                                                                    |
| Բարսեղ Շահպազ - 23:                      | Զարդար (Ռ. Զարդարեան) - 7:                                                         |

---

\*) Զանց առած ենք նշել Ռուբէն Զարդարեան-Ասլանի անունը, որուն կարելի է հանդիպիլ հատորի գրեթէ իւրաքանչիւր էջին:

Զարդարեան Հրաչ - 29:

Զարման (Ռ. Զարդարեան) - 7:

Զաւարեան Սիմոն - 22:

Զէքի փաշա - 188:

Էժտահար (Ռ. Զարդարեան) - 7:

Miss Elise - 54:

Թաշճեան Տոքթ. Ն. Տ. Ս. - 8:

Թաշճեան Վահէ - 19:

Թէնէքէճեան - 200:

Թէրլէմէզեան Կիւլիսաթուն - 192:

Թիրեաքեան Հայկ (Սեպուհ, Հրաչ, Ֆարհատ) - 23, 120, 121, 131, 133-

139, 143-147, 156, 157, 167, 171, 172, 174, 176-182, 188, 189, 192, 195, 196, 198:

Թլկատինցի - 8, 11:

Թֆէնքչեան Վահան (Ասպար) - 52:

Ժամհարեանց - 197, 198:

Ժօրէս - 126:

Իպրահիմ պէկ - 107, 108:

Իպրահիմ փաշա - 188:

Իսկուհի (Հայկ Թիրեաքեանի կինը) - 192:

Իսուֆեան Յովհաննէս (Մելիք, Վահանեան) - 38, 39, 42, 44, 45, 51, 53, 65, 71, 72, 79, 82, 85, 87, 89, 96, 103, 104, 140, 141:

Իփէքեան Գասպար - 23:

Լազեան Գաբրիէլ - 21:

Լեոնեան Ռ. - 23:

Լեոնորդի - 46:

Լեոն Շանթ (Սեղբոսեան) - 23:

Լեոն Սալման - Տես Մանկունի Յարութիւն:

Խաթակ Գ. - 22:

Խանասորի Սամուէլ - 124:

Խանճիօղլիեան Հայկանուշ - 192:

Կարապետեան Սամուէլ - 130:

Կարիճ - Տես Գույումճեան Միսաք:

Կարօ, Արմէն Գարօ - Տես Փաստըրմաճեան Գարեգին:

Կէմիճեան Կարապետ - 52:

Կիւրճեան Մելքոն (Հրանդ) - 23:

Հաճի Պէկօ - 58, 186, 187:  
 Համբարձումեան Հ. Մ. - 22:  
 Համիտ Բ. (Սուլթան) - 11, 17, 35, 37:  
 Հայ աքսորական (Ռ. Զարգարեան) - 7:  
 Հայրիկեան - 11:  
 Հէրօեան Մովսէս - 172:  
 Հրաչ (Ռ. Զարգարեան) - 7:  
 Հրաչ - Տես Թիրեաքեան Հայկ:  
 Հրաչեայ (Ռ. Զարգարեան) - 7

Ղարա Մելիք - 133:

Ճանկիւկեան (Զհանգիւկեան) Յարութիւն - 139:  
 Ճոնզ Ֆրանսիս - 84:

Մալաթիացի Աշոտ - 123:  
 Մալեան Բաղդասար (Գուրգէն) - 100, 101:  
 Մամուրեան Մատթէոս - 189:  
 Մանկունի Յարութիւն (Լեւոն Սալման) - 44-49, 52, 78, 79, 87, 89, 111-

114, 117, 124, 134, 136, 168, 169:  
 Մանոյեան Փիթրը - 65:  
 Մանուկեան Հմայեակ - 23:  
 Մանուկեան Սամուէլ - 172:  
 Մատինեան Նիկոլ (Վահան) - 81, 82, 86, 87, 89, 90, 118, 119:  
 Մարգարեան Սիմոն - 38:  
 Մարթին - Տես Մուրատեան Մարտիրոս:  
 Մարտուպեան Պետրոս - 105:  
 Մելիք - Տես Իւսուֆեան Յովհաննէս:  
 Մելիք Գրիգորեանց Բարսեղ - 132:  
 Մէքինլի - 151:  
 Մինասեան Սարգիս - 23:  
 Միսաքեան Շաւարշ - 23:  
 Միքայէլեան Քրիստափոր - 86, 116, 119:  
 Մշոյ Գեղամ - Տես Գեղամ Տէր Կարապետեան:  
 Մուրատեան Մարտիրոս (Մարթին) - 123, 124:  
 Մուրատեան Մինաս - 172:  
 Մստօ փաշա - 188:  
 Մօզեան Լ. - 23:

Յարութիւնեան Արտաշէս - 22:  
 Յովհաննէսեան Կարօ - 27, 32:

**Ն**ադրի պէյ – 30, 31:

Նազարեանց Լիպարիտ – 22:

Նալպանտեան Յակոբ – 38:

**Շ**ահրիկեան Յարութիւն – 22:

Շիշմանեան Ռուբէն (Տերսիմի Քե-  
ռի) – 124, 190, 192:

Շիսեան Սիմէոն (Բարսեղ) – 49:

**Զ**ուլֆայեան Պօղոս – 200, 201:

Զօպանեան Արշակ – 18, 24:

**Պ**աղտասարեան Միսաք – 177:

Պաղտիկեան Տիգրան – 120, 143, 154:

Պապիկեան Նշան – 14:

Պառնուս Հ. Ն. (Barnum H. N.) –  
54, 65:

Պիւլպիւկեան Նազարէթ – 182:

Պօղոս վարդապետ – 109:

Պօյաճեան Եղուարդ – 25:

**Ռ**ահվեր – Տես Վարդանեան Մի-  
սաք:

Ռուբէն – 100, 101:

Ռուբէն Սեւակ – 23:

**Ս**ալման – Տես Մանկունի Յարութիւն:

Սահակեան Պետրոս – 43:

Սահակեան Սիմոն – 69, 77:

Սասունի Կարօ – 23, 25:

Սեմէրճեան Սեդրակ – 200:

Սեպուհ – Տես Թիրեաքեան Հայկ:

Սըրրի փաշա – 188:

Սիամանթօ – 22:

Սիմոնեան Աբրահամ – 38:

Սիմոնեան Յակոբ – 8, 198:

Սիրունի Յ. Ճ. – 13, 22-24, 26:

Սնապեան Պօղոս – 25, 29:

Սուլթան Մէճիտ – 36:

Սրենց Ս. – 23:

Սրմաքէշխանլեան Երուանդ – 25:

**Վ**ազր – Տես Ֆերմանեան Յակոբ:

Վահան – Տես Մատինեան Նիկոլ:

Վահանեան – Տես Իւսուֆեան  
Յովհաննէս:

Վահէ – 66:

Վահրամ – Տես Գալֆայեան Յա-  
րութիւն:

Վարաժնունի – Տես Գալֆայեան  
Յարութիւն:

Վարանդեան Միքայէլ – 23, 77:

Վարդանեան Միսաք (Ռահվեր) – Փափազեան Յակոբ – 11:  
 164, 166, 168, 169, 171, 172, 174, Փափազեան Ներսէս – 23:  
 180, 181, 190-192, 195, 196: Փափազեան Վրթանէս – 23:  
 Վիլհելմ – 108: Փէր Ատրիէն – 81:  
 Վռամեան Արշակ – 22: Փէր Շարլ – 53:  
 Վրացեան Սիմոն – 13, 21: Փիլիկեան Միսիթար – 93, 98:

Տէլի Փափա – Տես Գասապեան Քասսապ ժան – 65:  
 Յովհաննէս: Քեռի – Տես Շիշմանեան Ռուբէն:  
 Տէյրմէնճեան Սեւան – 19: Քէչեան Փիլիպոս (Տէրվիշ) – 52:  
 Տէր Անդրէասեան Գասպար – 69, Քիյառ Փիեռ – 119, 126:  
 103: Քիւֆէճեան Յակոբ (Օշական) –  
 Տէր Եղիշէ քահանայ – 123: 22:  
 Տէր Կարապետեան Գեղամ (Մշոյ Քոլոյեան Ազարիկ – 103:  
 Գեղամ) – 23:  
 Տէրվիշ – Տես Քէչեան Փիլիպոս:  
 Տիգրան – 78: Օշական Յակոբ – 7, 22, 23:

Րաֆֆի – 43, 84:

Փաշայեան Կարապետ – 23:  
 Փաստրմաճեան Գարեգին – 49:

Տարհատ – Տես Թիրեաքեան  
 Հրաշ:  
 Ֆերմանեան Յակոբ – 52, 83:  
 Ֆոնթանա Ռաֆայէլ Fontana Ra-  
 phael – 38, 43, 53:



## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ\*

**Ա**կն – 54, 93, 98, 99:

Աղեքսանդրիա – 44, 48, 51, 52, 54-56, 66, 72, 77, 81, 86, 89, 95, 102, 113, 119, 124, 131, 133, 140, 143, 145, 168, 179, 181:

Ամբրիկա – 10, 26, 38-40, 44-46, 48, 49, 53, 70, 71, 78, 80, 85, 89, 100, 104, 113, 114, 116, 117, 123-125, 127, 128, 130, 131, 133, 136, 139, 140, 150, 184, 186, 192, 197, 198:

Այնթապ – 129, 131, 134, 138, 164, 166, 168, 169, 171, 172, 175, 176, 192, 196:

Անգլիա – 43:

Ատանա – 168, 169:

Արաբկիր – 41, 98, 99, 149, 174:

Արծիւ – Տես Երզնկա:

Արծուաբերդ – Տես Զէյթուն:

Աւար-Աւեր (Խարբերդ) – 53, 55, 65, 93, 95, 126-131, 133, 135, 136, 138, 142, 143, 145, 147, 156, 157, 167, 175, 176, 193, 194:

**Բ**աբելոն – 153:

Բաթում, Պաթում – 86, 87, 102, 104:

Բալահովիտ – 107:

Բալու – 78, 87, 105, 108, 109:

Բաղէշ (Պիթլիս) – 93, 95:

Բարձր-Բերդ – Տես Հաճըն:

Բերդ – Տես Շապին Գարահիսար:

**Փ**ահիրէ – 21:

**Պ**ատէմ – 58, 186, 187:

**Ե**գիպտոս – 89, 102, 117, 119-121, 133, 136, 137, 143, 147, 166, 170, 179:

Ելլտըզ – 36:

Եղէգի – 120, 143, 146, 154, 182:

Երեւան – 15:

Երզնկա – 40, 48, 67, 75, 132, 134, 138, 146, 147, 154, 155, 157, 165, 171, 172, 181, 189, 192-194:

---

\* ) Զանց առած ենք նշել Խարբերդ տեղանունը, որուն կարելի է հանդիպիլ հատորի գրեթէ իւրաքանչիւր էջին:

Երիզա – Տես Երզնկա:  
 Երոսաղէմ – 7, 22:  
 Եւրոպա – 16, 103, 119, 120, 163, 172:  
 Եփրատ – Տես Մալաթիա:

Զէթուն – 78, 79, 88, 89, 164, 166, 171,  
 172, 174, 176:  
 Զուիցերիա – 118:

Էկին (Eguine) – Տես Ակն:  
 Էջմիածին – 103:

Թուրքիա, Թուրքաստան – 15, 17,  
 19, 42, 51, 52, 54, 65, 69, 77, 85,  
 148, 160:  
 Թիֆլիս, Տփլիս – 72, 103, 104:

Փլնեւ – 29, 40, 50, 55, 56, 61, 72,  
 91, 96, 102, 121, 122, 125, 170:

Իզմիր, Զմիւռնիա – 11, 30, 31, 171,  
 172, 178, 179, 189, 192, 196-198:  
 Իջմէ – 109, 110, 200:

Լեռնասար (Խարբերդ) – 53:  
 Լեռնավայր – Տես Կիլիկիա:  
 Լիբանան – 147, 181, 192, 193, 198:

Սանգեղ – 185, 187:  
 Սիւմ – 178:  
 Սոզաթ – 58, 199:  
 Սոր-Վիրապ – Տես Ատանա:

Մողէ – 187:  
 Մովսի – Տես Տրապիզոն:

Սարին – 40, 48, 93, 99, 184:  
 Կէրկէր – 123, 124:  
 Կիլիկիա – 123, 127, 129, 134-136,  
 138, 142-144, 147, 156, 157, 165,  
 166, 168, 171, 172, 174, 181, 182,  
 189, 190-192, 194-198:

Հալէպ – 184:  
 Հաճըն – 168, 169:  
 Հայաստան – 23, 35, 39, 42, 51, 65,  
 71, 109, 112, 160, 184:  
 Հաւաւ – 105:  
 Հովիտ – Տես Այնթապ:

**Ճ**եզիրէ – 188:

**Ո**սկեհանք – Տես Իզմիր:

Ուլնի, Ուլնիա – Տես Զէյթուն:

**Մ**ալաթիա – 41, 58, 63, 78, 87, 122, 129, 134-136, 138, 139, 166, 1885, 192:

Մանիսա, Մակնեզիա – 11, 31:

Մանչեսթըր – 49:

Մատէն – 108:

Մարաշ – 180, 181, 195, 196:

Մարսէյլ – 43, 84, 145, 170:

Մեզրէ, Մեզիրէ, Մամուրէթ-Իւլ-Ազիզ – 8-10, 29, 30, 58, 59, 62, 63, 143, 152, 154, 181, 182, 192, 199, 201:

Մերէմիկ – 154, 170:

Մոսկուա – 197:

Մուշ – 89, 100, 143, 144, 146:

Մօրնիկ – 38:

**Չ**մկածագ – 199:

**Պ**աղտատ – 74, 83, 85:

Պայազիտ – 67:

Պիթլիս – 85:

Պոլիս, Կ. Պոլիս – 7, 11-13, 17, 19-26, 30, 32, 40, 59, 69, 75, 82, 85, 163, 178:

Պոսթըն – 13, 26:

Պուլկարիա – 11, 14, 15, 31, 33:

**Ռ**ուսշուկ (Ռուսէ) – 31:

**Ն**աւահանգիստ – Տես Բաթում (Պաթում):

**Շ**ապին Գարահիսար – 134, 138, 139:

Շուշի – 198:

**Ս**ահմանաբերդ – Տես Մարաշ:

Սամսոն – 65, 79, 87, 89:

Սասուն – 101, 178, 192-194:

Սարսըրի – 200:

Սղերդ – 174-176:

Սուրիա – 147, 181, 192, 198:

Սոֆիա – 31:

Վան - 67, 93, 95, 109, 144:

Վառնա - 31:

Վրեննա - 193:

Տալրոս - 61, 73, 74:

Տերսիմ - 124, 134, 136, 199:

Տիգրանակերտ, Տիարպեքիր - 41,  
63, 74, 81, 85, 93, 95, 98, 99, 108,  
162, 163, 167, 177, 187, 192:

Տրապիզոն - 40, 48, 75, 78, 79, 83,  
86, 89, 94, 96, 102, 129, 138, 146,  
147, 154, 155, 165, 166, 171, 172,  
180, 181:

Տիսիս - Տես Թիֆլիս:

Յրօնք - 101:

Փարիզ - 10, 43, 118, 119, 126,  
148, 177:

Փլովտի - 31:

Քառաժայռ - Տես Տերսիմ:

Քեսրիկ - 100:

Տիլատեֆիա - 49:

Ֆիլիպ - 14, 15, 18, 20, 24, 31:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

|                                                                             |     |
|-----------------------------------------------------------------------------|-----|
| Ռ. Զարդարեան ոսուցիչ-մանկավարժը եւ հրապարակագիրը<br>Կարօ Յովհաննէսեան ----- | 7   |
| Երկու խօսք հատորի կազմութեան մասին<br>Երուանդ Փամպուկեան -----              | 29  |
| 1897-ի նամակներ (թիւ 1-5) -----                                             | 35  |
| 1898-ի նամակներ (թիւ 6-19) -----                                            | 50  |
| 1899-ի նամակներ (թիւ 20-24) -----                                           | 90  |
| 1900-ի նամակներ (թիւ 25-31) -----                                           | 105 |
| 1901-ի նամակներ (թիւ 32-43) -----                                           | 125 |
| 1902-ի նամակներ (թիւ 44-58) -----                                           | 156 |
| 1903-ի նամակներ (թիւ 59-63) -----                                           | 190 |
| Անձնանուններ -----                                                          | 203 |
| Տեղանուններ -----                                                           | 209 |

**«ՎԷՄ» մատենաշարի բոլոր հատորները տեղադրուած են  
*www.arfd.am* կայքէջին վրայ:**

**Հրատարակութեան պատրաստութիւն, խմբագրութիւն եւ  
ծանօթագրութիւններ՝**

**ԵՐՈՒԱՆԴ ՓԱՄՊՈՒՔԵԱՆԻ**

**Համակարգչային շարուածք եւ ձեւատրում՝**

**ԹԱՄԱՐ ՍՆԱՊԵԱՆ-ՍՈՒՐՃԵԱՆԻ**

**Կողմի պատրաստութիւն եւ լուսանկարներու մշակում՝**

**ՍԱԳՕ ԳԱՍԱՊԵԱՆԻ**

**Ստորագրուած է տպագրութեան՝ Օգոստոս 2025:**  
**Տպագրութիւնը՝ օֆսէթ: 13,5 տպ. մամուլ:**  
**Տպաքանակը՝ 1000:**



**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԵԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏՈՒՆ**